

ԱՐԾՈՒՒ ԲԱԽՉԻՆԵԱՆ

ՀԱՅԵՐՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

Պատմաբանասիրական ուսումնասիրություն



93(= 4/3/21/1960)

ARTSVI BAKHCHINYAN

ARMENIANS IN AFRICA

Historical and philological study

Yerevan - 2024

ԱՐԾՈՒԻ ԲԱՆԶԻՆԵԱՆ

ՀԱՅԵՐՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

Պատմարանասիրական ուսումնասիրություն

ՄԵՍՐՈՊ ԱՐՁ. ԱՇԾԵԱՆ
ՄԱՏԵՆԱԸԱՐ

248



ARCH. MESROB ASHJIAN
BOOK SERIES

248

Երևան - 2024

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Բ 216

Տպագրում է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի
գլխավոր խորհրդի որոշմամբ

Խմբագիր՝ պատմական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր **Գեորգ Ստեփանյան**

Բախչինեան Արծուի
Բ216 Հայերն Աֆրիկայում: Պատմաբանասիրական ուսումնասիրություն: Ամփոփումները՝ անգլերեն, ֆրանսերեն, լինգալերեն: / Ա. Բախչինեան.- Եր.: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2024.- 293 էջ:

Աշխատությունն ընդգրկում է հայության ներկայության պատմությունն Աֆրիկա մայրցամաքի երկրներում (բացառությամբ Եգիպտոսի եւ Եթովպիայի)՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:

Նախատեսում է հայ գաղթաշխարհի պատմությամբ հետաքրքրուողների եւ ընթերցող լայն շրջանակների համար:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-892-37-5

© ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտ, 2024
© Բախչինեան Արծուի, 2024



ՆԱԽԱԲԱՆ

Տարիներ շարունակ տեղեկութիւններ հաւաքելով տարբեր երկրների հայ համայնքների, հայկական ներկայութեան եւ պատմամշակութային կապերի մասին՝ յատուկ ուշադրութիւն ենք դարձրել քիչ ուսումնասիրուած կամ առհասարակ չուսումնասիրուած երկրներին եւ տարածաշրջաններին: Մեզ յատկապէս գրաւել են հայութեան (եւ առհասարակ արեւմտեան աշխարհի) համար երկրագնդի տարաշխարհիկ անկիւններում մեր ժողովրդի հետ առկայ կապերի պրպտումները: Արդիւնքում վերհանուել են հայութեան ներկայութեան պատմութիւնն աշխարհի այնպիսի շրջաններում, ինչպիսիք են Եւրոպայի որոշ մասերը (սկանդինաւեան երկրներ. Չեխոսլովակիա, Հարաւսլաւիա, Ալբանիա, Իսպանիա), Հեռաւոր Արեւելքը (Չինաստան, Ճապոնիա, Սիբիր), Օվկիանան, անգամ՝ Հիւսիսային եւ Հարաւային բեւեռները...

Մարդկութեան համար երկրագնդի առաւել տարաշխարհիկ եւ խորհրդաւոր մասերից է «սեւ» մայրցամաքը՝ Աֆրիկան, ըստ տարածուած կարծիքի՝ մարդկային ցեղի բնօրրանը:

Սոյն ուսումնասիրութեան մէջ ի մի են բերուած պատմական եւ մշակութային ցաք ու ցրիւ փաստեր, որ վերաբերում են հայերի ներկայութեանը աֆրիկեան ցամաքամասի երկրներում¹: Մեր հաշտումներով՝ հայեր բնակուել եւ բնակւում են աֆրիկեան պետութիւններից 25-ում²: Մեր տեսադաշտից

¹ Սոյն թեմայով առաջին ճանաչողական յօդուածը գրել ենք տակաւին 1994-ին (տե՛ս Արծուի Բախչիւնեան, Հայերը եւ սեւամորթները, «Գարուն», Երեւան, 1994, քիւ 2, էջ 76-77):

² 1960-ականների սկզբին աֆրիկեան տարբեր երկրներում ապրել է մօտ 2000 հայ (բացառեալ Սուդանի, տե՛ս Մ. Գասպարեան. Սփիւռքահայ գաղթօջախներն այսօր. մշակութային կեանքի ուրուագիծ, Երեւան, 1962, էջ 176): Նորագոյն ժամանակներում շարունակուել է հայերի տարերային ներկայութիւնն անկախութիւն ստացած աֆրիկեան երկրներում

դուրս ենք բողել Արեւելեան Աֆրիկայի երկու երկրների՝
Եգիպտոսի եւ Եթովպիայի հետ հայ ժողովրդի ունեցած
կասկերը, որոնք բազմիցս ուսումնասիրուել են³: Ինչպէս մեր

ժամանակատրայէս կան մշտական: Ըստ ՀՀ արտ-
գործնախարարութեան www.armeniadiaspora.com կայքէջի՝ 2002
թվականին աֆրիկեան երկրների հայ բնակչութիւնն ունեցել է հետեւեալ
պատկերը՝ ՀԱՀ՝ 200, Չինքաբվէ՝ 28, Կոտ դ'Իվուար՝ 20, Գանա, Սենեգալ՝
15, Չամբիա՝ տաս, Սվազիլենդ՝ ութ² (տես **Յովսէփ Խաբշտեան**,
Սփիւքահայ գաղթօջախների եւ համայնքների կապիտալի, ինովացիոն-
տեխնոլոգիական եւ մտատր ներուժի հաշուառում, քարտեզագրում եւ
դասակարգում, «Հայաստան 2020. զարգացման եւ անվտանգութեան
նազնավարութիւն», Երեւան, 2002, էջ 365):

³ Եգիպտոսի եւ Եթովպիայի հայօջախների պատմութեան վերաբերեալ
առկայ է հարուստ գրականութիւն: Եգիպտոսի մասին տես **Նազարէք
Արագարն**, Նոթեր Եգիպտոսի հայ գաղութին վրայ, Գահիրէ, 1911: **Ա.
Գարուաշեան**, Նիւթեր Եգիպտոսի հայոց պատմութեան համար, Գահիրէ,
1943: **Գ. Մըղղեան**, Ականատր հայեր Եգիպտոսի մէջ, Գահիրէ, 1947:
Արշակ Ալայօսաճեան, Արաբական Միացեալ Հանրապետութեան
Եգիպտոսի նահանգը եւ հայերը, Գահիրէ, 1960: **Յովհաննէս Թոփուզեան**,
Եգիպտոսի հայկական գաղութի պատմութիւն (1805–1925), Երեւան, 1978:
Նուսթար Տէր-Միքայէլեան, Եգիպտահայ գաղութը 10-15-րդ դարերում,
Պէյրոս, 1980): **Anne Le Gall-Kazazian**, La construction de l'identité
arménienne dans le contexte égyptien (1805-1930), «Centre d'études et de
documentation économiques, juridiques et sociales, Modernisation et nouvelles
formes de mobilisation sociale». Volume II : Égypte-Turquie CEDEJ -
Égypte/Soudan, 1992. Նոյնի, Les arméniens d'Égypte (xixe-milieu du xx), in
Alain Roussillon (dir.), «Entre réforme sociale et mouvement national»,
CEDEJ - Égypte/Soudan, 1995. **Սոհանմաղ Ռեֆասթ Ալ-Իման**, Հայերը
Եգիպտոսում 19-րդ դարում, Կահիրէ, 1995 (արաբերէն): **Սուրէն Ն.
Պայրամեան**. Հայկական համայնքային կառոյցները Եգիպտոսի մէջ,
Գահիրէ, 2017: Եթովպիայի մասին տես **Յակոբ Գրիգոր**, Եթովպիոյ հայ
եկեղեցին եւ հայերը. քննադատական ուսումնասիրութիւն, Վենետիկ,
1927: **Գեորգ արքեպս. Արարանեան**, Ուղեւորութիւն յԵթովպիա,
Իսթանպուլ, 1930: **Հ. Բարսբաբան**, Արդի Եթովպիան եւ հայ գաղութը,
Վենետիկ, 1930: **Գերնիկ Եպիկոսթս**, Ափրիկէի հայերը, «Չարթօնք», 12-
31.05–1-16.06.1960: **R. Pankhurst**, The History of Ethiopian-Armenian
Relations: Ancient Times, «Revue des études arméniennes», Paris, t. 12, 1977, t.
13, 1978-1979, t. 15, 1981. **Элеонора Львова**, Армянская колония в

նախորդ, այնպես էլ սոյն աշխատութեան հիմնական ատաղձը հանդիսացել է հայօջախների պատմութեան մեծարժէք աղբիւր հանդիսացող սփիւռքահայ մամուլը, պակաս չափով՝ նաեւ օտարալեզու տարբեր աղբիւրներ եւ տուեալ երկրներում ապրած հայերի ու նրանց ժառանգների հետ մեր ունեցած նամակագրութիւնը:

Տեղեակ չենք, թէ բուն աֆրիկեան արխիւներում կա՞ն արդեօք հայութեան վերաբերեալ տուեալներ. մեր ենթադրութեամբ, քանի որ հայօջախները գոյատեւել են գաղութային շրջանում, պիտի որ անկախութիւն հաստատելուց յետոյ տարբեր համայնքների եւ անհատների վերաբերեալ փաստաթղթերը տեղափոխուած լինեն գաղութացնող պետութիւններ: Անշուշտ, արժէքաւոր կլինէր ձեռքի տակ ունենալու դէպքում համեմատել ոչ հայկական աղբիւրների տուեալները հայկականի հետ, սակայն մենք ստիպուած ենք եղել քաւարարուել մեզ մատչելի եղած տեղեկութիւններով:

Ինչ վերաբերում է Հայաստանին, ապա Ազգային արխիւում աֆրիկեան երկրների հայօջախների եւ Խորհրդային Հայաստանի հետ աֆրիկեան երկրների հետ եղած առնչութիւնների վերաբերեալ առկայ են որոշ քանակի նիւթեր (հիմնականում՝ Սփիւռքահայութեան կոմիսիոյ, որոնց մի մասը (12 միատր)

Эфиопии (по материалам полевых исследований), «Диаспоры: независимый журнал», но. 1-2, 2000, էջ 160-167. Ռ. Աբրահամեան, Եթովպիա, «Հայ գաղթաշխարհի: պատմութիւն (միջնադարից մինչեւ 1920 թ.), եռատորեակ, հատոր 2, Ասիայի եւ Աֆրիկայի հայկական գաղութները, Երեւան, 2003, էջ 343-365: **Boris Adjemian**, La Fanfare du Négus, [France], 2013. **Բորիս Աճեմեան**, Եթովպիա, «Հայոց պատմութիւն», հ. III, գիրք երկրորդ, Երեւան, 2015, էջ 338-342: **David W Phillipson**, An Armenian Involvement in Mid-Nineteenth-Century Ethiopia, “History in Africa,” 46 (June 2019), էջ 137-145: Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիայ հայերը – Գիտաժողովի նիւթեր (12-13 Ապրիլ եւ 29-30 Մայիս 2018), խմբագիր **Անդրանիկ Տազեւեան**. «Հայկազեան համալսարանի Հայկական սփիւռքի ուսումնասիրութեան կեդրոն», Պէյրութ, հ. 1-2, 2022–2023:

հրատարակել է պատմաբան Արմեն Բաղալեանը⁴:

...1953-ին Փարիզի «Յառաջ» օրաթերթի Ալժիրի թղթակից Պոլոս Արզումանեանը յղել է 1931–1949 թթ. իր հրատարակած թղթակցութիւնների աղբիւրները՝ նշելով. «*Անոնք, որ կ'ուզեն պատմութիւնը գրել, կրնան օգտուիլ «Յառաջ»ի հետեւեալ թիւերէն, որպէսզի Ալժերիոյ ափ մը գաղութը մոռացութեան չտրուի*»⁵:

Մենք ձեռնամուխ եղանք սոյն ուսումնասիրութեանը՝ այս եւ մի շարք այլ «ափ մը» հայօջախների պատմութիւնը գրի առնելու եւ ի պահ տալու մտահոգութեամբ...

⁴ Տե՛ս Արմեն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները եւ նրանց կապերը Խորհրդային Հայաստանի հետ 1945–1985 թթ., «Բանբեր Հայաստանի արխիւների», 2004, թ. 1, էջ 102-116:

⁵ Աճէն Կարօտունի, Ե՛ւ ներկայ, ե՛ւ բացակայ, «Յառաջ», 10.03.1931:

ՀԱՅԵՐԸ ՀԻՒՄԻՍԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

Հայ-աֆրիկեան յարաբերութիւնների սկիզբը կարելի է համարել այն կապերը, որ գոյութիւն են ունեցել Հայկական լեռնաշխարհի պետական միատրումների եւ հին Եգիպտոսի միջեւ:

Հայերի ներկայութիւնը Հիւսիսային Աֆրիկայի մնացեալ մասի (ներկայիս Լիբիա, Ալժիր, Թունիս եւ Մարոկկո պետութիւնները) հետ նոյնպէս շատ հին է, թէւ հայերն այդ տարածաշրջանում միշտ եղել են սակաւաթիւ: Այս թեմային իր աշխատութեան մէջ մասամբ անդրադարձել է Հրաչեայ Աճառեանը¹, որից էլ օգտուելով՝ նոյն տուեալները կրկնել է պատմաբան Աշոտ Աբրահամեանը²:

Հիւսիսային Աֆրիկայի հետ հայ ժողովրդի ունեցած վաղնջական աղերսը կարելի է համարել Աֆրիկա մայրցամաքի առաջին բնակչի ժամանումը Հայաստան մ. թ. ա. 189 թուականին: Եւ այդ «աֆրիկացին» ոչ այլ ոք էր, քան հին աշխարհի մեծագոյն զօրավարներից ու պետական գործիչներից մէկը՝ կարթագէնցի Հաննիբալը (մ. թ. ա. 247, Կարթագէն, ներկայիս Թունիսի տարածքում – մ. թ. ա. 183, Գերգէ, Բիւքանիա): Նա փախչելով իր երկրից հանգրուանել է Հայաստանում, Արտաշէս Ա թագաւորի մօտ, որը նրան է վստահել Արտաշատ քաղաքի նախագծումն ու կառուցման աշխատանքների իրականացումը: Այն հետագայում դարձել է Հայաստանի մայրաքաղաքը եւ հին աշխարհում կոչուել է նաեւ «հայկական Կարթագէն»:

¹ Տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, Հայ գաղթականութեան պատմութիւն, Երեւան, 2002, էջ 464-466:

² Տե՛ս **Աշոտ Աբրահամեան**, Համառօտ ուրուագիծ հայ գաղթականութեան պատմութեան, հատոր Բ, Երեւան, 1967, էջ 97-98:

Մէկ այլ վաղնջական առնչութիւն վկայել է հոռմէացի պատմիչ Գայոս Սալուստիոս Կրիսպոսն (° – 47) իր «Եուզուրթական պատերազմը» աշխատութեան մէջ: Այդ պատերազմը տեղի է ունեցել մ. թ. ա. 115-105 թուականներին, Հռոմի եւ Աֆրիկայի տարածքում գտնվող Նումիդիա պետութեան միջեւ: Հռոմէացի պատմիչի վկայութեամբ՝ հայերն այնտեղ յայտնուել են փինիկեցի զօրավար Հերակլիոսի բազմազգ զօրքում եւ նրա մահից յետոյ ցրուել են Հիւսիսային Աֆրիկայում՝ մեդացիների (մարերի) հետ մասնակցութիւն ունենալով մար ժողովրդի կազմաորման մէջ: Նկատի ունենալով, որ «Հայ ժողովրդի պատմութեան քրեատոմատիայի» առաջին հատորում (Երեւան, 1981) տեղ չի գտել այդ ուշագրաւ հատուածը (ինչպէս նաեւ Հայաստանին վերաբերող Կրիսպոսի միւս վկայութիւնները), այն մէջբերում ենք ամբողջութեամբ.

«Նախնի բնակիչք Ափրիկեայ էին գետտուացիք եւ լիբէացիք՝ ազգք վայրագ եւ բիրտ.... Այլ ՚ի մեռանել Հերակլի ՚ի Սպանիա, որպէս ափրիկեցիքն պատմեն, անզօրավար մնացեալ բանակ նորա՝ որ խմբեալ էր ՚ի բազում ազգաց, փաթատեալ ցրուեցաւ վասն բազմաց անկարգս իմն եւ խառն ՚ի խառն զայնր իշխանութեան թեկնածելոյ: Ի սոցանէ Մարք. Պարսք եւ Հայք նաւեալ յԱփրիկէ, զմերձակայ գաւառս մերոյ ծովուս կալան: Բայց Պարսք.... տակաւ ամուսնութեամբ ազգախառնեալ ընդ գետտուացիս, եւ զի յաճախ ՚ի խնդիր լաւագունից վայրաց աստանդականք շրջէին, վասն որոյ եւ նու՛միդացիս զհնքեանցս կոչեցին: ...Իսկ Մարք եւ Հայք յաւելեալ ՚ի լիբէացիս (զի սոքա ՚ի ծովափնեայս անդ Ափրիկեայ թափառէին, եւ գետտուացիք առաւել եւս ընդ արեգակամբ ոչ հեռի ՚ի հասարակածէն), վաղ ընդ փոյթ կանգնեցին քաղաքս.... Չորոց տակաւ լիբէացիք աղաւաղեալ զանուանս ՚ի խումբ բայքառ իւրեանց, զՄարս ՚ի Մարիս փոխեցին»³:

³ Կալիոսի Սալուստիոսի Պատմութիւն Կատիլինեան դասակցութեան եւ Եուզուրթեան պատերազմին, քարգմ. հ. Արրահամ վ. Ճարեան, Վենետիկ, 1856, էջ 176-178: Տես նաեւ ռուսերէն քարգմանութիւնը՝ Гай Саллюстий

Այսպիսով, հռոմէացի պատմիչի վկայութեամբ, մեր բուսկանութիւնից առաջ Առաջատր Ասիայի երկու հնագոյն ժողովուրդ՝ հայերը եւ մարերը, միախառնուելով լիբիացիներին, ծնունդ են տուել հիւսիս-աֆրիկեան ցեղերից մէկը՝ «մար» բառը փոխարինելով «մարով», թէւ նկատենք, որ «մարը» ոչ թէ առանձին ազգութիւն է, այլ միջնադարում բերբերներին եւ երոպացի մահմեդականներին տրուող ընդհանուր անուանումն է...

Գայուս Սալուստիոս Կրիսպուսի վկայակոչումը հետագայում որոշ պատմաբանների թոյլ է տուել փնտրել հայերի հետքերը որոշ աֆրիկեան ժողովուրդների ծագումնաբանութեան մէջ: Ֆրանսիացի պատմաբան Լիւսիէն Ժոզեֆ Բերտոլոնի՝ վաղ շրջանում Աֆրիկայում հաստատուած տարբեր ժողովուրդների մասին աշխատութեան մի ենթագլուխն է «Հայերն Աֆրիկայում (գարամանտները եւ բերբերները)»: Այստեղ նա յիշատակել է ֆրանսիացի հնագէտ եւ պատմաբան Ֆրանսուա Լընորմանի վարկածը, որ Սահարայի հնագոյն ժողովուրդներից գարամանտների անունը ծագել է Թոգարմա (Թորգոմ) անձնանունից, սակայն Բերտոլոնը այդ ստուգաբանութիւնը համարել է ոչ գոհացուցիչ եւ փորձել է ապացուցել գարամանտների թրակո-փոիզիական ծագումը⁴:

Крисп. Сочинения, Москва, 1981. էջ 50-51: Այս աղբիւրը ծանօթ է եղել հայ ուսումնասիրողներին: Ֆրանսահայ գրող Շաւարշ Նարդունին վկայել է, որ երաժշտութեան պատմութեան մի գրքի մէջ կարդացել է, որ մարիտանացիները ծնունդ են հայերի եւ լիբիացիների խառնամուսնութիւնների: Նման ակնարկ գտել է նաեւ աֆրիկեան ցեղերի մի նկարագրութեան մէջ, հրատարակուած «Ֆրանս սուար» պարբերականում (22.10.1954): Նա յղել է Սալուստիոսին, ըստ որի հայերը, մնալով Աֆրիկայի ծովեզերքին Իսպանիայից բերել են անհրաժեշտ միւթեր, քաղաքներ են կառուցել եւ քաղաքակրթութիւն ստեղծել (տես Շ. Նարդունի, Հայկական յարթերգութիւն... Ափրիկէի մէջ, «Յառաջ», 8.03.1955):

⁴ Տես **Lucien Joseph Bertholon**, Les premiers colons de souche européenne dans l'Afrique du nord: essai historique sur les origines de certaines populations

Յիշենք նաև, որ փորձ է եղել համեմատություններ կատարել Մարոկկոյի բերբերների (ամազիզներ) և հայերի միջև: Բաց գոյնի մաշկ ունեցող այդ ժողովուրդը համարուել է եկուոր Աֆրիկայում, ու որոշակի նմանություններ են առկայ նրանց և մասնատրապեա արեւմտահայերի կենցաղի և տարագի, նաև մարդաբանական տեսակի միջև⁵: Սակայն բարարար հիմքեր չկան՝ մի ժողովուրդը միսից ծագած լինելու վարկած առաջարկելու:

Մէկ այլ ուշագրաւ իրողութիւն անտիկ աշխարհից: Մ. թ. ա. 3-րդ դարից մինչեւ մ. թ. 44 թուականը Հիւսիս-արեւմտեան Աֆրիկայում գոյատեւած Մարտեանհիայի թագաւորութիւնը (ներկայիս արեւմտեան Ալժիրի և հիւսիսային Մարոկկոյի տարածքում) ունեցել է մէկ հայագարմ թագուիի ի դէմս **Գլափիրայի**⁶ (Գլափիրա, մօտ մ. թ. ա. 35 – մ. թ. 7): Նա Կապադովկիայի թագաւոր Արքեդայոս Ֆիլոպատորի և նրա հայուիի կնոջ՝ Մեծ Հայքի արքայադստեր դուստրն էր: Ենթադրում է, որ Գլափիրայի մայրը եղել է հայոց Արտաւազդ Բ թագաւորի դուստրը: Յունական, հայկական և պարսկական ծագում ունեցող Գլափիրան ամուսնացել է երեք անգամ, երկրորդ անգամ՝ Մարտեանհիայի թագաւոր, Հռոմի դաշնակից Եուրա Բ-ի (մ. թ. ա. 48 – մ. թ. 23) հետ և դարձել Մարտեանհիայի թագուիի մ. թ. 5–6 թթ.⁷: Հայոց պատմութեան մէջ նա յայտնի է որպէս Տիգրան Ե՝ թագաւորի (թագաւորել է մ. թ. 6–12 թ.) մայրը:

Բուն Հայաստանում Աֆրիկա տեղանունը ծանօթ էր առնուազն իշխող վերնախաւին: Ասուածի ապացոյց կարող է

berbères d'après les documents égyptiens et les écrivains de l'antiquité, t. 1, Tunis, 1898, էջ 84-85:

⁵ Տե՛ս **Валерия Олюнина**, Амазахи. Североафриканские «братья» армян, «Новое время», Ереван, 13.02.2018:

⁶ Աֆրիկայում բնակուած հայերի անունները շարադրանքի մէջ կտրուեն թաւ տառատեսակով:

⁷ Նրա մասին տե՛ս **Marjorie Lightman**, Benjamin Lightman, A to Z of Ancient Greek and Roman Women, Infobase Publishing, 2008, էջ 147:

լինել հայոց թագաւոր Արտաւազդ Ե-ի (գահակալել է 252–272 թթ.) նամակը՝ յղուած Մասանեան Պարսկաստանի թագաւոր Շապուհ Ա-ին՝ վերջինիս կողմից գերեվարուած Հռոմի կայսր Վալերիանոսին ազատելու խնդրանքով: Այս նամակում, ի թիւս այլ երկրների, յիշուած է նաեւ Աֆրիկան («Ուրախ եմ փառքիդ... բայց երկխոյ եմ կրում, որ դու աւելի շուտ պատերազմի հուրն ես արծարծել, քան յաղթել ես: Վալերիանոսին ազատ արձակելու մասին խնդրում են եւ նրա որդին, եւ թոռը, եւ հռոմէացի զօրավարները, եւ ամբողջ Գալլիան, Աֆրիկէն, Սպանիան, ամբողջ Իտալիան եւ Հռոմի դաշնակից բոլոր զօրքերը...»⁸):

Սկսած վաղ միջնադարից, հայ ժողովուրդը, բազմապիսի առնչութիւններ է ունեցել Աֆրիկայի ժողովուրդների (յատկապէս մայրցամաքի հիւսիսային եւ արեւելեան հատուածների) հետ՝ բիզանդական պատերազմների, առեւտրի, ինչպէս նաեւ դրանցում հայ գաղթօջախների հաստատման հետեւանքով⁹: Մասնատրապէս, այլազան շփումներ են եղել Եթովպիայի եւ եթովպացիների (հաբեշներին) հետ, որոնց հայերն անուանել են խափշիկ: Հետագայում այս անուանումը տարածուել է առհասարակ բոլոր սեւամորթների վրայ...

Աֆրիկան յիշատակել են հայ միջնադարեան հեղինակները (Մովսէս Խորենացի, Անանիա Շիրակացի), որոնք, անշուշտ, նկատի են ունեցել ոչ թէ սեւամորթ Աֆրիկան, այլ մայրցամաքի հիւսիսային հատուածը:

⁸ Լեւո, Երկերի ժողովածու, հատոր 1, Երեւան, 1966, էջ 401: Նոյնը տես Յակոբ Մանանդեան, Երկեր, հատոր Բ, Երեւան, 1978, էջ 97:

⁹ Հայերի մէջ առկայ Աֆրիկեան ազգանունը մայրցամաքի անուան հետ կապ չունի, հիմքը թերեւս Աֆրիկանոս (Աֆրիկանոս) անձնանունն է. յայտնի է յունալեզու գրող Սեքստոս Յուլիոս Աֆրիկանոսը (մօտ 160 – մօտ 240, ծնունդով հաւանաբար Լիբիայից, այստեղից՝ Աֆրիկանոս անունը), որի անունը յիշատակել է Մովսէս Խորենացին (տես Մովսէս Խորենացի, Հայոց պատմութիւն, Երեւան, 1968, էջ 142):

Կարող է պարադոքսալ թուալ, սակայն հայ մշակոյթն իր պատմաաշխարհագրական ընդգրկմամբ, հեռու եւ մօտիկ փոխյարաբերութիւնների եւ մասնատրապէս արաբական ազդեցութեան պատճառով որոշակի աղերսներ ունի, ի թիւս այլոց, նաեւ մասնատրապէս Հիւսիսային Աֆրիկայի մշակոյթի հետ: Ըստ արուեստի պատմաբանի. «*Հոսանքները, որ մտել են քրիստոնէական արուեստի հունի մէջ, միանշանակ չեն եղել, եւ հայկական յուշարձանները շատ վառ կերպով արտայայտում են այն: Տարբեր ժամանակաշրջաններ տարբեր կերպ եւ տարբեր ուժով Սիրիայի, Հիւսիսային Աֆրիկայի, Պաղեստինի, Կապադովկիայի, Վրաստանի, Բիւզանդիայի, մահմեդական Արեւելքի յուշարձանները դարձել են ոճական փոխյարաբերութիւնների աղբիւրներ:Տարբեր հայկական ձեռագրերի խորաններում հանդիպում են ձկնորսութեան տեսարաններ, որոնք յայտնի են Հիւսիսային Աֆրիկայի եւ Իտալիայի յուշարձաններից»¹⁰:*

Հոմմէական կայսրութիւնը մ. թ. II-III դարերում իր վասալ Հայաստանից զօրամիտրումներ է ուղարկել Հիւսիսային Աֆրիկայի իր նահանգները: Կայսրութեան քայքայումից յետոյ, 395-ից սկսած, Աֆրիկայի հիւսիսային երկրները դարձել են նրա արեւելեան մասի՝ Բիւզանդիայի նահանգները, եւ բիւզանդական կայսրերը, շարունակելով Հոմմի քաղաքականութիւնը, սկսել են հայկական զօրաբաժանումներ ուղարկել Աֆրիկա: Յատկապէս շատ հայեր են ծառայել Յուստինիանոս I կայսեր (482/483–565) բանակում: 536 թուականին Հիւսիսային Աֆրիկայում կոռած բիւզանդական ականաւոր զօրավար Բելիսարիոսի օգնականն է եղել մէկ այլ ականաւոր ռազմական գործիչ՝ հայագգի **Նարսէս** պատրիկը (478–574/568): Երբ 545 թուականին Հիւսիսային Աֆրիկան ապստամբել է Յուստինիանոս կայսեր դէմ՝ վանդալ զօրավար Գոնթարիսի (Գունթարիթ) ղեկավարութեամբ, վերջինիս դէմ կայսրն ուղարկել է մի զօրք, որի մէջ եղել է հայկական գունդ՝ Ատիորինդ Ծերակոտականի հրամանատարութեամբ: Դրա

¹⁰ Нонна Степанян, Искусство Армении, Москва, 1989, стр. 63.

կազմում եղել են զորավար **Յովհաննես Արշակունին** (մահ. 537), նրա որդիներ **Արտաւանը** (Արտաւազը) եւ եղբայր **Վահանը**, նրանց **Գրիգոր** եղբորորդին եւ ազգական **Արտաշիռը**, որոնք զորամասեր են գլխավորել Եգիպտոսում եւ Լիբիայում: Գոնթարիսը, մարեւոտանացիների հետ միատրուած, յաղթել է յոյներին. այդժամ Արտաւանը եւ միւս հայերը առերես նրան յայտնել են իրենց զինակցութիւնը՝ շահելով Գոնթարիսի վստահութիւնը, որը հայկական գնդին ուղարկել է իր դէմ ապստամբած մարիտանացիներն ճնշելու: Պատերազմից յետոյ Կարթագենում խնջոյքի պատիին Արտաւանը հայ զինուորների հետ ոչնչացրել է Գոնթարիսին եւ իր զինակիցներին՝ այդպիսով վերականգնելով Յուստինիանոսի տիրապետութիւնն Աֆրիկայում: Կայսրը բարձր է գնահատել հայ զորավարի ծառայութիւնները եւ նրան նշանակել է Լիբիայի ընդհանուր կառավարիչ՝ անուանելով Աֆրիկայի դուքս: Այնուհետեւ շնորհագրկուելով՝ Արտաւանը «հիւպատոս» տիտղոսով դարձել է բանակի հրամանատար: 548–549 թթ. բանտարկուել է, ապա Թրակիայի ընդհանուր սպարապետի կոչումով ուղարկուել է Սիցիլիա՝ գոթերի դէմ: 553-ին եղել է Սիցիլիայի բիւզանդական զորքերի հրամանատար եւ տաս տարի կառավարել է կղզին:

Ըստ Մերեոսի՝ հայ զինուորական գործիչ, իշխան **Սմբատ Բագրատունին** (մահ. 617) Բիւզանդական կայսրութեան դէմ ապստամբելու համար կայսեր կողմից արքորուել է Աֆրիկա՝ զինուորական տրիբունի պաշտօնով¹¹: Նոյն դարաշրջանում մէկ այլ Բագրատունի՝ 628–634 թթ. հայոց մարզպան **Վալուա-Տիրոցը** (590-646) նոյնպէս Բիւզանդիայի կայսեր դէմ ապստամբութիւն կազմակերպելու մեղադրանքով արքորուել է Աֆրիկա, որտեղ մնացել է մինչեւ 646 թուականը:

Հատուկենտ հայեր եղել են Հիւսիսային Աֆրիկայում փախ տարածաշրջանի արաբական տիրապետութեան ժամանակաշրջանում (որն այդ ժամանակուանից յայտնի էր

¹¹ Տե՛ս **Սեպեոս**, Պատմութիւն, Երեւան, 2005, էջ 107:

արաբական անունով՝ Մադրեթ, հայ մատենագիտութեան մէջ երբեմն յիշատակուել է Մադրիսպատան¹², իսկ նրա բնակիչները՝ մադրեթայ կամ մադրուայ ձեւով¹³): 12-րդ դարում Եգիպտոսի հայազգի ռազմական գործիչ Ղարադուշ ալ Արմանին նուաճել է մի քանի քաղաքներ եւ նահանգներ ներկայիս Լիբիայի տարածքում, իսկ 1190-ին Եգիպտոսը միատրել է Ալմոհադամների պետութեանը եւ նրանց կողմից ընդունուել Թունիսում: Այստեղ հարկ է նշել, որ Թունիսը Դունիս ձեւով երկու անգամ յիշատակուած ենք գտնում արդէն 13-րդ դարի հայ մատենագրութեան մէջ, երկուսն էլ կապուած 1270 թուականի մարտին Ֆրանսիայի Լիւդովիկոս Թ քագաւորի՝ Թունիս կատարած արշաւի հետ, որը ձախողուել է զօրքին պատուհասած մահացու հիւանդութեան պատճառով: Հէթում Կոռլիկոսցու «Ժամանակագրութեան» մէջ, գրուած 1296-ին, յիշուած է, որ Լիւդովիկոսը (*Լաիզ ըռէ տը Ֆրանս*) ծրագրել է արշաւել Սիրիա. նախ մեկնել են Սարդինիա կղզի, «*եւ անտի իլդեցան եւ գնացին ի Դունիզն եւ առժամայն առին զԳարդայնն*»¹⁴: Վերջինս նոյն Կարթագենն է, որ ֆրանսիացիները գրաւել են. «*Եւ յետ մահուան ըռէ տը Ֆրանսին եկն ըռէ Ջաղն ի հեծելն եւ արար հաշտութիւն ընդ Դունիզին սուլտանն*»¹⁵: Նոյն 13-րդ դարում ստեղծուած Հէթում Բ-ի «Ժամանակագրութեան» մէջ կարդում ենք միեւնոյն տեղեկութիւնը. «*ՉԺԺ*

¹² Արշակ Ալպոյաճեանի ենթադրութեամբ, հայ է եղել 7-րդ դարի ռազմական գործիչ, Թաիերթի (Թիարեթ, կենտրոնական Ալժիր) անկախ քագաւորութեան եւ Ռուստամիդների հարստութեան հիմնադիր Ռիսթէմ բին Բեհրամ-Վահրամի որդի Ռուտոմը (տես Արշակ Ալպոյաճեան, Պատմութիւն հայ գաղթականութեան, հայերի ցրումը աշխարհով մէկ, հատոր 1, Գահիրէ, 1941, էջ 983-384): Իրականում այս Ռիսթէմն ունեցել է սլաւոնական ծագում:

¹³ «...*հրովարտակ գրեցին... Սադրայ, Սըսըր*» (Միմէոն Լեհացի, Ուղեգրութիւն, Երեւան, 1997, էջ 55): «*Իսկ արաբներն ու մադրուայներն առաւելութիւն ունէին այդ երկրում...*» (անդ, էջ 106):

¹⁴ Մանր ժամանակագրութիւններ, XIII-XVIII դդ., կազմեց Վ. Ա Յակոբեան, հ. 2, Երեւան, 1956, էջ 74:

¹⁵ Անդ:

(1270) *ռէ տէ Ֆրանցն պաշարեաց գ՛ղունիզ եւ անդ մեռաւ*¹⁶:

Այստեղ յիշենք նաեւ, որ 13-րդ դարի առակագիր Վարդան Այգեկցու գործերից մէկում յիշատակուած է Օֆիրոսի ոսկին, որը, ի թիւս այլ ապրանքների, նա տեսել է Կիլիկիայի քաղաքների շուկաներում: Օֆիրոս երկիրը, որ յիշատակուած է Աստուածաշնչում եւ յայտնի է եղել ոսկով եւ գոհարեղէնով, ոմանք տեղադրել են հարաւ-արեւելեան Աֆրիկայում¹⁷: ներկայիս Մոզամբիկի տարածքում: Եթէ դա ճշմարիտ է, ուստի եւ սխալ չէ ենթադրել, որ 13-րդ դարում Հայաստան են հասել ապրանքներ Հարաւային Աֆրիկայից:

Իսկ յաջորդ դարում Սեծ Հայքով անցել է մարոկկացի գիտնական, ուղեգիր Իբն Բատուտան (1304–1368/1369), որը եղել է մասնավորապէս Երզնկայում եւ Կարինում (Էրզրում), հետագայում իր ուղեգրական նոթերում գրել տարբեր երկրներում իր հանդիպած հայերի մասին:

Տիգրանակերտցի **Աւետիք Բաղդասարեանը** 1682–1704 թթ. ճամփորդել է Եթովպիայում, Նուբիայում, Սուդանում, ներկայիս Չադ հանրապետութեան տարածքում, ապա Սահարա անապատով հասել է Աֆրիկայի հիւսիսային շրջանները, մինչեւ Ջիբրալթարի նեղուց¹⁸: Թունիսի մասին նա գրել է հետեւեալը. «... *Ճերմակ ծովեզերն Թօնուզին օճախն է. Օսմանլիէն փաշա կու նստի, եւ է հնազանդ Օսմանլուին. Թօնուզի ազգն արապ են. եւ ունին լայն եւ արծակ օլքա (հլլքէ, վիճակ) գեղօրայիլք. եւ ունին ալի (ապստամբ, անհանդարտ) արապ. թէ չկամին՝ չեն հնազանդիր: Եւ Թօնուզն ծովուն վերայ*

¹⁶ Անդ, էջ 97:

¹⁷ Տես **Գ. Գ. Միքայելեան**, Կիլիկիայի հայկական պետութեան պատմութիւն, Երեւան, 2007, էջ 195:

¹⁸ Աւետիք Բաղդասարեան ընթերցող Տիգրանակերտցի, Վասն որ կամի ի Հէպէշին երկիրն գալ, ասպէս է, «Բազմավէպ», Վենետիկ, 1897, ք. 10, էջ 459-463: Նրա մասին մանրամասն տես **Արտակ Մաղալեան**, Հայ ուղեգիրները Եթովպիայի եւ հայ-եթովպական յարաբերութիւնների մասին, «Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ հայերը...», հ. 2, էջ 133-136:

դալտոն ունի (մեծ նաւ, galeon), կու ծեծվի Ֆոնսկին հետն»¹⁹:

Թունիսը եւ Մադրեբը յիշուած են 16-րդ դարի հեղինակ Կարապետ վարդապետի «Ուռանաորս ասացեալ է Կարապետ վարդապետի ի վերայ որդոյն Նոյի, որ բաժանեցին գաշխարհքս վեց բաժին» բանաստեղծութեան մէջ («Թախտ ունին նօքա զԹաւնօզ, աշխարհաւ են Մադրիպաստան»²⁰):

Ըստ լրագրային մի յօդուածի՝ 17-րդ դարում հայեր են բնակուել Լիբիայում, որոնք 1665 թուականին մատուտ են կառուցել: Գաղութը եղել է մեծ եւ ինքնաբաւ, սակայն հետագայում ցրուել է²¹: Այս տեղեկութեան բուն աղբիւրը մեզ չյաջողուեց ճշտել: Լիբիան յիշուած է 1624 թուականին գրչագրուած մի հայերէն Աստուածաշունչ մատեանի յիշատակարանում՝ կապուած ժամանակի պատմական իրադարձութիւնների հետ. «Չի զկողմն արեւմտեան զկլիմն եւ զգերմասն Ասիական տիրեալ է հանդերձ Լիբիայի, զնահանգն Եգիպտական...»²²:


Նոյն 17-րդ դարում ստեղծուած մի հայերէն ժամանակագրութեան մէջ, որ վերագրուում է Անանուն Լ.իվոնոնցուն, յիշում է նաեւ Մարոկկոն. «1577 – բազաւորք Փօրթուկային բազում անգամ, բազում զօրօք յարեան ի վերայ Արաբացոց, որ մերձ է առ նոսա եւ կոչին Մարօքօ եւ Ֆեա եւ բազում պատերազմ պատերազմեցան, բայց ոչ ինչ օգտեցան

¹⁹ Անդ, էջ 463:

²⁰ Ուշ միջնադարի հայ բանաստեղծութիւնը (XVI–XVII դդ.), երկու հատորով, հատոր առաջին, աշխատասիրութեամբ **Յամիկ Սահակեանի**, Երևան, 1986, էջ 204: Նա նաեւ յիշել է «տալիք եւ Միսեք ասեն, Բօքաբայք աշխարհ հեռաստան». Բօքաբայքը ծանոթագրուած է որպէս աֆրիկեան երկիր (անդ, էջ 206): Տես նաեւ Կարապետ վարդապետի (1565) Տաղ աշխարհացոյց գեղեցիկ, «Բազմավէպ», հատոր ԼԸ, 1880, էջ 98:

²¹ Հայ գաղութը Լիպիոյ մէջ, «Ասպարեզ». 12.05.1964: Նոյնը տես Վաքսուն հայերէ բաղկացած գաղութ Լիպիոյ մէջ, «Ազգակ», 22.06.1964:

²² Հայերէն ձեռագրերի ԺԷ դ. յիշատակարաններ (1621–1640 թուականներ), հ. Բ, կազմ. Վ. Յակոբեան, Ա. Յովհաննիսեան, Երևան, 1978, էջ 149:



*եւ անկան անդրէն երեք թագաւորք եւ զօրք բազումք իրեանց
Երկիրն այն Աֆրիկա կոչի»²³:*

Այս տարածաշրջանում հայերի ներկայութեան յաջորդ փուլը վերաբերում է Հիւսիսային Աֆրիկայում օսմանեան տիրապետութեանը, երբ 15-րդ դարում Օսմանեան կայսրութիւնը զաւթել է այդ շրջանի երկրները եւ դարձրել նահանգներ: Պարադոքսալ կարող է թուալ, որ մինեանցից այնքան հեռու գտնուող հիւսիս-աֆրիկացիներն ու հայերը երեք դարից աւելի, 1515–1830 թուականներին, իրենց իսկ հայրենիքներում եղել են միեւնոյն կայսրութեան հպատակներ: Սակայն եթէ իր բնօրրանում ապրող արեւմտահայերը եղել են սոսկ հպատակներ՝ առանց վարչական միատրման, ապա ներկայիս Ալժիրի հիւսիսային տարածքն ընդգրկող Օսմանեան Ալժիրը եղել է կայսրութեան էլայերը (նահանգը) հանդիսացող վասալ պետութիւն: Այդ շրջանում Հիւսիսային Աֆրիկայի երկրները՝ Տրիպոլիւն (Լիբիա), Թունիսը, Ալժիրը եւ Մարոկկոն հայութեանը յայտնի են եղել դրանց օսմանեան անուններով՝ Թարապլուս, Թունուզ, Ջեզայիր եւ Մարոք²⁴:

Ալժիր

Այն, որ արդէն 18-րդ դարում Ալժիրում ապրել են հայեր, վկայել է 1717–1718 թթ. Ալժիրի ֆրանսիական հիւպատոսարանի քարտուղար Ժակ Ֆիլիպ Լանժեն դը Տասսին 1725-ին հրատարակած «Ալժիրի թագաւորութեան պատմութիւնը» գրքում: Նա նշել է, որ Ալժիրում բնակուող ֆրանսախօս ազգերը, ինչպէս նաեւ հրեաները, յոյները եւ հայերը վայելում են ֆրանսիական հիւպատոսի հովանաւորութիւնը եւ նրան են դիմում տարածայնութիւններ ունենալիս²⁵:

²³ Մանր ժամանակագրութիւններ, հ. 1, էջ 274:

²⁴ Տե՛ս Հրաչեայ Աճառեան, Հայ գաղթականութեան պատմութիւն, էջ 464:

²⁵ Տե՛ս Jacques Philippe Langien de Tassy, Histoire du royaume d'Alger, 1725, էջ 286:

Օսմանեան կայսրութեան Բարձրագոյն Դուռը 19-րդ դարում երբեմն այդ երկրներ պաշտօնավարելու է ուղարկել հայերի, ինչպէս, Ալժիրի կուսակալութեան սեղանաւոր Սարգիս Հովութեանին²⁶:

1830-ին Ֆրանսիան սկսել է Ալժիրի գաղութացումը, որը տեսել է մինչեւ հարիւրամեակի վերջը: Գաղութարարները սկսել են մտածել նորանուաճ ընդարձակ տարածութիւնները բնակեցնելու եւ լաւագոյնս մշակելու մասին, որն իրագործելու համար յարմարագոյնն են նկատել մարոնիտներին եւ հայերին՝ որպէս Օսմանեան կայսրութեան քրիստոնէայ հպատակներ եւ աշխատատէր հողագործներ: 1847-ին եւ 1854-ին Ֆրանսիայում հաւրայնօրէն արժարժուել է Ալժիրը Լիբանանի քրիստոնէաներով²⁷, իսկ 1855-ին՝ օսմանեան կաթոլիկ հայերով վերաբնակեցնելու հարցը²⁸: Վերջին առաջարկը կատարել է ֆրանսիացի աշխարհագրագէտ Վիկտոր Ամէդէ Բարբիէ դիւ

²⁶ Ըստ Հրաչեայ Աճառեանի՝ քուրքերի կողմից Ջեզայիր կոչուող Ալժիրում հայութեան գոյութեան մի ապացոյցն է Ճեզայիրեան ամիրաների տոհմը, որ ծագել է այնտեղ եւ ապա գաղթել Կոստանդնուպոլիս (տես՝ Հրաչեայ Աճառեան, Հայ գաղթականութեան պատմութիւն, էջ 465): Իտալաբնակ Սուրէն Ծովիկեանը այս վկայակոչման վերաբերեալ մեզ գրել է, որ դա իրեն հասնական չի թում՝ նշելով. «*Ես այդ ընտանիքին առնչուած եմ եւ գիտեմ թէ Ճեզայիրի անունն առաջ եկած է յայտնի Սկրտի, ամիրա Ճեզայիրեանի հօր՝ Սարգիս Հովութեանի ԺԸ դարու երկրորդ կիսուն երկարատուն Ալժիրի (Ճեզայիր) կուսակալութեան սեղանաւորն ըլլալու հանգամանքէն*» (անձնական ելզիր, 9.09.2011):

²⁷ Այս ծրագիրը յղացել է 1879-ին լոյս տեսած («Ֆրանսիան Լիբանանում») գրքի համահեղինակ, հրապարակախօս Լուի դը Բողիկուրը (1815–1883): Մերօրեայ հետազօտողն այս իրողութեան արձագանքն է համարել 1978-ին եւ 1982-ին Լիբանանում մայրնիտական դրածոյ պետութիւն ստեղծելու իսրայէլեան գաղափարը, որը, սակայն, ձախողուել է (տես՝ Տիգրան Եկաւեան, Արեւելքի փոքրամասնութիւններ. պատմութեան կողմից մոռացուածները, Երեւան, 2021, էջ 29):

²⁸ Տես Խորէն Գաբրիէան, Ալժերիա գաղթաւայր մարոնիներու եւ հայերու, «Յառաջ», 8.12.1960:

Բոկածը (1832–1890) 48 էջանոց մի գրքոյկով²⁹: Իր գրութեան մէջ նա նկարագրել է Ալժիրի աշխարհագրութիւնը, բարեբեր հողը, դրանից օգուտ քաղելու հնարաւորութիւնները: Նա նշել է, որ ապարդիւն փորձ է եղել Ալժիրը բնակեցնել ֆրանսիացիներով, մինչդեռ այնտեղ հաստատուելու համար պէտք է մի ժողովուրդ, որը բաւարարի հետեւեալ պայմաններին. ա) յարմարուի տեղի կլիմային, բ) լինի կրօնասէր, աշխատասէր եւ երկրագործ, գ) ունենայ զօրատր պատճառ՝ լքելու իր երկիրը: Ըստ Բարբիէ դիւ Բոկածի՝ այս պայմաններն ամբողջովին լրացնում են հայերը, որոնց հայրենիքը բաժանուած է երեք տէրութիւնների՝ Ռուսաստանի, Օսմանեան կայսրութեան եւ Պարսկաստանի միջեւ: Այնուհետեւ հեղինակը հիմնաւորում է, որ հայերը լաւ հողագործներ են, ճարտար արհեստաւորներ, ուշիմ վաճառականներ, խիստ աշխատասէր են, որոնց հետ չեն կարող մրցել անգամ Արեւելքի հրեաները: Նրանք նաեւ հմուտ են անասնապահութեան մէջ, մի բնագաւառ, որ բոլորովին անտեսուած է Ալժիրում: Ըստ նրա՝ հայերն աւելի լաւ կարող են յարմարուել Ալժիրի կլիմային, քան Կենտրոնական եւ Հիւսիսային Եւրոպայի բնակիչները: Բարբիէ դիւ Բոկածը նշում է, որ ուրիշ երկրներում հայերը ծուլւում եւ նուազում են, մինչդեռ Ալժիրում նրանք կարող են ապրել առանց ուժանալու: Ըստ նրա՝ Ֆրանսիան այդ կերպ կարող է փրկել իր կրօնակից հայերին, մանաւանդ որ կաթոլիկ հայերն Օսմանեան

²⁹ *Stu Victor-Amédée Barbie du Bocage, De l'Introduction des Arméniens catholiques en Algérie.* Paris, Amyot, 1855: Նոյն թուականին սոյն աշխատութիւնը լոյս է տեսել հայերէն թարգմանութեամբ (տես Մտաջարկութիւն հռովմէական հայ ժողովրդէն զաղքական տանելու ի ճեզայիր, «Մասեաց աղանի», 1855, ք. 5, էջ 107-111, ք. 6, էջ 133-139, ք. 7, էջ 180-184, ք. 8, էջ 155-163): Միւս դար անց, 1950-ականներին Ալժիրում սկիզբ առած ապստամբութեան առթիւ ֆրանսահայերը յիշել են այս գրութիւնը (տես **Հրանտ-Սամուէլ Կաթոլիկ հայերը Ալժերիա տեղաւորելու ծրագիր մը** (հարիւր տարի առաջ), «Յառաջ», 1956, մարտի 16-18, 20-22, 24-25, 27-31, ապրիլի 4-5): Տես նաեւ Խորեն Գաբրիէան, Ալժերիա զաղքավայր մարոմիներու եւ հայերու, անդ:

կայսրութիւնում ամէն անգամ կեղեքուելով՝ ապաւինում են ֆրանսիական դեսպանին եւ հիւպատոսին: Իր ծրագիրն իրականացնելու համար հեղինակը մատնանշում է Վենետիկի Մլխթարեան միաբանութիւնը, որը լատագոյն միջնորդ կարող է լինել հայերի եւ ֆրանսիական կառավարութեան միջեւ:

Բարբիէ դիւ Բոկաժի առաջարկին հակադրուել են պոլսահայ երեսփոխան Արիստակէս Ալթուն-Տիւրքին եւ ֆրանսիացի ակադէմիկոս, Սորբոնի համալսարանի գրականութեան դասախօս Սէն-Մարք Ժիրարդէնը³⁰. վերջինս «Դերա» օրաթերթում հրատարակած իր յօդուածում (1855, դեկտեմբերի 16) նշել է, որ հայերն իրենց կատարելութիւններն ակլի ապահով կ'պահեն բարեկարգուած Արեւելքում, քան Ալժիրում³¹:

Այսպիսով, թէ՛ հայ, թէ՛ ֆրանսիական շրջանակներում ֆրանսիացի հրապարակախօսի առաջարկի հանդէպ բացասական դիրքորոշման պատճառով հարցը շուտով մոռացուել է. մանաւանդ որ այն ժամանակ օսմանեան հայերն ամէն կերպ աշխատում էին չգրգռել սուլթանին:

1908-ին Ալժիրում եղել է նկարիչ Փանոս Թերլեմէզեանը, որն իր յուշերում գրել է. «Եզիպտոսից նաւ նստայ՝ Ֆրանսա մեկնելու համար, բայց ստիթից օգոտ քաղելով՝ հանդիպեցի Ալժիր՝ տեսնելու համար այն ճերմակ քաղաքը, որ Ֆրանսայի ամենամօտ աֆրիկեան գաղթավայրն է: Երբ Ալժիր դուրս եկայ, նրա ելոյթական ձեւով շինուած քաղաքամասը նուազ հետաքրքիր գտայ: Անմիջապէս բարձրանալ սկսեցի բլուրն ի վեր՝ տեսնելու արաբական թաղամասերը, որոնք նեղ ու ծուռտիկ փողոցներ ունէին: Նրանք վերին աստիճանի հետաքրքիր էին թէ՛ իրենց ճարտարապետութեամբ եւ թէ՛ բնակիչների բացօթեայ կեանքով: Ամէն տեղ սրճարաններ, հարբեցողութեան վայրեր եւ պոռնկատներ: Պարզ տեսնում էր, որ քաղաքակիրթ Եւրոպան ամէն միջոցների դիմում է՝

³⁰ Տէս Պ. Պարպիէ տիւ Պուքաժին առաջարկութիւնը, «Մասեաց տղամի», 1856, ք. 1, էջ 13-17:

³¹ Տէս անդ, էջ 15:

գաղութների ժողովուրդները մղելու դեպի հաշիշ, արքեցողութիւն եւ պոռնկութիւն, որպէսզի նրանք ժամանակ չունենան իրենց անկախութեան մասին մտածելոք»³²:

Առաջին հայը, որ մշտական հաստատուել է Ալժիրում, հաւանաբար եղել է քեմախցի **Թորոս Մաստիկեանը**: Յանկանալով ազատուել օսմանեան լծից՝ նա մեկնել է նախ Կիպրոս, որտեղ յաջողութեան շիասնելով՝ 1892-ին մեկնել է Մարսել: Այստեղ լսել է, որ Ալժիրը, լինելով արաբական երկիր, յարմար կլինի բանեցնելու իր արհեստը՝ սուրճ բովել եւ վաճառել: 1893-ին իր մօտ է բերել եղբօրը, 1908-ին՝ որդուն՝ **Քերովրէին** (ծն. 1890), որը զինուորագրուելուց խուսափելու համար այրուիտ գրուել է Թորոսեան եւ 1913-ին վերջնականապէս հաստատուելով Բիդայում՝ զբաղուել է սուրճի առեւտրով: 1896-ին Ալժիրում է հաստատուել զմիտնիացի **Վեմեանը**՝ չորս զաւակներով, որոնք ամուսնացել են տեղացիների հետ: Վեմեանը զբաղուել է ծխախոտի քնթուկների վերամշակմամբ՝ համագործակցելով անգլիական մի ընկերութեան հետ եւ հարստանալով: Նրան կոչել են «ալքանոցների հարուստ»: Որդիներից **Տիգրան Վեմեանը** ապահովագրական գրասենեակ է ունեցել: 1897-ին Ալժիր են հասել երզնկացի **Փալանճեան** եղբայրները, որոնք նոյնպէս զբաղուել են սուրճի գործով: 1910-ին այստեղ է հաստատուել **Կիպպէնկեանն** իր իսպանուի կնոջ եւ երկու որդիների հետ, որոնցից մէկը տեղական խմբերից մէկի գնդակ խաղացող է եղել: 1909-ին Ալժիրում են հանգրուանել **Ադամեան** եղբայրները: 1914-ին Ալժիրի Սեթիֆ քաղաքում են հաստատուել **Գալուստեանները**, Կոստանտինայում՝ **Ֆիլիպովիչը** եւ **Սիքայէլեանները**, Բոնում՝ **Պօղոսը** (բոլորն էլ քեմախցիներ), իսկ Օրան նահանգի Մեն-Կլու գիւղաքաղաքում հաստատուել ու սեփական բուժարանն է տնօրինել Բորդոյի բժշկական համալսարանի շրջանաւարտ **Շահինեանը** ֆրանսուի կնոջ հետ: Նրա զաւակներից **Նրուանդը** եղել է

³² **Փանոս Թերլեմեզեան**, Կեանքիս յուշերը, Երեւան, 2022, էջ 195-196:

ղեղագործ, **Արմենը՝** բժիշկ, **Հայկը՝** քիմիագետ³³ (նրանց զառակները նույնպես կրել են հայկական անուններ): 1915-ին Ալժիրի Սիդի-Բել-Աբբես բնակավայրից Մարսելի «Արմենիա» պարբերաթերթին գրած նամակում նրանք տեղեկացրել են, որ վեց տարուց ի վեր հաստատուել են Ալժիրում եւ զբաղում են առեստրով: Նրանք տեղեկացրել են, որ օսմանահայատակ լինելու պատճառով իրենց ուղղուած նամակները չեն յանձնում հասցեատէրերին: Հրատարակելով նամակը՝ Ազամեանները խնդրել են Ֆրանսիայում գտնուող հայ ազգային պաշտօնական մարմիններին եւ Փարիզի հայոց եկեղեցու հովտօթեանը հարկ եղած դիմումները կատարել ֆրանսիական կառավարութեանը՝ Ալժիրի հայերին այդ կացութիւնից փրկելու համար³⁴:

Այսպիսով, Ալժիրի հայ համայնքի հիմքը դրել են քեմախցիները, այնուհետեւ եկել են երզնկացի, պոլսեցի, զմիտնիացի, քեօթահիացի, սիվրիիսարցի, այնթապցի, ադաբազարցի, խարբերդցի, շապինգարահիսարցի, նոյնիսկ քիֆլիսցի հայեր, մեծ մասամբ՝ վաճառականներ, որոնք բոլորն էլ բարեկեցիկ դիրքի են հասել իրենց յամառ աշխատանքի շնորհիւ³⁵:

Առաջին համաշխարհային պատերազմի հետեւանքով օսմանեան հայ գաղթականների խմբեր Հիւսիսային Աֆրիկայի երկրներ են հասել ծովային ճանապարհով: Մարսելի «Արմենիա» թերթը վկայել է, որ Ալժիրում յայտնուած հայերին տեղական իշխանութիւնները ներութիւններ են պատճառել՝ որպէս օսմանահայատակների: Մասկայն հետագայում ալժիրեան կառավարութիւնը հայերի մասին անելի մանրամասն եւ ստույգ տեղեկութիւններ ստացած լինելով՝ սկսել

³³ Տե՛ս **Անշէն Կարօտմնի**, Մոռցուած գաղութի մը կեանքէն, «Յառաջ», 25.03.1947:

³⁴ Տե՛ս **Ս. Արամեան եղբարք**, Նամակ Ալժիրիէն, «Արմենիա», 14.04.1915:

³⁵ Տե՛ս **Թորթակից**, Չայն մը Ալժիրէն, «Երեան», 21.04.1926: Տե՛ս նաեւ **Անշէն Կարօտմնի**, Մոռցուած գաղութի մը կեանքէն, «Յառաջ», 27.03.1947:

է համակրութեամբ նայել եւ դիրութիւններ տալ տարբեր գործերում: Այդ թերթին ուղարկած թղթակցութեան մէջ Ֆիլիպպիլի բնակիչներ Սիքայէլեան եղբայրները տեղեկացրել են, որ ֆրանսիացիները համակրում են տեղացի հայերին եւ նոյնպէս փափագում են Հայաստանի ազատագրումը³⁶: Նոյն պարբերականին 1918 թուականին ուղարկուած մէկ այլ թղթակցութիւն տեղեկացրել է, որ Օրանի եւ շրջակայքի հայերը կատարել են իրենց հայրենակցի՝ Սիդրի-Բել-Արբեսի բնակիչ կեսարացի **Յարութիւն Թորոսեանի** յուղարկաւորութիւնը ֆրանսիացի քահանայով³⁷:

1919-ին Փարիզի «Վերածնունդ» ամսագրի ներկայացուցիչն Ալժիրում ունեցել է իր ներկայացուցիչն ի դեմս **Պոլոյեան** եղբայրների, որոնց անունը տպագրուել է ամսագրի շապիկի երկրորդ էջին: Փարիզի Հայ ազգային պատուիրակութեանը իրենց անձնագրեր տալու խնդրանքով դիմել են Ալժիրում ապաստանած **Ոսկան Սիքայէլեանը** (Կոնստանտինոպոլիս) եւ **Թորոս Դիլանեանը** (ծն. 1900) Սիդրի-Բել-Արբեսից³⁸:

Այս նոյն ժամանակամիջոցում մօտ 50 հայուհիներ որպէս գերի գտնուել են Ալժիրում: Օսմանեան կառավարութիւնը նրանց նուէր է տուել Մէքքէ ուխտի գնացած պժիոցիներին: Ալժիրցի հայերը սկսել են փնտրել նրանց, առաջին քննութիւնով գտել են **Մարիամ Գարամանճեան** (Մարի Պետրոս-Կարամանեան) անունով մի կեսարացի աղջկայ, որին, սակայն, իշխանութիւնները նորից վերադարձրել են նրան տիրած արաբին: Տեղի հայերը շարունակել են պայքարել նրան հայրենակիցներին վերադարձնելու ուղղութեամբ: Ալժիրում հետզհետէ երեսան են եկել նաեւ մահմեդականների մօտ գտնուող այլ հայուհիներ իրենց

³⁶ Տե՛ս Հայերն Ալժիրի մէջ, «Արմենիա», 26.05.1915:

³⁷ Տե՛ս Նամակ Ալժիրէն, «Արմենիա», 8.05.1918:

³⁸ Տե՛ս Հայաստանի ազգային արխիւ (այսուհետ՝ ՀԱԱ), ֆոնդ 430, ցուցակ 1, գործ 855:

գաւակներով, որոնց նոյնպէս ցանկացել են վերադարձնել³⁹: Նշենք, որ Գարամանճեանն Ալժիրում մնացել է մինչեւ ամուսնու՝ Մուսա Բուջելալի մահը. 1945-ին ընտանիքով բնակութիւն է հաստատել Տուլոնում (Ֆրանսիա): Նրա թոռներն են նկարիչ **Ֆարիդ Բուջելալը** (ծն. 1953) եւ գործարար **Մուրադ Բուջելալը** (ծն. 1960): Յատկանշական է, որ Ֆարիդ Բուջելալի պատկերասպատումներից մէկն է «Հայ մեծ մա-ն» (հայերէն թարգմանութիւնը՝ 2019, Ստամբուլ)⁴⁰:

Թուրքիայի Հանրապետութեան ստեղծումով Քենալ Աթաթիքը ցանկացել է երկրի բնիկ հայերին հնարատրինս հեռացնել տարածաշրջանից՝ գաղափար յղանալով նրանց տեղափոխել Ալժիրում եւ Մադագասկարում: Գործին ընթացք չտալու խնդրին միջամտել է Գալուստ Կիլպէնկեանը, որին յաջողուել է կասեցնել Աթաթիքի ծրագիրը՝ օգտագործելով ֆրանսիական ու անգլիական ներկայացուցչի իր հանգամանքը, հասնելով մի որոշման, որ հայերը մնան տարածաշրջանում եւ հանգրուանեն արաբական աշխարհում: Ըստ այդմ, Կիլպէնկեանը հող է գնել Լիբանանի հարաւում՝ Այնճարում, որտեղ եւ վերաբնակեցրել են հայ գաղթականներին⁴¹:

1921-ին հայ մամուլում գրուել է, որ Մերսինից Եգիպտոս մեկնելու մտադրութեամբ ճամփայ ելնող 350 հոգիանոց «Ճերկովիա» շոգեման Ալեքսանդրիայում իզուր սպասելուց յետոյ գաղթականներին փոխադրել է Ալժիր: «Այս կերպով *ատաջին անգամ ըլլալով Ափրիկէի այս հողամասին մէջ Հայերը*

³⁹ Տե՛ս Լ. Հ., Արձագանգներ հայ կեանքէն, «Վերածնունդ», թիւ 29, 9.10.1919, էջ 474:

⁴⁰ Տե՛ս նրա հետ մեր հարցազրոյցը՝ **Artsvi Bakhchinyan**, Farid Boudjellal, the Author of Armenian Granny, “The Armenian Mirror-Spectator,” 22.07.2021, **Արծուի Բախչինեան**, Ֆարիդ Բուջելալ՝ «Հայաստանի տառիկի» հեղինակը, «Ազգ», 18.08.2021:

⁴¹ Տե՛ս **Աստղիկ Չամբերթեան**, Գալուստ Սարգսի Կիլպէնկեան, մարդը եւ գործը, 2012, Լիսաբոն, էջ 52-53:

գաղութ կ'ունենան»⁴²: Սակայն իրականում, ինչպես տեսանք, Ալժիրում անելի վաղ արդեն փոքր համայնք է եղել...

Ինչպես ամենուր, Ալժիրում ապաստանած մի բուռ հայերը եւս պատկանել են տարբեր կուսակցութիւնների՝ Հայ յեղափոխական դաշնակցութեանը եւ Ռամկավար ազատական կուսակցութեանը: Դաշնակցականները պարբերաբար թղթակցել են Փարիզի «Յառաջ» օրաթերթին: 1923 թ. Ալժիրում ՀՌԱԿ գործերով եղել է Վահան Թերէեանը⁴³: Այս տեղեկութիւնը յուշում է, որ ալժիրաբնակ հայերի մէջ ռամկավարները մեծ թիւ պիտի կազմած լինէին, որպէսզի կուսակցական գործերով այնտեղ մարդ գործուողեր:

1923-ի տունալով՝ Ալժիրում, Թունիսում եւ Եգիպտոսում բնակուել է 1500 հայ⁴⁴: 1926-ի տունալով՝ մայրաքաղաք Ալժէից (Ալժիր, այժմ՝ Էլ Ջազաիր) 60 կիլոմետր հեռու գտնուող Բլիդա քաղաքում (որի շրջակայքը յիշեցրել է Հայաստանը) հաստատուել է Յունաստանից գաղթած մտաւորապէս 60-70 հայ, որոնք զբաղուել են գորգի եւ մետաքսի գործով⁴⁵: 1929-ին հայ մամուլը տեղեկացրել է, որ նոյն քաղաքում բնակուում են 15 հայ ընտանիք եւ երիտասարդ՝ 45-50 հոգի: Զսանի մօտ մանուկներ յաճախում են ֆրանսիական վարժարաններ: Քաղաքի հնագոյն հայ բնակիչ Քերուլբէ Թորոսեանին պատկանել է նպարեղէնի մի մեծ խանութ, մի հայ տնօրինել է մետաքսեղէնի գործարան, երկուսը՝ հագուստի խանութ: Երեք հայ զբաղուել են ոսկերչութեամբ, երկուսը՝ կօշկակարութեամբ, չորսը՝ շրջուն լուսանկարչութեամբ, մի քանիսը՝ շրջուն մանրավաճառութեամբ: Այս թղթակցութեան հեղինակը գրել է, որ ազգային կազմակերպութիւններ չկան, ոչ իսկ յոյս կայ, որ

⁴² Ալժէրիա հայ գաղթականներ կ'երթան, «Վերջին լուր», 21.12.1921:

⁴³ Տես Արծրուն Աւագեան, Վահան Թերէեան-Լեւոն Չալէն Սիրմէլեան. սերտ բարեկամութիւն եւ անդարձ բաժանում, «ԵՊՀ հայագիտութեան հարցեր», թ. 1 (10), 2017, էջ 123:

⁴⁴ Տես Հայութեան թիւը, «Հայաստանի կոչնակ», 20.01.1923:

⁴⁵ Տես Թղթակից, Չայն մը Ալժէրէն....

կլինեն⁴⁶: Իրականում որոշ ժամանակ Ալժիրում գործել է Հայ օգնութեան կոմիտէի մասնաճիւղը⁴⁷: Ըստ 1926-ի մի թղթակցի՝ «Տեղոյս գաղութը մինչեւ հիմա զուրկ էր Խ. Հայաստանի մասին տեղեկութիւններէ... ՀՕԿի կատարած աշխատանքները մեծ քաջալերանք մը եղան տեղոյս գաղութին, եւ յոյս կայ, որ մօտ ատենէն ՀՕԿ մասնաճիւղ մը կազմուի. կը յուսամ, որ առաջին մախաձեռնարկը պիտի ըլլան տեղոյս քաղաքացիներ՝ Իժեան (իմա՝ Ինճեան), Հասըրճեան (իմա՝ Հասրաճեան) եւ Պետրոսեանները»⁴⁸:

1931 թուականին ալժիրահայութեան թիւն ունեցել է հետեւեալ պատկերը.

Ալժիր (Ալժէ)՝ 20, Բլիդա՝ 80, Բորջ-Բու-Արերիջ՝ 15, Սէփիֆ՝ 25, Սան Առնո՝ 3, Գուրապս՝ 3, Կոնստանտինա՝ 15, Ֆիլիպպիլ՝ 2, Բոն՝ 8, Սուք Աիրաա՝ 5: Հայերը բնակուել են ծովափնեայ քաղաքներում, համայնքի անդամները մեծ մասամբ եղել են առեւտրականներ, բոլորն էլ բարեկեցիկ վիճակում, եկեղեցի եւ դպրոց չեն ունեցել, մանուկներին մկրտել են ֆրանսիական եկեղեցում, երեխաները յաճախել են ֆրանսիական դպրոց: Շատ հայեր ընդունել են ֆրանսիական քաղաքացիութիւն⁴⁹:

Նոյն 1931 թուականին Պօղոս Արզումանեանը Բլիդայից հայ մամուլին ուղարկուած իր թղթակցութեան մէջ հետեւեալ վկայութիւններն է տուել Ալժիրի հայութեան մասին⁵⁰: Ալժէում բնակուում են մի քանի ընտանիք եւ մի քանի երիտասարդ, որոնք զբաղուում են սուրճի վաճառքով եւ այլ առեւտրական գործերով: Կայ ներկայանալի մի ճաշարան: Ազգային կապն այնքան էլ սերտ չէ, բոլորը մտածում են միայն ապրուստ հայթայթելու մասին՝ մոռացած կամ մոռացումի տուած ամէն ինչ: Ամենամեծ

⁴⁶ Տե՛ս Յիր ու ցան հայեր Ալճերիոյ մէջ, «Հայրենիք», 25.08.1929: Նոյնը տե՛ս «Եփրատ», 24.08.1929:

⁴⁷ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 374, ց. 1, գ. 13-15:

⁴⁸ Թղթակից, Չայն մը Ալժէրէն....

⁴⁹ Տե՛ս Հայերը Ալճերիոյ մէջ, 7«Հայրենիք», 30.07.1931:

⁵⁰ Տե՛ս Աճէն Որբուկ, Նամակներ Ալճերիայէն. հայկական գաղութը, «Յառաջ», 10.03.1931:

հայկական համայնքը Բլիդայում է՝ 15 ընտանիք եւ նոյնքան էլ ամուրի երիտասարդ: Քերովբէ Թորոսեանն է, որ հասել է որոշակի դիրքի եւ վայելում է օտարազգիների յարգանքը: Բլիդայի միւս յայտնի հայորդին **Նեոնդ Ալակեօզեանն** է, որը 1923-ից տնօրինել է հիւսուածքեղէնի գործարան: Քաղաքում կան նաեւ հայ ոսկերիչներ, հանդերձեղէն վաճառողներ եւ կօշկակարներ: Հայ ամուրիների մի մասը զբաղուել է շրջիկ լուսանկարչութեամբ: Անգամ այդ փոքրիկ կղզիացած հայազաղութում բոյն է դրել ազգային անհամերաշխութիւնը, ինչի մասին էլ ցաւով արձանագրում է նամակագիրը: Նա պարբերաբար «Յառաջի» ընթերցողներին ներկայացրել է փոքրիկ համայնքի անցուդարձը, որ «*Հոս ալ առաջին օրերէն բոյն դրած են նորեկի, հինի, եսի ու դունի վեճերը, ի վնաս ընդհանուր շահուն եւ նոր սերունդին*»⁵¹:

Պօղոս Արզումանեանը նկարագրել է Ալժիրի առաջին հայկական հաւաքոյթը՝ 1931-ին Բլիդայում կազմակերպուած հայ նահատակներին նուիրուած սգահանդէսը: Ամբողջովին սեւապատ բեմը զայդարուած է եղել եղեռնագոհ մտատրականների լուսանկարներով եւ հայկական եռագոյնով, հայկական նահանգների անունով կոթողներով, հնչել է ասմունք եւ Կոմիտասի «Տէր ողորմեան», ելոյթ է ունեցել **Բ. Գազանճեանը**:

Նոյն թուականի օգոստոսին Ալժեռում **Պ. Հասրաճեանի** ռեստորանում տեղի է ունեցել Ալժիրի ազգային միութեան հիմնադրումը՝ ժամանակաւոր վարչութիւնով, կենտրոն ունենալով Բլիդան: Մասնակցել են Ալժէի եւ Բլիդայի հայերը, որոնց մէջ Ֆ. (պիտի լինի Բ.Քերովբէ) Թորոսեանը, **Ինճեանը**, Ալակեօզեանը, **Մարտիրոսեանը**: «*Հաւաքոյթը տեւեց մինչեւ ուշատեն. մթնոլորտը տաք էր, սիրտերը խանդավառ եւ ներկաները բաժնուիլ չէին ուզեր իրարմե*»⁵²: Այդ ձեռնարկից քաջալերուած՝ նոյն երեկոյեան կազմուել է եօթ հոգուց

⁵¹ **Անշէն Կարօտունի**, Եւ ներկայ, եւ բացակայ...

⁵² **Անշէն Կարօտունի**. Մենք ալ տօնեցինք Ապրիլ 11ը, «Յառաջ», 3.10.1931:

բարկացած վարչութեամբ ժամանակաւոր համայնքային մարմին՝ իբրեւ կորիզ Ալժիրի հայ ազգային միութեան: Պատուոյ նախագահ է ընտրուել ամենահինաբնակ ալժիրահայը՝ Քերովբէ Թորոսեանը:

Այսպիսով, շնորհիւ այս ազգային վարչութեան, ցիրուցան, միմեանցից հարիւրաւոր կիրճներէրով բաժանուած հայերը սկսել են ծառայել ազգային գործունէութիւն, օրինակ, մասնակցել են հանգանակութիւնների՝ յօգուտ Շիրակի երկրաշարժի աղետալներին օգնելու⁵³, զօրավար Անդրանիկի յուշարձանի, Ալեքսանդրէի սանճագի գաղթականների, Մարտիկի ՀՄԸՄ-ին՝ հիմնադրման 25-ամեակի (10 հազար ֆրանկ), հիւրընկալել են Երկրորդ աշխարհամարտի ժամանակ երկիր հասածներին, յատկապէս ամերիկեան բանակի հայ զինուորներին 1948-ին Աւետիս Ահարոնեանի թաղման առթիւ ծարկեպսակի փոխարէն 8000 ֆրանկ են փոխանցել Այնճարի «Յառաջ» վարժարանին, իսկ Հայաստան ներգաղթի հանգանակութեանը՝ 116 հազար ֆրանկ: Ալժիրաբնակ հայերն օգնութեան ձեռք են մեկնել նաեւ տեղի կարօտեալներին⁵⁴:

Ապրիլի 24-ի սգահանդէսը կրկնուել է 1929-ին, Բլիդայում, որի ժամանակ բանախօսել են Ղեւոնդ Ալակեօգեանը եւ Պօղոս Արզումանեանը, ասմունքել են տիկնայք **Գագանճեանը** եւ օրիորդ **Արզումանեանը**, երգել են **Մաղէն Այվատեանը** եւ **Երուարդ Խրիմեանը**, նաեւ երգ ու ասմունքով ելոյթ են ունեցել հաւայնքի մանուկները⁵⁵: *Ժամանակակցի վկայութեամբ. «Երանելի օրեր էին: Թեւ առած կը թռչէինք: Յոգնութեան, գոհողութեան առջեւ ընկրկիլ միտքէ չէր անցներ: Ունեցանք*

⁵³ Ի՛ դէպ, կայ վկայութիւն, որ Հայ յեղափոխական դաշնակցութիւնը Ալժիրի իշխանութիւններին մեղադրել է, «*թէ իբր երկրաշարժից տուժած Լեւինականի բնակչութեան օգտին ՀՕԿ-ի տեղական մասնաճիւղի կողմից հանգանակուող գումարը՝ կոմունիստական կուսակցութեան համար է՝*» (**Յովիկ Մելիքսեթեան**, Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները եւ հայրենադարձութիւնը, Երեւան, 1985, էջ 164):

⁵⁴ Տե՛ս Անշէն Կարօտունի, «Յառաջ», 18.03.1949:

⁵⁵ Անշէն Կարօտունի, Ապրիլ 11/24ի սգատօնը, «Յառաջ», 29.06.1932:

սեփական սրահ մը՝ «Րաֆֆի»: Ունեցանք հաւաքոյթներ, թատերական բաժիններ, ծրագիրներ՝ գրադարանի, հայերէնի դասընթացքի, եւն: Ափսոս, նոր սերունդի մեղադրանքը արժեցուցիւք, «Հայու գործ» դարձուցիւք»⁵⁶:

1933-ի մայիսի 6-ին ապրիլեան սգատօնը երրորդ անգամ նշուել է Ալժիրահայութեան կողմից, դարձեալ Բլիդայում, այս անգամ՝ ատի ծաւալուն: Սգահանդէսը բացուել է «Մեր հայրենիքով», որ դաշնամուրով կատարել է օրիորդ Միմեանը, մի խումբ երիտասարդների երգեցողութեամբ: Բացումը կատարել է Արմենակ Ղազարոսեանը, համայնքի անդամները դարձեալ հանդէս են եկել ասմունքով, երգով, դաշնամուրի նուագով, ցուցադրուել է նաեւ կենդանի պատկեր: Երկրորդ մասում ելոյթ են ունեցել Բլիդայի հայ փոքրիկները: Ուշագրաւ է, որ միջոցառման ընթացքում տեղի է ունեցել զարդանիշերի բարեգործական վաճառք, որից գոյացել է 215 ֆրանկ, այն յատկացուել է ամառային արձակուրդին փոքրիկների համար հայերէնի դասընթաց կազմակերպելու գործին⁵⁷: Մակայն նոյն 1933-ին Ալժիրի Ազգային միութեան կազմալուծման պատճառով այս գործունէութիւնը դադարել է: Պօղոս Արզումանեանի վկայութեամբ՝ «Տօնեցիւք միայն երեք տարի, որովհետեւ վէճերու դուր բացուեցաւ, – բարի ու չար նախանձ, եւ կարգ մը մարդիկ, ամէն բանի մէջ տեսան Դաշնակցութիւնը, մինչեւ իսկ պզտիկներու հայերէն սորվեցնելու մէջ...»⁵⁸:

Բարեբախտաբար, Ազգային միութիւնը վերակազմուել է երկու տարի անց, երբ 1935-ի աշնանը Հարաւային Ֆրանսիայի ազգային կենտրոնական վարչութիւնը առաջնորդական փոխանորդ, Մարսէլի ազգային վարչութեան հոգեւոր հովիւ Եղիշէ քահանայ Մսիթարեանին 47 օրով ուղարկել է Մարոկկո, Ալժիր, Լիբիա եւ Թունիս՝ հանգանակութիւն կատարելու նպատակով: Հոկտեմբերին Բլիդայում գտնուող Եղիշէ

⁵⁶ Անշէն Կարօտունի, Եւ ներկայ, եւ բացակայ...

⁵⁷ Անշէն Կարօտունի, Տարուէ տարի ատի ծաւալուն (Ապրիլ տասնմէկը մեր գաղութին մէջ), «Յառաջ», 19.05.1933:

⁵⁸ Անշէն Կարօտունի, Մեր գաղութը երկէ եւ այսօր, «Յառաջ», 5.02.1936:

քահանան եւ գրող Շաւարշ Նարդունին նպաստել են, որ ալժիրահայերը դարձեալ համախմբուեն ազգային կառոյցի շուրջ: Նարդունին մէկ ամիս անցկացրել է Ալժիրի հայութեան հետ՝ համընդհանուր խանդավառութիւն ստեղծելով իր դասախօսութիւններով⁵⁹: Եղիշէ քահանայ Մխիթարեանն իր տպաւորութիւն-գեկոյցն ամփոփել է Փարիզի «Յառաջ» օրաթերթում⁶⁰: Ըստ Մխիթարեանի՝ Ալժիրում բնակուող հայերի քիւր եղել է մօտ 500՝ հետեւեալ պատկերով. Ալժէ՝ 35, Բօն՝ 30, Բլիդա՝ 120, Բորջ-Բու-Արերիջ՝ 50, Բոնրալ՝ 10, Ֆիլիպպիլ՝ 10, Կոնստանտինա՝ 40, Սան Առնո՝ 15, Սէթիֆ՝ 60, Սուք Աիրաս՝ 15⁶¹: Ալժիրի հայութեան կենտրոնը եղել է Բլիդա քաղաքը, որտեղ բնակուել է 37 ընտանիք, ունեցել երեք թաղային խորհուրդ: Բուն Ալժէում ապրել է 14 հայ ընտանիք՝ երկու ապահովագրական պաշտօնեայ, երկու դերձակ, չորս լուսանկարիչ, մէկ առեւտրական, մէկ պաշտօնեայ, երկու աղիքագործ: Նրանցից հանգանակուել է 490 ֆրանկ: Բլիդայում բնակուել է 23 հայ ընտանիք՝ մի քանի առեւտրական, հինգ ոսկերիչ, երկու ճաշարանատէր, մէկ սափրիչ, երեք հին հագուստի վաճառական: Ազգային կեանքի եռանդուն գործիչ Քերովբէ Թորոսեանն ունեցել է առեւտրական մեծ տուն: Հայերն ունեցել են վարչական միութիւն: Հանգանակել են 1330 ֆրանկ: Բորջ-Բու-Արերիջ քաղաքում բնակուել է ութ հայ ընտանիք, բոլորն էլ՝ սեփական գործի տէր, գործել է վեց առեւտրական տուն, երկու հին հագուստի վաճառական եւ մէկ փաստաբան: Հանգանակել են 1860 ֆրանկ: Կոնստանտինա քաղաքի հայերից հանգանակուել է 730, Ֆիլիպպիլից՝ 1825, Բոնից՝ 200, Սուք Աիրասից՝ 530 ֆրանկ⁶²:

⁵⁹ Անշէն Կարօտունի, Մեռանք, էջ 120:

⁶⁰ Տե՛ս Երեք շէն գաղութներ. Մարոք, Ալժիրիա եւ Թունիս, «Ալիք», 19.01.1936: Տե՛ս նաեւ՝ Մարոքի հայ գաղութը, «Յուսաբեր», 20.01.1936:

⁶¹ Տե՛ս Հայերը Ալժիրոյ մէջ, «Յուսաբեր», 5.12.1935:

⁶² Տե՛ս Ալժերիոյ եւ Թունուզի հայերը, «Հայրենիք», 28.01.1936: Ի դէպ, 2007-ին շուշեցի մեքենավար Սուրէն Բաղդասարեանը անձնական գրոյցում մեզ

Եղիշե քահանայ Մխիթարեանը երկրորդ անգամ Հիսիսային Աֆրիկայի հայ համայնքներն այցելել է Երեք տարի անց, 1938-ին, որի ժամանակ ապրիլի 9-ին Բլիդայում բացուել է հայ համայնքի հաւաքավայրը՝ «Րաֆֆի» սրահը, բացումն ուղեկցուել է ասմունքով, մեներգերով եւ անգամ տեղացի սիրողների կողմից ներկայացուել է «Դրումի վաճառականը» թատերախաղը: Իսկ ապրիլի 30-ին «Րաֆֆի» սրահում տեղի է ունեցել ապրիլեան սգահանդէսը՝ բանախօսութիւններով եւ ազգային երգերով⁶³:

1935-ին Ալժէի Զաղաքապետարանի քատրոնում բանախօսութեանը հանդէս է եկել ֆրանսուիի տիկին Յեր-Պօղոսեան-Պըտին, որը ժամանակին բնակուել է Բաքում եւ 1918-ի հայոց կոտորածի ժամանակ կորցրել է ամուսնուն եւ երկու զաւակին: Բանախօսութեանը ներկայ հիմնականում ֆրանսիացի ունկնդրին նա ներկայացրել է հայ ժողովրդի պատմութիւնը եւ կենտրոնացել յատկապէս 1914–1918 թթ. իրադարձութիւնների վրայ: Իր հայանպաստ բանախօսութիւնները նա կրկնել է մի քանի այլ կենտրոններում եւ մտադիր է եղել անցնել նաեւ Մարոկկո⁶⁴:

1938-ին Ալժիրում բնակուել է 96 հայ ընտանիք, մօտաւորապէս 400 հոգի (Ալժէ, Սեզոն-Կարտ, Բլիդա, Աֆրլվիլ, Բորջ-Բու-Արերիջ, Կոստանտինա, Ֆիլիպիլ, Բոն, Սուք Աիրաս, Օրան եւ Բելաբես բնակավայրերում): Մեծամասնութիւնը շարունակել է մնալ ինքնաբաւ առեւտրականներ, հիմնական զբաղմունքը՝ սուրճի գործ,

յայտնել է, որ 1970-ականների սկզբին, ծառայելով Եգիպտոսում տեղակայուած խորհրդային նաւատորմում, հնարատրութիւն է ունեցել այցելել Ալժիրի եւ Թունիսի նաւահանգիստները եւ Ալժիրի Բոն (ներկայումս՝ Աննաբա) քաղաքում իրեն է մօտեցել տեղաբնակ մի հայ եւ ասել, որ ունի սեփական ոսկերչական խանութ:

⁶³ Անշէն Կարօտունի, «Րաֆֆի» սրահին բացումը եւ Ապրիլ տասնըմէկ, «Յառաջ», 17.03.1938:

⁶⁴ Անշէն Կարօտունի, «Դուք ձեր արժէքները գնահատել չէք գիտեր», «Յառաջ», 23.05.1935:

նպարավաճառութիւն, ոսկերչութիւն, հագուստեղէն, աղիքի մշակում, ճաշարան եւ այլն: Եղել են նաեւ մէկական սափրիչ, կօշկակար, շրջուն լուսանկարիչ, բժիշկ, փաստաբան, ապահովագրական գործակալ, դերձակ, մի քանի գրասենեակի պաշտօնեաներ: «Մերոնք բոլորն ալ իրարու մօտ ըլլալու կը ձգտին եւ իրար հիւրասիրելու հայկական հին բարի սովորութիւնը չէ մոռցուած: Անշուշտ, յոռի բարքեր ալ չեն պակսիր»⁶⁵:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին 56 պիլիւպեանցի հայ երիտասարդներ մասնակցել են Թունիսի, Իտալիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի կռիւներին, ոմանք արժանացել են շքանշանների: Համայնքը տուել է ընդամենը մէկ զոհ, մի քանի վիրաւոր եւ գերիներ⁶⁶: Ալժիրի ճակատում են յայտնուել նաև ֆրանսաբնակ հայեր: Նրանց մէջ է եղել նաեւ ապագայ ճանաչուած նկարիչ **Խաչատուր (Ռիշար) Ժերանեանը** (1921–2019), որին հետագայում ուղարկել են Ֆէս քաղաքը (Մարոկկո), որտեղ մնացել է մինչեւ 1946-ը: Ալժիրում ամերիկեան զօրքի հետ գտնուած Քըրք Բուչաքը (Գրիգոր Պուչաքեան) աչքի է ընկել մարտական խիզախութեամբ⁶⁷:

Պատերազմից յետոյ որոշ պիլիւպեանցի հայեր գաղթել են Ֆրանսիա՝ Մարսէ, Կանն, Փարիզ: Նրանց մեկնելու դրդապատճառներն էին զաւակների համար հեռանկարային կեանք ապահովելը, մէկուսացած կեանքից դուրս գալը, հայ միջավայրի հանդէպ ունեցած կարօտը: Մինչեւ անգամ Ալժիրում 1926-ին ծնուած **Կլեման (Կլիմենտ) Սուրենի Փալանճեանը** 1947-ին Ֆրանսիայից հայրենադարձուել է, ուսանել Մոսկուայի Օտար լեզուների ինստիտուտում: 1949-ին ՊԱԿ-ը փորձել է իր շարքերն ընդունել նրան: Թոյլտութիւն է

⁶⁵ Անշէն Կարօտունի, Մեր գաղութը երէկ եւ այսօր, «Յառաջ», 5.02.1936:

⁶⁶ Տե՛ս Անշէն Կարօտունի, Մոռցուած գաղութի մը կեանքէն, «Յառաջ», 27.03.1947:

⁶⁷ Տե՛ս Գաղութ գաղութ, «Արաքս», 5.05 1945:

ստացել մեկնել Մարոկկո, որտեղ ազգականներ է ունեցել⁶⁸:

1947-ին հրատարակուած մի թղթակցութեան մէջ Ալժիրի երեք նահանգների բնակավայրերում հայերի բուային պատկերը եղել է հետեւեալը՝

Բնակավայր	Ընտանիք	Հոգի
Բլիդա	25	102
Ալժէ	22	71
Օրան	7	32
Բորջ-Բու-Արերիջ	6	27
Մեթիֆ	6	25
Կոնստանտինա	5	26
Բոն	5	22
Մեզոն Բարտ, Բուրա, Ֆոր դը Լո, Բուժի, Բլիդա, Սուք Աիրաս	4	17
Միդի-Բել-Արբու	4	13
Աֆրովիլ	3	11
Ֆիլիպիլի	3	9

Այսպիսով, ալժիրահայութեան ընդհանուր թիւը 1947-ին եղել է 90 ընտանիք, 355 հոգի: Ըստ տեղեկութիւնը հաւորդողի՝ սա մօտաւոր թիւն է, որոնց կարելի է ատելացնել մոռացուածների, խուլ անկլիններում մնացածների եւ ամուրիների⁶⁹: 1953-ին Ալժիրի հայերի թիւը յիշուած է 350: Բոլորն ունեցել են բարեկեցիկ վիճակ, գործել մեծածախ եւ մանրածախ նպարեղէնի ու հին հազուատների առքուվաճառքի, ոչխարի աղիքի մշակման, արաբական եւ եւրոպական ոսկերչութեան բնագաւառներում, նրանց մէջ եղել են

⁶⁸ Felix Corley, Armenians in Mitrokhin's KGB notes, <https://www.anjarc.am/2018/03/07/armenians-in-mitrokhins-kgb-notes/> (դիտուած՝ 24.04.2020):

⁶⁹ Տե՛ս ԱՆՉԷՆ Կարօտունի, Մոռցուած գաղութի մը կեանքէն, «Յառաջ», 27.03.1947:

ճաշարանատեր, սափրիչ, կօշկակար, դերձակ եւ շրջուն լուսանկարիչներ: Ազգային տեսակետից՝ ոչ մի յուսադրիչ երեւոյթ չի եղել, կրօնական արաբոդոքսիւնները կատարել են կաթոլիկ եկեղեցում: Շատերը ստացել են «Յառաջ» եւ «Հայ-բոյժ» պարբերականները:

1950-ի մայիսի 8-ին Ալժեում անգլիական մատենադարանի սրահներից մէկում «Վերջին ժամ» օրաթերթի երաժշտական քննադատ Ժիլ Թոբերը դասախօսել է Արամ Խաչատրեանի մասին՝ Ալժիրի ընդհանուր կառավարիչ Նեփլէնի հովանաւորութեամբ: Կատարուել է Խաչատրեանի գործերից մի քանիսը: Ինչպէս նշել է «Յառաջի» թղթակիցը. «Մոլորած կռունկի նման, քանի մը Հայերս քով քովի գալով՝ մեր յուզումն ու սքանչազումը կը փոխանցէինք իրարու, որովհետեւ Խաչատրեանի երաժշտութիւնը, ամէնէն շատ մեր խռովայոյզ հոգիներուն կը խօսէր»⁷⁰: Նոյն թղթակիցը նշել է, որ սպազայում Ժիլ Թոբերը ծրագրել է կազմակերպել միջոցառում՝ Ալժէի եւրոպական համալսարանը ներկայացնելու հալ ժողովրդական երգերը:

Ալժիրահայերի մասին ժամանակակիցը դիպուկ է բնորոշել, որ «Անհատապէս բոլորն ալ հայրենասէր են եւ հիւրասէր, բայց հաւաքաբար, ապիկար, ինչպէս հաստատեց փորձը: Նորեկ մը կ'արժանանայ բոլորին հիւրասիրութեան. մէկը միւսին հետ կը մրցի, բան մը աւելի ընելու համար: Դեռ կը պահեն մեր ազգային ասանդութիւնները: Բոլորն ալ անխտիր օգտուեցան մանուսանդ սյատերագմի շրջանին: ...եղան վէճեր, խօսքեր տաք ու պաղ, մանուսանդ երբ նորեկները ուզեցին համերաշխութեամբ ստեղծել ազգային շարժում մը»⁷¹: Ինչպէս փոքրաքանակ բոլոր համայնքներում, Ալժիրի հայերի նոր սերունդներն էլ մեծացել են բոլորովին անտեղեակ իրենց ազգային ինքնութիւնից, միայն ազգանուններն են զգացնել

⁷⁰ Վահան, Երաժշտական երեկոյթ մը Ա. Խաչատրեանի գործերով, «Յառաջ», 13.05.1950:

⁷¹ Անշէն Կարօտունի, Մոռցուած գեղութի մը կեանքէն, «Յառաջ», 27.03.1947:

տուել իրենց տարբերութիւնը: Ըստ Պօղոս Արզումանեանի՝ «Քիչեր կան որ կտորիկ մը կը թոթովեն քանի մը հայերէն քառեր, այն ալ աղճատուած: Այս սեւ տախտակին մէջ դժբախտաբար տեղ կը բռնեն իմիճներս ալ...»⁷²:

1954-ի սեպտեմբերի 9-ին Ալժիրում տեղի է ունեցել ուժեղ երկրաշարժ, որից տուժել են նաեւ տեղի հայերը: Նրանց օգնութեան են շտապել Ալժէի բնակիչներ Պօղոս Արզումանեանը, Գ. Տէրտէրեանը եւ Ստեփան Ալակեօզեանը, նաեւ ռումինաբնակ Վարուժանը, որի ծնողներն ապրել են երկրաշարժի էպիկենտրոնում՝ Օռլեանվիլ (այժմ՝ Շլեֆ) քաղաքում⁷³:

1956-ին Ալժէ մայրաքաղաքում ապրել է 20 ընտանիք, Բլիդայում՝ 25 (հինգը՝ ոսկերիչ), Բորջ-Բու-Արերիջում՝ տաս (բոլորն՝ առետրականներ), Կոնստանտինայում եւ Սուր Աիրասում՝ ութ, Օռլեանվիլում, Ֆիլիպվիլում եւ Աֆրովիլում՝ հինգ, Սիդի-Բել-Աբբեսում՝ չորս:⁷⁴

1954-ին սկսուել է Ալժիրի ազատագրական պայքարը Ֆրանսիայի դէմ, այսպէս կոչուած՝ ալժիրեան պատերազմը, որը տեւել է մինչեւ երկրի լիակատար անկախութեան հռչակումը 1962-ին: Այս սլատերազմին Ֆրանսիայի կողմից մասնակցել են մի շարք ֆրանսաբնակ հայեր եւ հայկական ծագումով ֆրանսիացիներ, օրինակ, Յովսէփ Յակոբեանը⁷⁵: Ֆրանսիայի կողմից կոտորղ հայերը տուել են նաեւ զոհեր, ինչպէս, Այն Սեֆրայի ճակատամարտում զոհուած Ռընէ Իսթիւճեանը Նիսից (1926–1957), որը մինչ այդ մասնակցել էր Երկրորդ աշխարհամարտին եւ Հնդկաչինի կռիւներին,⁷⁶ Ժանթիյի բնակիչ, 21-ամեայ Պիեռ Նորիատեանը (1936–1957),

⁷² Անդ:

⁷³ Տե՛ս Անշէն Կարօտունի, Ալժերիոյ երկրաշարժը, հայեր ալ վնասուած են, «Յառաջ», 24.09.1954:

⁷⁴ Տե՛ս Հայերը Հիսիսային Ափրիկէի մէջ, «Հայաստանի կոչնակ», 27.10.1956, էջ 929:

⁷⁵ Տե՛ս Նշան Ա., Տիպար հայր մը, «Յառաջ», 5.09.1956:

⁷⁶ Տե՛ս Զոհ մը եւս Ալժերիոյ մէջ, «Յառաջ», 20.03.1958:

որին Անդրանիկի զինուոր Սեպուհ Նորհատեանի,⁷⁷ Յակոբիկ Յովհաննէսեանը (1938–1959) Վիեննից,⁷⁸ Միշել Պաղտասարեանը Ալֆորվիլից:⁷⁹

1959-ին Պօղոս Արզումանեանն Ալժէից նամակ է յղել «Յառաջին»՝ նշելով, որ մօտ երեք տարի է, ինչ ինքը Ֆրանսիայի զանազան շրջաններից նամակներ է ստանում Ալժիր գտնուող հայ զինուորների ծնողներից: Նա իր ուժերի ներածի չափով աշխատում է օգտակար լինել բոլոր նամակագիրներին եւ պատրաստ է բարոյական օգնութիւն ցոյց տալ բոլոր հայերին, յատկապէս Ալժիրի հիւանդանոցներում գտնուողներին: *«Միեւնոյն ժամանակ պարտք կը համարիմ խնդրելու, որ չափազանցուած շնորհակալութիւններու, երախտիքներու ետեւէն չվազեն, որովհետեւ այս տեսակ պարտականութիւններ ազգային ըլլալէ աւելի մարդկային են»*, – այսպէս է եզրափակել Արզումանեանն իր նամակը՝ վերջում նշելով իր հասցէն եւ հեռախօսահամարը:⁸⁰

Յիշենք Ալժիրում բնակուած մի քանի հայ անհատների:

Արդէն բազմիցս յիշուած Պօղոս Արզումանեանը (1905, Շապին Գարահիսար – 1988, Մարսէլ) Յեղասպանութեան ժամանակ որբացել է, քրոջ հետ ապրել որբանոցներում, յայտնուել Մարսէլում: 1931-ին տեղափոխուել է Ալժիր (Բլիդա, ասպա՝ Ալժէ), որտեղ ապրել է 31 տարի՝ յաջողապէս տնօրինելով մի հիւրանոց-ռեստորան, զբաղուել այլ աշխատանքներով եւս: Թէեւ նա գրել է, որ Ալժիր է տեղափոխուել՝ ցանկանալով *«լուռ ու մունջ գլուխս առնել հեռանալ, քիչ մը եւս թափառիլ... ոչինչ կ'իմանամ աշխարհէն,*

⁷⁷ Տէն Հայ երիտասարդ մը կ'իյնայ Ալժերիոյ ճակատին վրայ, «Յառաջ». 29.12.1957: Թաղեցի մը, Կսկծալի կորուստ մը, անդ, 23.01.1958:

⁷⁸ Տէն Կ. Տ., Տիբունի, «Յառաջ», 4.03.1960:

⁷⁹ Տէն մահազօղ, «Յառաջ», 28.02.1960:

⁸⁰ Պ. Արզումանեան, Ալժերիա զինուոր ունեցողներուն, «Յառաջ», 10.03.1959:

ոչինչ հայութենէն ու հայրենիքէն»⁸¹, իրականում նա դարձել է ամենագործունն ակժիրաբնակ հայերի մէջ, կազմակերպել ազգային ձեռնարկներ, 1930–1950-ական թթ. Փարիզի «Յառաջ» օրաթերթին պարբերաբար թղթակցութիւններ է ուղարկել Ալժիրի հայերի մասին, Լեոն Շանթի մահուան առթիւ Ալժէի հայերի անունից ցաւակցական հեռագիր է յղել «Յառաջին»⁸²: Արզումանեանն իր թղթակցութիւնները ստորագրել է Անշէն Ռրբուկ, Անշէն Կարօտունի եւ Պ. Կարօտունի: Ամուսնացել է իր պէս շապինգարահիսարցի որբ **Նարզիզ Քիւրքճեանի** հետ, ունեցել չորս որդի՝ **Արմէն** (1936–2016), **Ազատ** (ծն. 1938), **Ռաֆֆի** (ծն. 1942) եւ **Վարուժան** (ծն. 1952)⁸³: Արմէնը եւ Ազատն ուսանել են Վենետիկի Մուրատ-Ռափայելեան վարժարանում, Արմէնը նաեւ՝ Սերի Միսթարեան վարժարանում (1949–1950): Բաֆֆին եղել է դաշնամուրի ուսուցիչ: Ազատ Արզումանեանը դարձել է նկարիչ, պլաստիկ արուեստագէտ՝ Ալէն Ազատ անուամբ: Նկարչական նախնական կրթութիւնն ստացել է Ալժիրի Գեղարուեստի դպրոցում, այնուհետեւ Գրենոբլում: 1954-ին մրցանակակիր է դարձել Ալժիրում կայացած որմնագրի մրցոյթում: Նրա անունը որպէս Ալէն Արզումանեան յիշուած է «Ալժիրի նկարիչները» բառարանում⁸⁴: Իսկ Վարուժան Արզումանեանը (մարտէլաբնակ ճարտարապետ) հիմնել է «Պարանտէզ» հրատարակչութիւնը, որը հրատարակել է ճարտարապետութեան ու նաեւ հայութեան վերաբերեալ գրքեր եւ հայ գրականութեան բազմաթիւ թարգմանութիւններ ֆրանսերէնով:

1950-ականներին Ալժիրում սկսուած արաբական ազգայնական շարժման պատճառով 1961-ին Պօղոս

⁸¹ Տես Անշէն Կարօտունի, Մեռանք, բայց կ'ապրինք, էջ 115:

⁸² Ցաւակցական հեռագիրներ եւ նուիրատուութիւններ, «Յառաջ», 29.12.1951:

⁸³ Տես Անշէն Կարօտունի, Մեռանք, բայց կ'ապրինք, էջ 128:

⁸⁴ Տես Elisabeth Cazenave, Les artistes de l'Algérie: dictionnaire des peintres, sculpteurs, graveurs, 1830-1962, Bernard Giovanangeli Éditeur, 2001, էջ 141:

Արզումանեանը որոշ ժամանակ բանտարկուել է երեք որդիների հետ: 1962-ին վերադարձել է Ֆրանսիա, հաստատուել Մարսելում: 1990-ին, Բէյրութում յետմահու լոյս է տեսել Պօղոս Արզումանեանի «Մեռանք, բայց կ'ապրինք» հատորը (Անշէն Կարօտունի գրչանուամբ), որտեղ ընդգրկուած են նաեւ Ալժիրի վերաբերեալ գրութիւնները⁸⁵:

Ալժիրում են բնակուել Պոլսոյ դեղագործական վարժարանում ուսանած **Սկրտիչ (Բասիստ)** եւ **Էմանուէլ Էքսլրճեան** եղբայրները, որոնք Կոմոտիհիում (Յունաստան) իրենց հօր՝ Յակոբ Էքսլրճեանի սպանութիւնից յետոյ տեղափոխուել են Ալժիր իրենց մօր՝ **Մաննիկ Էքսլրճեանի (Մարգսեան)** հետ: Կտորեղէնի վաճառական Սկրտիչ Էքսլրճեանը (ծն. 1890, Կոմոտիհի, մահ. Սուք Ահրաս) ամուսնացել է **Անժել Բրուսալիի** (1911, Բուրսա – 1985, Նիս) հետ: Ալժիրում են ծնուել նրանց որդին՝ **Ժաք Էքսլրճեան** (1933, Սուք Ահրաս – 1964, Դրէա, Ալժիր) եւ վերջինիս որդիները՝ **Ժան-Ժաք** (ծն. 1958, Սուք Ահրաս) եւ **Մերժ Էքսլրճեանները**, որոնք հետագայում հաստատուել են Ֆրանսիայում: Իսկ Էմանուէլ (Մանուէլ) Էքսլրճեանը, ծնուել է Ադրիանապոլսում, մահացել Փարիզում⁸⁶:

Երկրեերկիր թափառելուց յետոյ Ալժիրում է հաստատուել **Մխիթար Պետրոսեանը**, ծնունդով Վասպուրականի Տոսպ գաւառի Լեսկ գիւղից: Նա մասնակցել է Վասպուրականի հերոսամարտին, 1918-ին մտել է կամաւորական ջոկատ: Մահացել է 1960-ի սեպտեմբերի 17-ին, Ալժիրի Բիւժէ սիւր

⁸⁵ Արզումանեանի՝ մանկութեանը վերաբերող հատուածները ֆրանսերէն թարգմանութեամբ լոյս են տեսել Անահիտ Տեր-Սիմասեանի եւ Հուրի Վարժապետեանի կազմած «Մեր մանկութեան աշխարհները» հատորում (տե՛ս **Anahide Ter Minassian, Hourri Varjabedian** (eds.), *Nos terres d'enfance: L'Arménie des souvenirs*, Marseilles, 2010, էջ 173-178): Տե՛ս նրա մահախօսականը՝ Պօղոս Արզումանեան, «Յառաջ», 8.11.1988:

⁸⁶ Ն.ամակագրութիւն Ժան-Ժաք Էքսլրճեանի հետ (26.01.2022): Սկրտիչ Էքսլրճեանի մասին տե՛ս նաեւ **Կարօ Գեորգեան**, Միքայէլ Էնէզեան, «Յառաջ», 9.09.1955:

Արժանա բնակավայրում⁸⁷: Ալժեում հայ հօր (Վահան Կիլպեմկեան) եւ ֆրանսուհի մօր ընտանիքում է ծնունել պատմաբան, Պորտուգալիայի եւ Հայաստանի Գիտութիւնների ակադեմիայի անդամ **Ռորեառ Կիլպեմկեանը** (1923–2009), որը նաեւ ծառայել է ֆրանսիական բանակի՝ Հիւսիսային Աֆրիկայի ստորաբաժանումում⁸⁸: Իր կեանքի առաջին 21 տարին Ալժիրում է ապրել հայ-ֆրանսիական ծագումով կինոդերասան եւ գրող **Իվ Վենսանը** (1921–2016), որի հայրը՝ վաճառական, ծնունդով դամասկահայ Ալֆրեդ Վենսանը ֆրանսուհի կնոջ հետ Ալժիր է տեղափոխուել՝ խուսանաւելով Ֆրանսիայում տիրող ազգայնական տրամադրութիւններից⁸⁹: 1939-ին Իվ Վենսանը աշխարհի չենպիտոն է դարձել Ալժիրի ջրագնդակի հաւաքականում, իսկ դերասանական գործունեութիւնը սկսել է «Ռադիո-Ալժիրի» թատերախմբում:

1950-ին Ալժիրի բռնցքամարտի ախոյեան է հռչակուել **Էդուարդ Աճեմեանը**, որն առաջնութիւն է շահել Ալժիրի արեւմտեան շրջանի մրցումներում՝ մարզիկներ Դամիայի եւ Թահարայի դէմ տարած յաղթանակներով: Կէս միլիոնից աւելի ալժիրցիներ հետեւել են այդ մենամարտին⁹⁰:

1960 թուականին Ալժիրում բնակուել է 85 հայ ընտանիք՝ 400 հոգի. Ալժեում՝ 16 ընտանիք, մօտ 60 հոգի (Վահան Կիլպեմկեան, Վահան Աղաճանեան, Յաբէթ Տէրտերեան, Գապարեան եղբայրներ, Ղազարոս Գրիգորեան, Գրիգոր Մարգարեան, Լեւոն Մուրատեան, Կարապետ Յովհաննիսեան եւն), Բլիդայում՝ 25 ընտանիք, 120 հոգի (Դեւոնդ Ալակեօզեան,

⁸⁷ Տե՛ս **Յովհաննէս Պուլանեան**, Տխրունի, «Յառաջ», 12.10.1960:

⁸⁸ Տե՛ս **Վահրամ Ղարախանեան**. «Գալուստ Կիլպեմկեան» հիմնարկութեան հայանպաստ գործունեութիւնը 1956–2006 թթ., Երեւան, 2008, էջ 218:

⁸⁹ Տե՛ս **Սերովբէ Մխիթարեան**, Ֆրանսերէնով արտայայտուող հայ արուեստագետներ, Փարիզ, 1969, էջ 302-303:

⁹⁰ Տե՛ս Հայ կոմիամարտիկ մը Ալժերիոյ ախոյեան, «Չարթօնք», 31.05.1950, նոյնը տե՛ս «Հայաստանի կոչնակ», 26.08.1950, էջ 811:

Պօղոս Արզումանեան, Այվազեան եղբայրներ, Արմենակ Ղազարեան, Գեորգ Ղազնեճեան, Գրիգոր Հաճիպէյեան, Գազանճեան եղբայրներ, Պերճ Միքայէլեան, Սարգիս Մուրատեան, Նազարէք Պետիկեան, Տիգրան եւ Օննիկ Սարաֆեաններ, Քերովբէ Թորոսեան), Բորջ-Բու-Արերիզում՝ տաս ընտանիք, մօտ 50 հոգի, ամետրականներ (Աճեմեան եղբայրներ, Շիշմանեան, Սարգիս Ղազարոսեան, Արիս Գոհարեան, Վահրամ Գրիգորեան, Յակոբ Միսէվէլեան, Սարգիս Օհանեան եւն), Կոնստանտինայում՝ եօթ ընտանիք, մօտ 40 հոգի (Տօնիկեան, Վահէ Ղազարեան, Սողոմոն Մէքունեան եւն), Սուք Աիրասում՝ ութ ընտանիք, մօտ 50 հոգի (Էմանուէլ եւ Մկրտիչ Էքսերճեաններ, Յարութիւն Խաչատուրեան, Հերմօ Թաշճեան եւն), Սեթիֆում՝ ութ ընտանիք, մօտ 40 հոգի (Երիա Առաքելեան, Մինաս Հայրապետեան, Լեւոն Իփիլիզեան, Ներսէս Գալուստեան եւն), Բոնում՝ հինգ ընտանիք, Օռլեանէիում եւ Ֆիլիպիում՝ չորս ընտանիք, Սիդի-Բեյ-Արբէտում՝ երեք ընտանիք: Նրանց տնտեսական վիճակը գնահատուել է լաւ՝ հակառակ երկրի պատերազմական վիճակին⁹¹:

Ալժիրի բնակիչ Արշակ Գրիգորեանը Սփիւքահայութեան կոմիտէի միջոցով բաժանորդագրուել է «Հայրենիքի ձայն» եւ «Սովետական գրականութիւն» պարբերականներին⁹² եւ 1971-ի մարտի 18-ին այդ պարբերականներին յղած նամակում յիշել է, որ Ալժիրում մնացել է 3-4 հայ տուն:

Ալժիրի հայ բնակիչների վերաբերեալ մեզ հասած վերջին տեղեկութիւնը վերաբերում է 1983-ին՝ 20 հոգի⁹³:

Հետագայ տասնամեակներին Ալժիրում ժամանակաորապէս տարբեր առաքելութիւններով գտնուել են հայեր տարբեր երկրներից, յատկապէս Ֆրանսիայից: Այսպէս, 1981-

⁹¹ Տե՛ս Յովհ. Վարժապետեան, Ալճերիոյ հայ գաղութը այսօր, «Զարթօնք», 6.02.1960:

⁹² Տե՛ս Արմէն Բարսէլեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 112:

⁹³ Տե՛ս անդ, էջ 104:

ին ֆրանսահայ պարադիր Էդուարդ Բոլիկեանը Ալժեում ներկայացրել է հայկական պարային բեմադրութիւններ հիմնուած Կոմիտասի եւ Արամ Խաչատրեանի ստեղծագործութիւնների վրայ⁹⁴:

Հայ-ալժիրեան ծագում ունի **Սոֆեա Բուտելյան**՝ Ֆրանսիայում հիփ-հոփ եւ սքրիթ-դանս պարերի յայտնի կատարող եւ դերասանուհի: Նա ծնուել է 1982-ին, Ալժիրի Բաբ էլ Ուեդ շրջանում, ֆրանսահայ մօր եւ ալժիրցի յայտնի երգիչ, երգահան, ջազ երաժիշտ Սաֆի Բուտելյայի ընտանիքում: Տաս տարեկանից բնակուում է Ֆրանսիայում: Նա պարել է մի շարք ֆիլմերում, հեռուստաշոուներում եւ գովազդներում, նշանաւոր երգչուհիներ Մադոնայի, Չամիրոքուայի եւ Ռիհանայի հետ, համագործակցել Բիանքա Լիի եւ այլ յայտնի պարադիրների հետ:

Թունիս

1885-ին Թունիսում բնակուել է եօթ տուն հայ եւ 20 պանդուխտ՝ վաճառականներ եւ արհեստատրներ: Մեծ մասը եղել է Սեբաստիայից, մնացեալը՝ Պոլսից, Չմիտնիայից, Ռ-ոդոսքոյից, Կարինից եւ Վանից: Նախապէս նրանց կրօնական կարիքները հոգացել է տեղի յունական եկեղեցին, այնուհետեւ 1901-ին Պոլսի պատրիարքարանը նրաւ.ց է ուղարկել մի հայ քահանայ, կազմուել է նաեւ առանձին հոգաբարձութիւն⁹⁵:

19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին դիպուածով Հիւսիսային Աֆրիկայի երկրներում որոշ գործունեութիւն են ծաւալել մի քանի հայորդիներ: Լիբանանեան տպագրութեան հիմնադիր **Չորջ Սլլորը** (Սլրեան), որը գործել է նաեւ Ֆրանսիայում եւ Հոլանդիայում, որոշ ժամանակ աշխատել է նաեւ Թունիսում, որտեղ իտալական քարոզչութեանը

⁹⁴ Տե՛ս Լրատու արուեստի, «Յառաջ», 2.06.1981:

⁹⁵ Տե՛ս Հրաչեայ Աճառեան, Հայ գաղթականութեան պատմութիւն, էջ 465:

հակազդելու համար հրատարակել է արաբերէն թերթ⁹⁶:

Թունիսում հայերը խմբերով սկսել են հաստատուել 1920-ից: 1922 թուականին հայ մամուլը հրատարակել է Թունիսում ապաստանած 180 զմիռնահայ գաղթականների ցուցակը⁹⁷:

1936-ին Թունիսում բնակուել է 17 հայ ընտանիք, շատերը՝ սեփական գործի տէր (երեքական ատամնաբոյժ եւ առեւտրական, երեք նկարիչ, մէկական բժիշկ, դերձակ, կահոյքի վաճառական եւ ճաշարանատէր): Նրանց մէջ էին **Վարդան Եղիշէանը, Խաչիկ Մինասեանը**: Հայերն ընտրել են վարչական մարմին եւ հանգանակութիւն կատարել: Թունիսի հայերը նոյնպէս կապուած են եղել Ֆրանսիայի հայ եկեղեցու թեմին: Յանկացել են մշտական քահանայ ունենալ, այդ հարցով դիմել Մարսէլի ազգային կենտրոնական վարչութեանը⁹⁸:

1943-ին Թունիսում մղուած կռիւներում զոհուել է ֆրանսիական բանակի կազմում մարտնչող **Ժորժ Ճապրայեանը** (1922, Բեյլան – 1943, Անֆիդավիլի բարձունքներ, Թունիս), զինուորական պատիւներով թաղուել այնտեղ: **Ճապրայեանը** եղել է Վենետիկի Մուրաւո-Ռաիայէլեան վարժարանի շրջանաւարտ: 1941-ին արձանագրուել է ֆրանսիական բանակում եւ մեկնել Աֆրիկա⁹⁹:

1949-ին Թունիս քաղաքում ապրել է 15 հայ ընտանիք, որոնց մէջ եղել են երկու բժիշկ, երկու ատամնաբոյժ, մի քանի սլաշտօնեայ, մնացածը զբաղուել են առեւտրով: Մի քանի հայ ընտանիքներ էլ բնակուել են Թունիսի ներքին գաւառներում: Թունիսահայերն ապրել են համերաշխ, սերտ ընտանեկան

⁹⁶ Տե՛ս Միսակ Յակոբ Վարժապետեան, Հայերը Լիբանանի մէջ, հատոր Ա, Պէյրութ, 1951, էջ 251:

⁹⁷ Տե՛ս «Ազգ-սահակ», 4.12.1922:

⁹⁸ Տե՛ս Յովհաննէս Վարժապետեան, Ուղեցոյց Մարսէլյի, Թ. տարի, Մարսէլ, 1937, էջ 64:

⁹⁹ Տե՛ս Հայ քաջի մը մահը պատուոյ դաշտին վրայ, «Ազդարար», 5.06.1943:

յարաբերութիւններով եւ վառ ազգային զգացումներով¹⁰⁰:

1956-ին ողջ Թունիսում բնակուել է 25 հայ ընտանիք՝ շուրջ 80 հոգի¹⁰¹: 1958 թուականի տուեալով Թունիսի հայ համայնքի թիւը նուազել է՝ մօտ ութ-տաս ընտանիք: Մեծ մասամբ եղել են առետրականներ, նաեւ մէկական նպարավաճառ, կօշկակար, նկարիչ, ատամնաբոյժ եւ բժիշկ: Մի քանիսը ստացել են հայերէն . թերթեր¹⁰²: 1963-ի տուեալով դարձեալ Թունիսի հայութեան թիւն աւելացել է՝ 20 ընտանիք, մօտաւորապէս 120 հոգի, վաճառականներ եւ արհեստատրներ: Գլխատրապէս ապրել են մայրաքաղաք Թունիսում եւ Բիզերթ նաւահանգստում¹⁰³: Թունիսահայերից յիշում են **Սեդրակ Պաղտաճեանը**, բժիշկ **Ա. Տիրատուրեանը**, **Տօնապետեանները**: Վերջինը 1953-ին Թունիսում ծնուած հայ հօր եւ յոյն մօր զաւակ, ֆրանսահայ արուեստաբան **Պատրիկ Տօնապետեանի** եւ ինֆորմատիկայի մասնագէտ **Ժաք Տօնապետեանի** ընտանիքն է:

1979-ին Թունիսում արաբ բժիշկների համագումարին մասնակցող սիրիահայ բժիշկ եւ գրող Թորոս Թորանեանը վկայել է, որ քաղաքի հեռախօսագրքում փնտրել է հայկական ազգանուն եւ հանդիպել մի հայրենակցի; որը, պարզուել է, եղել է Թունիսի համալսարանի դասախօս, ծնուած Թաւրիզում¹⁰⁴:

1983-ի տուեալով՝ Թունիսում բնակուել է 25 հայ¹⁰⁵:

Որոշ ժամանակ Թունիսում են ապրել եւ աշխատել ամերիկահայ բեմադրիչ, դերասան **Էդվին Ժերարը** (Համամճեան, այժմ՝ Եգիպտոս) եւ ֆրանսահայ

¹⁰⁰ Տե՛ս Հայերը Թունուզի մէջ, «Հայաստանի կոչնակ», 27.08.1949, էջ 836:

¹⁰¹ Տե՛ս Հայերը Հիւսիսային Ափրիկէի մէջ, «Հայաստանի կոչնակ», 27.10.1956, էջ 929:

¹⁰² Տե՛ս Թունուզի հայ գաղութը, «Ազատ օր», 16.09.1958:

¹⁰³ Տե՛ս Արմէն Բարպէան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 103:

¹⁰⁴ Տե՛ս Թորոս Թորանեան, Աւօրեայ խօսակցութիւն, «Նոր օր», 9.12.2006:

¹⁰⁵ Տե՛ս Արմէն Բարպէան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

քանդակագործուհի **Եանել Շիրինեանը** (այժմ՝ Հնդկաստան): Այժմ Թունիսում բնակում են սակաաթիս հայեր, որոնցից է հայազգի անգլիական դերասան **Գեորգ Մալրքեանի** դուստրը՝ **Սոնիա Նադիա Մալրքեան Էփ Բեն Սալեմը**:

Լիբիա

Լիբիայում հայկական ներկայությունը սկսուել է 1888-ին, երբ Օսմանեան կայսրութիւնը Տրիպոլի (յայտնի նաեւ որպէս աֆրիկեան Տրիպոլի կամ Տրիպոլիս) եւ Բենգազի քաղաքներն է աքսորել հայերի, որոնք երբեմն այնտեղ են մեկնել ընտանիքներով հանդերձ: Մասնաւորապէս Տրիպոլին, որ օսմանեան իրականութեան մէջ յայտնի էր Թարապլուս կամ Թարապուլուսը Ղարալ անունով, ծառայել է որպէս քաղաքական դատապարտեալների աքսորավայր: Հայ ազատագրական շարժման գործիչ, լրագրող, Արմենական կուսակցութեան հիմնադիրներից **Սկրտիչ Աւետիսեանը** (Թէրլէմէզեան, 1864–1896) 1888-ին մի խումբ ընկերների հետ ձերբակալուելով սուլթանի պալատում՝ ամիսներ անց աքսորուել է Տրիպոլի¹⁰⁶: Տրիպոլիի ծովափին է, որ մի անգամ նա տեսել է մօտիկ մի շոգեմաւ, նետուել է ծովը եւ լող տալով՝ հասել է այդ նաւին ու փրկուել: Այդ համարձակ արարքի ներշնչումով էլ բանաստեղծ **Քրիստափոր Թադէոսեանը** գրել է «Երբ ալեկոծ ծովուն վրայ» երգը, որը շուտով ժողովրդականացել է¹⁰⁷: Աւետիսեանի հետ Տրիպոլի են աքսորուել նաեւ **Գարեգին Իսազօլեանը** (1856–1916) եւ **Սկրտիչ Մարրեանը** կնոջ՝ **Աշաքսիի** հետ¹⁰⁸: 1892-ին

¹⁰⁶ Տե՛ս **Միքայէլ Նաթանեան**, Արմենական կուսակցութիւնը. ծագումէն սկսեալ մինչեւ Սահմանադրական Ռամկավար կուսակցութիւն, Գահիրէ, 1990, էջ 33:

¹⁰⁷ Տե՛ս **Ռաֆայէլ Ղազանչեան**, Հայրական ձեռագիր (ղիմադարձ ալիքներ), Երևան, 2003, էջ 21:

¹⁰⁸ Տե՛ս **Յովակիմ Գ. Յովակիմեան**, Պատմութիւն հայկական Պոնտոսի, Պէյրոս, 1967, էջ 578:

Մամսունից մինչև Էվերեկ հակասութանական թռուցիկներ փակցնելու արդիւնքում օսմանեան իշխանութիւնները ձերբակալել են 200 հոգու, որոնցից ինը արսորուել են Տրիպոլի¹⁰⁹: Նրանց մէջ է եղել Տէրեվանքի վանահայր եւ քարոզիչ, Երուսաղէմի ուխտի միաբան **Դանիէլ վարդապետ Աշղեանը** (1848–1917) քաղաքական պատճառներով նոյնպէս տարագրուել է Տրիպոլի, ապա ներման է արժանացել ու հաստատուել է Ալեքսանդրիայում¹¹⁰:

Հնչակեան կուսակցութեան ղեկավարներից **Մուրատը** (Համբարձում Պոյաճեան, 1860–1915) Տրիպոլիում արսորուած է եղել 11 տարի՝ 1894–1905 թթ.¹¹¹: Պոլսի 1896-ի կոտորածների ժամանակ Բուլղարիա ապաստանած 17-ամեայ եղովիացի **Յակոբ Իսքէնտերեանը** վերադառնալով Կ.Պոլիս՝ ձերբակալուել է եւ նոյնպէս արսորուել է Տրիպոլի:¹¹² Նմանապէս արսորական բժիշկ **Նշան Պլեռխանեանը** (1849, Ապուշեխ, Ակն–1895) մահացել է Տրիպոլիում: Հրապարակախօս, հրատարակիչ, խմբագիր **Երուանդ Մարդեանի** (1888–1971) հայրը քաղաքական յանցագործութեան մեղադրանքով ենթարկուել է ցմահ արսորի Տրիպոլիում: Օսմանեան կառավարութիւնը Երուանդին էլ ուղարկել է հօր մօտ: Տրիպոլիում էլ ապագայ հրատարակիչը յաճախել է կաթոլիկ եղբայրների դպրոցը, իսկ հօր փախուստից յետոյ նրան տարել են ծննդավայրը՝ Կ.Պոլիս եւ ազատ արձակել երաշխատրութեամբ:

19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին Տրիպոլիում հայերի մեծ քանակի վկայութիւն է այն, որ Կ.Պոլսի հայոց

¹⁰⁹ Տես Յիշատակարան Էվերեկ-Ֆէնէտէի, հատաբեց **Ալեքս Գրիգորեան**, Փարիզ, 1963, էջ 557:

¹¹⁰ Տես **Հ. Սլյուտիչ Վարդ. Պոտտութեան**, «Հայ Հանրագիտակ», հատոր Ա, 1938, Պոքրէշ, էջ 183:

¹¹¹ Տես **Գուրգէն Թահնագեան**, Համբարձում Պոյաճեան (Մուրատ), «Փարիզահայ տարեցոյց», Փարիզ, 1918, էջ 119:

¹¹² Տես «Չայն հայրենեաց», 29.06.1901:

պատրիարքարանն ունեցել է այնտեղ հոգեւոր հովուութիւն¹¹³:

Նկատի ունենանք, որ թէև Տրիպոլիս եղել է արքութայր, սակայն այնտեղ յայտնուած հայերն ազատօրէն տեղաշարժուելու եւ գործելու արտօնութիւն են ունեցել «*եւ քանիներ խոյս տալու դիրութիւններ ալ գտան*»¹¹⁴:

Տրիպոլի արքութեան մի հայորդու մասին տեղեկութիւններ է յայտնել իտալահայ Սուրէն Ծովիկեանը 2011-ին մեզ գրած մի նամակում. «*Ասկէ քառասունհինգ տարի առաջ Ռումանիոյ մայրաքաղաքին մէջ հանդիպած եմ տարեց հայրենակիցի մը, Տաճատ Մելքոնեան, որուն հանգուցեալ հայրը, Խաչատուր պատուելի Մելքոնեան, մտատրական ուսուցիչ, ժամանակին յայտնի հնչակեան գործիչ մը եղած է ու քանի մը անգամ ձերբակալուած ու քանտարկուած: Իր մասին գրուած է Վրթանէս Փափագեանի «Հաճի բեգ» վիպակին մէջ: Տաճատ Մելքոնեանն իր քովն ունէր իր հօրը գրած յիշատակարան-յուշագրութիւնը, որ ամբողջացուած էր իր՝ Տաճատի, երեց եղբոր կողմէ, եւ ես զայն ընդօրինակել տուի սագակցանի մը կողմէ: Այդ յիշատակարանին մէջ գրուած է թէ Խաչատուր Մելքոնեանը, Գում Գարուի ցոյցին մասնակցած ըլլալով՝ ձերբակալուած է եւ ուրիշ քանքնէկ հայերու հետ արքութեան է Լիպիոյ Տրիպոլիս քաղաքը: Իր արքութակիցներէն յիշուած են Համբար տայի (այսինքն՝ մօրեղբայր) որ Գանտիլիցի (Պոլսոյ արուարձան) էր, Բրուտեան Կարապետ, որ տարիքով երիցագոյնն էր, վանեցի Մարգարեան Քեօտ, Ռսկեան՝ Մերաստացի եւ Վահան Չարդարեան: Վերջինս առանձին կը բնակէր, մինչ միւսները՝ համախումբ: Իրենց արքութիւն թերեւցնելու համար Պօղոս փաշան երեք անգամ քսաներկու ոսկի դրկած է: 1896-ին Խաչատուր Մելքոնեանը յանկարծամահ եղած է եւ յոյն քահանայով թաղուած է յունաց գերեզմանատունը, ուր արդէն քանի մը հայեր թաղուած էին:*

¹¹³ Տե՛ս Յակոբ Ծ. Սիրունի, Պոլիս եւ իր դերը, «Էջմիածին», Էջմիածին, 1963, ք. Ե, էջ 22:

¹¹⁴ Մաղաքիա Օրմանեան, Խոնք եւ խօսք: Իր կեանքին վերջին շրջանին մէջ, Երուսաղէմ, 1929, էջ 177:

Իսկ յուղարկատրութեան՝ տեղացի քսան-երեսուն գաղթական հայեր, մեծաւ մասամբ վաճառականներ, ներկայ եղած են: Բիշ վերջը իր արքորի ընկերները քառասուն ոսկի վճարելով ազատուած են»¹¹⁵:

1895-ին ծնունդով տրապիզոնցի **Գրիգոր Վարդանեանը** դատապարտուել է 101 տարուայ բանտարկութեան եւ արքորուել է Տրիպոլի¹¹⁶: Տաս տարի անց նա յայտնուել է Փարիզում, որտեղ դարձել է մանկավարժ եւ հանրային գործիչ: 1961-ին Փարիզի ռուսական մամուլում հրատարակած մի յօդուածում նա վկայել է, որ շատ եւրոպացիներ եւ ռուսաստանցիներ Աֆրիկայում իրենց շատ աւելի վատ են պահել, քան սպիտակամորթները ԱՄՆ-ի հարաւային նահանգներում¹¹⁷:

19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին եղել են հայ-ալժիրեան որոշ կապեր մշակոյթի բնագաւառում¹¹⁸: Պոլսահայ երաժիշտ Գրիգոր Սինանեանը (1836–1914) գրել է «Ալժիրեան քայլերգը» եւ «Թունիսի քայլերգը», որը հետագայում տարածում է գտել որպէս «Իզմիրի քայլերգ»: 20-րդ դարի սկզբին Հիւսիսային Աֆրիկա է այցելել դերասան Վահրամ Փափագեանը (1888–1968), որը Սիլվանի Գեղարուեստի ակադեմիայում ուսանելու երկրորդ տարում, 1909 թուականին,

¹¹⁵ Անձնական ելզիր, 9.09.2011:

¹¹⁶ Տես Գրիգոր Վարդանեան, «Երեւան», 22.11.1925:

¹¹⁷ Տես Գ. Варданян, Из американской жизни, «Русская мысль», 17.08.1961:

¹¹⁸ Առաջին արուեստագետը, որ արաբերէն թատերախաղեր է ներկայացրել արաբախօս Աֆրիկայում (1907-ին Թունիսում), եղել է Սուլէյման Բըրդահի (Շեյխ Սուլէյման) անունով մի արուեստագետ: Իր քրիստոնէայ լինելը յայտնի է դարձել միայն մահից յետոյ (1909-ին), ուստիեւ թարուել է քրիստոնէական գերեզմանատանը: Նրան հայկական ծագում են վերագրել սիրիացի հետազօտող Սալման Բախայեան, թունիսցի թատերագետ Մոհամմեդ Հաբիրը՝ ենթադրելով, որ իսկական անունը եղել է Մողոմոն, թերեւս Բըրտահեան (տես Մովսէս, Հայ... Սուլէյման Բըրտահիւն, «Այգ», 5.10.1968): Իրականում այս ենթադրութիւնն ապացուցող վկայութիւններ չկան:

Էրմեստ Եովելլիի խմբի կազմում մասնակցել է հիւրախաղերի տարբեր երկրներում, այդ թւում՝ Լիբիայում եւ Մարոկկոյում: Շեքսպիրեան վենետիկցի մարի անգուգական մեկնաբանը ստեղծագործական մեծ լիցք է ստացել Օթելլոյի հայրենիքում: Իր «Հետադարձ հայեացք» յուշագրութեան մէջ նա գրել է հետևեալը. «Ուզում եմ մի քանի խօսքով ծանօթացնել մի այլ ժողովրդի հետ. որոնց մօտ այդ վեցամսեակին ապրեցի մի-երկու շաբաթ, այն է՝ մարերի հետ:Միանգամից ընկալ հազարաւոր օթելլոների մէջ:Սրանից աւելի լայն ուսումնասիրութեան դաշտ անհնարին էր գտնել: Եւ ես, ինչպէս ասում են, ոչ կերայ, ոչ խմեցի, այլ ամբողջ քսան օր, անընդհատ, գիշեր, թէ ցերեկ խառնուեցի նրանց: Մասնակցեցի նրանց նիստուկացին, կերո՛խումին, վշտերին եւ ուրախութիւններին: Ալժիր հասած օրս իսկ, ինձ տարեկից մի մարի՝ Իբն Հասանի հետ ծանօթացայ... Նրա հետ եղայ նրանց տներում, մօտից տեսայ նրանց կենցաղը, եղայ սոփաստեղերում, տեսայ եւ ուսումնասիրեցի նրա հօրը... Միշտ հորիզոններ դիտող աչքերով, արքայի քայլուածքով այդ մարդուն՝ շատ գծերով է պարտական իմ Օթելլոն: Ծալապատիկ նստեցի ժողովրդի հետ հասարակ սրճարաններում, համրիչը մատնելիս ու ծխամորճը շրթներիս. ստանց ծխող լինելու... Եւ երբ հեռացանք այդ երկրից, թէև Օթելլոն դեռես չէր ծնուել իմ մէջ, ճիշտ է, քայց նրա էութիւնը, նրա բնոյթը, մարդը, այդ երջանիկ սփերից՝ ես տարայ իմ հոգու մէջ»¹¹⁹:

1919-ին հայոց եղեռնի փրկուածներին օգնութեան ձեռք է մեկնել նաեւ Տրիպոլիի (Լիբիա) փոքրաթիւ հայ համայնքը՝ հանգանակելով 1000 իտալական լիրա, որին մասնակցել են հետևեալ անձինք՝

Գ. Իսպիրեան՝ 185, Տ. Պէքմէզեան՝ 180, Ա. Ճելալեան՝ 50, Ն. Պէքմէզ՝ 50, Վ. Մարգարեան՝ 29, Յ. Տէրվիշեան՝ 25, Ս. Օտօեան՝ 25, Մարիցա Քէսքէնեան՝ հինգ, Չարուեհի Տէրվիշեան՝ հինգ, Ա.

¹¹⁹ Վահրամ Փափագեան, Երկեր հինգ հատորով, հատոր 1, Երեսան, 1979, էջ 126-128:

Էմինեան՝ հինգ, Բ. Էմինեան՝ հինգ, Յ. Դալիթեան՝ 185, Յ. Ֆանօսեան՝ 100, Լ. Տէրվիշեան՝ 50, Գ. Մհարանեան՝ 30, Ա. Նէսմէյեան՝ 25, Ա. Չարմանեան՝ 25, Գ. Էմինեան՝ տաս, Բէրուզ Ահարոնեան՝ հինգ, Հայկանոյշ Ֆարմանեան՝ հինգ, Սառա Ահարոնեան՝ չորս, Ա. Ֆանօսեան՝ երկու¹²⁰:

Սուրեն Ծովիկեանը մեզ զրած վերոյիշեալ նամակում նշել է նաեւ իր հօրեղբայր Ազատ Ծովիկեանի մասին. «Հանգուցեալ հօրեղբայրս, իբրեւ իտալական օդոյժի զինուորական բժիշկ, 1937-ին պաշտօնավարած է, միշտ Լիպիոյ մէջ, Պենկագի քաղաքը: Մասն որոշ ատեն իր քով գտնուած է ու այնտեղէն զրած իր նամակներէն յայտնի կ'ըլլայ թէ այդ քաղաքին մէջ կար Նշան անունով Սեբաստացի հայ մը որ ունէր երկու եղբայր եւ մէկ քոյր. կար նաեւ հայ օբիտորդ մը եւ գուցէ ուրիշ հայեր, բայց այս առնչութեամբ մամիս նամակներուն մէջ ակնարկներ չկան: Միայն թէ մամիս պատկանող իրերուն մէջ տուփ մը կայ որուն վրայ իտալերէնով տպուած է «Գաբրիէլ Նազաշճեան – լաւագոյն արմատներու վաճառք – Պենկագի»¹²¹:

1920-ականներից Լիբիայում է ապրել Մեծ եղեռնի վերապրող Հայկ Ահարոնեանը (1905, Մերաստիա – 1976, Իտալիա), որդին վերոյիշեալ Բէրուզ Ահարոնեանի: Ոյոշ ժամանակ որպէս ուսուցիչ աշխատել է Վենետիկի Մուրաու-Ռափայէլեան վարժարանում: Լիբիայում հաստատուած իր աշակերտ Գաբրիէլ Չարմանեանի հրաւերով նա մեկնել է Տրիպոլի՝ Լիբիա: Այստեղ ամուսնացել է Գաբրիէլի քրոջ Նուարդ Չարմանեանի հետ, որի մահից յետոյ՝ էրզրումցի Փայլուն Սիրունեանի: 1948-ին ցանկացել է հայրենադարձուել, որի համար հարկ էր ցամաքային ճանապարհով հասնել Կահիրէ, ինչը երկար եւ վտանգաւոր էր, ուստի եւ հրաժարուել է այդ գաղափարից: 1970-ին ընտանիքով տեղափոխուել է Իտալիա¹²²:

¹²⁰ Ազգային լուրեր, «Վերածնունդ», քիւ 6-7, 1.04.1919, էջ 105:

¹²¹ Անձնական ելգիր, 9.09.2011:

¹²² Տե՛ս “My family was killed, because we were Armenians.”

<http://www.genocide-museum.am/cng/news-08.01.2018-Aharonyan.php>

(ղիտում՝ 16.05.2020):

Մինչև Երկրորդ Աշխարհամարտը Լիբիայում բնակուել է մօտ 50 հայ ընտանիք, իսկ պատերազմի տարիներին Հիսսիսային Աֆրիկայում տեղակայուած տարբեր երկրների զօրքերի կազմում եղել են մի շարք հայորդիներ: Այսպես, Բուենոս Այրեսում հաստատուած ծնունդով գէթունցի **Գեորգ Սեքեանը** 1941-ին անգլիական բանակի կազմում մասնակցել է ռազմական գործողութիւնների Լիբիայում: Լիբիայի Ակնոմա նահանգի Նայթսբրիջի ռազական գերեզմանատանը հանգչում է **Նոել Ադազարեանը** (1915–1941): Հայ հօր եւ ֆրանսուհի մօր զաւակ այս բրիտանական օդաչուն 1941 թուականի յունուարին ծառայութեան է անցել Հիսսիսային Աֆրիկայի թիւ 274 կործանիչ ջոկատում, ոչնչացրել է մի օդանաւ Լիբիայի Թոբրուքի վրայ: Սակայն մայիսի 16-ին նրա օդանաւը ոչնչացուել է Գամբուքի մօտակայքում:

Անգլիացի օդային մի սպայ 1942-ին գիրք է հրատարակել **Է. Գ. Օ.** ծածկանունով Լիբիայի անցուդարձերի մասին, որտեղ նկարագրել է 1941-ի Ծնունդը Բենգազիում, բրիտանական գրաման ժամանակ: Նա նշել է, որ գրատողների իրաւունքով իրենք տիրել են մի տնակի եւ այնտեղ նշել Ծնունդը իտալացի կրօնատրոնների, մի քանի ծեր իտալուհիների եւ մի հայ ընտանիքի հետ, որի ութամեայ աղջիկը դաշնամուր է նուագել¹²³:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Հիսսիսային Աֆրիկայի հայ բնակիչների վերաբերեալ գրեթէ տեղեկութիւններ չկան, դրանք ի յայտ են եկել 1940-ականների վերջին, որից կարելի է եզրակացնել, որ թուային պատկերը գրեթէ մնացել է նոյնը: 1946-ի սկզբին լիբիաբնակ մի քանի հայ ընտանիք դիմել է Եգիպտոսում հայերի հայրենադարձութեան յանձնախմբին՝ Հայաստան վերադառնալու խնդրանքով, սակայն նրանց խնդրանքները մնացել են

¹²³ Տե՛ս Ծնունդը անապատին մէջ հայ ընտանիքի մը հետ..., «Ազդարար», 9.01.1943:

անպատասխան¹²⁴: 1948-ին Տրիպոլիի հայ համայնքի ներկայացուցիչ **Գաղութանցը** դիմել է Խոալիայի նախկին գաղութների ուսումնասիրման քառակողմ (ԽՍՀՄ, Ֆրանսիա, Անգլիա, ԱՄՆ) յանձնաժողովի խորհրդային պատուիրակության ղեկավար Ա. Ֆեոդորովին՝ ՀԽՍՀ ներգաղթելու հարցում աջակցելու խնդրանքով¹²⁵:

1948-ի տուեալով՝ Լիբիայում բնակուել է 70-80 հայ¹²⁶, սակայն երկրում հայերի թիւը սկսել է անելանալ ի հաշիւ Պաղեստինի իրադարձութիւնների պատճառով այդ երկիր տեղափոխուածների (եւ ոչ միայն նրանց)՝ 1954-ին հասնելով 75-80 ընտանիքի: Համայնքի անդամներն ընդհանրապէս եղել են արհեստատրներ, նաեւ մի քանի պաշտօնեաներ: Ազգային կառոյցներ չեն եղել¹²⁷:

1955-ին Լիբիայում բնակուած հայերի թիւը դարձեալ նշում է 70-80 ընտանիք, տարբեր վայրերից գաղթած: Նրանք չեն ունեցել ո՛չ եկեղեցի, ո՛չ դպրոց, ո՛չ էլ որեւէ ազգային կեանք: Հայերի երեխաները յաճախել են օտար վարժարաններ¹²⁸:

1960-ին Տրիպոլի, Բենգազի, Դեռնա եւ այլ քաղաքներում ապրել է շուրջ 200 հայ¹²⁹: 1964-ին նախկին լիբիաբնակ, ծնունդով սեբաստացի **Պօլոս Ալպահեանը** Լոս Անջելեսի հայ մամուլին յայտնել է, որ Տրիպոլիում բնակում է 12 հայ ընտանիք՝ մօտաւորապէս 60 հոգի, որոնք զբաղում են առեստրով եւ արհեստներով: Կան հայ պաշտօնեաներ, որոնք աշխատում են նաւթային ընկերութիւնում, սակայն նրանք

¹²⁴ Տես Արմէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 109:

¹²⁵ Նամակի շարադրանքը (ռուսերէն) տես անդ:

¹²⁶ Տես անդ:

¹²⁷ Տես Թրթակից, Չայն մը ավիոիկեան Տրիպոլիէն, «Յտոաց», 17.03.1954:

¹²⁸ Տես «Արաքս», 29.05.1955: Նոյնը տես Լիպիա. Աֆրիկեան Տրիպոլիիս հայերը, «Պայքար», 23.07.1955:

¹²⁹ Տես Լիպիոյ հայ գաղութը այսօր, «Չարքօնք», 3.02.1960: Տես նաեւ Արմէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 103:

երկրի մնայուն բնակիչներ չեն: Ազգային կեանք գոյութիւն չունի, հայ ընտանիքների զաւակներն խօսում են իտալերէն, պատկանում են յունական եկեղեցուն¹³⁰:

Լիբիահայերից **Յակոբ Նշանի Օտապաշեան Վիզիանոն** (ծնուած 1904-ին, զբաղմունքով՝ լուսանկարիչ) 1969-ին գաղթել է Հայաստան, կնոջ՝ իտալուհի Կարմելլա Պուտչինա Ջովանիի Օտապաշեան-Վիզիանոյի հետ (ծն. 1919, մասնագիտութեամբ՝ հաշուապահ): Նրանք բնակուել են մախ Արովեանում, ապա՝ Երեւանի Նորքի 4-րդ զանգուածում¹³¹:

1984 թ. մի վիճակագրութեան համաձայն՝ Լիբիայում ապրել է 100 հայ: Դրանից յետոյ այլ տեղեկութիւններ մեզ յայտնի չեն¹³²:

Լիբիայի հայերը հետագայում գաղթել են մեծ մասամբ Իտալիա: Իտալագիր հայ գրող եւ նկարչուհի **Սոնիա Օրֆալեանը** (ծն. 1958) ծնուել է Լիբիայի Սուք էլ-Գումասա քաղաքում եւ մինչեւ 1960-ականների վերջն ապրել է Լիբիայում: Զարդաֆիի յեղաշրջումից յետոյ ընտանիքը քաղաքական ապաստան է ստացել Հռոմում: Հեղինակ է իտալերէն գրքերի, որոնցից են «Հայաստանի խոհանոցը» (2009), «Հայ մանուկների պատմութիւնները, 1915–1922» (2021-ին լոյս է տեսել մաեւ ֆրանսերէն), «Կար ու չկար. հեքիաթներ Հայաստան երկրից», «Քամուն հեծած. Հայաստանի հեքիաթները» հատորները: Հռոմի Լեւոնեան հայկական վարժարանում է աշխատում վերոյիշեալ Հայկ Ահարոնեանի թողը՝ Վարուժան Ահարոնեանը, որի հայրը Լիբիայից է, մայրը՝ ֆիզիկոս եւ քիմիկոս Եղիս Բեհեւեանը, Հայաստանից¹³³: Իտալիայում երկու անգամ հանդիպել ենք իտալացի հօր եւ Լիբիայում ծնուած Նուարդ Գրիգորեանի դուստր Նաիրի

¹³⁰ Տես Հայ գաղութը Լիպիոյ մէջ, «Ասպարէզ», 12.05.1964:

¹³¹ Տես ՀԱԱ, ֆ. 362, ց. 13, գ. 54 [էջ 9բ]:

¹³² Տես ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 13, թ. 4-5: Տես մաեւ Արմէն Բաքալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

¹³³ Տես Գուկո. Հրայր Ճւպեճեան. Սփիւքսահայ կեանքեր ինչպէս որ տեսայ, Պէյրոս, 2018, էջ 97:

Մերկադանտիին Հռոմից, որը զբաղուել է հայ յեղափոխական շարժումների ուսումնասիրութեամբ, որոշ չափով հայերէն է ուսանել Վենետիկում: Եղբայրը՝ **Վարդան Մերկադանտիին**, գրաֆիկ դիզայներ է:

Մարոկկո

Մարոկկոյի կարեւոր առեւտրա-արդիւնաբերական կենտրոններից մէկում՝ Աւլանտեան ուլկիանոսի ափին գտնուող Կասաբլանկա քաղաքում, արդէն 1900-ականներից բնակուել են հայ ներգաղթեալներ, բոլորն էլ բարեկեցիկ կեանքով ապրող: Հայ շինարարներ մասնակցել են քաղաքի մի քանի շէնքերի կառուցմանը. իսկ հիմնականում զբաղուել են սուրճի եւ նպարեղէնի առեւտրով¹³⁴:

1905–1920 թթ. Կասաբլանկայում գործել է «Գրիգորեան եղբայրներ» հրատարակչութիւնը, որ զբաղուել է մասնատրապէս բացիկների տպագրութեամբ: **Մ.** եւ **Պ. Գրիգորեանները** հրատարակել են մի քանի ժողովածու՝ «Մարոկկո-Մարակէշ» (1915–1917), «Գեղատեսիլ Մարոկկո» եւ «Տեսարաններ եւ կերպարներ»: 20-րդ դարի սկզբին Մարոկկոյում տպագրուած շատ բացիկներ կրում են «K. F.» (Kricorian Frères) սկզբնատառերը¹³⁵:

1913-ին Ռաբաթից Կ.Պոլիս ուղարկուած մի մասնատր նամակում նշուել է Մարոկկոյում զոհուած մի հայորդու քաջագործութեան մասին: Ելք այդ թուականին ֆրանսիական բանակը Մեքնես քաղաքի մօտ մեծ ճակատամարտ է մղել զայիան ցեղի դէմ, զօրագնդի մէջ եղել է նաեւ մի աղանացի հայ, որը փրկուել է Կիլիկիայի կոտորածից եւ Ֆրանսիայում զինուորագրուել է օտար լեզիոնում: Զօրավարը նրան հրամայել է պաշտպանել միակ աղբիւրը, իսկ մարոկկացիները

¹³⁴ Տես **Յ. Ս.**, Նամակ Մարոքէն, ուր քանի մը հայեր կան, «Ճակատամարտ», 28.04.1922:

¹³⁵ Kricorian M. et B. <https://maisondelaphotographie.ma/portfolio/-kricorian-2/> (դիտուած 9.01.2022):

ցանկացել են ամեն կերպ խլել այդ աղբիւրը, ուստիեւ անխնայ գնդակոծել են հայ զինուորին: Վերջինս իր կեանքի գնով պաշտպանել է աղբիւրը եւ զոհուել: Ֆրանսիացիները պատռով յուղարկատրել են նրան, իսկ զօրավար Դալբիեն յայտարարել է, որ եթէ մարտկացիները պարսաուել են այդ օրը, եղել է հայ զինուորի քաջութեան շնորհիւ¹³⁶: Տաւօք, հայ ռազմիկի անունը մնացել է անյայտ: Սակայն յայտնի է ֆրանսիական բանակի կազմում Մարտկոյում յայտնուած եւս երկու հայի անուն: Ֆրանսիական գաղութային բոլոր պատերազմներին (Մարտկո, Սահարա, Հնդկաշին) մասնակցել է ֆրանսիական բանակում 1905 թուականից ծառայած կապիտան **Նահապետ Նահապետեանը** (~1942)¹³⁷: 1914-ին ֆրանսիական բանակի կազմում Ալժիրում, Թունիսում եւ Մարտկոյում որպէս բժիշկ ծառայել է ծնունդով դարադաղցի (Իրան) **Ստեփան Բաղդասարեանը** (1888–1941), որն ուսանել է Մոնպելիէի համալսարանում, այնուհետեւ ասլրել ԱՄՆ-ում, իսկ 1925-ից՝ Խորհրդային Հայաստանում¹³⁸:

1913-ի վերոյիշեալ նամակում նշուել է, որ արեւելքցիներից այնտեղ կան մօտ 20 յոյն, 3-4 սիրիացի եւ երեք հայ: Վերջինների բնակուել են Կասաբլանկայում եւ եղել են տնտեսապէս լաւ վիճակում: Դրա ապացոյցը կարող է լինել այն, որ երբ 1918-ին Փարիզի Ազգային Միութիւնը նամակ է ստացել Մարտկոյում բնակուող հայերից՝ 12 հոգւո ստորագրութեամբ (բոլորն էլ՝ քեմալիստ սրճագործներ), նամակագիրները պատրաստակամութիւն են յայտնել նուիրատութիւն կատարել Հայ դատին եւ ներփակել են 500 ֆրանկ հայ կարօտեալների համար¹³⁹:

¹³⁶ Տե՛ս Հայ զինուորի մը հերոսութիւնը Մարոքի մէջ, «Հորիզոն», 9.11.1913 (արտատպում Պոլսի «Բիւզանդիոնից», 1.05.1913): Տե՛ս նաեւ **Հրաչեայ Աճառեան**, Հայ գաղթականութեան պատմութիւն, էջ 466:

¹³⁷ Տե՛ս Մահ հարիւրապետ Նահապետեանի, «Արաքս», 28.02.1942:

¹³⁸ Տե՛ս **Գառնիկ Ստեփանեան**, Կենսագրական բառարան, հատոր Ա, Երեւան, 1973, էջ 179:

¹³⁹ Տե՛ս **Մարտիկ**, Իմ տպատրութիւնները. ֆրանսահայ գաղութը, «Երիտասարդ Հայաստան», 18.05.1918:

Հայ կարօտեալներից ոմանք շուտով անձամբ են յայտնուել Մարոկկոյում: Նրանք երել են Օսմանեան կայսրութեան տարբեր շրջաններից (Քենախ, Կեսարիա, Ռոդոսքո, Կ.Պոլիս եւն): Թուրքիայից արսորուած ամասիացի **Խաչիկ Յովհաննէս Պոպտուզեանը** (ծն. 1906) եւ աղանացի **Յարութիւն Մալեանը** (ծն. 1904) Առաջին աշխարհամարտից յետոյ յայտնուել են Մարոկկոյի Սեֆրու քաղաքում: 1920-ի մայիսի 18-ին նամակով դիմել են Փարիզի Հայ ազգային պատուիրակութեանը՝ խնդրելով իրենց անձնագրեր տալ: Մայիսի 25-ին նոյն պատուիրակութեանը գրած նամակով նրանք տեղեկացրել են, որ Սեֆրուի «Զինուորական հարկում» գտնուում են վեց հայեր, որոնք կամ որբ են, կամ անչափահաս՝ զինուորութեան համար, ուստիւ խնդրել են նրանց եւս անձնագիր տրամադրել եւ հնարատրութիւն տալ վերադառնալու հայրենիք¹⁴⁰:

1922-ի հոկտեմբերի 13-ին Թունիսի Ֆերիվիլ քաղաքից Իզմիրի Ռամկավար ազատական կուսակցութեան ակումբի երբեմնի ատենապետ **Նշան Վարդանեանը** հայ ազգային գործիչ Գաբրիէլ Նորատու մկեանին գրած նամակում վկայել է, որ Իզմիրի հրկիզումից յետոյ շոգեմատվ Մարոկկո է ժամանել մօտ 200 հայ, որոնք իրենց քաղաքը լքել են սեպտեմբերի 20-ին: Նրանց տարաբաշխել են երեք զինուորական կայանների մէջ, որոնցից երկուսում կեանքը տանելի է եղել¹⁴¹: Մարոկկոյում

¹⁴⁰ Տես ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 853:

¹⁴¹ Տես ՀԱԱ, ֆ. 430, ց. 1, գ. 856: Վարդանեանը կարեւոր տուեալ է յայտնել Չմիւռնիայի իրդեկի մասին՝ գրելով. «Պէտք է միշտ ուժգնօրէն հերքել ամէն տեսակ հրատարակութիւն, թէ հայերն են այրած Իզմիրը, սրտած ըլլալով, որ բնմալականները իրենց Ա. օրէն սկսան հայերը խողխողել եւ հագիլ հայեր իրենց թաքստոցները գտած կը պահուէին, յետոյ կրակը Քենալի գրաւման 5-րդ օրը պատահած ըլլալով անկարելի էր եւ հայ մը ոչ մէկ ատեն սլիտի ուզեր իր բնակարանը ոչնչացնել: Ատիկ մեծ սուտեր մ'ալ Frank. Bonillon կ'ընէ: օրագրողներու յայտարարութեանց յայնչու վրայ բողոնելով կրակի հարցը: Իզմիր լաւագոյն Fire Brigade մ'ունենալով ուրիշ ատեններ երեք տունէ անելի չէր այրէր, եւ այս անգամ 48 ժամ ուժանակ եւ Benzineով կառավարութիւնը, անշուշտ բնմալական, ինք մասնատր ծրագրով մը այրեց: Չմոռնամ ըսել, թէ ինքս Alliance Francaise (Իզմիր)

ապաստանած այս հայերից **Արմենակ Գարանֆիլեանը** 1922-ի հոկտեմբերի 28-ին գրած մամակում վկայել է, որ Միդի Աբդալլահ բնակավայրում մնացել է 189 հայ՝ գրելով նրանց անունները¹⁴²: Այս հայերի մեծ մասը մատվ մեկնել է Մարսել, եւ բարեբախտաբար ոչ ոք թշուառ վիճակում չի եղել:

Յայտնի է, որ 1920-ականներին հայ ազգային գործիչներին մտահոգում էր մասնաւորապէս Մերձաւոր Արեւելքում եւ Յունաստանում խոնուած հայ գաղթականների, նաեւ 1922-ից յետոյ երկրորդ լուրջ տագնապն ապրած Թուրքիայի հայերի ապագայի հարցը, որոնց զլխին կախուած էր իրենց ապաստանած երկրներից վտարուելու հարցը: Առաջարկներ էին հնչում նրանց տեղաւորելու համար գտնել յարմար վայրեր երկրագնդի զանազան կէտերում՝ առաջարկելով այնպիսի վայրեր, ինչպիսիք էին Հարաւային Ամերիկան, Աւստրալիան, Մադագասկարը... Ըստ 1924-ին Կ.Պոլսում գտնուող խորհրդահայ պետական գործիչ Դանուշ Շահվերդեանի՝ Թուրքիայի գաւառներից Պոլիս հասած շատ հայեր իրեն են դիմել՝ խնդրելով իրենց ուղարկել Հայաստան կամ Խորհրդային Միութեան որեւէ անկիւն, «*բայց, որովհետեւ այդպիսի հնարատորութիւն չկայ, նրանք ընկնում են զանազան ազենտների ձեռքը, որոնք ուղարկում են նրանց Ֆրանսիա եւ Աֆրիկայի գաղութները...*»¹⁴³: 1924-ին Կ.Պոլսում գումարուած մի գաղտնի ժողովում տեղի հայ գործիչները, ի թիւս այլ երկրների, հարց են բարձրացրել հայ գաղթականների մի մասին բնակեցնել Մարոկկոյում՝ պատճառաբանելով այնտեղ տիրող կրօնական ազատութիւնը¹⁴⁴: Գաղապիարը մնացել է

ապաստանողներն ըյսպով Lucas Essayan տան փաստաբան իտալացի Ricchi, իբր տյն տան պաշտօնեան կիրաւի օրը եկան ինձ ըսել, թէ հայերու բնաջնջման ծրագիր կայ, քառորդ ժամ չնմայք եւ մեկնէք» (անդ) :

¹⁴² Անդ:

¹⁴³ **Յովիկ Մելիքսեթեան**, Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները եւ հայրենադարձութիւնը, էջ 94:

¹⁴⁴ Տէն Պրեզիլիա, Ուրուկուա (sic) եւ Մարոք բայց ոչ Հայաստան, «Լուսարձակ», 23.07.1924, տես Ալ. Մարտունի, Կուսակցութիւնները

օդում, թէև հետագայ տասնամեակներին Մարոկկոյում շարունակել են խարիսխ նետել որոշակի թուով հայեր:

Առաջին աշխարհամարտի հետևանքով Մարոկկո ապաստանած արեւմտահայ գաղթականներից (հիմնականում՝ քեմախցիներ, պոլսեցիներ, կեսարացիներ, ռոդոսթոցիներ) բացի եղել են ժամանակաւորապէս այնտեղ եղած հատուկեմտ արեւելահայեր: Այսպէս, Բոլշեիկեան յեղաշրջումից յետոյ բաթումցի մեծահարուստ **Շաբանեան** ընտանիքը գաղթել է նախ Մարոկկո, ապա՝ Ֆրանսիա¹⁴⁵: 1917-ից ծնունդով բաթումցի **Արմենակ (Արմանոթ)** **Առաֆելեանը** սկսել է շրջել աշխարհով մէկ: 1934-ի դրութեամբ՝ նա Երոսպայից անցել է Հիւսիսային Աֆրիկա, եղել Ալժիրում եւ Մարոկկոյում, որտեղ միացել է նախ ֆրանսիական, ապա՝ իսպանական օտարազգիների լեզուին: Այս շրջանում նրան գերեվարել է Մարոկկոյում իսպանացիների դէմ ազատագրական պայքարի ղեկավար Արդալ-Բարիմին (1882–1963): Այնուհետեւ անցել է Ս. Թոմաս եւ իսպանական Գվինեա, որից յետոյ՝ Ամերիկա: Մտադրուել է իր ուղեւորութեան նիւթերն իսպաներէնով հրատարակել Հարաւային Ամերիկայում¹⁴⁶:

1922-ին Կասաբլանկային հայ մամուլին ուղարկուած մի թղթակցութեան մէջ արդէն նշուած է, որ բաւական թուով հայեր կան այդ քաղաքում, որոնցից են «խոշոր գրավաճառներ» **Գրիգորիսեանը** եւ **Աւետիս Չաքրբեանը**, նաեւ **Պոլյեան** եղբայրները, որոնք մինչ այդ ապրել են Ալժիրում: Ուրիշներ զբաղուել են սուրճի եւ նպարեղէնի առետրով: Նոյն թղթակիցը Մազագան (այժմ՝ Էլ-Չադիդա) քաղաքում հանդիպել է սամսունցի երիտասարդ գաղթական **Խ. Տօնիկեանին**¹⁴⁷:

1932-ին Մարոկկոյի հայութեան ընդհանուր թիւը եղել է 100-

գաղութահայութեան մէջ, Թիֆլիս, 1924, էջ 44-45, **Յովիկ Սելիստեան**, Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները... էջ 313, 318:

¹⁴⁵ Տե՛ս **Seda Mavian**, François Chabonian, un boulimique passionné de post pop art, «Nouvelles d'Arménie Magazine», Paris, no 226, février 2016, էջ 80:

¹⁴⁶ Տե՛ս Հայ աշխարհաշրջիկ մը. «Արաս», 2.08.1934:

¹⁴⁷ Տե՛ս **Յ. Ս.**, Նամակ Մարոքէն ...

150, որոնք ցրուած են եղել գլխաւոր քաղաքներում (Կասաբլանկա, Ռաբաթ, Ֆես, Մեքնես, Մազազան, Մոզաբոր եւ այլն): Մեծ մասամբ զբաղուել են սրճագործութեամբ եւ նայարավաճառութեամբ¹⁴⁸: 1934-ին Մարոկկոյից Փարիզի «Ալյազալին» ուղարկուած թղթակցութեան մէջ նշուել է, որ Կասաբլանկա քաղաքում բնակուած է շուրջ 50 հայ, ընտանիքները քիչ են եւ հայերի մեծ մասն ամուսնացած է օտարոտիիների հետ: Ընդհանրապէս իզմիթցի են, քեմախցի, պոլսեցի, մարգուանցի եւ սամսունցի: Հայ ընտանիքների զաւակները ստիպուած յաճախում են օտար վարժարաններ, միայն մի ընտանիք կարողացել է զաւակին ուսման ուղարկել Սեւրի Մխիթարեան վարժարան: Հայերը սեփական գործի տէր են, մեծ մասամբ՝ սուրճի եւ հին հագուստեղէնի վաճառականներ: Կայ մէկ բժիշկ, մէկ ատամնաբոյժ եւ ամենատարբեր զբաղմունքների տէր անձինք (մանածագործական խանութի տէր, գարածիստ, սափրիչ, մածնագործ, յանձնակատար, դերձակ): Ոչ մի բանուոր չկայ: Գործում է Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան (ՀԲԸՄ) մասնաճիւղը: Տեղացիները համակրում են հայերին եւ բարեկամական յարաբերութիւնների մէջ են նրանց հետ¹⁴⁹:

Ի դէպ, Կասաբլանկայի ՀԲԸՄ վարչութեան կազմում եղել են հետեւեալ անձինք՝ **Գրիգոր Քերքետլեան** (ատենապետ), **Վահրամ Գարայեան** (ատենադպիր), **Գրիգոր Յարութիւնեան** (զանձապահ) եւ խորհրդականներ **Աւետիս Չաքրեան**, **Չարեհ Պէրկամալեան**, **Յովհաննէս Գազանճեան** (Ռաբաթ) եւ **Յարութիւն Մարկուազեան** (Մազազան)¹⁵⁰:

1935-ին Մարոկկո այցելած Եղիշէ քահանայ Մխիթարեանը մամուլին յայտնել է հետեւեալ տեղեկութիւնները տեղի հայութեան մասին: Կասաբլանկայում բնակուել է 23 հայ ընտանիք՝ առեւտրականներ եւ սարքեր զբաղմունքների տէր

¹⁴⁸ Տես Մարքի հայ գաղութը, «Յուսարեր», 2.08.1932:

¹⁴⁹ Տես **Անցորդ**, Հայերը Քասապլանքայի մէջ, «Արեւելք», 22.12.1934:

¹⁵⁰ Տես Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան: Արժաբայ յոբելեան, 1906–1931, Փարիզ, 1935, էջ 422:

անձինք (երկու սափրիչ, երկու բժիշկ, մեկ ատամնաբույժ, մեկ մեքենագետ), գործել է մեկ երոպական տիպի գորգավաճառատուն: Այս քաղաքում Եղիշէ քահանան սեպտեմբերի 24-ին գումարել է ընդհանուր ժողով, որի ընթացքում Կասաբլանկայի հայերը հանգանակել են 2020 ֆրանկ: Ռաբաթում եղել է ինը հայ տուն՝ մանր վաճառականներ, խանութպաններ եւ արհեստաւորներ, որոնցից հանգանակուել է 1050 ֆրանկ: Մազազան քաղաքում բնակուել է չորս ընտանիք եւ մեկ ամուրի: Նրանցից էղիբնէցի **Յարութիւն Սարկաւագեան** ունեցել է երկաթի եւ աղիւսի մեծ գործարան: Այս քաղաքի հայերը հանգանակութեանը մասնակցել են 300 ֆրանկով: Սաֆիում ապրել է երկու կեսարացի ընտանիք, որոնք նուիրել են 300 ֆրանկ, իսկ Մոզադորում բնակուող մեկ հայ ընտանիքը՝ 100 ֆրանկ: Մարակէշի հայ ընտանիքների թիւը եղել է չորսը, երկուսը՝ արցախցի, մեկը՝ իզմիրցի եւ միւսը՝ բաբերդցի: Նրանք Եղիշէ քահանային նուիրել են 170 ֆրանկ: Ֆէտում ապրել է երկու հայ ընտանիք, որոնցից ձեռք է բերուել 300 ֆրանկ, Մեքնեսում մեկ ընտանիք եւ երկու ամուրի, որոնք էլ նուիրաբերել են 650 ֆրանկ: Այդպիսով, Մարոկկոյում ապրող 49 հայ ընտանիքներից ֆրանսահայ հոգեւորականը ժողովել է ընդհանուր թվով 5000 ֆրանկ: Եղիշէ քահանան կազմել է մարոկկահայ համայնքի վարչութիւն (կենտրոնը՝ Կասաբլանկա): Նրանք լնտրել են իրենց պատգամատրին Մարսէլից, որը պէտք է կապ պահպաներ իրենց վարչութեան հետ¹⁵¹:

1938-ին Մարոկկոյի հայերի մէջ յիշուած են հետեւեալ անձինք՝

Կասաբլանկայում՝ 23 ընտանիք. արդէն նշուած անուններին յաւելենք՝ բժիշկներ **Շահպարտնեան** եւ **Տարեան**, **Մարտիկ Շաքարեան**, **Արշակ Տէրմնեճեան**, **Պետրոս Զերքետէլեան**, **Վահէ Փսոփագեան**, **Գարեգին Սալիպեան**,

¹⁵¹ Տես Յանուցիր հայեր Մարոքի մէջ, «Հայրենիք», 8.01.1936: Նոյնը տես Մարոքի հայ գաղութը, «Յառաջ», 20.01.1936:

Հմայեակ Սեֆերեան, Յակոբ Սերճանեան, Ջիւան
Թագուորեան,

Ֆեսում՝ երկու ընտանիք. Յակոբ Պալթայեան, Սկրտիչ
Սարգսեան,

Սարակէշում՝ չորս ընտանիք. Առաքելով, Լեոն Քէլիմեան,
Մոսկոֆեան, Անդրանիկ Օհանես.

Մազազանում՝ չորս ընտանիք. Խ. Տօնիկեան, Դուկասեան,
Հ. Սարկաւազեան,

Մերմեսում՝ Յակոբ Պոլոյեան, Միմոն Գալէնճեան.
Յարութիւն Վարդովեան,

Ռ-աբաթում՝ ինը ընտանիք. Արսենակ Պոլոյեան, Սարգիս
Շաքարեան, Յովակիմ Տերտերեան, Քերովբէ Յարութիւնեան,
Մամիկոն Քամբարեան, Հրայր Սրապեան, Սուրենեան,

Սաֆիում՝ Սարգիս Եսայեան, Խաչատուր Չաքրըեան¹⁵²:

1949-ին Հարսուային Ֆրանսիայի ազգային կենտրոնական
վարչութիւնը, ընդառաջելով Մարոկկոյի հայերի խնդրանքին,
այնտեղ է ուղարկել տ. Մեսրոպ քահանայ Աւետիսեանին
հովուական այցելութեան¹⁵³: Հայր Մեսրոպը Կասաբլանկայի
յունական եկեղեցում պատարագ է մատուցել, որից յետոյ նրա
նախագահութեամբ կայացել է գաղութահայ ժողով: Ընտրուել է
Մարոկկոյի ՀԲԸՄ նոր վարչութիւն հետեւեալ կազմով՝ կոմստիի
Ալաքսիա Պատրիմոնիո (պատուաւոր նախագահ), Ժան
Միրան (Սիիրանեան, 1945-ից եղել է միութեան նախագահը),
Յասակ Արթինեան, Պերճ Վարժապետեան, Մարտիկ
Շաքարեան, Երուանդ Գարապէլիքեան եւ Ազատ Սուրմէնեան
(անդամներ), տիկ. Պալթայեան եւ Մելիքով (խորհրդակցական
ձայնով): Քանի որ համայնքը 15 տարի հայ հոգեւորական չէր
տեսել, քահանան 12 մկրտութիւն է կատարել¹⁵⁴: Յաջորդ տարի

¹⁵² Տես Յովհաննէս Վարժապետեան, Ուրեցոյց Մարտիի, Ժ. տարի,
Մարտի, 1938, էջ 47:

¹⁵³ Տես Բացատրութիւն մը, «Յառաջ», 17.02.1953:

¹⁵⁴ Տես Թղթակից, Գազապլանքայի հայ գաղութի կեանքէն, «Չայն
Փարիզի», 4.02.1949: Նոյնը տես Անցորդ, Ափ մը հայեր ալ հոս,
«Հայրենիք», 5.03.1949: Մարտիի հայերը, «Զարթօնք», 8.06.1950:

Երուանդ Գարապէլիքեանի «Արաքս» վիլլայում գումարուել է Կասաբլանկայի հայ համայնքի տարեկան ընդհանուր ժողովը, որի վարչութեան վերոյիշեալ անդամներին աւելացել է նաեւ **Գուրգէն Սալիպեանը**¹⁵⁵:

Երկրորդ աշխարհամարտից յետոյ եւս որոշ հայեր հաստատուել են Մարոկկոյում, որոնց մէջ էր նաեւ 1951-ին սոցիալիստական հռչակուած Հարաւալաիայից Կասաբլանկա տեղափոխուած ժողովրդական վրիժառու **Մողմոն Թեհլիրեանը** (1896–1960): Նա կնոջ՝ **Անահիտ Թեհլիրեանի** (Թաթիկեան) եւ որդիների՝ **Շահէն ու Չաւեն Մելիքեանների** հետ մինչեւ 1957-ը բնակուել են Մարոկկոյում՝ հարուստ վաճառական Գրիգոր Յարութիւնեանի հովանու ներքոյ: Մարոկկոյի փոքրաթիւ համայնքը 1952-ի մի օր պատիւ է ունեցել ճանաչել Թեհլիրեանին: Իր կեանքում մշտապէս հեռու մնացած լինելով հերոսի հովերից, սակայն տեղի տալով Կասաբլանկայի հայութեան թախանձանքներին՝ Թեհլիրեանն ընդամենը մէկ անգամ է հրապարակայնօրէն պատմել Թաւաթ փաշայի սպանութեան եւ Բեռլինում իր դատավարութեան մասին: Թեհլիրեանի կենսագրութեան այս շրջանը մինչեւ վերջերս մնում էր գրեթէ անծանօթ, մինչեւ որ ի յայտ եկան Կասաբլանկայի բնակչուի **Պերճուի Սուրմէնեանի** յուշերը, որը նա տրամադրել է 1990–1992 թթ. Մարոկկոյում բնակուած **Սեդա Գրիգորեանին**¹⁵⁶:

20-րդ դարի կեսի Մարոկկոյի հայ համայնքի մասին տեղեկութիւններ է հաղորդել պատմաբան **Չոհրաք Ղասաբեանը** (1919–2006), որը 1964–1969 թթ. կնոջ՝ **Արշալոյս Զեղիեանի** հետ Մարոկկոյում վարել է ընդհատակեայ հետախուզական աշխատանք: Մարոկկո մուտք գործելով սիրիական անձնագրով եւ Ղազարեան ազգանուամբ՝ ստելի անվտանգ գործելու նպատակով նա ստացել է մարոկկական քաղաքացիութիւն: Ամուսինները Կասաբլանկայում

¹⁵⁵ Տե՛ս **Թրքակից**, Հայերը Մարոքի մէջ, «Յառաջ», 17.02.1950:

¹⁵⁶ Տե՛ս **Արտակ Մաղախան**, Մոռացուած էջեր (Մողմոն Թեհլիրեանի կեանքից), «Դրոշակ», 2004, ք. 4, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 75-79:

աշխատեցրել են օրթոպեդիկ կօշիկների արհեստանոց: Սերտ կապեր հաստատելով հանդերձ տեղի հայերի հետ՝ Ղասաբեանը եւ կինը երբեւէ չեն բացայայտել իրենց խորհրդային քաղաքացիներ լինելը եւ մշտապէս մերժել են ամերիկեան եւ բրիտանական հետախուզութիւնների հետ համագործակցելու առաջարկները: Մարոկկոյում անցկացրած իր տարիների, նաեւ տեղի հայ համայնքի մասին նա մանրամասն ներկայացրել է իր «Կրակոտ եւ անտեսանելի ճակատում (յուշեր անցեալից)» (Երեւան, 2005) յուշագրութեան մէջ¹⁵⁷: Քանի որ ՊԱԿ-ի գործակալները երբեք չեն նշում իրենց գործած երկրների անունները, Ղասաբեանը եւս իր յուշագրութեան մէջ իրենց ապրած երկիրը եւ քաղաքը նշել է միմիայն «Աֆրիկայի Մ. երկիր» եւ «Կ-ա քաղաք» ձեւերով:

1954-ին Մարոկկոյի հայերի թիւը եղել է 200. Կաաաբլանկայում՝ 60, Ռաբաթում՝ 13 հոգի: Վայելել են իշխանութեան եւ տեղացի ժողովրդի համակրանքը եւ պաշտօնեաների վստահութիւնը, մտադիր են եղել «ազգային տուն» կառուցել¹⁵⁸: Հայերը եկել են Սիջին Արեւելքից. Ֆրանսիայից եւ Ամերիկայից: Ոմանք ունեն սեփական արհեստանոցը կամ վաճառատունը՝ գրասենեակով, ուրիշներ հետեւել են տարբեր ասպարեզների, նրանցմէջ եղել են ատամնաբոյժ, բժիշկ, ճարտարագէտ, դեղագործ: Ռաբաթում եղել է մածունի երկու հայկական գործատուն: Հայերի տնտեսական վիճակը եղել է լաւ. չեն ունեցել որեւէ ազգային ձեռնարկ: Երբեմն օժանդակել են Սերի Մուրատեան եւ Ռէնսիի Դայրոցասէր Տիկնանց վարժարաններին¹⁵⁹:

¹⁵⁷ Տե՛ս **Չոփրաք Ղասաբեան**, Կրակոտ եւ անտեսանելի ճակատում (յուշեր անցեալից), Երեւան, 2005: Մարոկկոյի հայութեան վերաբերեալ այդ տեղեկութիւնները հեղինակը նախապէս ներկայացրել էր «Հայ Սփիտք» հանրագիտարանի «Մարոկկո» բաժնում (Երեւան, 2003, էջ 391: Ղասաբեանի մասին տե՛ս **А. Манукян**, В разведку – на волне репатриации, «Новое время», 10.07.2002:

¹⁵⁸ Տե՛ս Հայերը Մարոքի մէջ, «Յառաջ», 19.04.1954:

¹⁵⁹ Տե՛ս Գաղութ գաղութ, «Յառաջ», 15.05.1954:

1955-ին Մարոկկո այցելած ֆրանսահայ գրող Շաարշ Նարդունին Ռաբաթում հանդիպել է ամասիացի մի հայի, որ քաղաքի մօտ մի վայրում նարնջաստան է հիմնել¹⁶⁰: Ռաբաթ այցելած մեկ այլ գրող՝ Վարդգես Պետրոսեանը, նոյնպես հանդիպել է հայերի, որոնց յիշել է այսպես. «*Ես յիշում եմ՝ Մարոկկոյի Ռաբաթ քաղաքում մի հայ մարդ ինձ ցոյց տուեց Ջուարթնոցի պատից պոկած մի կտոր շաղախ, որ պահում էր բիրենդապակեայ սկահակի մէջ*»¹⁶¹: Եւ ապա՝ «*Ես Աֆրիկայում եմ, Մարոկկոյի Ռաբաթ քաղաքում, որտեղ ապրող չորս հայերից մէկին տեսայ սրճարանում, մածուն սալքելիս, իսկ թթի տակ դնդում էր հայկական մի եղանակ*»¹⁶²:

1956-ին «Արմենիայի» թղթակիցը տեղեկացրել է, որ Մարոկկոյի հայօջախը կազմուած է շուրջ 80 ընտանիքից (մօտ 400 անձ)՝ առետրականներ եւ արհեստատորներ, որոնք ջերմ յարաբերութիւններ ունեն տեղացիների հետ: Ռաբաթում ապրել է 15 հայ ընտանիք: Մազագանում ապրել է եօթ հայ ընտանիք, Մարակէշում եւ Սեքնեսում՝ վեց, Սաֆիում եւ Ֆետում՝ չորս եւ Մոզադորում՝ երկու:

Նոյն թուականի ապրիլի 2-ին Կասաբլանկայում գումարուել է մարոկկահայերի տարեկան ընդհանուր ժողովը:¹⁶³ Այն բացել է Գուրգէն Սալիպեանը, ատենապետ է ընտրուել ծնունդով պոլսեցի Ժիրայր Աբիկեանը: Հաշուետութեամբ հանդէս է եկել Վահան Համբարձումեանը, որը թուարկել է նախորդ տարուայ ընթացքում կատարուած համեստ աշխատանքները: Այս փոքրաթիւ գաղութն աջակցել է Բէյրութի ճեմարանին, ֆրանսիական Կարմիր Խաչի օդափոխութեան կայանին եւ այլ հանրային ձեռնարկների: Պերճ Վարժապետեանը գեկուցել է վարչութեան նիսական գործունէութեան մասին: Ժողովը, զոհացուցիչ համարելով

¹⁶⁰ Տես Հայկական յարթերգութիւն... Աֆրիկէի մէջ, «Յառաջ», 17.04.1955:

¹⁶¹ Վարդգէս Պետրոսեան, Հայկական էսթիզներ, Երեսան, 1984, էջ 23:

¹⁶² Անդ, էջ 57:

¹⁶³ Տես Հայերը Հիսիսային Աֆրիկէի մէջ, «Հայաստանի կոչնակ», 27.10.1956, էջ 929:

վարչութեան գործունէութիւնը, նոյնութեամբ վերընտրել է այն, որի անդամներն են Գուրգէն Սալիպեանը, Համբարձումեանը, Գարապէլիքեանը, Վարժապետեանը, Ռաբաթից՝ Հրայր Սրապեանը: Կարդացուել է Ռաբաթում անժառանգ մահացած զմիտնիացի **Թագուր Անանեանի** ազգականներից **Պ. Աղամեանի՝** ԱՄՆ-ից ստացուած նամակը եւ կատարուել են համապատասխան կարգադրութիւններ¹⁶⁴:

1956-ի ապրիլի 27-ին Կասաբլանկայում շուրջ 30 հոգու մասնակցութեամբ տեղի է ունեցել Մարոկկոյի հայ համայնքի տարեկան ընդհանուր ժողովը՝ Կարօ Մարեանի նախագահութեամբ: Վահան Համբարձումեանը համայնքի թուաքանակի վերաբերեալ տուել է հետեւեալ պատկերը. Կասաբլանկա՝ 24 ընտանիք (62 անձ), Ռաբաթ՝ չորս ընտանիք (ութ անձ), Մազագան՝ երկու ընտանիք (երեք անձ), Սաֆի՝ երկու ընտանիք (վեց անձ), Մարակէշ՝ երկու ընտանիք (չորս անձ), Գազալա-Թաալա՝ երկու ընտանիք (երեք անձ), Ֆէս՝ մէկ ընտանիք (երկու անձ), Մեքնես՝ մէկ ընտանիք (երկու անձ), ընդամենը՝ 38 ընտանիք (90 անձ), առաւել՝ երեք ընտանիք (տաս անձ): Այսպիսով, մարոկկահայերի ստոյգ թուաքանակը եղել է 40 ընտանիք՝ 100 հոգի: Մարոկկաբնակ հայերից 12 հոգի արտագաղթել են ԱՄՆ, Կանադա եւ Հարաւսլաւիա: Ջբաղուել են մեծ մասամբ առետրով, եղել են պաշտօնեաներ եւ արհեստատարներ: Հինգ տարուայ ընթացքում այս համայնքը համահայկական ձեռնարկներին եւ հաստատութիւններին յօժարակամ նուիրել է շուրջ 700 հազար ֆրանկ: Համայնքը տուել է երկու բարերար՝ Աւետիս Չաքրեան եւ Բ. Բերգամալի (Պ. Պերկամալի), որը միլիոնաւոր դոլարներ արժեցող իր տներն ու հարստութիւնը կտակել է ՀԲԸՄ-ին: Նոյն օրը Կասաբլանկայի Մայր տաճարում ապրիլեան սգատօնի առթիւ հոգեհանգստի կարգ է կատարուել քաղաքում հիրընկալուած Գրիգոր վարդապետ Խաչերեանի նախաձեռնութեամբ, իսկ ասպերեց վարդապետը ֆրանսերէնով բացատրել է սգատօնի

¹⁶⁴ Տես **Թղթակից**, Հայ կեանքը Մարտի մէջ, «Յառաջ», 26.04.1956:

իմաստը¹⁶⁵:

Ի դեպ, հաւանաբար վերոյիշեալ Բ. Բերգամալիի որոյն էր **Չարեհ Բերգամալին (Պերկամալեան)**, որի անունը նշուած է 1953-ին հրատարակուած Կասաբլանկայի ներմուծողների ցանկում¹⁶⁶:

1958 թուականի մայիսին Կասաբլանկայի հայերը հիւրընկալել են ամերիկահայ հանրային գործիչ Ջորջ Մարտիկեանին եւ ամերիկաբնակ լրագրող, արաբական թերթերի թղթակից Լեոն Բեշիշեանին՝ իրենց տիկնանց հետ: «Մահրաբա» հիւրանոցում կայացել է ընդունելութիւն, որի ընթացքում խօսել են համայնքի ակտիւ անդամները՝ Վահան Համբարձումեանը, Ազատ Սուրմենեանը, Ժիրայր Աբիկեանը, Երուանդ Գարապէլիքեանը, **Կ. Պալթայեանը**, աիկին **Յարութիւնեանը**, Կարօ Սարեանը, Պերճ Վարժապետեանը եւ Հր. Սրապեանը¹⁶⁷:

1959-ի տոտեալով Կասաբլանկայի հայերի թիւը եղել է մօտ 100¹⁶⁸: Մեծ մասամբ եղել են առեւտրականներ, որոնց մէջ արդէն նշուած անուններին յաւելել են **Հայկազ Ասատուրեանի**, **Ժիրայր Սուրմենեանի** եւ **Վահան Թորոսեանի** անունները: Քանի որ 1956-ից անկախացած Մարոկկոյում գոյութիւն չի ունեցել հպատակութեան մասին օրէնք, հայերը մարոկկացի չեն համարուել¹⁶⁹, թէւ Մարոկկոյի իշխանութիւնների կողմից ճանաչուել են որպէս ինքնուրոյն համայնք:

1959 թուականի մարտի 30-ին Մարոկկոյում հիւրընկալուել

¹⁶⁵ Տե՛ս **Թորակից**. Փոքրաթիւ գաղութի մը ճիգերը, «Յառաջ», 6.05.1958:

¹⁶⁶ Տե՛ս France. Directory of Importers, MSA Financed Commodities, United States. Mutual Security Agency. Special Mission to France for Economic Cooperation, 1953, էջ 132:

¹⁶⁷ Տե՛ս **Վ.** Այցելութիւն մը, «Յառաջ», 29.05.1959:

¹⁶⁸ Անշուշտ, վրիպակ է սփիւռքահայ մամուլի տեղեկութիւնը, քէ այդ թուականին Մարոկկոյում բնակուել է մօտ 100 հայ ընտանիք (տե՛ս Հայերը կը պատուեն Քազապլանքայի կառավարիչ Սի Ահմետ Պարկաշը, «Ազդակ», 14.07.1959): Պէտք է լինի՝ մօտ 100 հայ:

¹⁶⁹ Տե՛ս **Լեոն Բեշիշեան**, Մայրքի հայերը, «Ազդակ», 22.09.1959:

է ֆրանսիացի գրող, «Կահիէ դի սիւղ» պարբերականի հիմնադիր խմբագիր Ժան Բալարը (1893–1973): Առիթից օգտունելով՝ տեղի հայերը թէյասեղան են կազմակերպել նրա պատուին, քանի որ Բալարի պարբերականը 1950-ականներին բազմիցս հրատարակել է հայ բանաստեղծութեան նմուշներ՝ Լիւք-Անդրե Մարսէլի թարգմանութեամբ: Ելոյթներ են ունեցել Սարեանը, Աբիկեանը, Վահան Համբարձումեանը, Գարսալէլիքեանը, **Արաքսի Վարուժանը**, իսկ տեր եւ տիկին Բալարներն իրենց խօսքում պատմել են հայ ժողովրդի հետ իրենց ծանօթութեան եւ հայ բանաստեղծութեան մասին: Տասը հայ բաժանորդագրուել են «Կահիէ դի սիւղին», իսկ մարուկահայ համայնքի կողմից ամսագրի մէկ տարուայ բաժանորդագրութիւն են ապահովել Բէյրութի, Ռէնսի, Թեհրանի, Մոնտեվիդէոյի, Փարիզի հայկական դպրոցներին¹⁷⁰: Նոյն տարի Կասաբլանկայի Մայր տաճարում կրկին ոգեկոչուել է Մեծ եղեռնի զոհերի յիշատակը: Խաչերեան վարդապետը պատարագ է մատուցել կաթոլիկ ոճով եւ քարոզել հայերէն եւ ֆրանսերէն: Ներկայ է եղել քաղաքի ֆրանսիական հիւպատոսը եւ մեծ թուով ֆրանսիացիներ¹⁷¹: Յաջորդ տարի, 1960-ի մայիսի 1-ին Կասաբլանկայում դարձեալ հանդիսատր պատարագ եւ հոգեհանգստեան կարգ է մատուցուել Մեծ եղեռնի զոհերի յիշատակին՝ նախաձեռնութեամբ Գրիգոր վարդապետ Խաչերեանի¹⁷²: 1965-ին Կասաբլանկայի հայերը ոգեկոչել են Մեծ եղեռնի 50-ամեակը յունական եկեղեցում՝ համայնքի բոլոր անդամների մասնակցութեամբ¹⁷³: Աւելի սակաւ են եղել մշակութային ձեռնարկները: Չոհրաբ Ղասաբեանի վկայութեամբ՝ 1960-ականներին Կասաբլանկայի Գերմանիայի հիւպատոսարանի

¹⁷⁰ Տե՛ս **Թղթակից**, Տեր եւ տիկին Ժան Պալար Բազապլանքայի մէջ, «Յառաջ», 8.04.1959:

¹⁷¹ Տե՛ս **Թղթակից**, Ապրիլեան յիշատակը Մարտի մէջ, «Յառաջ», 16.05.1959:

¹⁷² Տե՛ս Գաղութ գաղութ, «Յառաջ», 4.05.1960:

¹⁷³ Տե՛ս **Ղասաբեան**, Կրակոտ եւ անտեսանելի ճակատում, էջ 70:

շենքի դահլիճում կայացել է գերմանաբնակ ծնունդով քիֆլիսեցի դաշնա-կահարուհի Գիլխանդարեանի մենահամերգը, որին ներկայ է եղել տեղի հայ համայնքը: Երաժշտական երեկոն, որի ժամանակ հնչել են նաև Կոմիտասի գործերից, էլ անելի է համախմբել համայնքի հայերին¹⁷⁴:

Չունենալով հայկական եկեղեցի՝ մարոկկահայերը Ս. Ծննդեան, Չառիկի եւ այլ տոներին յաճախել են յունական եւ ռուսական եկեղեցի: Երեխաները յաճախել են ֆրանսիական դպրոցներ եւ քոլեջներ (հիմնականում՝ Կասաբլանկայի Լեաուտեյ լիցեյը), շատերը բարձրագույն կրթութիւն ստանալու նպատակով մեկնել են Ֆրանսիա¹⁷⁵:

Աւելի մանրամասն ներկայացնենք արդէն յիշուած Մարոկկոյում բնակուած աչքի ընկնող հայորդիներին¹⁷⁶:

1920-ականների սկզբից Կասաբլանկայում բնակուող գրավածնաւ **Աւետիս Չաքրեանը** եղել է ազգային բարերար, Մարոկկոյի շրջանի ազգային երեսփոխան եւ հայ համայնքի վարչութեան ատենապետ: Նրա գրախանութք գտնուել է քաղաքի ամենաբանուկ փողոցում: Չաքրեանը վախճանուել է 1941-ին, Կասաբլանկայում՝ իր ունեցուածքի մեծ մասը կտակելով Բէյրութի Հայ ճեմարանին¹⁷⁷:

Եղեռնամահ բանաստեղծ Դանիէլ Վարուժանի այրին՝ պոլ-

¹⁷⁴ Անդ, էջ 70-71: Նկատենք, որ Գերմանիայում այդ ժամանակաշրջանում չի եղել ծնունդով քիֆլիսեցի դաշնակահարուհի Գիլխանդարեան. վստահ ենք, որ տարիների հեռատրութիւնից Ղասաբեանն այդ կերպ է յիշել գերմանաբնակ ծնունդով քիֆլիսեցի դաշնակահարուհի Մարիա Գալամբարեանի անունը:

¹⁷⁵ Տե՛ս անդ, էջ 58-59:

¹⁷⁶ Այս մասում ներկայացուած փաստերի մի մասը լրացուել եւ ճշտուել են Մարոկկոյում ծնուած, այժմ ֆրանսաբնակ Հուրի Վարժապետեանի կողմից՝ 2021-ի մարտ-մայիս ամիսներին մեր ունեցած բազմաթիւ հեռախօսագրոյցներով եւ նամակագրութեամբ:

¹⁷⁷ Տե՛ս Հայ բարերար մը, «Հայաստանի կոչնակ», 9.08.1941, էջ 787:

սահայ Արաքսի Վարուժանը (1892–1967), երկյորդ անգամ անուանացել է Ժիրայր Աբիկեանի հետ եւ տասնամեակներ շարունակ բնակուել Կասաբլանկայում¹⁷⁸: Աբիկեանի եղբայրները՝ **Յակարը** եւ **Մարթընը**, Կասաբլանկայում զբաղուել են ԱՍՆ-ից եւ Եվրոպայից հազաժ հազուատեղէնի եւ կտորեղէնի մեժաքանակ ներմուծմամբ¹⁷⁹: Մարթէն Աբիկեանի կինն էր պոլսահայուհի **Անահիտ Աբիկեանը**, որը Մարոկկո է տեղափոխուել մօր՝ **Փայրիկի** հետ: Համագործակցել է բրիտանական հետախուզութեան հետ:

Վարուժան ընտանիքը 1956-ին նամակ է յղել «Յառաջին» Վարուժանի «Հարճի» ֆրանսերէն թարգմանութեան

¹⁷⁸ Վարուժանի՝ Մարոկկոյում յայտնուած մասունքների (բանաստեղծութիւնների տետր, մի բանի նամակ, սպանութեան վերաբերեալ նիւթեր)՝ հայրենիք վերադարձին նպաստել է Հայաստանի Զարեանցի անուան Գրականութեան եւ արուեստի թանգարանի (ԳԱԹ) ֆունդապահ Գոհար Ազնատրեանը, որն այդ նպատակով որպէս զբոսաշրջիկ մեկնել է Մարոկկո, հանդիպել Ժիրայր Աբիկեանին ու նրա հետ բանակցել Վարուժանի արխիւը հայրենիք վերադարձնելու վերաբերեալ: Նա Սփիւռքսահայութեան հետ մշակութային կապերի կոմիտէին տեղեկացրել Աբիկեանի կողմից Վարուժանի արխիւը Հայաստան ուղարկելու որոշման մասին, եւ կոմիտէն Աբիկեանին առաջարկել է (1967-ի դեկտեմբերի 15-ին գրած նամակում) Վարուժանի արխիւը յանձնել Կասաբլանկայի ԽՍՀՄ գլխատր հիւպատոսութեանը (տե՛ս **Արմէն Բադալեան**, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 110): Սակայն այն չի իրականացել: Ըստ Չոհրաբ Ղասաբեանի՝ 1960-ականներին մի անգամ Յակոբ Աբիկեանն իր ստորագրութեամբ բաճախատեղծութիւններ է հրատարակել Փարիզի «Յառաջ» օրաթերթում, որո՛ւցում զգալի է եղել Դանիէլ Վարուժանի ոճը: Կասկածել են, որ դրանք վերջուել են իրենց մօտ առկայ Վարուժանի անտիպ գործերի տետրից: Ղասաբեանը դիմել է ՊԱԿ-ի կենտրոն՝ Մոսկուա եւ Ամենայն հայոց կաթողիկոս Վազգէն Ա-ին, որն էլ իր հերթին դիմել է Փարիզի հայոց թեմի առաջնորդ Մանուկեանին: Վերջինս երկու օրով եկել է Կասաբլանկա եւ Աբիկեանից վերցրել է Վարուժանի տետրը (տե՛ս **Ղասաբեան**, Կրակոտ եւ անտեսանելի ճակատում, էջ 81): Վարուժանի այդ նիւթերը Մանուկեանը Հայաստան է ուղարկել Վազգէն Ա կաթողիկոսի միջոցով, որոնք ԳԱԹ-ում ստացուել են 1968-ի օգոստոսի 1-ին:

¹⁷⁹ Տե՛ս **Ղասաբեան**, Կրակոտ եւ անտեսանելի ճակատում, էջ 58:

հրատարակութեան առթիւ յայտնելով, որ իրենց մօտ դեռես կան գրքից օրինակներ եւ պատրաստ են ձրի տրամադրել բոլոր ցանկացողներին. «Հասցէ՝ Վարուժան ընտանիք, 989, Բազասլանք (Մարոք)»¹⁸⁰: Վարուժանի այրին գործածել է նաեւ այս հասցէն՝ «տիկին Ա. Վարուժան, Ամերիկեան հիւպատոսարան, Բազասլանքա (Մարոք)»¹⁸¹:

Կոմսուհի Արաքսիա Պատրիմոնիոն (1896 – ?, ծնեալ Էսմերեան) եղել է Մարոկկոյում ֆրանսիական Կարմիր խաչի նախագահը: Ամուսնացած է եղել իսպանացի կոմսի հետ: Կասաբլանկայում տնօրինել է «Պատրիմոնիո ծնեալ Էսմերեան Մարգրիտ աֆրիկեան անշարժ գոյք» ընկերութիւնը: Մահացել է Կասաբլանկայում:

Կասաբլանկայում հաստատուած առաջին հայերից Ազատ Սուրմէնեանը ծնունդով եղել է Երզնկայից: Եղբօր եւ քրոջ հետ փրկուելով Մեծ եղեռնից՝ Երզնկայից մեկնել են Կ.Պոլիս, 1922-ին տեղափոխուել են Ալժիր, իսկ Երկրորդ աշխարհամարտից յետոյ՝ Մարոկկո: Կասաբլանկայում տնօրինել է կաուչուկի գործարան, որը միակն է երկրում զբաղուել ռետինէ ճոքաւոր եւ սովորական կօշիկների արտադրութեամբ: Նրա եղբայրն ունեցել է պլաստիկ առարկաների եւ մանկական խաղալիքների գործարան¹⁸²: Առետրական կապեր է հաստատել ԱՄՆ-ի հետ¹⁸³: Ցանկացել է Կասաբլանկայում կառուցել հայկական եկեղեցի, ինչը չի իրականացել¹⁸⁴: Ազատ Սիւրմէնեանը եւ կինը Պերճուհի Սուրմէնեանը (ծնեալ Վարժապետեան, 1924, Բէյրութ – 2007, Կասաբլանկա) Կասաբլանկայում ունեցել են երեք որդի՝ Արշակ, Վահրամ եւ Վազգէն Սուրմէնեանները: Առաջինը հետագայում տեղափոխուել է Ֆրանսիա (Մոնպելիէ), Վազգէնը՝ ԱՄՆ (Լոս

180 Պ. Փ., Նամակ խմբագրութեան, «Յառաջ», 31.05.1956:

181 Ապօրինի ձեռնարկ մը, «Յառաջ», 18.12.1953:

182 Տե՛ս Ղասաբեան, Կրակոտ եւ անտեսանելի ճակատում, էջ 58:

183 Տե՛ս Visiting buyers and officials, “International Commerce,” vol. 76, 1970, էջ 48:

184 Տե՛ս Ղասաբեան, Կրակոտ եւ անտեսանելի ճակատում, էջ 94:

Անջղելու), իսկ Վահրամը մնացել է Մարոկկոյում եւ այժմ որդու՝ Նայեկ Սիրմէնեանի հետ շարունակում է կաուչուկի գործը:

Ազատ Սիրմէնեանի եղբայր **Ժիրայր Սուրմէնեանը** (1925–2017) տնօրինել է Կասաբլանկայի «Սուկաֆ» սրճարանը: Վերջինիս որդին՝ **Ենոք Սուրմէնեանը**, սովորել է ծննդավայրի Լեաուտեյ լիցէյում: Իսկ Ազատ Սիրմէնեանի քոյրը՝ **Մարիամ Սիլվմէնեանը** (1906–1996), ամուսնացել է Ռաբաթում բնակուած սրճագործ **Արշակ Պոլոյեանի** հետ, ունեցել երեք զաւակ՝ **Շաւարշ**, **Աշոտ** եւ **Արաքսի Պոլոյեաններ**: Երզնկացի **Յարէթ Պոլոյեանը** եղել է ֆիդայի՝ Սեբաստացի Մուրադի խմբից, որդին՝ **Աշոտ Պոլոյեանը** (1926–1999), եղել է դեղագործ, տեղափոխուելով Մարսել՝ անդամակցել է Ֆրանսիայի Հայ բժիշկների ընկերութեանը, զբաղուել հայանպաստ հանրային գործունէութեամբ:

Պերճուի Սուրմէնեանի եղբայրը՝ ճարտարագէտ **Պերճ Վարժապետեանը** (1922, Բէյրութ – 2001, Մարսել), աշխատել է Փարիզի ռադիումի ինստիտուտում՝ Ֆրեդերիկ եւ Իրեն Ժուլիո-Կիւրիների լաբորատորիայում: Նկատի ունենալով նրա աշխատանքի վտանգատր բնոյթը, մայրը՝ Կասաբլանկայում դստեր մօտ հաստատուած **Հնազանդ Մեսճեանը** (ծնունդով Մերսինից) որդուն կանչել է իր մօտ: Մարոկկոյում Պերճ Վարժապետեանը թողել է մասնագիտութիւնը եւ քեռայրի հետ միասին զբաղուել կաուչուկի գործով: Ամուսնացել է **Հերմինէ Վարժապետեանի** (ծնեալ Կրկեաշարեան, 1926, Բէյրութ – 2015, Մարսել) հետ, որը բնիկ կեսարացի էր: Ունեցել են երկու զաւակ: Որդին՝ **Վահրամ Վարժապետեանը** (1958, Կասաբլանկա – 2003, Մարսել), եղել է ճարտարապետ Մարսելում, իսկ դուստրը՝ **Հուրի Վարժապետեանը** (ծն. 1955, Կասաբլանկա), նախնական կրթութիւնն ստացել է ծննդավայրի ֆրանսիական դպրոցում, 1968-ին տեղափոխուել է Ֆրանսիա, Մարսելում շարունակել կրթութիւնը եւ դեղագործութիւն է ուսանել: Չբաղում է հայերէնից ֆրանսերէն թարգմանութեամբ, առածին հատորներով լոյս են տեսել նրա թարգմանուած «Մեր մանկութեան երկրները» (հատուածներ հայ

հեղինակների գործերից, 2010, Անահիտ Տեր-Մինասեանի հետ), Արա Գիլերի «Մառած՝ պատկերների վրայ» (2013), Թեոդիկի «Յուշարձան 1915 Ապրիլ 24-ի» (2015, վերջին երկուսը՝ Ալիս Տեր-Վարդանեանի հետ), Վահե Պերպերեանի «Յանուն հոր եւ որդւոյ» (2021) եւ այլ հատորներ:

Ըստ Չոհրաբ Ղասաբեանի, Սուրմենեան-Վարժապետեան ընտանիքի՝ Ատլանտեան ովկիանոսի ափին վարձով վերցուած հանգստի տունը՝ *«կարծես հայկական սկումբր լինէր. յատկապէս հանգստեան օրերին, երբ բոլորս հաւաքուած էինք այնտեղ: Հաւաքում էինք 7-8, երբեմն էլ 10-12 ընտանիքներ»*¹⁸⁵:

1960-ականներին Ուրուգուայից Մարոկկո եւ տեղափոխուել Պերճ Վարժապետեանի մօր մօրաքոյրը՝ **Ֆորթիւնէ Մեաճեանն** անուանու՝ Վահան Թորոսեանի հետ: Սուրմենեան-Վարժապետեան ընտանիքը հետագայում տեղափոխուել է Մարսէլ, որտեղ դարձեալ զբաղուել են կաուչուկից կօշկեղէնի արտադրութեամբ:

Ինչպէս տեսնում ենք այս մէկ ընտանիքի օրինակով, ինչպէս շատ վայրերի պէս, Մարոկկոյում եւս համայնքը մեծացել է ի հաշիւ որոշակի տնտեսական դրութիւն ունեցող անձանց կողմից հրափրուող ազգականների:

Ծնունդով տրապիզոնցի **Կարօ Սարեանը** (1911–2002,) նկարչուի Վավա Սարգիս Խաչատրեանի եղբայրը, կրթութեամբ ջութակահար էր, սակայն կնոջ հետ հագուստեղէնի խանութ է ունեցել Կասաբլանկայի ծովափին: Աշխատակցել է Փարիզի «Յառաջին»: Հետագայում ընտանիքով տեղափոխուել է Մարսէլ:

Հայկազ Ասատուրեանը (1914, Թիֆլիս – 2015, Սենթ Էթիէն) ընտանիքով մեկնել է Յունաստան, ապա՝ Ֆրանսիա (Սենթ Էթիէն): Այստեղ ամուսնացել է Թուրքիայից գաղթած հայ ընտանիքի գաւակ **Մարի Ժաննա Քուշճեանի** (1924, Սևնո Էթիէն – 2017) հետ: Մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին, գերի ընկել Գերմանիայում եւ փախել: Դիմել է

¹⁸⁵ Տես անդ, էջ 68-69:

ֆրանսիական քաղաքացիութիւն ստանալու համար, սակայն մերժուելով՝ 1949-ին տեղափոխուել է Մարոկկո: Շուտով նրան են միացել կինը եւ Սենթ Էթիէնում ծնուած որդիները՝ **Ժաք Արտաւազդը** (ծն. 1945, Սենթ Էթիէն), **Ալէն Հրաչիկը** (ծն. 1946) եւ **Ժիլ Յարութիւնը** (ծն. 1949): Ասատուրեանները Մարոկկոյում ապրել են 30 տարի, ապա վերադարձել են Սէնտ Էթիէն¹⁸⁶:

Երուանդ եւ **Պերճուհի Գարապէլիքեանները** ունեցել են երեք զուակ՝ **Էդուարդ** (ատամնաբոյժ), **Ռոժէ** (դեղագործ) եւ **Արաքսի**: Երուանդի եղբորորդին՝ Կասաբլանկայում ծնուած **Լուի Գարապէլիքեանը**, 1939–1950 թթ. ուսանել է «Ժիլ Ֆերի» դպրոցում, 1950–1954 թթ.՝ քաղաքի տեխնիկական լիցեյում: Հետագայում բոլորը տեղափոխուել են Ֆրանսիա:

Ճարտարագէտ **Գրիգոր Ձէյթունցեանն** աշխատել է «Ֆիլիպս» ֆիրմայի Կասաբլանկայի մասնաճիւղում: Սերտ կապեր է ունեցել ամերիկեան գործարար շրջանակների հետ: Ամուսնացած է եղել քրիստոնէայ արարուիու հետ. 1968-ին ընտանիքով տեղափոխուել է Չիլի¹⁸⁷:

Մարոկկոյի հայերի հետ սերտ կապեր են ունեցել 1960-ականների կեսին Կասաբլանկայի ֆրանսիական հիւպատոսարանում պաշտօնավարած ֆրանսահայուհի, արմատներով աֆիոնգարահիսարցի **Լիդի Ղազարեանը** (Չուիրաբ Ղասաբեանը նրա անունը յիշել է որպէս Լիլիթ¹⁸⁸) եւ նրա մայրը:

Գրող **Տիրան Ալեքսանեանը**, ծնունդով Ադաբազարից, Չմիւռնիայի հրկիզումից յետոյ ծնողների հետ մեկնել է Յոնաստան, այնուհետեւ՝ Մարոկկո: Հեղինակ է «Ծիածան՝ ծովերի վրայ» յունարէն գրքի: Երկրորդ աշխարհամարտի տարիներին օգնութիւն է ցոյց տուել կարօտեալներին: Մահացել է 1968-ին, Կասաբլանկայում¹⁸⁹:

Քաղաքի հայօջախի ակտիւ գործիչներից ծնունդով

¹⁸⁶ Վկայութիւնը՝ Ժիլ Ասատուրեանի (15.04.2021 ելզիր):

¹⁸⁷ **Ղառաբեան**, Կրակոտ եւ անտեսանելի ճակատում, էջ 70, 72-73, 98:

¹⁸⁸ Տես ւանդ, էջ 86-88:

¹⁸⁹ Տիրան Ալեքսանեան, «Մասիս», 22.09 1968:

երզնկացի **Գրիգոր Յարութիւնեանը** (1914–^o) նախ հաստատուել է Ալժիրում, ապա՝ Մարոկկոյում: Չբաղուել է սուրճի եւ նպարեղէնի առուտրով, ապա Կասաբլանկայում տնօրինել է հիւրանոց: Նա զբաղուել է հայ գաղթականների խնդիրներով, կրթական եւ կրօնական հարցերով: Սնանկանալով՝ 1969-ին նամակ է գրել Երեւան՝ Սփիւռքահայութեան հետ մշակութային կապերի կոմիտէին, ցանկութիւն յայտնել հայրենադարձուել¹⁹⁰:

1933–1969 թթ. Կասաբլանկայում է բնակուել պոլսեցի արուեստագէտ-ոսկերիչ, քանդակագործ, հնութիւնների մասնագէտ, գոհարավաճար: **Վահան Մարգարեանը** (1888–^o): Նա կերտել է թանկարժէք քարերից եւ ջնարակից աշխատանքներ, հիմնականում՝ աստուածաշնչեան մոտիւներով («Քրիստոսի կեանքը», «Դրախտ»), սաղաւարտներ, խոյրեր, սրբանօթներ, նաեւ մի տիեզերանա: Նրա աշխատանքները նկարահանել են ֆրանսիացի վաերագրողները:¹⁹¹ Յուցահանդէսներ է ունեցել 1962–1964 թթ.: 1969-ին Մարգարեանը վերադարձել է Ստամբուլ:¹⁹²

Գուրգէն Սալիպեանը (ծն. 1912, Ադանա) մօտ 1919-ին մեկնել է Բէյրութ, 1935-ին հաստատուել է Կասաբլանկայում: Այստեղ ղեկավարել է «Օշընուեյզ» եւ «Ալ Մադրեր» առուտրական հաստատութիւնները: Չբաղուել է օգտագործուած հագուստի ներածմամբ: Սալիպեանը 1946-ին ամուսնացել է բէյրութցի **Ազնես Արթիւնեանի** հետ, որը նոյնպէս տեղափոխուել է Մարոկկո: Նրանց ասագ զաւակը՝ **Արա Սալիպեանը**, ծնունդ է Բէյրութում, միւսները՝ Մարոկկոյում: 1950-ականներին տեղափոխուել են ԱՄՆ (Նիւ Եօրք), սակայն պահել են Կասաբլանկայի իրենց բնակարանը մինչեւ 1970-ականների սկիզբը: Սալիպեանի զաւակներից է ամերիկաբնակ

¹⁹⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 4, գ. 360, թիւ 2-4 :

¹⁹¹ Տե՛ս Արուեստագէտ-ոսկերիչ Վահան Մարգարեանի գործերը պիսի ցուցադրուին ժապաւէնով, «Ազդակ», 6.03.1967:

¹⁹² Նրա մասին տե՛ս նաեւ՝ Վահան Մարգարեան ջերմ գնահատանքի կ'արժանանայ իբր հնագէտ եւ քանդակագործ, «Արեւ», 25.09.1965:

անգլիագիր գրող **Քեթի Սալիպեանը** (ծն. 1954, Կասաբլանկա), որի վկայութեամբ, ընտանիքը պահպանել է հայկական աւանդոյթները¹⁹³:

Վերոյիշեալ Ազնես Արթինեանի՝ Մարոկկո տեղափոխուելուց յետոյ **Բէյրութից** նրան է միացել եղբայրը՝ ակնաբոյժ **Յաւակ Արթինեանը** (1917, Չոմախլու գիւղ – ?): Նա եւ կինը՝ ծնունդով մարաշցի **Փառուկ Արթինեանը** (1927–?), Կասաբլանկայում ունեցել են երեք զաւակ՝ **Սիմա, Հայկ եւ Վազգէն Արթինեաններ**: 1968-ին Յաւակը մշտապէս տեղափոխուել է Ֆրանսիա¹⁹⁴: Սիմա Սարաճեանը եւ Հայկը ուսանել են Էքս-ան-Պրովանսի (Ֆրանսիա) համալսարանում: Յակոբը դարձել է բժիշկ, Վազգէնը՝ դեղագործ:

Ֆրանսահայ իրաւաբան եւ գրող **Վահան Համբարձումեանը** (1896, Սեբաստիայի Կովտուն գիւղ – 1964, Կասաբլանկա) կորցրել է իր ողջ գերդաստանը Մեծ եղեռնի ժամանակ: Նախ հասել է Արեւելեան Հայաստան, ուսանել Գէորգեան ճեմարանում, այնուհետեւ տեղափոխուել է Ֆրանսիա: Սորբոնում ստացել է իրաւաբանական կրթութիւն, Փարիզում հիմնել իրաւաբանական խորհրդատուութեան կենտրոն՝ հիմնականում անվճար օգնելով հայերին, եղել է Հայ Յեղափոխական Դաշնակցութեան անդամ, թրքակցել սփիւռքահայ մամուլին, հանդէս եկել դասախօսութիւններով: 1939-ին մեկնել է Ալժիր՝ պաշտպանելու մի հայրենակցի շահերը: Պատերազմի սլատճառով նա մնացել է Ալժիրում, որտեղ ամուսնացել է ֆրանսուհու հետ, ունեցել մի դուստր՝ **Միրէյ Համբարձումեան** (ապրել է Ֆրանսիայում): Խաղաղութեան հաստատումից յետոյ նա հաստատուել է Կասաբլանկայում, որտեղ ստեղծել է իր իրաւաբանական կենտրոնը: Ենթադրում ենք, որ Մարոկկոյից «Յառաջին»

¹⁹³ Վկայութիւնները՝ Քեթրին Սալիպեանի (14.05.2020 եւ 25.08.2020 ելզիրներ):

¹⁹⁴ Տես **Ղասաբեան**, Կրակոտ եւ անտեղանելի ճակատում, էջ 98: Այստեղ Յակոբ Արթինեանի անունը սխալմամբ նշուած է Հայկ:

Վահան ծածկանունով թղթակիցը Համբարձումեանն է¹⁹⁵: Համբարձումեանը վախճանուել է 1964-ին, թաղուել Կասաբլանկայի Էլ-Հանք գերեզմանատանը¹⁹⁶: Հետագայում դուստրը նրան վերաթաղել է Իսի-լը-Մուլինոյում (Ֆրանսիա): Միրէյ Համբարձումեանի ջանքերով էլ 2000-ին Երեւանում լոյս է տեսել Վահան Համբարձումեանի «Գ-իդաշխարհ» գիրքը, որը հետագայում թարգմանաբար հրատարակուել է նաեւ անգլերէն:

1951-ին Կասաբլանկայում հրեայ հօր եւ հայ մօր ընտանիքում է ծնուել ներկայումս Ֆրանսիայում ճանաչուած քաղաքական գործիչ **Ռոժէ Կարուչին**, որը վճռականօրէն դէմ է հանդէս գալիս Երոպայի Խորհրդին Թուրքիայի անդամակցութեանը եւ յաճախ ելոյթ ունենում Հայոց ցեղասպանութեան վերաբերեալ քնարկումներում:

Կասաբլանկայի հայերի մէջ Չոհրաբ Ղասաբեանը յիշել է նաեւ հետեւեալ անձանց **Ա. Քուշեան** (Քուշճեան), ծնունդով բուլղարահայ Արթօ **Հելվէճեան**. եգիպտահայ **Պերճուհի Նազիբ**, Վահան **Փափագեան**, **Կոլմըբ** ընտանիք¹⁹⁷: Աղւանի (**Կոլմըբ**) **Քաթալեանը** (1918, Հալէպ – 2008, Բարոն), ամուսնացած ֆրանսիացի Ալտերսի հետ, աշխատել է որպէս քարտուղարուհի, ունեցել երկու դուստր: Նրանցից **Լիլեան Ալտերսը** բնակուում է Մադրիդում, իսկ **Ֆրանսուազ Անդրեա Լիլեան Մարի Ալտերս Չերեջեանը** ԱՄՆ-ում, ամուսնացած է հայազգի ամերիկեան դիւանագէտ Էդուարդ Չերեջեանի հետ: Վերջինս 1969–1972 թթ. դիւանագիտական առաքելութեամբ գտնուել է Կասաբլանկայում, որտեղ էլ ծանօթացել է Ֆրանսուազի հետ:

¹⁹⁵ Նրա թղթակցութիւններից տես **Վահան**, Մարոքի անկախութիւնը, «Յառաջ», 24.02.1956:

¹⁹⁶ Տես **Վահան Համբարձումեան**, Գ-իդաշխարհ, Երեւան, 2000, էջ 7: 2000-ի սեպտեմբերին Երեւանում մենք հանդիպել ենք Միրէյ Սուինսոն-Համբարձումեանին (1927–2021) եւ գրուցել մարոկկահայ համայնքի մասին:

¹⁹⁷ Տես **Ղասաբեան**, Կրակոտ եւ անտեսանելի ճակատում, էջ 91, 99:

Մի քանի տարի Կասաբլանկայում է բնակուել դերձակուծի **Բեքի Փափազեանը** Ֆրանսիայից:

1954-ին Տանժերում է ծնուել փարիզաբնակ գրող **Լատիե Անոր Սարգիսեանը**՝ հայ մօր եւ իսպանա-մարոկկացի հօր (Ամոր) ընտանիքում: Մայրը՝ **Մեղա Սարգսեան Ութուճեանը** (1917, Երեւան – 1957, Փարիզ, թաղուած է Տանժերում), դուստրն էր վրացահայ Արմէնակ Սարգսեանի (մահացել է Կահիրեում) եւ **Արաքս Ութուճեանի** (1892, Կ.Պոլիս – 1992 Կասաբլանկա)¹⁹⁸: Լատիե Անոր Սարգիսեանը Կասաբլանկայում աշխատել է «Օմար Խայան» գրսւխանութում՝ այնտեղ կազմակերպելով գրական-գեոարուեստական միջոցառումներ: 1989-ին հաստատուել է Փարիզում, սակայն յաճախ է մեկնել Մարոկկո՝ զուակների եւ թուրքերի մօտ: 2015-ին լոյս է տեսել Սարգիսեանի եւ Ֆրանք Պերուսելի «Հայկական սոնատ» գիրքը, որն ընդգրկում է հեղինակուծու մեծ մօր՝ Արաքսի կեանքը, նաեւ թոռնուծու՝ Մարոկկոյից մեծ մօրը գրած նամակները: Հեղինակները գիրքը ներկայացրել են նաեւ Մարոկկոյի քաղաքներում¹⁹⁹:

1968-ին Մարակէշում մարոկկացի հօր եւ հայ մօր ընտանիքում է ծնուել ֆրանսիական կինոյի դերասանուծի **Նատիա Ֆառեսը**, որը փոքր տարիքում մօր հետ հաստատուել է Նիսում:

1960-ականներից անկախութիւն ձեռք բերած Մարոկկոյի կառավարութիւնը սկսել է ընդունել այնպիսի օրէնքներ, որոնք թոյլ են տուել իրացնել մասնատր սեփականութիւնը՝ ձեռնարկութիւններ, տեխնիկական միջոցներ, ազարակներ, հանքեր եւ այլն: Սա պատճառ է դարձել, որպէսզի երկրում հաստատուած օտարազգիները, ընդսմին հայերը, հետզհետէ լքեն երկիրը:

1979-ին Թունիսի մայրաքաղաքում արուք բժիշկների համագումարին մասնակցող սիրիահայ բժիշկ եւ գրող Թորոս

¹⁹⁸ Վկայութիւնը՝ Ֆրանք Պերուսելի (30.08.2020 ելզիր):

¹⁹⁹ Գրքի մասին տե՛ս **Sabrina El-Faiz**, Culture Le vécu d'une Arménienne au Maroc, « L'Economiste », 27.05.2015: -

Թորանեանը վկայել է, որ այնտեղ հանդիպել է նաև Կասաբլանկայի բնակիչ բժիշկ Յովհաննես Թորեանին: Նա խոստովանել է, որ աֆրիկեան ափերում «դրամ շահեցայ, բայց էութիւնս կորսնցուցի»²⁰⁰: Այս խօսքերն ապացուցում են այն համատարած ուժացումը եւ օտարացումը, որին ենթարկուել են Հիւսիսային Աֆրիկայի փոքր հայազաղութները...

Մարոկկոյում ծնուած հայերի մեծ մասը տեղափոխուել է Ֆրանսիա: 1983-ի տուեալով՝ Մարոկկոյում բնակուել է 20 հայ²⁰¹:

1989 թուականին Կասաբլանկայում եթովպահայ դաշնակահարուի Այտա Պասմաճեան-Մուրատեանը հանդէս է եկել համերգով՝ յօգբաւ Հայաստանի երկրաշարժի աղէտեալների: Համերգի հասոյթը կազմել է 20 հազար դոլար:

Ըստ Չոհրաբ Դասաբեանի՝ 2003 թուականին Մարոկկոյում բնակուել է 25-30 հայ²⁰²: Մեր օրերում Մարոկկոյում աշխատող հայերի մասին մի թոուցիկ տեղեկութիւն ենք հանդիպել ֆինլանդաբնակ նկարիչ Արամայիս Աւետիսեանի՝ հայ մամուլին տուած հարցազոյցում: Կասաբլանկայում ֆինն նկարիչների ցուցահանդէսին նրան է մօտեցել Մարոկկոյում Երոմնիութեան ներկայացուցիչը եւ հետը խօսել վարժ արեւմտահայերէնով, յետոյ արտասանել Սիամանթոյի եւ Վարուժանի բանաստեղծութիւններից: Ապա նրանց զրոյցին միացել է մէկ ուրիշը եւ յայտնել է, որ ինքն էլ ֆրանսահայ է²⁰³:

Այսօր Մարոկկոյի հայկական անցեալից մնացած միակ հետքը թերեւս Կասաբլանկայի Հայաստանի փողոցն է (rue d'Arménie, գտնուում է Օլիմպ փողոցի եւ Պիեռ Սիմոնէ

²⁰⁰ Թորոս Թորանեան, Ուղեորութիւն դէպի Թայլանտ ու Չինաստան, Հալէպ, 2004, էջ 47:

²⁰¹ Տէն Արմէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

²⁰² Տէն Դասաբեան, Մարոկկո, ամդ:

²⁰³ Տէն Ռոպէն Հայրապետեան, Յանկարժ Գիւմրիում շիմանան, «Ազգ», 21.09.2007:

պողոտայի միջուկ) եւ նոյն փողոցում գտնուող «Հայաստանի սուրճ» խանութը: Ըստ Պորտ-Լիոնէի (Մարոկկո) բնակիչ Ալեն Գրիգոր Ափրիկեանի 2019-ի սեպտեմբերի 13-ի ֆեյսբուքեան գրառման՝ փողոցն այդպէս են անուանել ոչ թէ մարոկկացիները, այլ ֆրանսիական պրոտեկտորատը՝ մարշալ Եուրեր Լիոնէի ժամանակ (1920–1930-ական թթ.): Իսկ ըստ Չոհրաբ Ղասաբեանի՝ փողոցն այդպէս է անուանուել սուրճի վաճառական Գրիգոր Յարութիւնեանի նախաձեռնութեամբ, որի ցանկութեանն ընդառաջել է Կասաբլանկայի քաղաքապետարանը²⁰⁴:

Կասաբլանկայում է նաեւ «Արարատ» տունը, որի տէրը՝ ֆրանսահայ մի ընտանիք, այդ կենտրոնը բաց է անում ամիսը մէկ անգամ՝ բոլոր հայերի համար:

21-րդ դարում Մարոկկոյում ցրուած ապրում են հատուկներ հայ անհատներ: 2017-ի տուեալով՝ Մարոկկոյում բնակուել է մօտ 100-110 հայ: «Արմէնպրեսին» տուած հարցազրոյցում Հայաստանի Սփիւռքի նախարարի՝ Մարոկկոյի խորհրդական Պօղոս Կարապետեանը մարոկկաբնակ հայերի մէջ յիշել է Նարեկ Սուրմէնեանի, արդէն նշուած բժիշկ Յովհաննէս Թուրեանի, գործարար Է. Ռաֆիչեանի, ռեստորանատեր Գէորգ Համամճեանի անունները²⁰⁵: 2005-ից Մարոկկոյի Մարակէշ քաղաքում է բնակուում ֆրանսահայ մարզիկ, ձիւղոխտ Ռոժէ Հայրապետեանը (ծն. 1955): Այստեղ նա հիմնել է «Էս Սաադի» կազմին: Հայրապետեանը համարում է «Մարոկկոյում փոքերի կնքահայրը», 2012-ին դարձել է Մարոկկոյում կայացած փոքերի մրցոյթի ախոյեան: Մարոկկոյի Իֆրէյնի Ալ Ախալայն համալսարանի դոցենտ է

²⁰⁴ Տե՛ս Ղասաբեան, Կրակոտ եւ անտեսանելի ճակատում, էջ 65: Կայ Արմենիա փողոցի անուանակոչութեան մէկ այլ վկայութիւն. Կասաբլանկայում հանգրուանել է մի հայ զբօսաշրջիկ, որի նախաձեռնութեամբ էլ փողոցն Արմենիա է անուանել (տե՛ս Յովսէփ Նալպանտեան, Սիջազգային պատմութիւն (ժամանակագրութիւն) (1789–2015), Երեւան, 2018, էջ 638):

²⁰⁵ Տե՛ս The Armenian community of Morocco, "Horizon," 18.10.2017:

դոկտոր **Ջեք Վահրամ Գալիագեանը**: Նա ծնունդ է Սուդանում, ընդունել ԱՄՆ քաղաքացիություն, ապա աշխատանքի հրաժիրտել Ալ Ախալայն համալսարանի հումանիտար եւ սոցիալական գիտությունների դպրոց, որտեղ դասաւանդում է միջազգային յարաբերություններ: Աֆրիկայի եւ այլ երկրների անգլիալեզու գիտական հանդէսներում հանդէս է գալիս արդի միջազգային աշխարհին եւ մասնաւորապէս՝ Աֆրիկայի (Մարոկկո, Սուդան) քաղաքական իրավիճակը մեկնաբանող աշխատութիւններով²⁰⁶: Ամուսնացած է բելգիոսիու հետ, զուտեր հետ խօսում է արեւմտահայերէն: Մարակէշում է բնակուում առեւտրական **Ջոնի Չաթարճեանը**. ամուսնացած է մարոկկոսիու հետ, ունի զաւակներ: Ըստ՝ **Ջեք Վահրամ**

²⁰⁶ Գալիագեանի՝ Աֆրիկային նուիրուած աշխատութիւններից տես, օրինակ՝ *The Machakos and Addis Ababa Agreements Compared: The Costs of Invalidating Compromises*, “South African Yearbook of International Affairs,” 2002/03, Johannesburg, 2003; *Morocco and the United States: A Lobbying Opportunity*, “South African Journal of International Affairs,” Vol. 11, Issue 2, Winter/Spring 2004; Morocco, “Small Arms Survey: Weapons at War,” Oxford University Press, 2005; *War over Identity: The Case of the Sudan*, C. Clapham, et al., editors, Africa’s Big States, Witswatersrand University Press, 2006; *Developing a Civil-Military Economic Relationship: International Case Studies and their Implications for Morocco*, “Journal of Middle Eastern Geopolitics,” Vol. I, No. 4, April-June 2006; *Managing Morocco’s Image in United States Domestic Politics*, “Journal of North African Studies,” Vol. 11, No.1, March 2006; “Peace agreements in a near-permanent civil war: Learning from Sudan and South Sudan” *South African Journal of International Affairs* 24 (1), 2006, pp. 1-19; *War over identity: the case of Sudan* *Big African States*, 2006, pp. 39-61; *Implications of the 2007 Elections on Moroccan Political Development*, Institute for Security Studies (South Africa) Situation Report, 25 October 2007; *Against both Bin Laden and Belliraj: Lessons from Moroccan Counterterrorism*, “Contemporary Security Policy,” Vol. 29, Issue 3, December 2008; Africa, in Robert Pauly (ed.), “Ashgate Research Companion to US Foreign Policy,” Ashgate Publishers, January 2010; “To what end? Drip irrigation and the water-energy-food nexus in Morocco” G Jobbins, A Chriyaa, A Legrouiri, *EH El Mzouri International Journal of Water Resources Development* 31 (3), 2015, 393-406 եւ այլն:

Գալփագեանի՝ Տեղասպանության վերապրածների սերունդ շատ ֆրանսահայեր յաճախ գալիս են Մարոկկո, «քանի որ տեղանքը շատ նման է Արեւմտեան Հայաստանին»²⁰⁷:

Սոյն գլուխն ամփոփելով՝ նշենք, որ տարբեր երկրների հայազգի պետական եւ մշակութային գործիչներ զանազան առիթներով ապրել եւ աշխատել են Հիսփսային Աֆրիկայի երկրներում՝ որոշակի հետք թողնելով այնտեղ:

Տակաւին 20-րդ դարի սկզբին Ալժիրում կառուցուել են շէնքեր ֆրանսաբնակ ճարտարապետ **Լեոն Նաֆիլեանի** (1877–1937) նախագծերով:

Սօտ 1930-ին Ալժիրում եւ Թունիսում համերգներով հանդէս է եկել քամանչահար **Ռուբէն Գարսիսանեանը** (1892–1983)²⁰⁸:

Նոյն 1930-ին ֆրանսաբնակ քարտեզագիր **Չատիկ Խանգատեանը** Ֆրանսիայի կառավարութեան յանձնարարութեամբ եւ ֆրանսիական զօրքերի կողմից Ալժիրի գրաւման հարիւրամեակի հանդիսութիւնների առթիւ կազմել է Ալժիրի շքեղ ատլասը («Atlas de géographie historique de l'Algérie. Livre d'or du centenaire 1830–1930», Paris, 1930): Հատորը պարունակում է Ալժիրի աշխարհագրութեանը, ազգագրութեանը եւ պատմութեանը վերաբերող հիմնական տեղեկութիւններ, Ալժիրի բոլոր քարտեզների հաւաքածուն (հնագոյններից մինչեւ նորագոյնները): Ատլասը գեղազարդուած է արաբական ոճի զարդանկարներով, որ պատկերել են Խանգատեանին աշխատակցող հայ գծագրիչները: Ֆրանսիական Ակադեմիան այդ հատորն

²⁰⁷ Արծուի Բախչինեան, Ձեք Վահրամ Գալփագեան. Սուղանահայ պրոֆեսորը Մարոկկոյից, «Ազգ», 28.04.2023:

²⁰⁸ Տեւ Յակոբ Մանուկեան, Քէմանյիստ Ռուբէնի յուշերը, Պէյրութ, 1989, էջ 83:

արժանացրել է մրցանակի²⁰⁹:

Երկրորդ աշխարհամարտի տարիներին Ալժիրում է յայտնուել խորհրդային հետախոյզ, գեներալ-մայոր **Իվան (Յովհաննես) Աղայեանը** (1911–1968), որը 1943 թուականի օգոստոսի 1-ին անձամբ Ստալինի յանձնարարութեամբ մեկնել է Ալժիր՝ կապ հաստատելու համար գեներալ Շառլ դը Գոլի հետ: Յանձնարարութիւնը կատարուել է, եւ շուտով Մոսկուայում կայացել է դը Գոլի եւ Ստալինի հանդիպումը²¹⁰: Հետաքրքրական է, որ Աղայեանցի քոյրը՝ նոյնպէս հետախոյզ **Աննա Աղայեանը** (1916–2005), 1958–1962 թթ. դիւանագիտական աշխատանք է կատարել Շուեյցարիայի եւ Մարոկկոյի ԽՍՀՄ դեսպանութիւններում, իսկ 1963–1979 թթ. աշխատել է ՊԱԿ-ի Առաջին աֆրիկեան բաժնում իբրեւ երրորդ, երկրորդ եւ առաջին քարտուղար: Աֆրիկեան բաժնում նրա աշխատանքը կապուած էր ԽՍՀՄ-ի Արեւմտեան եւ Կենտրոնական Աֆրիկայի երկրների (Սենեգալ, Գամբիա, Մալի, Չադ, Մադագասկար եւն) հարցերին:

Հիւսիսային Աֆրիկայի մշակոյթին առնչուել եւ մասնատրապէս ֆրանսահայ արուեստագէտները՝ դերասաններ եւ երգիչներ: 1920-ականներին երկու ֆրանսահայ դերասան՝ **Հիւզ դը Բագրատիդը** (Սվաճեան) եւ **Մաքս Մաքստտեանը**, Հիւսիսային Աֆրիկայում նկարահանուել են ֆրանսիական արտադրութեան ֆիլմերում եւ երկուսի հետ էլ արտաւոց դէպքեր են կատարուել²¹¹:

²⁰⁹ Տես Մեր արուեստագէտներն ու մտատրականները արտասահմանի մէջ, «Անահիտ», 1930, Մայիս-Յունիս, թիւ 1, էջ 126: Հ. Մերօքէ վ. Զրաքեան, Ալժիրի պատմական աշխարհագրութեան ատլասը, «Բագմավէպ», 1930, Յունիս, թիւ 6, էջ 273-275:

²¹⁰ Տես **Արկաշի Մարգսեան**, Հետախուզութիւն եւ հակահետազոտութիւն. հայկական հետք, Երեւան, 2005, էջ 128:

²¹¹ 1928-ին նկարահանուած «Արեւմուտք» շարժանկարում Բագրատիդը կատարել է մարոկկացի էմիր Թայեր ալ Հանիի դերը: Նկարահանումները կատարուել են Սահարայում, Մարակէշի շրջանում, որտեղ արաբական ցեղերից մէկի մարդիկ հայազգի դերասանին մնանեցրել են իրենց հակառակորդին եւ քիչ է մնացել սպանեն նրան (տես Պ. Տը Բագրատիդ

Բագրատիդը նկարահանուել է առաջին մարտկալայական գեղարուեստական ֆիլմերից մէկում՝ Ժան դը Կուիարսկու «Փրիմաք»-ում (1933): 1949-ին Մարտկոյում նկարահանուած «Մարակէշի պարուհին» կինոնկարի գլխատը՝ բերբեր պարուհու դերը բեմադրիչ Լեոն Մաշոն վստահել է հայազգի ֆրանսիական պարուհի **Սիրեն Աճեմովային** (1928–2005): Նոյն ֆիլմում հանդէս է եկել նաեւ արդէն յիշուած հայազգի դերասան **Իվ Վենասը**՝ արաբի դերով: Ալժիրի եւ Թունիսի թատրոններում է աշխատել նաեւ հայազգի ֆրանսիական թատերական բեմադրիչ **Էդմոն Թամիզը** (Թահմիզեան, 1923–1999): Ֆրանսահայ երգչուհի-պարուհի **Անի Անահիտը** մանկուց բնակուել Ալժերում, որտեղ հետեւել է պարի դասերի, հետագայում այստեղ ամուսնացել երգահան Արման Կանկորայի հետ: 1950-ականների վերջին Մարտկոյում մեծ ժողովրդականութիւն են վայելել Սայաթ-Նովայի երգերը՝ ֆրանսահայ երգչուհի **Արդա Ազնատրի** (ծն. 1923) կատարմամբ, որոնք տարածուել են մեծ քանակութեամբ²¹²:

Ֆրանսահայ գրող եւ պատմաբան **Ժերար Շալիանը** որոշ ժամանակ ապրել է Ալժիրում, այստեղ խմբագրել է «Ռեւոլյուսիոն Աֆրիկեն» թերթը: Հեղինակ է պատմագիտական, տնտեսագիտական աշխատութիւնների, որոնցից «Համայնավարական խնդիրներն Ալժիրում» ֆրանսերէն ուսումնասիրութիւնը (1964) թարգմանուել է նաեւ արաբերէն:

Իտալաբնակ ճարտարապետ **Արմէն Չարեանը** (1914–1994) 1950-ին շահել է Տանժերում կառուցուելիք՝ 251

մեր մէջ, «Կապոշ», 3.06.1928): Իսկ Արել Գանսի «Արաբների կառավարիչը» շարժանկարի՝ Հիւսիսային Աֆրիկայում նկարահանումների ժամանակ թուրք կառավարիչ Ռեքս Ինգրամի դերակատար Մաքս Մաքսուտեանին են մոտեցել մի քանի թուրքեր, որոնք դերասանին իրենց վալիի տեղն են որել: Նրանք մի շնորհագիր են ներկայացրել Մաքսուտեանին՝ Անկարա ուղարկելու համար, եւ դերասանին չի մնացել անել ոչինչ, եթէ ոչ լրջօրէն վերցնել թուղթը ու դնել գրպանը (տե՛ս Դերասան Մաքսուտեան, «Արագած», 1-15.01.1926):

²¹² Տե՛ս **Գամնիկ Ստեփանեան**, Կենսագրական բառարան, հատոր Ա., էջ 36:

մենատներից բաղկացած Մարոկկինո բնակելի թաղամասի նախագծման միջազգային մրցանակը եւ աշխատանքն իրականացնելու նպատակով տեղափոխուել է Մարոկկո՝ աշխատելով ճարտարապետ Մ. Մեսսինայի աշխատանոցում որպէս արուեստանոցի ղեկավար: Նա ղեկավարել է թաղամասի շինարարութիւնը եւ միեւնոյն ժամանակ արժանացել Տանժերի Խորհրդարանի պալատի ներքին յարդարման ու կահաւորման նախագծման մրցանակը: Չարեանը Մարոկկոյում ապրել է 1950–1954 թթ.՝ գերմանուիի կնոջ՝ Մարիա Գալթոնսկի Չարեանի հետ. 1952-ին Տանժերում ծնուել է նրանց դուստրը՝ ուսուցչուի, բանաստեղծուի **Սիրվարդ Չարեանը** (այժմ Կանադա):

Մի քանի տարի Մարոկկոյի ազգային ռադիո-հեռատեսիլի թղթակից է եղել **Լետն Քեշիշեանը** (1917–1984), որը մարոկկահայութեան վերաբերեալ թղթակցութիւններով աշխատակցել է հայ մամուլին: Նա նաեւ նկարահանել է «Թունիսը ՄԱԿ-ում» 20 րոպեանոց արաբերէն եւ ֆրանսերէն ֆիլմը, որը ներկայացնում է Թունիսի գործունէութիւնը ՄԱԿ-ում, նախագահ Պուրկիպայի այցելութիւնը եւ ֆրանսերէն ճառը ՄԱԿ-ում, թունիսցի այլ ղեկավարների աշխատանքային գործունէութիւնը: Այս փաստագրութիւնը ՄԱԿ-ի գլխատըր քարտուղար Ու Տանի՝ Թունիս կատարած այցելութեան առթիւ ցուցադրուել է Թունիսի 24 կինոթատրոններում²¹³:

1967-ին Լիբիայի պարի պետական համոյթին համագործակցել է իրանանահայ պարադիր եւ պարուսոյց **Սարգիս Պասքալեանը**:

Հիսիսային Աֆրիկայի երկրների անկախութիւն հռչակուելուց յետոյ ԽՍՀՄ ակտիւ համագործակցել է նորանկախ պետութեան հետ տարբեր երկրներում՝ պարբերաբար այնտեղ գործուղելով հայ մասնագէտների եւ արուեստագէտների: 1965-ին Հայաստանի պարի պետական

²¹³ Տես «Թունուգ», Լետն Քեշիշեանի նոր ժապաւենը, «Ասպարեգ», 8.05.1964:

համոյթը հիւրախաղերով հանդէս է եկել Ալժիրում, Թունիսում եւ Մարոկկոյում, այդ առթիւ նկարահանուել է «101 օր» վաւերագրական կինոնկարը (ռեժիսոր՝ Վիլեն Չաքարեան, 1965): Այդ հիւրախաղերի արդիւնքում երեսանցի պարող **Վարդգէս Ռաշիդեանը** (1922–2000) հրաւիրուել է աշխատելու Թունիսում, որտեղ նա ապրել է 1964–1967 թթ. եւ կազմակերպել է ժողովրդական պարի խումբ²¹⁴: 1978-ին Մարոկկոյի ԽՍՀՄ դեսպանն է եղել **Եւգենի Ներսէսովը** (ծն. 1921, Մոսկուա), իսկ Լիբիայում որոշ ժամանակ ԽՍՀՄ դեսպան է եղել **Պօղոս Ակոպովը** (Յակոբեան, ծն. 1926, աշխատել է նաեւ Եգիպտոսի եւ Քուվէյթի խորհրդային դեսպանատներում): Իսկ **Արման Նսուասարդեանը** (1939–2021) եղել է Ալժիրում ԽՍՀՄ գլխավոր հյուպատոսութեան փոխհիւպատոս (1976–1978) եւ հիւպատոս (1978–1980), ԽՍՀՄ ԱԳՆ աֆրիկեան առաջին բաժնում առաջին քարտուղար (1980–1982):

Այս համատեքստում յիշենք նաեւ, որ Հիւսիսային Աֆրիկայի ժողովուրդների լաւագոյն խոհանոցային գրքերից մէկը գրել է **Արթօ Տէր-Յարութիւնեանը** (1940–1987): Ծնունդով սիրիահայ անգլիալեզու այս հեղինակն իր հատորում ամփոփել է Ալժիրի, Մարոկկոյի, Թունիսի եւ Լիբիայի ազգային ճաշատեսակները²¹⁵:

Յիշենք նաեւ, որ Հայաստանի յարաբերութիւնները

²¹⁴ Ըստ Ռաշիդեանի «*Երբ Թունիսում առաջին անգամ փորձասենեակ մտայ, զգացի ներկաների քրտահաւատութիւնը եւ ինքս էլ կասկածեցի, կարող եմ արդեօք աֆրիկեան այս ժողովրդի ազգային պարի ոգին այնպէս տալ, որ պարերի բեմադրութեամբ համոզեմ նրանց: Առաջարկեցի մի շարժում՝ իսկոյն առարկեցին... Մէկ ամիս շրջեցի երկրում, տեսայ, սովորեցի ժողովրդից եւ սպա, շատ զգուշօրէն, բեմադրում էի միայն իրենց ազգային տարրերով: Ու այսպէս, համենհատաբար կարօ՞ ժամանակամիջոցում ստեղծուեց Թունիսի ազգային պարի անսամբլի առաջին ծրագիրը» (Հայկական ժողովրդական պարարուեստի հարցերը, «Սովետական արուեստ», 1970, քի 3, էջ 17-18):*

²¹⁵ Տե՛ս **Arto Der Haroutunian**, *North African Cookery books*, 2012:

Հիսիսային Աֆրիկայի երկրների հետ նոր փուլ են մտել 1991-ին անկախութեան հռչակումից յետոյ: Թունիսը, Ալժիրը եւ Մարոկկոն Հայաստանի անկախութիւնը ճանաչած առաջին 50 երկրներից են (համապատասխանաբար՝ 1991-ի դեկտեմբերի 26-ին, 27-ին եւ 31-ին): 2005-ին Ռուբէն Կարապետեանը նշանակուել է Մարոկկոյի ՀՀ դեսպան (նստավայրը՝ Կահիրէ), որն այցելել է Մարոկկո, հանդիպել արտաքին գործերի, մշակոյթի եւ արտուսքին . առեստրի նախարարներին: Նա հանդիպում է ունեցել նաեւ Մարոկկոյի հայ համայնքի մի քանի ներկայացուցիչների հետ²¹⁶: Այդ երկրներում հայերի թուի վերաբերեալ պաշտօնական տուեալներ չկան: Կասաբլանկայի հայկական հիւպատոսարանը հայկական միակ ներկայացուցչութիւնն է Մարոկկոյում:

²¹⁶ Տե՛ս Armenian ambassador to Morocco handed copies of credentials to Moroccan FM, Pan Armenian 31.10.2005, 23:39, GMT+04:00 (PanARMENIAN.Net). Տե՛ս նաեւ <http://www.armtown.com/news/an/pan-20051031/15252/> (դիտումած՝ 1.02.2006):

ՀԱՅԵՐՆ ԱՐԵՒՍՏԵԱՆ ԵՒ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ
ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

1845-ին հնդկահայ մամուլն իր խմբագրականում նշել է, որ Կենտրոնական Աֆրիկայում հայերը ներկայ են եղել մինչև անգլիական գաղութացումը («Թէ որ այս աշխատատէր ազգն տէրութիւն (նկատի ունի պետութիւն – Ա. Բ.) ունենար, վաճառականութեան մասին Անգղիացոց հետ եւս կարող կլինէր գոյութիւն դնել յաղթել. վասն զի Ափրիկէի միջին երկրների մէջ, ուր տակաւին Անգղիացոց ոտն չէր մտել, Հայերն նախ զնախով նոյն երկրի քարութիւնքն իրեանց ձեռն ձգեցին, եւ բոլոր Երոսայի վարպետ դարձան վաճառաշահութեան առուտրի մէջ»¹): Հաւանաբար «Ափրիկէի միջին երկրներ» ասելով հեղինակը նկատի ունի Եթովպիան եւ Սուդանը:

1730-ականներին Լոնդոնի Թագաւորական Աֆրիկեան ընկերութիւնը փնտրել է մէկի, որը կհեշտացնէր իրենց գործարքները Գամբիայի մահմեդական գերեվաճառների հետ: Նրանք վարձել են արաբերէնին տիրապետող մի հայի՝ **Մելքիոր դե Ջասպասին** (Melchior de Jaspas, հաւանաբար՝ Մելքոն Գասպարեան): Նա ծնունդով եղել է Տիգրանակերտից, ողջ կեանքում ծառայել է Լոնդոնի Թագաւորական Աֆրիկեան ընկերութեանն Աֆրիկայում, որն էլ նրան 1737-ին ուղարկել է Գամբիա՝ շոթլանդացի քարտուղար Ջոն Բաքանանի եւ Յովսէփ անունով պարսիկ ստրուկի հետ (ելնելով անունից՝ թերեւս եղել է պարսկահայ)²: Ըստ պատմաբան Ֆիլիպ

¹ Բանասիրականք. Յառաջադիմութիւն ազգային, «Ազգատէր», 27.09.1845, էջ 53:

² Ray Dafter, An Uncommon Slave, Book Guild Publishing, 2020, <https://books.google.am/books?id=sMbSDwAAQBAJ&pg=PT157&lpg=PT157&dq=Melchior+de+Jaspas&source=bl&ots=UdYTUoVsmX&sig=ACfU3U0MNHCDvd4EiGoyoG72IFHb0CNI2w&hl=ru&sa=X&ved=2ahUKEwix->

Քրթթինի՝ Մելիոր դե Չասպասի գործունեությունը, որչէս միջնակութային միջնորդի Աֆրիկայում, այնուամենայնիւ, աւելի լաւ կամ վատ չէր իր անգլիացի գործընկերների աշխատանքից³: Հետաքրքրական է, որ իր այս այցելութեան պատճառով նրա անունը մտել է Գամբիայի պատմութեան մեջ⁴:

1821 թուականին Վարզա անունով մի հայազգի ճանապարհորդ, ծնունդով Աստրախանի գաւառի Ղզար քաղաքից, կտրել է Սահարան հիւսիսից, այցելել արեւմտեան Սուդան, Մալիի հիւսիսում գտնուող Տոմբուկտու քաղաքը եւ հասել Ոսկէ Ափ (Գանայի հին անուանումը), որտեղ անգլերէնով գրել է իր ուղեգրութիւնը⁵: Այն նախապէս հրատարակուել է Ոսկէ Ափի թագաւորական լրագրում, Ֆրիթաունի «Սիեռա Լեոնէ աղվերթայգրը» (1823, մարտի 8 եւ 15) թերթում⁶ եւ «Ազիաթիք ջորնըլ» ամսագրում (հատոր 16,

eFvripAbWtOkEAHVkDBRkQ6AEwCnoECAcQAO#v=onepage&q=Melchior&f=false (դիտուած՝ 14.05.2020):

³ Տե՛ս **Philip D. Curtin**, *Cross-Cultural Trade in World History*, Cambridge University Press, 1994, p. 200.

⁴ Տե՛ս, օրինակ, **J. M. Gray**, *A History of the Gambia*, Cambridge University Press, 2015, էջ 211:

⁵ Տե՛ս *Histoire générale de l’Afrique, Méthodologie et préhistoire africaine*, directeur de volume Joseph Ki-Zerbo, UNESCO, 1980, էջ 151:

⁶ Այստեղ Վարզայի ազգութիւնը նշուած է թաթար, սակայն նրա ուղեգրութեան ռուսերէն թարգմանիչ Դմիտրի Օղերոզգէն, հեճունելով նրա իսկ ուղեգրութեան մէջ առկայ վկայութիւնների վրայ, առաջ է քաշել Վարզայի հայ լինելու վարկածը՝ ենթադրելով, որ նրա անունը կարող էր եղած լինել Վարզէն, նաեւ յիշել ուղեգրի իսկ վկայութիւնը, որ ինքը մահմեդական չէ եւ որ միակ անգամը, որ նա նշել է որտէ մէկի ազգութիւնը, օսմանեան նաւապետ Արդուի հայ լինելու մասին յիշատակութիւնն է (տե՛ս **Д. А. Ольдерогге**, *Астраханец в Томбукту в 1821 г. (Путешествие Варги, уроженца Кизляра, в Западный Судан)*, «Труды института этнографии им. Н. Н. Миклухо-Маклая. Africana. Этнография, история, языки народов Африки», Вып. VIII, Москва, 1971, էջ 5):

1823, էջ 16-23)⁷:

19-րդ դարում Հնդկաստանի հայ առևտրականների նաևերը հասել են Աֆրիկա, Եգիպտոս, մինչև Մարիտանիայի ափերը: Այսպես, «Աբգար եւ ընկ.» պատկանող «Մհար» նաւը 1847-ին մեկնել է Մարիտանիա⁸: Ըստ երեւոյթին, հնդկահայ հարուստների համար սովորական է եղել նաւով Աֆրիկա օդափոխութեան մեկնելը: Նոյն 1847 թուականին գրուել է հետևեալը. «Պարոն **Գրիգոր Աբգարեան** Հաղթիկտոն Ըոզենատվ դարձաւ այսօր 'ի Մարիտանիոյ, ուր գնացեալ էր յօղափոխութեան»⁹:

Մինչև 1920-ականները հաւուկենտ հայորդիներ են յայտնուել «սեւ» Աֆրիկայի գւանազան հատուածներում: Այսպես, Պոլսի Պէզազեան վարժարանի շրջանաւարտ **Արմէնուհի Մալմէզեանն** ամուսնու՝ շաբաթապահ աղանդին պատկանող մի երիտասարդի հետ, շուրջ 1919–1920 թթ. մեկնել են Հասարակածային Աֆրիկա՝ քարոզչութեան նպատակով¹⁰:

Հայ սկաուտական շաբժման գործիչ, Հայ մարմնակրթական ընդհանուր միութեան անդամ պոլսեցի **Լեւոն Սապրոնճեանը** (1905–?) տարբեր ազգերի պատկանող իր 25 ընկերների հետ վավերագրական նկարահանողների խմբով ոտքով Իսպանիայից կտրել-անցել է Հիւսիսային Աֆրիկան, Մարիտանիայում յարձակման են ենթարկուել մի կիսավայրենի ցեղախմբի կողմից: Խումբը երեք զոհ տալուց յետոյ լիակատար ոչնչացումից ազատուել է մի ֆրանսիական ջոկատի շնորհիւ: Սապրոնճեանը եւ իր ընկերներն արեւմուտքից արեւելք կտրել են Սահարա անապատը՝ առանց ջուր, հիւծուած վիճակում 16 օր շարունակ քայլելով 40 հազար

⁷ Վարզայի մասին տես նաև **Ivor Wils**, Wargee of Astrakhan, in Ph. D. Curtin (ed.), "Africa Remembered. Narratives by West Africans from the Era of the Slave Trade," Madison, 1967, էջ 184:

⁸ Տես «Ազգասէր», 25.12.1847, էջ 412:

⁹ «Ազգասէր», 20.03.1847, էջ 90:

¹⁰ Տես **Յովսէփ Սվանճեան**, Տիրան Չրաքեան որպէս ուսուցիչ եւ քարոզիչ, «Պայքար, նոր տարւոյ բացառիկ», 1955, էջ 117:

կիլոմետր, անցնելով ֆրանսիական Սուդանով, Չադ լճի մօտով հասել են Եթովպիա: Հետագայում Սապունճեանը 1922-ին հաստատուել է Փարիզում, որտեղ գրել է իր ուղեգրությունը (թարգմանաբար լոյս է տեսել նաև ֆրանսերեն և անգլերեն)¹¹:

Կենտրոնական Աֆրիկայի երկրների փոքրաթիւ հայ համայնքներն սկսել են կազմաւորուել արդէն 1910-ականներից: Հետագայ տասնամեակներին, հիմնականում Երկրորդ աշխարհամարտից յետոյ, մեծ մասամբ Մերձաւոր Արեւելքի երկրներից, նաև Յունաստանից եւ Ռումինիայից հարիւրաւոր հայեր, հիմնականում՝ արհեստաւորներ եւ առետրականներ, գաղթել են գլխաւորապէս Նիզերիա եւ Բենիա¹²: Նրանց զգալի մասը այդ երկրների անկախանալուց յետոյ տեղափոխուել է ԱՄՆ, Կանադա կամ եւրոպական երկրներ:

Գ-անա

1941-ին Գ-անայում է հաստատուել կալուածատէր վաճառական **Լեւոն Յարութիւնեանը**¹³: Ծնունդով սասունցի, Հալեպից գաղթած այս գործարարը տնօրինել է «Յարութիւնեան առետրի հաստատութիւնը»:

Մայրաքաղաք Աքրայում շինարարական մեծ գործունէութիւն են ծաւալել 1950-ականներից այնտեղ հաստատուած բէյրութցի **Պարգեւ եւ Աքսոր Գասարճեան** եղբայրները, որոնք հիմնել են «Գասարճեան ինդասթրիզ» ընկերութիւնը: Միլիոնատէր եղբայրները բազմաթիւ ճանապարհներ են կառուցել Գ-անայում: Մտերիմ են եղել երկրի նախագահ Ջերի Ռոլինզոզի հետ: Նրանք նուիրուած են եղել հայ ազգային կեանքին, Բէյրութում հաստատել են մի

¹¹ Նրա մասին տես Աշխարհի շրջանը ընող հայը, «Եփրատ», 2.10.1935, Ա. Ամորեան, Առաջին հայ աշխարհաշրջիկ սկաւտը՝ Լեւոն Սապունճեան եւ իր զիրքը, «Ասպարէզ», 5.03.1968:

¹² Տես Բենիայի հայերը, «Նոր աշխարհ», 6.05.1967:

¹³ Տես Ղանա եւ հայ գաղութը, «Ազդակ», 13.04.1966:

վարժարան¹⁴:

1950-ականներին Գանայում բնակուած միս հայերն էին ծագումով սասունցի **Սկրտիչ Գասպարեանը** Հալեպից («Յարութիւնեան առետրի հաստատութեան» գործակատար), ծագումով մշեցի վաճառական **Ազատ Շուկայեանը** եւ իր հայուհի կինը, վաճառական **Շաարշ Գալենտէրեանը** եւ իր ֆրանսահայ կինը¹⁵: Սկրտիչ Գասպարեանին եւ կնոջը՝ **Շուշանիկ Գասպարեանին** 1962-ին Աքրայում հանդիպել է գրող Արտաշէս Քալանթարեանը, որը նրանց հայկական ձայնասկաւառակներ է ուղարկել Գանայում աշխատող հայաստանցի ճարտարագէտ Գուրգէն Ղազարեանի միջոցով¹⁶:

1961-ին ԱՕԿՍ-ի (Արտասահմանեան երկրների հետ կապերի հայկական ընկերութեան) նախագահի տեղակալը Գանայում **ԽՍՀՄ** դեսպանատանն է ուղարկել «Առողջապահութիւնը Հայաստանում» լուսանկարների հաւաքածուն՝ Գանայի հայ համայնքի հետ աշխատանքի համար¹⁷:

1965–1981 թթ. Աքրայում է բնակուել լիբանանահայ **Էնթընի Խորոզեանը**, որն աշխատել է ներածման-արտածման ընկերութիւնում, ապա՝ ճանապարհաշինարարութեան գրասենեակում եւ ի վերջոյ զբաղուել է ինքնաշարժների առետրով: Աքրայում են ծնուել նրա այժմ ամերիկաբնակ որդիները՝ **Ժաք Քուեսի ալ Ասմար Խորոզեանը** (աֆրիկուհի կնոջից), որը հոգեբան է ու արաբական պարերի կատարող եւ նրա եղբայր դիջեյ **Բաֆֆի Խորոզեանը**: Ի դէպ, Ժաք Քուեսին,

¹⁴ Գասարճեանների մասին տես **Յակոբ Վարդիվառեան**, «Ապիճանը իր հայրութեամբ», «Չարթօնք», 15.11.1995:

¹⁵ Տես **Աշոտ քին. Տէր Յարութիւնեան**, Նիկերիոյ եւ Կոլտ Քոսթի հայ գաղութը, «Չարթօնք», 19.06.1952:

¹⁶ Տես **Արտաշէս Քալանթարեան**, Պատմուածքներ, Աշխարհի ճանապարհներին, Երեւան, 1967, էջ 352:

¹⁷ Տես **Արմէն Բաղալեան**, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 110:

որ հայկական կրթութիւն է ստացել Լիբանանում, հայերէն խօսող խափշիկուհու դերով նկարահանուել է Թինա Բասթաջեանի «Ծոմոռուած այտեր եւ անարգական խօսքեր, որ խուսափում են նրանից» կարճամետրաժ շարժանկարում (1999):

Գանայի «Տակորադի» այրաղացի գործադիր տնօրէնն է եղել լիբանանահայ **Սերժ Բաքալեանը** (ծն. 1952): Նա ընկերութիւնը ժառանգել է հօրից՝ Վազգէն Բաքալեանից (նրա մասին տես Տոգոյին նուիրուած ենթագլխում):

1983-ի տուեալով՝ Գանայում բնակուել է տաս հայ¹⁸:

Կամերուն

1951-ին Փարիզի «Յառաջին» Կամերունից նամակ է յղել Զ. Ուզունեանը¹⁹: Նա **Քրիստափոր Ուզունեանն** էր՝ ֆրանսահայ համայնքի սիրող դերասան Յովսէփ Ուզունեանի եւ քատերագիր Ժան-Ժաք Ուզունեանի ազգականը²⁰: Նա Կամերունում ապրել է հինգ տարի եւ զբաղուել է արտածում-ներածումով:

1953-ին Կամերունում բնակուող **Մակար Թիթիւնճեանը** «Յառաջին» է ուղարկել 5000 ֆրանկ:²¹

1956-ին Կամերունում է ծնուել հայազգի ֆրանսիական գրող **Աննի Յակոբեանը (Ալոպեան)**, որի մանկութիւնն անցել է Մադագասկարում եւ Ֆրանսիայում:

1969-ին Կամերունում է հաստատուել ֆրանսիական քանակի կապիտան **Ալիքսանդր Տէր-Սարկիսովը** (1911, Փարիզ – 1991, Նիս): Նրա գործունէութիւնն Աֆրիկա մայրցամաքում սկիզբ է առել դեռ 1940-ին, երբ գեներալ Շառլ դը Գոլի հրամանով մեկնել է Մարոկկո եւ ձեւաորել հետախուզական ցանց: 1953–1960 թթ. եղել է քաղաքացիական

¹⁸ Տես անդ, էջ 104:

¹⁹ Տես Զ. Ուզունեան, Չայն մը-Քամերունէն, «Յառաջ», 21.04.1951:

²⁰ Տես Յովսէփ Ուզունեանի մահագրականը, «Յառաջ», 6.03.1954:

²¹ Տես «Յառաջ»ի բարգաւաճման համար, «Յառաջ», 8.07.1953:

ծառայությունների վարչարար Աֆրիկայի տարբեր երկրներում: Կամերունում աշխատել է որպես անշարժ գույքի վաճառքի գլխավոր տնօրեն: Թոշակի անցնելով՝ ապրել է Թաիթի կղզում, ապա՝ Ֆրանսիայում:

Կամերունի առևտրական կեանքում աչքի են ընկել **Սուրեն** եւ **Գուրգեն Գործունեան** եղբայրները: Ճարտարագետ, առևտրական Գուրգենը եղել է սուրճի առաջին արտածողը Կամերունում: Պարզեատրուել է Կամերունի «Արժանեաց կարգի ասպետի» շքանշանով: Ի դեպ, Գործունեան ընտանիքից սերած Վալերի-Աշխեն Գործունեանը, Երևանում բացելով «Փարիզեան սուրճ» սրճարանը՝ յաճախորդների հրամցրել է մասնատրապետ Կամերունից ներկրուած սուրճ:

Կամերունի «Արժանեաց կարգի ասպետի» շքանշանին 1959-ին արժանացել է նաեւ այդ երկրում բնակուած մէկ այլ հայ՝ «Ֆրանսիա-Կամերուն» ընկերութեան նախագահ **Օգտեն Հարբութեանը**²²:

Որոշ ժամանակ Կամերունում է բնակուել լիբանանահայ, ներկայումս կանադաբնակ քանդակագործուհի **Եւգինե դը Գրեֆը** (Եփրեմեան, ծն. 1934): 1973-ի դեկտեմբերի 22-ին նա նամակ է յղել Սփիւրքահայութեան հետ կոմիտէին ցանկութիւն յայտնելով հայ արուեստին ու մշակոյթին ի մօտոյ ծանօթանալու նպատակով այցելել հայրենիք²³:

Կենտրոնական Աֆրիկեան Հանրապետութիւն

Լիբանանահայ, այժմ ամերիկաբնակ **Աշոտ Խանա-միրեանը** 12 տարի բնակուել է Աֆրիկայում, սկսելով Նիգերիայից եւ Կամերունից, ապա Կենտրոնական Աֆրիկեան Հանրապետութիւնում աշխատել է որպէս ֆինանսական պաշտօնեայ, լիբանանեան հիւպատոսարանի խորհրդատու եւ

²² Տես Օգտեն Հարբութեան ի պատուի, «Մասիս», 21.01.1960:

²³ Տես **Արմեն Բարալեան**, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 112:

դիւանագէտ: Խանամիքեանի վկայութեամբ՝ երկրում ապրել է ընդամենը չորս հայ²⁴:

Կոնգո

Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետութիւնում (1971–1997 թթ. յայտնի որպէս Չաիր) ու նրա ներկայիս մայրաքաղաք Քինշասայում Բելգիայի գաղութատիրութեան շրջանում (1908–1960) դիպուածաբար ապրել եւ աշխատել են սակաւսփի հայեր: Անասնաբոյժ **Յովհաննէս Մահտեսեանը** մինչեւ 1947-ին հայրենադարձուելը Բելգիայի կառավարութեան կողմից տաս տարի ծառայել է Կոնգոյում:²⁵ Այստեղ շէնքեր են կառուցուել ֆրանսահայ ճարտարապետ **Գեորգ Արսէնեանի** (1898–1980) նախագծով²⁶:

Չափազանց արտառոց է այս երկրում ներկայութիւնը... հայ առաքելական եկեղեցու: Այս վկայութեան համար պարտական ենք արգենտինահայ պատմաբան Նարսիսո Բինայեան Կարմոնային, որն էլ այդ մասին անձամբ լսել է 1968-ին Վազգէն Ա կաթողիկոսից, վերջինիս՝ Արգենտինա կատարած այցելութեան ժամանակ: Բինայեան Կարմոնան մասնատրապէս գրել է. *«Մի խումբ նորադաւաններ հասան Սուրբ Էջմիածին եւ խնդրեցին ընդունուել եւ ձեռնադրուել այնտեղ: Վազգէն կաթողիկոսը փաստի առաջ կանգնեց. Հայաստանեայց Եկեղեցին ազգային է, սակայն մտեւ Տիեզերական եկեղեցու մաս է կազմում եւ չի կարող շրջանցել Աւետարանը քարոզելու պարտականութիւնը: Հետեւաբար ընդունեց զաիրոցիներին, որոնք ուսումնասիրեցին ամէնը, ինչ որ պէտք էր ուսումնասիրէին, ձեռնադրուեցին եւ սույա իրենց երկիրը մեկնեցին, որտեղ կազմակերպեցին Չաիրի*

²⁴ Անձնական ելզիր, 23.10.2020:

²⁵ Տես Վահան Հովիտեան, Դեր Չորից մինչեւ Սիբիր կամ Կեանքի ելելեջներ, 1904–64, Երեւան, 2018, էջ 148:

²⁶ Տես Տ. Շ. Միսաբեան, Արդիական ճարտարապետութեան վարպետ մը. Գեորգ Արսէնեան, «Յառաջ», 11.08.1954:

Հայաստանեայց Եկեղեցին, որ, առանց ենթակայութեան յարսքերութեան, հին հայերէնով արարողութիւններ է կատարում եւ գործադրում է աւանդական բոլոր օրէնքները: 1985-ին Լազոսում (Նիգերիա) սյրոֆետը Բուակասսան Քինչասայից հաստատեց նրա գոյութիւնը եւ երկու օր անց, անյազ հետաքրքրութեամբ անվերջանալի հարցումներ տուեց հայկական հարցերի եւ խնդիրների ամենաբազմապիսի երեսների մասին»: ²⁷ Յաւօք, սոյն ուշագրաւ իրողութեան մասին լրացուցիչ տուեալներ բացակայում են:

1953-ին «Յառաջ» օրաթերթի Կոնգոյի բաժանորդ **Խաչիկ Տէրվենճեանը** հետեւեալ տուեալներն է յայտնել երկրի հայերի մասին: Ինքը վեց հոգուց բաղկացած ընտանիքով բնակուել է Ուսումբուրա (այժմ՝ Կոնգոյից անկախացած Բուրունդիի մայրաքաղաք Բուժումբուրա) քաղաքում, Բուքավուում է բնակուել տիկին **Աննիկ դը Կոստերը**, Էլիզաբեթվիում (այժմ՝ Լուսումբաշի)՝ **Երուանդ Գրիգորեանը**, Շապովիում՝ մի հայ բժիշկ, Սթենլիվիում (այժմ՝ Քիսանգանի)՝ **Մաաթեսու Մարկոսեանը**: Ուրիշ քաղաքներում էլ եղել են ցիրուցան հայեր ²⁸: 1960-ի թղթակցութիւնը գրեթէ կրկնել է նախորդ թուերը. մայրաքաղաք Լեոպոլդվիում (այժմ՝ Քինչասա) եւ Էլիզաբեթվիում ապրում են իւրաքանչիւրում տասական հայ, հինգական՝ Սթենլիվիում եւ Շապովիում, Ուզումբուրայում՝ 12: Ողջ երկրում հայերի թիւը 100-ի չի հասել ²⁹:

Վերոյիշեալ Խաչիկ Տէրվենճեանի զարակն է 1949-ին Ուսումբուրայում ծնուած լուսանկարիչ, վաւերագրական ֆիլմերի բեմադրիչ **Արամ Դերվենը**, որը 1967-ին Աֆրիկայից տեղափոխուել է Ֆրանսիա եւ ուսանել ճարտարապետութիւն ու լուսանկարչութիւն: 1981-ին Փարիզում ունեցել է

²⁷ Narciso Binayan Carmona, Entre el pasado y el futuro: los armenios en la Argentina, Buenos Aires, 1996, p. 48.

²⁸ Տե՛ս Ցիրուցան հայեր, «Յառաջ», 29.05.1953: Տե՛ս նաեւ Հայ գաղութ մը Ափրիկէի խորերը, «Երիտասարդ Հայաստան», 16.10.1953:

²⁹ Տե՛ս **Յովի. Վարժապետեան**, Պելճիբական Քոնկոյի հայ գաղութը ալսօր, «Արարատ», 7.02.1960: Նոյնը տե՛ս «Արեւ», 24.05.1960:

անհատական ցուցահանդես³⁰: Իսկ վերոյիշեալ Աճնիկ դը Կոստերը, ծնեալ Աճնա Կիրեղեան, ամուսնացած է եղել բելգիական ռազմական եւ պետական գործիչ, հայասեր Ժան դը Կոստերի (1889–1959) հետ, որը նպաստներ է բաշխել հայկական վարժարաններին եւ կրթաթոշակներ՝ հայ ուսանողներին³¹:

Նշուած անձանցից ստաւել նշանաւոր է գործարար **Մատթէոս (Մաթեո, Սկրոիչ) Մարկոսեանը**, որին անուանել են «սիգարի բարոն»: Ծնունդ է 1906-ին, Սկալանովայում (Թուրքիա), 1950-ից ապրել է Կոնգոյի Սթենլիվիլ քաղաքում: Միայնակ յաղթահարելով բազում դժուարութիւններ՝ դարձել է մեծահարուստ, բարեգործ, Սթենլիվիլ այցելողներն օգտուել են նրա առատաձեռնութիւնից: Մարկոսեանը զբաղուել է ավտոմեքենաների եւ բեռնատարների վաճառքով, ունեցել է սուրճի տնկարկներ Եոլոյում, տնօրինել «Բլոկ դը Պարի» ներդրումային ընկերութիւնը, փոխադրամիջոցներ, «Վատել» հացաբուլկեղենի խանութը, վարձակալել է աղբատար մեքենաներ: Ամուսնացած է եղել բելգիոսիու հետ, ունեցել երկու որդի՝ **Տարզան** եւ **Մամսոն**: Իսկ դամասկոսցի **Զաւեն Դամլամայեանը** Կոնգոյում աշխատել է որպէս մաքեմատիկայի ուսուցիչ:

Կիսանկախ Ուսումնորայի ցեղապետի անձնական քարտուղարն է եղել փաստաբան **Երուանդ Միմոնեանը**, որն ուսանել է Բելգիայում: Կոնգոյում ապրել է կնոջ՝ **Շաքէ Միմոնեանի** հետ, որը դուստրն էր եգիպտահայ ճարատապետ Կարօ Պալեանի: Նրանց դուստրը յաճախել է աղջիկների դպրոց Կոնգոյում³²:

Ըստ 1963-ի մի տեղեկագրի՝ Կոնգոյի հայերի թիւը եղել է մտ 100՝ ցրուած Լեոպոլդվիլ, Սթենլիվիլ, Շապովիլ եւ այլ

³⁰ Տես Արամ Տերվեց, «Յառաջ», 11.03.1981:

³¹ Տես Հայասեր էր եւ բարերար, «Հայրենիք», 17.10.1959:

³² Տես **Յովսէփ Թրզգրեան**, Հանդիպումներ կեանքիս ճամբուն վրայ, «Պայքար», 20.07.1960:

քաղաքներում³³: 1983 թ. վիճակագրության համաձայն՝ Կոնգոյում ապրել է 80³⁴, 1984-ին՝ 100 հայ³⁵: 21-րդ դարում Քիմիզասայում բնակում է 150-200 հայ, գործարարներ Լիբանանից եւ նրանց կես հայ սերունդները: Նրանք միասին են նշում ծննդեան տարեդարձները, հարսանիքները, դիմաւորում եւ ճանապարհում են արտասահմանցի հայրենակիցներին:

Լիբանանահայ **Պերճ Նանիկեանը** Կոնգոյում հաստատուել է «Մոնոսկոյի առաջին առաքելութիւն» անուամբ յայտնի ՄԱԿ-ի կայունացման ծրագրի շրջանակներում: Այնուհետեւ երկար տարիներ բիզնես գործունեութիւն է ծաւալել Կոնգոյում, տնօրինել է «UPHARCO» ընկերութիւնը: Պերճ Նանիկեանի հայ-աֆրիկեան ծագմամբ զաւակները (**Կարօ, Ջեսիքա, Գրիգոր, Անտիօք, Դիդիէ, Լեջիտէ, Քարին, Քեթրին, Օլգա, Ջունել Նանիկեաններ** եւ այլք) աշխատում են Կոնգոյի տարբեր բնագաւառներում: Նրանցից յայտնի է **Կարօ Նանիկեանը**՝ բոնցքամարտի մենամարտերի կազմակերպիչ, Կոնգոյի SCS ընկերութեան տնօրէն, որը զբաղում է պրոֆեսիոնալ մարզիկների զարգացումով: Հայ-բանտու ծագումով Կարօն խօսում է անգլերէն, ֆրանսերէն, աֆրիկեան լինգալա լեզուն, ինքնուրոյն սովորում է հայերէն: 2020-ին ծնուած իր դստերը նա կոչել է **Հայաստան Մարիա**: Նանիկեանն ինքը որոշ ժամանակ եղել է Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետութեան հայ համայնքի նախագահը: Նրա վկայութեամբ՝ 2020-ին Կոնգոյում բնակում է վեց հայ ընտանիք (մօտ քսան հոգի), հայերն աշխատում են շինարարութեան, ապահովագրութեան, վարչարարութեան, հանրադրիւնաբերութեան եւ առետրի մեջ³⁶: Նանիկեանի

33 Տե՛ս Արմէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 103:

34 Տե՛ս անդ, էջ 104:

35 Տե՛ս ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 13, ք. 4-5:

36 Տե՛ս մեր հարցազրոյցը՝ Արծուի Բախչինեան, Կարօ Նանիկեան. Պահպանելով հայ ծագումը Կոնգոյում, «Ազգ», 25.09.2020, Artsvi

լինգալա (լինգալերեն) քարգմանութեամբ «Վահագնի ծնունդը» բանաստեղծութիւնն ընդգրկուել է այդ ստեղծագործութեան քաղմալեզու հրատարակութեան մէջ³⁷:

Նանիկեանը 2017-ի մայիսին եղել է Երեւանում մասնակցելու «Բելգիա-Հայաստան» առեւտրի պալատի նախաձեռնութեամբ անցկացուած հանդիպմանը՝ գործարարների մասնակցութեամբ Հայաստանից, Բելգիայից եւ Կոնգոյից³⁸: «Բելգիա-Հայաստան» առեւտրի պալատի նախագահ, կոնգոյաբնակ Վալերի Սաֆարեանը նշել է, որ Կոնգոյում հետաքրքրուած են Հայաստանի հետ համագործակցութեամբ եւ կայ մտադրութիւն հայ արտադրողների ու արտահանողների հետ քննարկելու համագործակցութեան հնարաւորութիւնները³⁹: Ի դէպ, Վալերի Սաֆարեանի ու Կարօ Նանիկեանի ջանքերով Քինշասայի հայերը երկու անգամ իրենց մօտ կազմակերպել են բելգիաբնակ բոնցքամարտիկ Ալեքս Միսկիրտչեանի մենամարտը տեղացի մարզիկների հետ⁴⁰:

Կոնգոյի հայերը համախմբուած են Ֆեյսբուքի «Կոնգոյի հայ համայնք» էջում: Վանուսորցի Էլլարա Պետրոսեանը, որ ուսանել է Լոնդոնի Տնտեսագիտութեան դպրոցում եւ աշխատել ՄԱԿ-ի Փախստականների գրասենեակում, աշխատել է Եթովպիայում եւ Սուդանում: 2013-ից Կոնգոյում է, ամուսնու՝

Bakhchinyan, Garro Nanikian: Preserving the Armenian roots in Congo, “The Armenian Mirror-Spectator,” 1.10.2020:

³⁷ Տես էջ *Վահագնի ծնունդը* աշխարհի 50 լեզուներով: Հաւաքեցին եւ հրատարակութեան պատրաստեցին **Արծուի Բախչինեան** եւ **Հայկ Ասագեան**, Գահիրէ, 2022, էջ 119:

³⁸ Տես Конголезско-армянский мультикультурализм, «Новое время», 12.12.2017:

³⁹ Տես Բելգիայի եւ Կոնգոյի գործարարները հետաքրքրուած են Հայաստանով <https://www.nineconomy.am/news/548> (դիտում 19.07.2017):

⁴⁰ Տես Քինշասայի հայերը երկրորդ անգամ են բելգիահայ բոնցքամարտիկի խաղը կազմակերպում <https://news.am/arm/news-395381.html> (դիտում 22.11.2017):

Ջեյմս Նզինգա Նկենբոյի եւ գաւակի հետ բնակում է Կոնգոյի Մբանգա-Նգունգու բնակավայրում, աշխատում է որպէս ուսուցչուհի: Համայնքի անդամների մէջ նշում են շինարարական ընկերութեան ղեկավար **Մայք Քալաջեանի** (սիրիահայ), **Գոհար Բաղալեանի** (հայաստանցի), **Ուրանիա Գաեերի** (լիբանանահայ) եւ **Արամ Օսիկեանի** (այժմ՝ ԱՄԷ) անունները:

Կոտ դ'Իվուար

Ֆրանսիական այս նախկին գաղութում աշխատել են որոշ ֆրանսաբնակ հայեր: Արդիւնաբերող **Միքան Էկնայեանը** (1892, Փարիզ – 1985, Նեյի-սիւր-Սեն) զբաղուել է սղամանդի արդիւնագործութեամբ, մինչեւ 1945-ը եղել է Կոտ դ'Իվուարի հանքավայրերի հետազոտման եւ շահագործման միութեան (SAREMCI) նախագահը:

Ճագումով այնթապցի գործատէր **Հայկ Արսլանեանը** (1927, Հալէպ – 2011, Բեյլիա) ճանապարհորդել է Հնդկաստանում, Եմենում, Գամբիայում: 1951-ին Հարաւային Աֆրիկայում զբաղուել է ալմաստի հանքախուզմամբ եւ գնել ալմաստի հանքեր: 1952-ին եղբօր՝ **Սելանկտոն Արսլանեանի** հետ այնտեղ հիմնել է աղամանդի եւ ոսկերչութեան ընկերութիւն: Արդէն 27 տարեկանում նա յայտնի է դարձել մի շարք երկրներում՝ շնորհիւ իր աշխոյժ գործունէութեան եւ ստացել է աննախադէպ իրաւունքներ աղամանդի առետրում: 1962-ին Արսլանեան եղբայրներն Անտվերպենում (Բեյլիա) հիմնել են իրենց անունով ընկերութիւն, որն ունեցել է իր ներկայացուցչական գրասենեակները եւ գործարաններն Աֆրիկայում (Կենտրոնական Աֆրիկեան Հանրապետութիւն, Կոտ դ'Իվուար եւ Կոնգո), Լատինական Ամերիկայում, Կանադայում եւ Աւստրալիայում: Սերտ կապեր հաստատելով աֆրիկեան մի քանի երկրների նախագահների հետ՝ Արսլանեանները նպաստել են այդ երկրների զարգացմանը եւ առաջընթացին: Գործարար եղբայրները սերտ կապերի մէջ են

հայութեան հետ. 1992-ին Հայկ Արսլանեանն իր Շահէ ոլդու հետ հիմնել է աղամանդագործական գործարան Լոռիում, որի շնորհիւ Հայաստանը դարձել է աղամանդագործութեան միջազգային կենտրոններից մէկը:

...1990-ականներին... մայրաքաղաք Արիջանում Արսլանեանների գրասենեակի ղեկավարը եղել է **Վիգէն Տէր-Սարգսեանը**⁴¹: Նա 1982–1988 թթ. ուսանել է Երեսնի պոլիտեխնիկական ինստիտուտի էլեկտրոնիկայի եւ էներգետիկ ճարտարագիտութեան բաժնում: Այժմ բնակույմ է Եոհաննէսբորգում (Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւն), որտեղ գործում է որպէս արտածման եւ ներածման անկախ գործակալ:

1960-ականների՝ կտերից Արեւմտեան Աֆրիկայի երկրներում եւ մասնաւորապէս Կոտ դ'Իվուարում է իր գործունէութիւնը ծաւալել ֆրանսահայ գործատէր Ռայմոն Եզեկիէլեանը: Ծնուել է Փարիզում, ադրիանապոլսեցի հօր ընտանիքում: Կոտ դ'Իվուարում նա բացել է 30-ից ատելի գրասենեակ, «Revelon» ֆիրման, ներմուծել վիսքի եւ այլ ըմպելիքներ: Նրան են պատկանել նաեւ մի շարք շտեմարաններ: Եզեկիէլեանին անուանել են Արեւմտեան Աֆրիկայի հայոց դեսպան: Առաջին՝ ճապոնուի կնոջից ունի Վարդուի դստերը, իսկ մարիտանուի կնոջից՝ Անուշ դստերը, ծնուած Սենեգալում: *«Երկուքն ալ հայերէն կը խօսին: Հայաստան այցելած են եւ իմ հայերէնս կը սրբագրեն: Հայ մնալը կարեւոր է, ու հայ կրնանք մնալ մեր լեզուն սորվելով միայն: Հպարտ են, որ երկու աղջիկներս ալ հայերէն կը խօսին ու հայ կը զգան: Դիրքին չէր այս ընել, բայց ըրի»*, – ասել է Եզեկիէլեանը:⁴² Ի դէպ, Անուշ Եզեկիէլեանը որոշ ժամանակ բնակուել է Հայաստանում, 2007-ին նկարահանուել Վրէժ Քասունիի «Մէր կամ...» (“Maybe Love, Maybe Not”) կարճամետրաժ շարժանկարի գլխաւոր դերում: Արիջանում Հայաստանի Հանրապետութեան պատուաւոր հիւպատոս

⁴¹ Տէն Յակոբ Վարդիվազեան, «Ապիճանը իր հայութեամբ...»

⁴² Անդ:

Ռայմոն Եզեկիելեանը մեծ աշխատանք է կատարել մասնատրապէս յանուն Արցախի տնտեսական զարգացման:

Կոտ դ'Իվուարում է բնակուած նաեւ հայազգի երգչուհի **Մալաք Մաջարը**, ծնուած Լիբանանում: Արիջանի արարախօս համայնքում սիրուած երգչուհին կատարում է լիբանանեան հայրենասիրական եւ սիրային երգեր, յատկապէս լիբանանցի երգչուհիներ Ըմ Քալսունի, Սարահի, Ֆէյրուզի երգացանկից⁴³:

1960 թուականից, երկրի առաջին նախագահի՝ Ֆէլիքս Հուֆուէ-Բուանյի եւ նրան յաջորդած երեք նախագահների օրոք Կոտ դ'Իվուարի նախագահական պալատի արձանագրութեան բաժնի ղեկավարն է եղել **Ժորժ Ուէնիէնը** (ծն. 1934, Ալէքսանդրէթ, այժմ՝ Թուրքիայում), որի հայրն աֆրիկացի է, մայրը՝ հայուհի **Մարի Աւետիքեանը**⁴⁴: 2007-ին իր ծառայութիւնների համար Ուէնիէնը Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզիի կողմից պարգեատրուել է «Պատուոյ լեգէոնի» սպայի շքանշանով: Նրա մասին 1996-ին «Արիջան ջորնլըրը» գրել է. «*Իրականում նրա մայրը հայ էր, որը պարոն Ուէնիէնին պարգեւել է իր արտաքինը եւ օտարականի խորհուրդը*»⁴⁵:

1983-ի տունալով՝ Կոտ դ'Իվուարիի հայերի թիւը եղել է 50⁴⁶:

Արիջանի հայերի մասին 1990-ականների կեսի սփիւռքահայ մամուլում տպագրուած մի թղթակցութեան մէջ ասուած է, որ Աֆրիկայի այդ սմենից երոպականացած քաղաքում հաստատուել են հայեր Բէյրութից, Ստամբուլից, Ամմանից, Ֆրանսիայից եւ Արգենտինայից: Յատկապէս Լիբանանի քաղաքացիական պատերազմի հետեւանքով տասնեակ հայեր են հաստատուել այս երկրում: Գործել է

⁴³ Տե՛ս **Յակոբ Վարդիպատեան**, Հայոց «Կոունկ»ները Ասիճանէն... Փարիզ, «Ապագայ», 9.09.1991:

⁴⁴ Տե՛ս **Յակոբ Վարդիպատեան**, «Ասիճանը իր հայութեամբ», անդ:

⁴⁵ Տե՛ս **Howard W. French**, Master of Protocol, and No Slouch at Martial Arts, "Abidjan Journal," 2.09.1996.

⁴⁶ Տե՛ս **Արմէն Բարսէլեան**, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

«Կարօ» վարսավիրանոցը, որի յաճախորդներն են եղել Արիջանի աւագանիի տիկնայք: Թէեւ հայերի սակաւ թուին եւ միմեանց հետ ոչ շատ կապուածութեանը, նրանք նուիրուած են ազգային կեանքին, նրանց մէջ վառ է ազգային ոգին եւ նրանք հնարաւորութիւններ են ստեղծում հաւաքուելու եւ քննարկելու ազգային խնդիրները, կատարելու հայկական երգեր, պատրաստելու ազգային խոհանոցի ճաշատեսակներ եւ այլն⁴⁷:

Նիգերիա

Չնայած փոքրաթիւ լինելուն՝ «սեւ» Աֆրիկայի հայօջախներից միայն Նիգերիահայ համայնքի մասին գոյութիւն ունի առանձին մենագրութիւն: Այն հեղինակել է Նիգերիայում բնակուած Սուրէն Ա. Տատրեանը տակաւին 1958 թուականին:⁴⁸ Գրքի երկրորդ մասն ամբողջովին նուիրուած է Նիգերիայի հայ համայնքին, իսկ վերջում տրուած է այդ երկրում բնակուած 34 հայերի ցանկը (անուն-ազգանուն, ծննդավայր, Նիգերիա ժամանելու թուականը, զբաղմունքը): Նիգերիայի հայերի մեծ մասը եկել են 1920–1930-ականներին, եղել են ծնունդով Իզմիրից, Կեսարիայից, Մարգուանից, Ադանայից եւ Կիպրոսից: Արդէն 1928 թուականին սփիւռքահայ մամուլը վկայել է, որ Նիգերիայի 2000 սպիտակամորթ բնակչութեան մէջ եղել է ընդամենը երեք հայ⁴⁹:

Առաջին հայը Նիգերիայում հաստատուել է 1925 թուականին, որը եղել է Մանչեսթրի «Օտապաշեան» առեւտրական հաստատութեան հիմնադիր Արտաշէս Նազարէք Օտապաշեանը (1880-ականներ, Կեսարիա – 1937, Լազոս): Նա Արեւմտեան Աֆրիկայում՝ Լազոսում եւ Աքրայում, հիմնել է իր ընկերութեան մասնաճիւղերը, կերպասեղէնի

⁴⁷ Տե՛ս **Յակոբ Վարդիլասեան**, Ապիճանը իր հայութեամբ...: Նոյնը տես անգլերէն՝ Abidjan with Its Armenians, "The Armenian Reporter," 1.09.1999:

⁴⁸ **Սուրէն Ա. Տատրեան**, Նիգերիա եւ նիկերահայ գաղութը, Պէյրութ, 1958:

⁴⁹ Տե՛ս Յիրուցան հայեր. երեք հոգի ալ՝ Նիկերիա, «Յառաջ», 23.06.1928:

ներմուծման “Ardeno Limited” եւ “Otako Limited” ընկերութիւնները, հետագայում իր մօտ բերել տասնեակի չափ հայեր:

Արտաշէս Օտապաշեանի շնորհիւ Նիգերիայում եւ Ռսկեայ ակում (հետագայում՝ Գանա) 1930-ականներին ստեղծուել է փոքրաթիւ հայ համայնք, որի անդամներից ոմանք առաջնակարգ դիրքի են հասել: Օտապաշեանի բերած առաջին հայերից են եղել երիտասարդ գործարար **Յակոբ Գարագաշեանը**, որը դարձել է «Օտապաշեան» առետրական հաստատութեան Նիգերիայի մասնաճիղի ղեկավար (մահացել է 1937-ին, Մանչեսթրում), նոյն ընկերութեան պաշտօնեաներ **Մինաս-Գրիգոր Մելիքեանը** եւ **Նազարեթեայի Արըճեանը**: Վերջինս Լագոսում ունեցել է կերպաստեղէնի վաճառատուն, տնօրինել «Բրիսթոլ» հիւրանոցը, Մինաս Մելիքեանի հետ հիմնել է անշարժ գոյքի ընկերութիւն: Այդ ընկերութեան բաժնետէր, ինչպէս նաեւ Մելիքեանի եւ Արըճեանի վաճառատների Բենինի եւ Սաբըլէի մասնաճիղերի տնօրէն է եղել **Հրանդ-Գրիգոր Մելիքեանը**: Նա է եղել նաեւ “Armels Transport Limited” ընկերութեան հիմնադիր տնօրէնը եւ բաժնետէրը⁵⁰: Ընկերութեան քարտուղար-հաշուակալն էր **Յարութիւն Տատրեանը**: Սուրէն Տատրեանն իր գրքում յիշատակել է նաեւ հետեւեալ անունները՝ “Ardeno Limited” ընկերութեան պաշտօնեաներ **Մասիս-Լեւոն Գարագաշեան**, “United America” ընկերութեան ձայնասփիւռի բաժնի ղեկավար **Լեւոն Փափազեան** (1949-ին տեղափոխուել է Կահիրէ), «Ռոյալ» եւ «Փալմ» հիւրանոցների տէր **Անդրանիկ Սեդրակ Պասմաճեան**, 1947–1945 թթ. “Otako Limited” ընկերութեան տնօրէն եւ բաժնետէր **Ռիչարդ Օտապաշեան** (1949-ին տեղափոխուել է Քենիա) եւ **Լուսիա Գալենտեր** (1952-

⁵⁰ Հաւանաբար նրա ընկերութիւնը նկատի ուներ Արտաշէս Քալանթարեանը՝ գրելով. «*Երբ հիւրանոցից դուրս եկանք, նա* (զրոսավարը – Ա. Բ.) *մեզ ցոյց տուեց մի փոքրիկ ավտոբոս, որն ի միջի այլոց հայկական մի ընկերութեան էր պատկանում*» (Արտաշէս Քալանթարեան, Պատմութեան, Աշխարհի Գաղութնաբանութեան, Աշխարհի Գաղութնաբանութեան, էջ 364):

ին տեղափոխուել է Գանա):

1951-ին Լազոսում բնակուել է 12 հայ ընտանիք՝ առևտրականներ եւ պաշտօնեաներ, բոլորը՝ կեսարացի, կիպրացի եւ կոնիացի: Բանո քաղաքում բնակուել է նաեւ մէկ առամնաբոյժ: Բոլորն էլ բարեկեցիկ վիճակում են եղել⁵¹:

Արտաշէս Օտապաշեանի քելադրութեամբ Նիգերիայի հայերից Սինաս Մելիքեանը, Նազարէք Արըճեանը, Օճնիկ Խոպէտէրեանը (բէյրութցի, դերձակ), Միհրան-Պետրոս Գալենտերեանը (մարգուանցի, ամուսնացած ֆրանսահայուհու հետ, 1953-ին տեղափոխուել է Հարաւային Ռոդեզիա), Միհրան Գաուրճեանը, Արամ Մեծօբորութեանը (անկարացի) եւ Մասիս Գալրագաշեանը որդեգրել են չորս սան Լիբանանի եւ Սիրիայի հայկական դպրոցներում՝ վճարելով նրանց ուսման վարձը հինգ տարուայ համար:

Այս անուններին աւելացնենք վաճառականներ Ստեփան Գաուրճեանի եւ Յարութիւն Թորոսեանի (մերսինցի, ապրել է Բանօ քաղաքում) եւ դերձակ Գրիգոր Կիզիրեանի (ուրֆացի) անունները⁵²:

1961-ին Նիգերիայում է հաստատուել լիբանանահայ գեղանկարիչ Վահէ Կտօքլէօզեանը (ծն. 1937), որը դարձել է տեղի յայտնի նկարիչներից: Այստեղ է որոշ ժամանակ ապրել նաեւ հայերէն ստեղծագործող բանաստեղծ Յովհաննէս Հայկազունը:

Նիգերիայի հայերը չեն ունեցել ազգային որեւէ կազմակերպութիւն: Այն հարցին, թէ ինչու գոնէ գերեզմանատուն չունեն, նիգերիահայ Հրանդ Մելիքեանը պատասխանել է. «Որովհետեւ, ինչ որ մեռնելու նպատակ չունենք»⁵³: Հայերն իրենց պսակը եւ մկրտութիւնը կատարել են օտար եկեղեցիներում, ակումբի պակասը լրացրել են բարեկամական հաւաքոյթներով: Բարգաւաճ այդ համայնքն

⁵¹ Նիկերիոյ հայ գաղութը, «Հայաստանի կոչնակ», 9.06.1951, էջ 549:

⁵² Տե՛ս Աշոտ քին. Տէր Յարութիւնեան, Նիկերիոյ եւ Կոլտ Քոսթի հայ գաղութը, «Չարթօնք», 19.06.1952:

⁵³ Տե՛ս Մուրէն Ա. Տաւրեան, Նիկերիա եւ նիկերիահայ գաղութը, էջ 115:

ապրել է հաշտ եւ համերաշխ:

Ի դեպ, Տատրեանի գրքում ծանուցում է եղել այն մասին, որ հեղինակը պատրաստում է հրատարակել «Կիկոյի արկածներ (նիկերիացիներու կեանքէն)» վերտառութեամբ հատոր, սակայն նման գիրք մեզ առայժմ չի հանդիպել:

Երբ 1960-ին Նիգերիան անկախութիւն է հռչակել, այդ առթիւ կազմակերպուած հանդիսութեանը մասնակցելու համար Աֆրիկա է մեկնել խորհրդային պատուիրակութիւնը, որը նախագահել է Հայաստանի Գերագոյն խորհրդի նախագահ Շ. Առուշանեանը, որը վարչապետ Արու Բարքար Թուֆալ Փալեւիին է յանձնել Նիկիտա Խրուշչեւի պատգամը⁵⁴:

Իրաւաբան, սրբ **Վահէ Ռորերթ Պայրամեանը** (Բայրամեան, 1900, Կիպրոս – 1984, Քենթ, Մեծ Բրիտանիա) ծնունդ է մարաշցի հօր ընտանիքում, 1944-ին տեղափոխուել է Նիգերիա, պաշտօնավարել «Արտենօ» ընկերութիւնում, եղել հողային կոմիսարի իրաւաբանական խորհրդատու, գերագոյն ստեանի ոստիկանական դատատըր եւ արագ քարտուղար: Մի քանի տարի բնակուել է աֆրիկեան մէկ այլ՝ Սիեռա-Լեօնէ պետութիւնում, աշխատել որպէս իրաւաբանական խորհրդատու, գերագոյն դատարանի արագ քարտուղար, ոստիկանական դատարանի դատատըր, իսկ 1957–1959 թթ.՝ երկրի գլխատըր դատատըր: Հետագայում հաստատուել է Մեծ Բրիտանիայում: 1980-ին Նիգերիայում լուս է տեսել նրա «Մինոպսիս թիւ 2» գիրքը: Ամուսնացած է եղել կիպրացի անգլոտիուի հետ, որդին՝ Ռորերտ Պայրամեանը (1935, Նիկոսիա – 2018, Մեծ Բրիտանիա), եղել է Հովմվուդ Հաուզ դպրոցի տնօրէնը:

Լիբանանահայ գրող **Արամ Մեփեթճեանը** (1934–2020) ճանփորդել է Նիգերիայում եւ գրել «Ես սեւ եմ, բայց գեղեցիկ» վիպակը Նիգերիայում հաստատուած հայերի մասին:

Կանադաբնակ, ծնունդով սիրիահայ **Անահիտ Քտուէեանը** (ծն. 1940) 1972–1973 թթ. աշխատել է Ալժիրում, 1973–1988

⁵⁴ Տե՛ս Շ. Առուշանեան Նիկերիոյ մէջ, «Յառաջ», 30.10.1960:

բուականներին՝ Նիզերիայի Չոս, Քաղունա եւ Քանո քաղաքներում, դասաւանդել Աիմեդ բըն Բըլլո համալսարանում: Ծրագիր է մշակել Մաքուրդիում 20 հազար բնակիչների բնակավայր կառուցելու համար: Ի դէպ, նրա երթօրորդին՝ այժմ կանադաբնակ բանաստեղծ Տիր (Պիր) **Քօւէտանը** (գրող Կոստան Չարեանի ծոռը), ծնունել է Նիզերիայի Քաղունա քաղաքում:

1983-ի տուեալով՝ Նիզերիայում բնակուել է տաս հայ⁵⁵:

2005-ից Լազոսում է բնակւում սիրիահայ Մանուէլ **Քոնեանը** (ծն. 1976), որտեղ մենեջեր է աշխատում մի ընկերութիւնում: Ըստ նրա՝ 2009-ի դրութեամբ Լազոսում ապրում է շուրջ 60 հայ, որոնք հիմնականում ներգրաւուած են նաւթային ընկերութիւններում կամ զբաղւում են առեւտրով: Նիզերիայի հայերը հիմնականում Լիբանանից են գաղթել, մի մասն էլ՝ Սիրիայից եւ Կիպրոսից: Կան հայեր, որոնք ատիլի քան երեսուն տարի է, ինչ բնակութիւն են հաստատել այնտեղ, ամուսնացել են ու ընտանիք են կազմել: Նրանց զաւակները հայերէն գրել-կարդալ սովորում են տանը՝ ծնողների օգնութեամբ⁵⁶:

Չադ

1927–1931 թթ. Չադում է բնակուել ծնունդով վանեցի ֆրանսաբնակ բժիշկ **Հայկ Գալճեանը** (1890–1961), իր աֆրիկեան տարիների մասին մանրամասն գրել իր յուշագրութեան մէջ⁵⁷: Աֆրիկայում չորս տարի շարունակ Գալճեանը դարմանել է տեղացիներին տենդից ու այլ հիւանդութիւններից, որսորդութեամբ զբաղուել ջունգլիներում, հանդիպել տակաւին ծառաբնակ պիգմէյների, 100 ֆրանկով գնել ֆուլբէ ցեղից Չարա անունով մի աղջկայ՝ որպէս իր

55 Տե՛ս Արմէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

56 Տե՛ս Մովսէս Խեչօ, Մանուէլը՝ Լազոսից, «Առաւօտ», 2.04.2009:

57 Տե՛ս Տօքթ. Հայկ Գալճեան, Ողիտես աքսորական. յուշեր, Երեւան, 2004, էջ 392-481:

ժամանակատր կենակիցը, Ֆոր-Լամիում (Չադի մայրաքաղաք Նջամենայի նախկին անունը) բուժել է ֆրանսիացի հոչակատր գրող Անդրե ժիդին եւ նրա հետ բարեկամութիւնը շարունակել մինչեւ ժիդի մահը, դրուագային դերով մասնակցել ֆրանսիական «Բայլ դեպի արեւ» շարժակարին (բեմադրիչ՝ Ռենե Լը Սոմըտիէ, 1928): Մի անգամ Մուսորո քաղաքի հիւանդանոցում փրկել է **Կարապետ** անունով խարթումաբնակ մի հայի կեանքը, որը Չադ է եկել տեղական եզներ գնելու եւ ծանրօրէն հիւանդացել է: «*Հայրենակցական զգացումը թոյլ չտուաւ, որ հիւանդանոցէն ելլելէ ետք, բոլորովին կազդուրուած չըլլալով, լքէի զինք այդ վիճակին մէջ: Հետեւաբար զինք տաճա մէջ հիւրընկալեցի*»⁵⁸, - գրել է Գալմեանը, որը հրաժարուել է բուժման վճարն ընդունել:

1929-ից Ֆոր-Լամիում բնակուել է երկու հայ ընտանիք Ազշեհիրից (Էսքիշեհիր), թուով 12 հոգի: Նրանք զբաղուել են հիւսուածքեղէնի եւ տեղական բերքերի վաճառականութեամբ⁵⁹: Ըստ 1963-ի մի տեղեկագրի՝ Ֆոր-Լամիում բնակուել է երեք հայ ընտանիք, բոլորն էլ զբաղուել են առեւտրով⁶⁰: 1983-ին Չադում ապրել է տաս հայ⁶¹:

Չադում է որոշ ժամանակ անցել ամերիկեան պատմաբան **Ստեփան Աստուրեանի** մանկութիւնը: Չնայած նա ծնուել է Ֆրանսիայում, մեծացել է Չադի Ֆորտ-Արխամբո (այժմ՝ Սարի) քաղաքում մինչեւ մօտ չորսուկէս տարեկանը: Աստուրեանի վկայութեամբ՝ նոյն քաղաքում են ապրել նաեւ իր հօրեղբայրը (իրենց ընտանիքից սոռաջինը, որ հաստատուել է Չադում եւ վերջիններից, որը հեռացել է երկրից քաղաքացիական պատերազմի ընթացքում) եւ իր մօրաքոյրն

⁵⁸ Անդ, էջ 469:

⁵⁹ Տես **Վարդան քինյ. Ժամկոչեան**, Հայուն տարեցոյցը, հտ. Ա., 1950, տես Հարաւային, Արեւելեան Ֆրանսայի եւ Չվիցերիոյ հայոց թիւը, «Հայրենիք», 25.10.1950:

⁶⁰ Տես **Արմէն Բադալեան**, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 103:

⁶¹ Տես անդ, էջ 104:

ամուսնու հետ: Ըստ նրա՝ առնուազն երկու ընտանիք է ապրել Ֆոր-Լամիում, երկուսն էլ մեծահարուստ: Ընտանիքի հայրը եղել է Չադի նախագահ Ֆրանսուա Թոմբալբայեի խորհրդականը. 1975-ին, վերջինիս սպանութիւնից յետոյ տեղափոխուել է Ֆրանսիա⁶²:

Չադում կարեւոր պաշտօն է զբաղեցրել նաեւ հայազգի պետական գործիչ, ծնունդով հալեպցի, Ֆրանսիայի քաղաքացի **Արթին Համալեանը** (1909–1965): Ոստիկանութեան սպայ, Սիրիայի եւ Լիբանանի երբեմնի ընդհանուր անվտանգութեան գործարիւր կոմիսար Համալեանը 1946-ին աշխատանքի է անցել Թունիսի անվտանգութեան գլխաւոր նստավայրում, 1954-ին արժանացել է Թունիսի ոստիկանութեան կոմիսարի կոչման, իսկ 1956-ին տեղափոխուել է Չադ, պաշտօնավարել Ուադդայ տարածաշրջանի կենտրոն Աբեշէում: Սերտ կապեր է ունեցել Չադի քաղաքական գործիչների, նաեւ՝ նախագահ Թոմբալբայեի հետ, վայելել տեղացիների վստահութիւնը: 1959-ին նշանակուել է Համայնքային արտաքին անվտանգութեան ծառայութեան Չադի մասնաճիւղի տնօրէն (1961-ին այդ մարմինը վերափոխուել է Ոստիկանութեան միջազգային տեխնիկական համագործակցութեան ծառայութեան): Համալեանին համարել են Չադի ֆրանսիական անվտանգութեան յենաախօններից եւ Չադում ֆրանսիական ներկայութեան գլխաւոր գործակալներից մէկը: Նրա ձեռնհասութիւնն առաւելապէս դրսեւորուել է տեղեկատուութեան ոլորտում՝ շնորհիւ տեղական, թունիսեան, լիբիական եւ սուդանական շրջանակների մասին ունեցած խորը գիտելիքների: 1964-ին անցել է թոշակի եւ հեռացել Չադից, ինչը անփոխարինելի կորուստ է համարուել ինչպէս Ֆրանսիայի դեսպանատան, այնպէս էլ Թոմբալբայեի

⁶² Անձնական ելզիր, 5.12.2020:

Սիեռա Լեոնե

1961 թ. անկախութիւն ստացած աֆրիկեան այս երկրում հայ համայնք չի եղել, սպրել են հատուկէնտ հայեր Լիբանանից: 1963-ի սեպտեմբերի 14-ին այս երկրում ԽՍՀՄ դեսպանատան աշխատակից Ի. Բուրցելը կազմել է մի հաշուետութիւն՝ հայ համայնքի նախագահ Օ. Ռայմոնի հետ կայացած հանդիպումից յետոյ: Ըստ Ռայմոնի՝ երկրում հայերի թիւը 12 է, բոլորն աշխատում են, մեծ մասամբ շինարարութեան ոլորտում եւ որպէս մեխանիկներ ավտոտնակներում: Ռայմոնն ինքը նոյնպէս ավտոմեխանիկ է եղել, աշխատել լիբանանցի միլիոնատեր Միլեմի ավտոտնակում⁶⁴:

Նոյն 1963 թուականի մի թղթակցութեան մէջ Սիեռա Լեոնեի հայերի թիւը յիշուած է ութ, «որոնք հոգեկան ու մշակութային կապ կը պահեն գաղթաշխատի իրենց հայրենակիցներուն հետ: Ասոնք ազնիւ գաղափարը ունեցած են հիմնելու սնտուկ մը, օգնելու համար ճիսէյի Թոշնոց Բոյնին ու Չմմառու Անարատ Յիւրութեան Զոյրերու Որբանոցին»⁶⁵:

1960-70-ական թթ. այս երկրի մայրաքաղաք Ֆրիթաունում է սպրել եւ աշխատել սփիւռքահայ գրականութեան հետաքրքիր դէմքերից մէկը՝ այժմ ամերիկաբնակ Պօղոս Գուրբելեանը (Զուրբելեան, ծն. 1936, Ալեքսանդրէթ, այժմ՝ Թուրքիայում):

⁶³ Stéu Maintenir l'ordre colonial: Afrique et Madagascar : XIXe-XXe siècles: Groupe d'études sur les mondes policiers en Afrique Presses universitaires de Rennes, 2012, էջ 167-171:

⁶⁴ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 340, թ. 1:

⁶⁵ Պօղոս Զուրբելեան, Սիեռա Լեոնե եւ հայերը, «Հայրենիք», 15.06.1963: Թերեւս իրականութեանը չի համապատասխանում նոյն 1963 թ. տուեալը, ըստ որի Սիեռա Լեոնեում բնակչուող հայ ընտանիքների թիւը ինն է (տե՛ս Արմէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 103):

Լիբանանից 1960-ին նախ Լիբերիա, ապա Սիեռա Լեոնե գաղթած գրողը հրատարակել է «Ափրիկեան ասիերու վրայ» (1967), «Ափրիկեան համանուագ» (1973) եւ «Անտառը մարդու մէջ» (1978) հայերէն գրքերը՝ գեղարուեստօրէն ներկայացնելով իր աֆրիկեան փորձառութիւնները, տարբեր իրապատում պատմութիւններ, արտայայտելով իր համակրանքը ճնշուած ու հարստահարուած աֆրիկացիների հանդէպ⁶⁶: Այդ առումով գրաքննադատ Ալեքսանդր Թովչեանը չի վարանել Գուբելեանին համարել «այդ երկրի գրականութեան՝ առնուազն հիմնադիրներից մէկը. եթէ ոչ հիմնադիրը: Թող տարօրինակ չհնչի այս յայտարարութիւնը, բայց երբ կարդում ես նրա առաջին երեք գրքերը՝ պատմուածքների ժողովածուները, ապա փաստում ես, որ այնտեղ գերազանցապէս ներկայացուած են այդ երկրի մարդիկ, նրանց կեանքը, նրանց խնդիրները, անշուշտ, դիտուած հայ մտատրականի աչքերով, գրուած հայերէն, սակայն նոյն սրտացաւութեամբ, ինչն անպայման պիտի ունենար այդ երկրի դժուարին ճակատագրով մտահոգուած հայրենասէր քաղաքացին»⁶⁷: Տարիներ անց աֆրիկեան թեմային Գուբելեանն անդրադարձել է նաեւ «Փտախտ» վէպում (2003), որի գործողութիւնները կատարում են աֆրիկեան մտացածին Կերա Լեմոն պետութիւնում, որը, բնականաբար, Սիեռա Լեոնէն է...

⁶⁶ Հայ գրականութեան մէջ աֆրիկեան թեման առկայ է նաեւ մէկ այլ լիբանանահայ գրողի՝ Հայկ Նազգաշեանի (1926–2016) երկերում: Եթովպիայում որոշ ժամանակ բնակուած հեղինակից Երեւանում լոյս է տեսել «Ափրիկէի անտառներու մէջ» որսորդական պատմուածքների ժողովածուն, որի առաջաբանը գրել է այդ ժանրի մեծ վարպետ Վախթանգ Անանեանը: Այս եւ աֆրիկեան թեմայով գրուած Նազգաշեանի միւս գործերը եզակի են հայ գրականութեան մէջ, քանի որ ներկայացնող միջավայրը ոչ թէ հայաստանեան բնաշխարհն է, այլ աֆրիկեան ջունգլիները եւ սավաննաները...

⁶⁷ **Ալեքսանդր Թովչեան**, Կոռուպցիայի կախարդական շրջանակը. Պօղոս Գուբելեանի ծննդեան 80-ամեակի եւ մասնատրապէս նրա «Փտախտ» վէպի առիթով, «Ազգ», 2.12.2016:

Ի դեպ, Սիեռա Լեոնէի հայերը եւս պարբերաբար առկայծում են Գուրբէլեանի գրուածքներում: «Դաշկենացի աղջիկը» պատմուածքում, տեղացի մի քանի հայերի հետ մէկտեղ յիշուած է «*Հայ ծագումով պրոֆեսոր մը, սովետական բժշկական խումբին պետը*»⁶⁸, որից կարելի է ենթադրել, որ 1960–1970-ական թթ. Սիեռա Լեոնէում աշխատել է խորհրդահայ մի բժիշկ: «Պանար Չորոյ» պատմուածքում յիշել է գիտապետ մի կնոջ, որի «*Խոշոր ծիծերուն արանքին կախուած էր գիտին պաշտօնական կնիքը, զոր Պէյրութի հայ վարպետի մը պատրաստել տուած էինք*»⁶⁹: «Մայիտակ ու սեւ պսակեր» պատմուածքում էլ յիշուած է «*Հայկական ճաշարան*»⁷⁰, ինչից կարելի է ենթադրել, որ Ֆրիաթունում եղել է հայկական ռեստորան, եւ այլն:

Սիեռա Լեոնէում են մեծացել Գուրբէլեանի եւ նրա լիբանանահայ կնոջ՝ Սոնայի երեք զաւակները, այդ թում՝ Հովիվուղի ճանաչուած տեսողական էֆեկտների մասնագետ Ռոզեր Գուրբէլեանը:

1983-ի տուեալով՝ Սիեռա Լեոնէում բնակուել է տաս հայ⁷¹:

⁶⁸ Պօղոս Գուրբէլեան, Անտառը մարդուն մէջ, Պէյրութ, 1978, էջ 21:

⁶⁹ Նոյն տեղում, էջ 80:

⁷⁰ Նոյն տեղում, էջ 91:

⁷¹ Տես Արմեն Բաղդախան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

ԳԼՈՒԽ Գ

ՀԱՅԵՐՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

Հայերի խմբային ներկայությունը Արեւելեան Աֆրիկայում վերաբերում է 20-րդ դարի առաջին քսանամեակին: Հատուկենտ հայեր յայտնուել են աւելի վաղ ժամանակներում:

ԲԵՆԻՆ

2010-ականներից Բենինի մայրաքաղաք Պորտո-Նովոյում ֆրանսահայ գործարարները բացել են «Երեւան» («Erevan») սուպերմարկետների ցանցը:

Հայ հօր եւ շոթլանդուիի մօր զաւակ, կանադահայ **Ջեյմս (Թոյոս) Թերջանեանը** միջազգային կազմակերպությունների աշխատող է եղել է Ջիրութիում, Սուդանում, Քենիայի Մալինդի բնակավայրում: 2019-ի տուեալով եղել է Բենինի Փենզարի ազգային պարկի տնօրէնը:

Լիբերիա

1960-ին Լիբերիայում բնակուել է մօտ 30 հայ, մեծ մասամբ՝ Լիբանանից: Այս երկիր ոտք դրած առաջին հայը եղել է դոկտոր **Ժիրայր Տեմիրճեանը** 1947-ին: Նա բարի անուն է ապահովել հայերի համար եւ մեծապէս օգնել հետագայում Լիբերիայում հաստատուող հայերին: Հայ արհեստատրները փնտրուած տարր են եղել բնիկների եւ լիբանանցի ներգաղթեալների համար: Գործարարներ Հայկ Արսլանեանը եւ **Ապունայեան** եղբայրներն իրենց տիկնանց հետ յաճախ են տօնական օրերին հայկական համադամներով հիւրասիրել երիտասարդ պանդուխտ հայրենակիցներին: **Թոյոս Ապունայեանը** ղեկավարել է «Ջեթո լայբիրիան քլոթինգ»

ընկերութիւնը¹:

Մօտ 1956-ին Լիբանանից Լիբերիա է տեղափոխուել արւամանդագործ **Արտաւազդ Տապպաղեանը** երբօր՝ **Չոհրապի** հետ: Արտաւազը դարձել է երկրի նախագահ Վիլեամ Թարմէնի անձնական ոսկերիչը: Նրան է պատկանել մայրաքաղաք Մոնրովիայի միակ գոհարավաճառատունը՝ «Արտաւազդ ոսկերչութիւն Տապպաղեան եղբայրները» Մեշլին փռոցում, որը զբաղուել է ոսկու, աղամանդի եւ քանկարժէք ժամացոյցների առետրով: Մասնակցել է միջազգային ցուցահանդէսների (Նիգերիա, Քենիա, Գանա, Կոնգո)՝ ներկայացնելով Լիբերիան: 1971-ին Լիբերիայի նախագահ Վիլեամ Թոլբերթին նուիրել է վերջինիս դիմանկարով բրոնզէ մեդալ: Այս իրողութեանը լայնօրէն անդրադարձել է լիբերիական մամուլը²: Հետագայում Տապպաղեան եղբայրները տեղափոխուել են Լոս Անջելես. Արտաւազը մահացել է 1984-ին, Չոհրապը՝ 1994-ին:

1960-ին Մեծ եղեռնի զոհերի յիշատակին նուիրուած սգահանդէս է կազմակերպուել Հայկ Արսլանեանի բնակարանում: Միջոցառումը բացել եւ փակել է **Արտաւազ Կորուստեանը՝** Եղեռնի որբերից, տանտէրը եղել է հիմնական բանախօսը, այնուհետեւ տեղի է ունեցել արտասանութիւն, երգեր եւ նուագ, որ կատարել են **Թորոս** եւ **Համբարձում Թաշոյեանները**, **Շաքէ Արսլանեանը**, **Աստղիկ Ապունայեանը**, **Պօղոս Գուրելեանը**, **Չոհրապ Տապպաղեանը**³: Ի դէպ, վերջինս դեպի վարել է տեղի հայերի կազմած բասկէտբօլի խումբը: Իսկ Թաշոյեան եղբայրները զբաղուել են Լիբերիա կենցաղային սառնարաններ ներմուծելով⁴:

1961-ի տուեալով՝ մայրաքաղաք Մոնրովիայում բնակուել է 35 հայ, որոնք ձեռնարկել են հայկական գրադարան հիմնելու

¹ Տե՛ս «International Commerce» vol. 69, no 1, 7.01.1963, էջ 46:

² Մոնրովիայի հայ գոհարավաճառին նուէրը հանրապետութեան նորընտիր նախագահին, «Այգ», 14.11.1971:

³ Տե՛ս Թղթակից, Լիպերիոյ հայերը, «Մասիս», 19.05.1960:

⁴ Տե՛ս «International Commerce» vol. 68, no 1, 18.06.1962, էջ 34:

գործը: Այդ նպատակով տեղացի հայերից Հայկ Արսլանեանը եւ Ապունայեան եղբայրները 200-ական դուլար նուիրատուքիւն են կատարել: Գրքերի ձեռքբերումներով զբաղուել է Թորոս Ապունայեանը⁵: Գրադարանը բացուել է 1962-ին⁶, սակայն այն զլխացաւանք է դարձել լիբերահայերի համար: Նախորդ զլխում յիշուած Սիեռա Լեոնէի հայ համայնքի նախագահ Օ. Ռայմոնը 1963-ին ԽՍՀՄ դեսպանատան աշխատակցի հետ գրոյցում յայտնել է, որ ինքը վերջերս այցելել է Լիբերիա եւ տեղեկացել, որ Լիբերիայի իշխանութիւնները ձերբակալել են տեղի հայերից մի քանիսին՝ կասկածելով նրանց պետական յեղաշրջում նախապատրաստելու մէջ: Ըստ Ռայմոնի՝ ձերբակալութեան պատճառը եղել է այն, որ Լիբերիայի հայերը գրքեր են ստացել Խորհրդային Հայաստանից: Նա խնդրել է դեսպանատան աշխատակցին, որպէսզի դիմեն Երեւան եւ խնդրեն ժամանակատրասպէս դադարեցնել գրքերի առաքումը Լիբերիա, մինչեւ որ երկրի ներքին քաղաքական վիճակը հանդարտուի⁷:

Լիբերիայի հետ է կապուած «սեւ» Աֆրիկայում հայերէն մամուլի հրատարակութեան միակ դէպքը: Ըստ հայ մամուլի մի մատենագիտութեան՝ 1977–1978 թթ. Մոնրովիայում լոյս է տեսել «Արձագանգ: Պարբերաբերք Լիպերիոյ հայոց միութեան» թերթը (ձեռագիր կամ մեքենագիր), որի խմբագրութեան մարմնի անդամներն են եղել Ռիքա Դաիթադայեանը, Վարուժան եւ Վահէ Հեքիմեանները⁸: Եգիպտոսից եւ Եթովպիայից գատ սա Աֆրիկա մայրցամաքում հայատառ մամուլի առկայութեան երրորդ դէպքն է, ինչը յուշում է, որ հայերը պիտի որ որոշակի թիւ կազմած լինէին՝ սեփական մամուլ ունենալու համար: Տաօք, թերթի ոչ մի համար չենք տեսել:

⁵ Լիպերիա. հայկական գրատուն մը, «Մուրհանդակ», 8.07.1961:

⁶ Տես Արմէն Բաղդաւեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 103: Նոյն այս փաստաթղթում լիբերիաբնակ հայերի թիւը նշուած է 30:

⁷ Տես ՀԱԱ, ֆ. 326, ց. 1, գ. 340, թ. 1:

⁸ Տես Հ. Տէր-Խաչատուրեան, Հայ մամուլի ցուցակ, Գլենդէլ, [1988], էջ 19:

Ներկայումս Լիբերիայում է ապրում բեյրութցի **Վաչե Տէմիրճեանը** (ծն. 1964):

Ջիբութի

1977-ին անկախութիւն ստացած այս երկիրը 1883–1977 թթ. եղել է ֆրանսիական գաղութ՝ յայտնի Ֆրանսիական Սոմալի (Սոմալիլանդ) անունով: Նոյնանուն Ջիբութի քաղաքում, հիմնուած 1888-ին, առաջին հայերը հաստատուել են համիդեան կոտորածներից յետոյ: Չբաղուել են գլխատրապէս վաճառականութեամբ: **Պոլսահայ Մաթիկ Գեորգոֆը** (Մատթէոս Գեորգեան, 1867–⁹) 1896-ից բնակուել է Ջիբութիում, ունեցել է խոշոր առևտրական ու մատակարարման տուն, որտեղ իրենց պակասն են համալրել նաւահանգիստ մտնող նաւերը⁹: Հետագայում Գեորգոֆը տեղափոխուել է Եթովպիա՝ դառնալով երկրի ծխախոտի մագնատը ու հայօջախի կարելոր դէմքերից: Նա, ինչպէս նաեւ ջիբութիարմակ առևտրական **Յովհաննէս Ասատուրեանը** 1920-ին մէկակէս օդանաւ են գնել եւ նուիրել Հայաստանի Հանրապետութեանը: Գեորգոֆի օդանաւն անուանուել է «Մարտիրոս»՝ հօր անունով, Ասատուրեանը՝ «Փայլուն», կնոջ անունով:

Տասնվեց տարի՝ 1904–1920 թթ., Ջիբութիում է ապրել եւ ստեղծագործել գրող **Ռուբէն Որբերեանը**, այստեղ գրել «Ովսսիս» ստեղծագործութիւնը, որտեղ էլ ամփոփել է Ջիբութիում մինչեւ 1920-ը հայկական ներկայութեան վերաբերեալ տեղեկութիւնները:

Առաջին աշխարհամարտին, երբ Ֆրանսիան հռչակել է ընդհանուր զօրակոչ, զինուորագրուել են նաեւ Ջիբութիի հայ երիտասարդները՝ **Ռուբէն Որբերեանը**, **Տրդատ Խոյեանը**, **Օննիկ Քիրճեանը**, **Հայկ Տամպուրճեանը**, **Հայկ Թուրմապաճեանը**, **Էդուարդ Սէֆերեանը**, **Մաքսուտ**

⁹ Տես Ռ. Աբրահամեան, Եթովպիա, «Հայ գաղթաշխարհի պատմութիւն (միջնադարից մինչեւ 1920 թ.), եռհատորեակ, հատոր 2, Ասիայի եւ Աֆրիկայի հայկական գաղութները, Երեսան, 2003, էջ 364:

Այնաճեանը, Օննիկ Պաշպազիրկանեանը, Պերճ Պապայեանը, Մուսուլուն եւ Չերքեզլին, որոնց մեծ մասը մեկնել է Երոպա¹⁰:

Ջիբուքի հովուապետական այց են կատարել Բաղդադի առաջնորդ Կեօմրիքճեանը՝ 1914-ին, Եթովպիայի հայոց հոգեւոր հովիտ Յովսէփ ծայրագոյն վարդապետ Կարապետեանը՝ 1926-ին, Գեորգ արքեպիսկոպոս Արսլանեանը՝ 1928–1929-ին, Եթովպիայի հայոց հոգեւոր հովիտ Յովհաննէս քահանայ Կէփիէրեանը՝ 1938-ին. վերջինս մկրտել է վեց երեխայի եւ կատարել է մէկ պսակ: Նա վկայել է, որ Ջիբուքիի հայ ընտանիքների թիւը 16 է¹¹: Վերջինը 1958-ի նոյեմբերին Ջիբուքիի հայերին այցելել է Դերենիկ եպիսկոպոս Փօլատեանը:

Երկար տարիներ այստեղ է բնակուել ՀԲԸՄ Մարտելի մասնաճիւղի հիմնադիրներից Յովհաննէս Սահաթեանի որդին՝ Վահէ Սահաթեանը: Մասնագիտութեամբ եղել է քիմիագէտ-ճարտարագէտ, գրադուել գորգի վաճառականութեամբ¹²: Առաջին աշխարհամարտի ժամանակ եղել է կամաւոր, ստացել սպայի կոչում, մասնակցել է Արարայի ճակատամարտին, պարգեւատրուել «Պատերազմի խաչ» եւ «Պատուոյ լեգէոնի» շքանշաններով: Ֆրանսիայից բացի՝ 16 այլ պետութիւնների կողմից եւս արժանացել է պատուանշանների: 1950–1955 թթ. Վահէ Սահաթեանը եղել է Սոմալիլանդի խորհրդարանի նախագահ, իսկ 1959-ին Ֆրանսիայի նախագահ Շառլ դը Գոլլը նրան նշանակել է ազգային ժողովի նախագահ¹³: Այնուհետեւ եղել օ Սոմալիլանդի օրէնսդրական ժողովի նախագահ: Ամուսնացած է եղել Սաթենիկ Սահաթեանի հետ, իրենց դուստր Սոնիան՝ ֆրանսիացու հետ:

¹⁰ Տես Դերենիկ Եպիսկոպոս, Ափրիկէի հայերը, «Չարթօնք», 10.05.1960:

¹¹ Անդ:

¹² Տես Գաղութ գաղութ, «Արաքս», 19.12.1959:

¹³ Վահէ Սահաթեան ֆրանսական Սոմալիի ազգ. ժողովին նախագահ, «Արաքս», 17.10.1959:

1958-ին Դերենիկ եպիկոպոս Փոլատեանը Ջիբութիի հայերի թիւը նշել է 40՝ տալով բոլորի անունները: Նրանք եղել են արհեստաւորներ, վաճառականներ եւ պաշտօնեաներ: Փոլատեանի վկայութեամբ՝ հայերը ցանկացել են տեղափոխուել այլ երկրներ, քանի որ «Արդէն սեւերը սկսած են ներդրօքին տալ մեզի»: Մեծ հաւաքոյթ են կազմակերպել Նորիստ Նորիստեանի տանը, որի ընթացքում Դերենիկ եպիսկոպոսը ցուցադրել է իր մօտ եղած հայաստանեան շարժանկարները: Նաեւ հայկական պատարագ է մատուցել տեղի յունական եկեղեցում¹⁴:

Ըստ Սոմալիլենդից Հայաստան այցելած առեւտրական Յովհաննէս Վարժապետեանի՝ 1960-ականների սկզբին Ջիբութիում ապրել է 15 հայ, որոնք բոլորն էլ զբաղուել են առեւտրով: Կազմակերպութիւն չունեն, տարբեր ընտանիքների հայերէն թերթեր են ստացել Եգիպտոսից եւ Ֆրանսիայից, իսկ Եթովպիայի հայոց եկեղեցու միջոցով ստացել են միայն «Էջմիածին» ամսագիրը¹⁵:

1983 թ. վիճակագրութեան համաձայն՝ Ջիբութիում ապրել է 50, 1984-ին՝ 100 հայ¹⁶: Դրանից յետոյ այլ տեղեկութիւններ մեզ յայտնի չեն:

Ժամանակ առ ժամանակ Սոմալիում պաշտօնավարել են տարբեր երկրների հայեր: Այսպէս, հայաստանցի Դաւիթ Յակոբեանը 2013–2017 թթ. եղել է ՄԱԿ-ի Չարգացման գրասենեակի Սոմալիի փոխնախագահը, իսկ կանադահայեր Անի Դէմիրճեանը եւ Յասմիկ Եղիեանը նոյնպէս աշխատել են ՄԱԿ-ի Սոմալիի գրասենեակում:

¹⁴ Դերենիկ եպիկոպոս, Ափրիկէի հայերը, «Չարքօնք», 11.05.1960:

¹⁵ Տես Արմէն Բարալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 103:

¹⁶ Տես ՀԱԱ, ֆ. 875, ց. 13, գ. 13, ք. 4-5:

Սուղան

Սուղան եկող հայ գաղթականության հոսանքը մեծ մասամբ անցել է Եգիպտոսով, ուստի եւ տեղի հայութիւնը համարուել է եգիպտահայութեան մի ճիւղը¹⁷: Թերեւս այդ պատճառով սոյն աշխատութեան մէջ ընդգրկուած երկրներից ամենից շատ ուսումնասիրուած է սուղանահայ համայնքի պատմութիւնը¹⁸: Մասնատրապէս պէտք է նշել Դերենիկ եպիսկոպոս Փոլատեանի ընդարձակ ուսումնասիրութիւնը, որը 1959-ին Սուղան այցից յետոյ մանրամասն տեղեկութիւններ է յայտնել համայնքի մասին՝ նիւթ հանդիսանալով սուղանահայութեան մասին հետագայ բոլոր գրութիւնների համար¹⁹:

Սոյն գլխում ի մի կրերենք ոչ միայն այդ թեմային նուիրուած յօդուածներում առկայ, այլ հիմնականում ժամանակի մամուլից եւ սուղանահայերի ժառանգներից քաղուած

¹⁷ Տե՛ս **Ա. Գ. Աբրահամեան**, Համառոտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, էջ 78:

¹⁸ Տե՛ս **Ս. Գաապարեան**. Սփիւրքահայ գաղթօջախներն այսօր, էջ 176: **Ա. Գ. Աբրահամեան**, Համառոտ ուրուագիծ հայ գաղթավայրերի պատմութեան, հ. 2, Երեւան, 1967, էջ 77-82: **Ռ. Ա. Աբրահամեան**. Սուղան, Հայ ժողովրդի պատմութիւն, հատոր 6, Երեւան, 1981, էջ 734: **В. Гусаров**, Зарисовки из жизни армянской общины в Хартуме (середина 70-х гг.), «Дiasпоры: независимый журнал», Москва, 2000, но. 1-2, էջ 167-172: **Արամ Սարգսեան**, Սուղան, «Հայ Սփիւրք հանրագիտարան», էջ 536-538: **Արմանիկ Երկանյան**, Армянский мир Александра Еркяняна. Сборник статей. Москва, 2023, էջ 305-311: 2018-ին Բէյրութի Հայկազեան համալսարանի Հայկական սփիւրքի ուսումնասիրութեան կենտրոնը Կահիրէում եւ Բէյրութում կազմակերպել է գիտաժողով՝ նուիրուած Եգիպտոսի, Սուղանի եւ Եթովպիայի հայերին, որի զեկուցումներն ամփոփող երկհատոր ժողովածուի («Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիայի հայերը – Գիտաժողովի նիւթեր (12-13 ապրիլ եւ 29-30 մայիս 2018)», Պէյրութ, 2022-2023) հայերէն, անգլերէն, ֆրանսերէն եւ արաբերէն նիւթերն առաւել ամբողջական են արտացոլում համայնքի պատմութիւնը:

¹⁹ Տե՛ս **Դերենիկ եպիսկոպոս Փոլատեան**, Սուղանի հայ գաղութը, «Պայքար», 20.07-9.08.1960:

տեղեկատուփունը:

Ըստ «Սուդանի պատմական բառարանի»՝ այս երկրի տարածքում, ատլի ստոյգ՝ Նուբիայում յայտնուած առաջին հայը եղել է 12–13-րդ դարերի մատենագիր, Ալեքսանդրիայի դպրոցական եկեղեցու քահանայ **Աբու Սալիհ (Աբուսահ)** **Ալ Արմանին** (° – 1208)²⁰: Նա հասել է մինչև ներկայ Սուդանի հիսիսային քաղաքը՝ Միրովի: Գրել է Եգիպտոսի եւ Նուբիայի եկեղեցիների եւ վանքերի պատմութիւնը (1170–1208), որտեղ արժէքատր տեղեկութիւններ է հաղորդել արաբների, լիբիացիների, նուբիացիների, նաեւ հայերի մասին: Աբու Սալիհի երկը թարգմանուել է հայերէն՝ «Պատմութիւն եկեղեցեաց եւ վանորեաց Եգիպտոսի» (Վենետիկ, 1895) եւ անգլերէն (1895):

Սուդանի տարածքում յայտնուած առաջին հայերը եղել են եգիպտահայ առետորականներ, որոնք արդէն 17-րդ դարում այցելել են Սեննարի սուլթանութիւն (14–19-րդ դարերում գոյատեւած ասատատիրական պետութիւն ներկայիս Սուդանի տարածքում²¹): 18-րդ դարում Սուդանում դիւանագիտական զործունէութեան մէջ ներգրաւուած են եղել **Եղիա Ենուլքեանը** եւ **Յովհաննէս եպիսկոպոսը**²²:

Հայկական ներկայութիւնը մեծացել է օսմանա-եգիպտական ժամանակաշրջանում (1820–1881)՝ ի հաշիւ Արաբկիրից եւ Ակնից եկած գաղթականների: Նրանք բնակութիւն են հաստատել Խարթումում, զբաղուել առետորով եւ արհեստագործութեամբ, ոմանք զնել են հողամասեր ու զբաղուել հողագործութեամբ: Եղել են նաեւ մաքսատրներ եւ ֆինանսական վարչարարներ, որոնք ժամանակաւոր կայք են հաստատել Սուդանում:

Եգիպտահայ պետական գործիչներից ոմանք պաշտօնավարել են Սուդանում: «Սուդանի կենսագրական

²⁰ Տե՛ս Robert S. Kramer, Richard Andrew Lobban, Carolyn Fluehr-Lobban, Historical Dictionary of the Sudan, 2013, էջ 70:

²¹ Տե՛ս անդ:

²² Տե՛ս Աբրահմ Սարգսեան, Սուդան, էջ 536:

բառարանում» կան մի քանի հայերի անուններ, որոնք եղել են օսմանեան ժամանակաշրջանի պաշտօնեաներ: Եգիպտոսի վարչապետ Նուբար փաշա Նուբարեանի եղբայրը՝ Առաքել բէյ Նուպարը (1826, Չմիռնիւս – 1858, Սուդան), Եգիպտոսում գրադէցրել է զանազան կարեւոր պաշտօններ, եղել Խըլիվ Իբրահիմ փաշայի անձնական քարտուղարը: 1856 թուականին նշանակուել է հարաւային Սուդանի նորակազմ Խարթումի, Սեննարի եւ Ֆեզ Օղլու գաւառների կուսակալ, 1857–1858 թթ.՝ Սուդանի ընդհանուր կառավարիչ: Եղել է առաջին քրիստոնէայ պաշտօնեան, որ ուղարկուել է Սուդան. պաշտօնեաներն առհասարակ մերժել են Սուդան մեկնել նկատելով, որ այնտեղ ուղարկուելն արքայ է նշանակել: Եգիպտոսի վարչապետ Մուհամմեդ Ալին, մերժում ստանալով բոլոր մահմեդական պաշտօնեաներից՝ կուսակալութեան պաշտօնն առաջարկել է Առաքելին, որն անձնուիրաբար մեկնել է: Մուհամմեդ Ալին գնահատել է Առաքել բէյի արժանիքը եւ վերահաստատել նրան իր պաշտօնում: Առաքելն այնքան արդարութեամբ է կառավարել երկիրը, որ Սուդանի ընդհանուր կառավարիչների մէջ յիշատակուել է Արդարասէր տիտղոսով²³: Նպաստել է Խարթումի սանիտարական վիճակի բարելամանը²⁴, սակայն ինքն էլ երկրի աննպաստ կլիմայի պատճառով մահացել է մալարիայից 32 տարեկանում²⁵:

Մէկ այլ եգիպտահայ ականաւոր պետական գործիչ՝ Պօղոս Նուպարը (1851–1930), որ 1878–1879 եւ 1891–1898 թթ. եղել է Եգիպտոսի պետական երկաթուղային ցանցի գլխաւոր տնօրէնը, կազմել եւ յաջողութեամբ իրագործել է Սուդանի ջրամբարտակի ջրաբաշխական համակարգի բարեփոխման

²³ Տե՛ս **Յովհաննէս Սէքւնեան**, Սուտանահայ գաղութը, «Անճնուն տարեցոյցը», Կ.Պոլիս, 1913, էջ 139:

²⁴ Տե՛ս **Richard Hill**, A Biographical Dictionary of the Sudan, 1967, էջ 58:

²⁵ Նրա մասին տե՛ս Առաքել Փաշա, «Մասեաց աղանի», 1858, թիւ Ժ, էջ 238:

դժուարին աշխատանքը²⁶։

Ծնունդով պոլսահայ Արթին (**Յարութին**) **Առաքելեանը** (Առաքիլեան, 1824–1889) 1854-ից սալթել է նախ Խարթումում, ապա Ասարում։ Գեղարեֆում ունեցել է ազարակներ։ 1859-ին Սուդան եւ Եթովպիա է ներմուծել օսմանեան ծխախոտի մշակոյթը, ինչպէս նաեւ՝ համեմունք եւ մրգեղէն։ Ամուսնացել է ղպտուհու հետ, տիրել մեծ հարստութեան, սակայն 1881–1885 թթ. երկրում սկիզբ առած մահողիս անուամբ քաղաքական-կրօնական շարժման հետեւանքով ողջ ունեցուածքը կողոպտուել է, եւ Առաքելեանը մահացել է Գեղարեֆում, բշուառութեան մէջ։ Նոյն շարժման զոհ են դարձել նրա գործակիցներ **Աետիսը** եւ **Յակօբը**։ Առաքելեանն ունեցել է վեց զաւակ, որոնցից **Եուսուֆ Առաքելեանը** (ծն. 1880) ողջ է եղել տակաւին 1960-ին։ Վերջինս նոյնպէս ամուսնացած է եղել ղպտուհու հետ, ունեցել երկու զաւակ, որոնք բնակուել են Գեղարեֆում։ Նրանցից **Սարգիս Առաքելեանը**, թէւ քառորդ հայկական արեանը, 1947-ին ցանկացել է հայրենադարձուել Խորհրդային Հայաստան, ինչը չի իրականացել²⁷։

Մահողիս շարժման պատճառով հայերի քիւղ Սուդանում նուազել է, երկրում մնացած սակասաթիւ հայերը կենտրոնացել են Օմդուրմանի Մասալմա շրջանում, եղել են հիմնականում ոսկերիչներ եւ ժամագործներ։ Մակայն 1895–1896 թթ. համիդեան ջարդերի հետեւանքով Սուդանում եւս ապաստանել են հայեր։ Համայնքի հիմնադրման թուական համարուել է 1897-ը՝ կազմուած Արաքիլիից, Խարբերդից, Թոքաթից եւ Արեւմտեան Հայաստանի մի քանի այլ բնակավայրերից

²⁶ Տե՛ս **Միքայէ Մարտիրոսեան**, Ազգային մեծ գործիչը եւ բարերարը. Պօղոս Նուբար փաշա, «Պատմաբանասիրական հանդէս», 2022, ք. 1, էջ 4։

²⁷ Տե՛ս **Richard Hill**, A Biographical Dictionary of the Sudan, էջ 61։ Տե՛ս նաեւ **Դերենիկ Եպիսկոպոս Փղատեան**, Սուդանի հայ գաղութը, «Պայքար», 20.07.1960։

արտագաղթած հայերից²⁸։ Նրանք եղել են ինքնաբաւ առեւտրականներ եւ միւս փոքրամասնութիւնների պէս ներգրաւուած են եղել Սուդանի «Երեք քաղաք» կոչուող առեւտրական կենտրոններում (Խարթում, հիւսիսային Խարթում եւ Օմդուրման)²⁹։

1898-ին անգլո-եգիպտական նուաճման ժամանակ որոշ եգիպտաբնակ հայեր տերացի յոյների, սիրիացիների եւ հրեաների հետ միասին մեկնել են Սուդան, ոճանք նոյնիսկ միացել են ներխուժող գորքերին։ Բանակի հետ եւ անմիջապէս յետոյ մօտ 30 հայ, հիմնականում արաբկիրցիներ, հաստատուել են Օմդուրմանում եւ զբաղուել առեւտրով³⁰, մինչդէռ երբ բրիտանացիները նոր են մտել Օմդուրման, քաղաքում եղել է ընդամենը երեք հայ։ Նրանցից էր Սուդանի առաջին հայ ժամագործ (սաւաթնի) **Արթինը**, որի խանութը եղել է Օմդուրմանում բնակուող օտարազգիների, ժամադրավայր։ 1899-ին բրիտանական բանակի հետ Ռադ Մեդանի քաղաքն է եկել մէկ այլ ժամագործ՝ **Յակոբ Ղազարեանը**, իսկ 1901-ին Արաբկիրից Սուդան է եկել ժամագործ **Սեդրակ Ջորջը**, որին պատկանել է Սուդան ժաւացոյցի ներկրման մենաշնորհը։ Հետագայում նա հայրենակիցներին է կտակել իր մի տունը, որի եկամուտը յատկացուել է Խարթումի հայկական վարժարանին³¹։ Ասուան քաղաքում բնակուել է **Սարգիս** անունով մի հայ, որն առեւտրական սերտ կապեր է ունեցել Սուդանի հետ եւ մեծապէս օգնել 1899-ից յետոյ Սուդան հաստատուող հայերին³²։

Սուդանը, 1898-ից դառնալով անգլիական գաղութ, խնդիր է

²⁸ Տես **Արմէն Բարալեան**, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 105։

²⁹ Տես **Յովհաննէս Մեքսենեան**, Սուտանահայ գաղութը, անդ։

³⁰ Տես նաեւ **Դերենիկ եպիսկոպոս Փղատեան**, Սուդանի հայ գաղութը, անդ։

³¹ Տես **Դերենիկ եպիսկոպոս Փղատեան**, Սուդանի հայ գաղութը, 22.07.1960։

³² Տես անդ։

ունեցել սպիտակամորթներով ղեկավարելու երկիրը, այդ պատճառով սպիտակամորթ վերաբնակներին տուել են տնտեսական առաելութիւններ՝ ինքնաբաւ դառնալու նպատակով: Անգլո-քրիտանական իշխանութեան հաստատումից յետոյ երկիրը քաղաքականապէս դարձել է ապահով, տնտեսութիւնը սկսել է արագ զարգանալ, որի պատճառով հայերի թիւն աւելացել է: Մասնատրապէս հայ արհեստատրներ եւ վարպետներ են հրաւիրուել անգլիական բանակի համար հաղորդակցութեան ուղիներ եւ ենթակառուցումներ ստեղծելու նպատակով, եւ արաբերէնին տիրապետող հայերը իւրօրինակ օղակ են հանդիսացել տեղացի բանուորների եւ անգլիացի մասնագէտների միջեւ³³: Այս ժամանակաշրջանում հայերը (առաւելապէս՝ ամուրիներ) մտաւղիւ չեն եղել մշտապէս հաստատուել Սուդանում, այլ իրենց նիւթական վիճակը բարելաւելուց յետոյ վերադառնալ հայրենիք, սակայն Առաջին աշխարհամարտն ի դերել է հանել այդ նպատակները:

Սուդանում հայերը հիմնականում յարմարաւել են զգացել դպտիների եւ այլ քրիստոնէաների շրջապատում, թէւ մահմեդականների եւ այլ կրօնի պատկանողների հետ եւս խնդիրներ չեն ունեցել: Առհասարակ, սուդանաբնակ հայերը մշտապէս վայելել են թէ՛ տեղացիների, թէ՛ քրիտանական կառավարութեան վստահութիւնը: Բրիտանական իշխանութիւնը գուպեստով է խօսել հայոց մասին, տարածուած կարծիքի համաձայն՝ որել լաւ բան ունենալու համար խորհուրդ են տուել դիմել հայ արհեստատրին: Իսկ Սուդանի մտատրականներից մէկը Խարթումից գրած իր մի թրթակցութեան մէջ նշել է, որ տեղացի ժողովուրդը բարեացական է հայերի նկատմամբ, կառավարութիւնն այնքան վստահ է, որ երբեմն պետական պատասխանատու պաշօններ է վստահում նրանց³⁴: Գեգիրա նահանգի

³³ Տե՛ս Արամ Սարգսեան, Սուդան, էջ 536:

³⁴ Տե՛ս Գերենիկ Եպիսկոպոս Փղառեան, Սուդանի հայ գաղութը, 20.07.1960:

ընդհանուր կառավարիչը հայերին բնութագրել է որպես «Չարքաշ, ձեռներեց, ստեղծագործ ժողովուրդ»³⁵: Իսկ սուղանցի զօրավար Մուսեղղիինը մի առիթով ասել է. «Հայերը մեր եղբայրներն են... ինչ որ կ'ընենք՝ մեր պարտականությունը միայն կատարած կ'ըլլանք»³⁶:

Սուղանում հայերը (սկզբնական շրջանում՝ արաբկիրցիներ եւ կեսարացիներ) համայնքային կեանքով սկսել են ապրել 1902 թուականից³⁷: 1905 թուականին սուղանաբնակ հայերի տնտեսական դրուսինն այնքան է բարելաւուել, որ նրանք մինչեւ անգամ զբաղուել են բարեգործութեամբ՝ ձեռք մեկնելով Այսրկովկասում հայ-թաթարական բախումներից տուժածներին՝ Թիֆլիսի «Մուրճ» ամսագրի միջոցով նրանց ուղարկելով 41 անգլիական ոսկի: Հետագայ տարիներին էլ Սուղանի հայերը նիւթական օժանդակութիւններ են ուղարկել Վանի եւ Մուշի կարօտեսւյներին, Բաղէշի երկրաշարժից եւ Աղանայի կոտորածներից տուժածներին, Կ.Պոլսի հայոց պատրիարքարանին, Ազգանուէր հայուիեաց ընկերութեանը, Ժնեւի հայ Յեղափոխական Դաշնակցութեան բիւրոյին³⁸:

1908 թուականին Խարթումում եւ Օմդուրմանում բնակուել է 123 հայ: 1909-ի Աղանայի կոտորածների, Մեծ եղեռնի եւ Չմիտնիայի ու Կիլիկիայի դատարկումի հետեւանքով նորանոր հայեր հասել են Աֆրիկայի այս շրջանը՝ թարմ արիւն մատակարարելով տեղի հայութեանը, ուստիեւ 1912-ին նրանց թիւը հասել է 200-ի³⁹: Մեծամասնութիւնը եղել է արաբկիրցի,

³⁵ Անդ, 6.08.1960:

³⁶ Դերենիկ եպիսկոպոս Փլաւոտեան, Սուղանի հայ գաղութը, 31.07.1960:

³⁷ Տե՛ս Չաւէն վարդապետ Արքումանեան, Սուղանահայ գաղութը այսօր, «Էջմիածին», Էջմիածին, 1959, ք. Բ, էջ 41:

³⁸ Տե՛ս Յովհաննէս Մէքսենեան, Սուտանահայ գաղութը, էջ 143:

³⁹ 1913-ին հայ մամուլում Հայորդի ծածկանունով հեղինակը հրատարակել է «Հայութիւնը Սուտանի մէջ» վերնագրուած թղթակցութիւնը (տե՛ս «Բիւզանդիոն», 1.05.1913), սակայն խօսքը Եգիպտոսին մաս կազմող Ասիոյ բնակավայրին է վերաբերում:

այնքապցի եւ ակնցի: Ըստ այս տեղեկութիւնները հայ մամուլում հրատարակած խարթումաբնակ **Յովհաննէս Սէքսենեանի**՝ «Հայր բաւական կարեւոր եւ յարգի տարր մը եղած է միշտ այս երկրին մէջ, հաստատ դիրքով եւ որոշ նկարագիրով: Հայեր հոս ուրիշ ամէն ասպարէզէ աւելի՝ առեւտրական ասպարէզին մէջ մուտք գործած են ու յաջողած, կրնանք ըսել, առանց վերապահութեան: Հայոց նիւթական հաստատ վիճակը կրնայ նոյն իսկ նախանձեղի նկատուիլ օտարներէ: Կան վաճառականներ, որ արդէն աչքառու հարստութեանց տէր դարձած են, եւ հայ առեւտրական մակարդակը միշտ մաքուր եւ բարձր նկատուած է: ...Սուտանի հայութեան բարոյական մակարդակն էս միշտ բարձր պահուած է: Թէ՛ կառավարական եւ թէ՛ ժողովրդային շրջանակներու մէջ միշտ վստահելի եւ նկարագրի տէր նկատուած են Հայերը: Հետաքրքրական էր մեզ քննել ու իմանալ, որ ամբողջ գաղթականութեան շրջանին մէկ երկու Հայեր միայն յանցապարտութիւն կրած են, այն ալ անկարեւոր տեսակէն»⁴⁰: Սէքսենեանը թուարկել է սուղանաբնակ աչքի ընկնող առեւտրականների անունները. Խարթումում՝ Մովսէս եւ Յովսէփ Արսլանեաններ (թրքաթցի), Սուքիաս եւ Մահակ Վանեաններ, Փայլակ Տէրունեան, Քէչեան եղբայրներ (ակնցի), Սեդրակ Չորջ (արաբկիցի), Յակոբ Ստեփանեան (մարաշցի), Օմդուրմանում՝ Քիրքճեան եղբայրներ (արաբկիրցի), Կիւլպէնկ Խանճեան, Ճ. Սօլաքեան (գաղաթիացի), Սարգիս Իզմիրլեան (կեսարացի), Տ. Չոհրապեան, Ըողորքում՝ Արգարեան եղբայրներ, Գեղարեֆում՝ Յովհաննէս Արսլանեան (թրքաթցի), Սինգալում՝ Յակոբ Արսլանեան (թրքաթցի): Այս վաճառականներից շատերն առեւտրական տներ են ունեցել երկրի այլ քաղաքներում եւս: Նշուածներին յաւելնք նաեւ խարթումաբնակ գործարար Միհրան Մուրադեանի անունը: Նա եղբայրների հետ Երուսալում բացել է «Գեորգ Մուրադեան» առեւտրի տունը,

⁴⁰ Տե՛ս Յովհաննէս Սէքսենեան, Սուտանահայ գաղութը, էջ 140-142:

որի մասնաճիւղ է հիմնել 1908-ին, Եգիպտոսում, ապա տեղափոխուել է Սուդան, որից հետո վերջնականապէս հաստատուել է Եթովպիայում⁴¹:

ՀԲԸՄ Կահիրէի մասնաճիւղը մինչեւ 1910 թուականը Խարթումում եւ Սուդանի տարբեր վայրերում ունեցել է 32 անդամ: 1911-ի յունուարի 1-ին հիմնուել է ՀԲԸՄ Խարթումի մասնաճիւղը հետեւեալ կազմով՝ **Գեորգ Ճերճեան**՝ ատենաապետ, **Յովհաննէս Սեբէնեան**՝ ատենադպիր, **Սեդրակ Քիրքճեան**՝ գանձապահ: Նոյն տարուայ վերջին մասնաճիւղն ունեցել է նոր անդամներ ի դէմս **Սարգիս Իզմիրլեանի** (գանձապահ), **Փայլակ Տերունեանի** եւ **Կարապետ Փափագեանի** (խորհրդականներ), ապա նոյն պաշտօնները մինչեւ 1925-ը վարել են **Գրիգոր Գրիգորեանը**, **Նազարէթ Խանճեանը**, **Տիգրան Հանընլեանը**, **Մինաս Պերպերեանը**, **Չենոր Խաչիկեանը**, **Յարութիւն Փափագեանը**, **Գեորգ Իշխանեանը** եւ այլք: «Մուտանի գաղութը, ընդհանրապէս կազմուած երիտասարդ եւ ամուրի տարրերէ, որ Նեղոսն ի վեր յառաջացած են իրենց համար նոր բախտ մը փնտռելու քաղաքակրթութեան առջեւ բացուած այդ ընդարձակ երկրին մէջ, միշտ ամուր պահած է իր կապը հայ զանգուածին հետ, եւ իր անդամները Միութեան հաստատարիւմ բարեկամներ եղած են առաջին օրէն»: 1912–1923 թթ. Խարթումի մասնաճիւղը վերակազմուել է վեց անգամ: Սուդանի մասնաճիւղը մասնակցել է ՀԲԸՄ բոլոր հանգանակութիւններին՝ Այսրկովկասի հայ գաղթականների օգնութեան, Ազգային հիմնադրամի, Շիրակի երկրաշարժի աղէտեալների, ՀԲԸՄ կրթական եւ որբախնամ հիմնադրամներին: Ունեցել է մինչեւ 50 անդամ: 1925-ին ՀԲԸՄ Խարթումի մասնաճիւղը կազմալուծուել է, վերակազմատրուել է 1930-ին: Խարթումից բացի Բարեգործականը մասնաճիւղ է ունեցել Օմդուրմանում, որը գործել է կարճ ժամանակ⁴²:

⁴¹ Տե՛ս **Boris Adjemian**, *La Fanfare du Négus*, էջ 241:

⁴² Տե՛ս Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան. արձաթեայ յոբելեան: 1906–1931, հ. Ա, Բարիզ, 1935, էջ 80-81:

Որոշ ժամանակ գործել է նաև Սուդանի Հայ Կարմիր Խաչը, որի անդամուհիները 1918-ին 248 եգիպտական ոսկի են հանգանակել ի նպաստ ՀԲԸՄ կրթական եւ որբախնամ հիմնադրամների:

1913-ին, երբ ՀԲԸՄ նախագահ Պօղոս Նուպարն աւարտել է Օսմանեան կայսրութիւնում հայկական բարեփոխումների մասին բանակցութիւնները, ՀԲԸՄ Խարթումի մասնաճիղը քաղաքի Թաղապետարանի պարտէզում կազմակերպել է մեծ դաշտահանդէս՝ մասնակցութեամբ երկսեռ երգչախմբի: Ներկայ է եղել տեղի ողջ հայութիւնը՝ 100 հոգի: Իսկ 1918-ին ՀԲԸՄ Խարթումի մասնաճիղը կազմակերպել է կինոցուցադրութիւն, ապա նաև՝ համերգ, որոնց հասոյթը տրամադրուել է ազգային զանազան կարիքների⁴³:

Հայերի ցրուածութեան պատճառով հնարաւոր չի եղել Սուդանում ստեղծել կայուն համայնքային կեանք եւ կազմակերպել հայութեանը տեղական իշխանութիւններին ներկայացնող մի մարմին, քանի որ, ինչպէս նշուեց, հայերի մեծ մասն ապրել է իրենց նախկին բնակավայրերը վերադառնալու յոյսով:

Անգլիական գաղութներում ընդունուած է եղել օտար համայնքների կողմից ունենալ լիազօր ներկայացուցիչներ կառավարութիւնում: Սակայն Սուդանի հայերը, լինելով երկու բանակի բաժանուած, ներքին անհասկացողութեան պատճառով մինչեւ 1917-ը չեն ունեցել իրենց ներկայացուցիչը եւ միշտ երկու ցանկով են ներկայացել կառավարութիւնը: Այս հանգամանքը զայրացրել է անգլիացիներին, որոնք որոշել են, որ հայերին կներկայացնի Սուդանում սիրիացիների ներկայացուցիչը: 1912-ին Եգիպտոսի կրթական նախարարութեան կողմից Սուդան է ժամանել հայազգի պետական գործիչ Եագոսպ Արթին փաշան, որը

Տես նաև **Դերենիկ Եպիսկոպոս Փղատեան**, Սուդանի հայ գաղութը, անդ, 28.07.1960:

⁴³ Ոսկեմատեան Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, էջ 81:

հիրընկալուելով երկրի ընդհանուր կառավարիչ Ուինգեյթին՝
 հետաքրքրուել է տեղի հայերով ու տեղեկացել, որ նրանք
 տեղական կազմակերպութիւն եւ ներկայացուցիչ չունեն
 իշխանութիւններում: Ուինգեյթն այդ հարցը կարգադրելու
 նպատակով թելադրել է կապուել Սուդանի կառավարութիւնում
 իրաւաբան աշխատող հայազգի դատաւոր **Արգարիտսի** հետ:
 Սակայն այդ ժամանակահատուածում գործը չի
 կազմակերպուել. միայն 1917-ին սուդանահայութիւնը
 միատրուել է եւ ընտրել հինգ հոգուց բաղկացած մարմին
 հետեւեալ կազմով՝ **Նազարէք Քիրքճեան** (ատենապետ),
 Սարգիս Իզմիրլեան (փոխատենապետ), Գրիգոր Գրիգորեան
 (գանձապահ), **Գրիգոր Սալըրեան** (խորհրդական): Մի քանի
 ամսից ատենապետութիւնը յանձն է առել Սարգիս
 Իզմիրլեանը, որը 32 տարի ձեռնհասութեամբ վարել է
 պաշտօնը⁴⁴: 1917–1918-ին պատրաստուել է Սուդանահայ
 գաղութի ընդհանուր կանոնադրութիւնը, որը ներկայացուել է
 Սուդանի կառավարութեանը եւ վաւերացուել նրա կողմից:
 (Ճիշտ նոյն ժամանակաշրջանում համանման
 կանոնադրութիւն են վաւերացրել Հարբիւնի (Չինաստան) եւ
 Շաւկաշի (Ինդոնեզիա) հայերը): Ըստ այս կանոնադրութեան՝
 սուդանահայութիւնը ճանաչուել է ոչ թէ որպէս կրօնական, այլ
 քաղաքացիական համայնք, ուստի եւ համայնքի վարչութեան
 ատենապետը հանդիսացել է համայնքի ներկայացուցիչը
 կառավարութիւնում: Ուշագրաւ է, որ բացի սոյն
 կանոնադրութիւնից՝ համայնքը դեկավարուել է նաեւ Մխիթար
 Գոշի դատաստանագրքով⁴⁵: Այդ գործին նպաստել է Սարգիս
 Իզմիրլեանը, որի «*ջանքերով եւ հեռատեսութեամբ դատարանը
 ընդունած է ժառանգական ինդիքներու մէջ հայկական
 օրէնքները, հիմնուած՝ Մխիթար Գոշի Դատաստանագիրքի
 ժառանգական օրէնքներուն վրայ: Այս կարգադրութիւնը
 ունեցած է բախտորոշ կշիռ, հայկական ժառանգական*

⁴⁴ Տե՛ս **Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեան**, Սուդանի հայ գաղութը, անդ,
 27.07.1960:

⁴⁵ Տե՛ս անդ, 28.07.1960:

դատերուն մէջ»⁴⁶:

Ըստ մի թղթակցութեան՝ 1919-ին Սուդանում հայ որբերին ի նպաստ հանգանակութիւններով են՝ զբաղուել տիկնայք **Քիրքճեանը** եւ **Սօլաքեանը**՝ հաւաքելով 360 եգիպտական ոսկի, 1920-ին՝ տիկնայք **Իզմիրլեանը** եւ **Գրիգորեանը**՝ 100 եգիպտական ոսկի: 1920-ին ութ որբերի խնամքն են յանձն առել առանձին անհատներ: **Օ. Պ. Արամը** Ս. Ծննդեան տօնին իր տանն է հաւաքել հայ երիտասարդներին՝ հաւաքոյթը վերածելով հայոց անկախութեան տօնախմբութեան: Թղթակցութեան հեղինակ Յովհաննէս Սէքսէնեանը յիշել է, որ եօթ տարի առաջ «Ամենուն տարեցոյցում» սուդանահայ համայնքի մասին հրատարակած իր յօդուածն ամարտել է այն մտքով, որ երկրի տարբեր պայմանները հաշուի առնելով՝ հեռանկարային չէ հայ համայնքի ընդլայնումը: Եւ իսկապէս, հայերի թուաքանակի աճ չի՛ եղել»⁴⁷:

1920-ի օգոստոսին Սուդանի մօտ 70 հայերը տեղի-յոյների հետ միասին տօնել են Սեւրի դաշնագրի կնքումը, իսկ սեպտեմբերի 26-ին Գրիգոր Սալլրեանի տան պարտէզում տեղի է ունեցել համայնքի առաջին խորհրդակցական ժողովը՝ Նազարէթ Քիրքճեանի նախագահութեամբ, որի ընթացքում հանգանակութիւն է կատարուել յօգուտ Հայաստանի Հանրապետութեան: Սուդանահայերը մինչ այդ ժամանակը ազգային զանազան հանգանակութիւնների պատճառով առասպելական հարուստ համայնքի տպատրութիւն են թողել, մինչդեռ «*Գտնուածը հազիւ մէկ երկու՝ մեծահարուստ, իսկ մնացեալները՝ միջակ ու պատուաւոր դիրքի տէր ազգայիններ, բայց իրապէս ազգասէր*»⁴⁸: Նազարէթ Քիրքճեանը՝ տեղի հայ

⁴⁶ Տիգրան Յարութիւնեան, Հեղինակի մասին, Սարգիս Իզմիրլեան, Դատումներ մեր հարիրամեայ յեղափոխութեան մասին (Անձնական յուշերուս ընդմէջէն), Պէյրութ, 1962, էջ 11:

⁴⁷ Յովհ. Մ. Սէքսէնեան, Սոստանահայ նոթեր, «Արեւ», 8.03.1920:

⁴⁸ Ն. Մ. Թոզաքլեան, Սոստանահայ արձագանք: Հայկ. անկախութեան փոխառութիւնը. Սեպտ. 26ը Խարթումի մէջ, «Արեւ», 18.10.1920:

ներկայացուցչական մարմնի նախագահը եւ ազգային այլ յանձնախմբերի նախագահը, իր եւ եղբոր անունից 1000 սթերլինգով մասնակցել է հանգանակութեանը: 19 ներկաներից հաւաքուել է 4600 անգլիական ոսկի (մի քանի օրից հասել է 5875-ի), նուիրատուներն են՝ **Սեդրակ** եւ **Ջորջ Վանեան** եղբայրներ, Սարգիս Իզմիրլեան, Սեդրակ Քիրքճեան եւ ընկ., **Ֆիլիպ Արզարեան** եւ եղբայրը, **Սահակ Տերունեան**, **Քէչեան** եղբայրներ, **Վահրամ Մալունեան**, Գրիգոր Սալորեան եւ որդին՝ **Պետրոս**, բժիշկ **Խ. Սողիկեան**, **Ա. Եկեմեան** եւ այլք: «*Կուսակցամոլութիւնը այնքան անժանօթ քան մըն է Սուտանի կլիմային, որ հոս «Արեւ»ի եւ «Յուսարեր»ի թղթակիցները կրնան միասին գալ, եւ նոյնիմաստ հեռագիրներ խմբագրել իրենց թերթերուն համար*»⁴⁹:

Մանրամասն ներկայացնենք այս անձանցից առաւել ակնառուներին:

Ակնի յայտնի ընտանիքներից **Վանեանները** Սուդանում հաստատուել են տակաւին 1888 թուականին եւ մօտ մէկ դար ծաւալել աշխոյժ համայնքային գործունեութիւն: Վաճառական Սուքիաս Վանեանը (1840–1915) 1862-ին նախ հաստատուել է Կահիրէում, ապա իր հօրեղբայր Սահակ Վանեանի հետ տեղափոխուել Սուդան: Օւրորմանում Սուքիասը զբաղուել է խնկի առետրով, ապա 1900-ին իր խանութը տեղափոխել է Խարթում⁵⁰: Սուքիաս եւ Սահակ Վանեանները Խարթումում զբաղուել են ներմուծմամբ ու արտահանմամբ, հիմնել «S&S Vanian» հանրախանութը: Նրանք յայտնի են դարձել որպէս «Աֆրիկայի Հարողները», քանի որ կարողացել են ներմուծել օտարերկրեայ բազմաթիւ ապրանքանիշերի արտադրանք եւ ձեռք բերել այն ամենը, ինչ պահանջել է յաճախորդը: Առաջին եւ երկրորդ համաշխարհային պատերազմների ընթացքում Վանեանները բազմաթիւ ծրագրեր են իրականացրել բրիտանական բանակի համար: Սուքիաս Վանեանը մահացել

⁴⁹ Անդ:

⁵⁰ Տե՛ս Robert S. Kramer, Richard Andrew Lobban, Carolyn Fluehr-Lobban, Historical Dictionary of the Sudan, անդ:

է Նիկոսիայում, Ակնից Աֆրիկա վերադարձի ճանապարհին, երբ նա գնացել էր՝ ընտանիքի մնացած մասին իր հետ Սուրան տանելու: Նրա մահից յետոյ Խարթումում գործը ստանձնել են որդիները՝ **Փիլիպոս, Մարգարե** եւ **Շաարշ Վանեանները** (ունեցել է նաեւ երկու որդեգիր): 1934-ին Փիլիպոսի մահից յետոյ գործն անցել է նրա եղբայրներին եւ որդուն՝ **Վարուժան Վանեանին**, որը զբաղուել է նաեւ փոքր նաւերի պատրաստմամբ ու վաճառքով, ունեցել անձնական օդանաւ, եղել Սուրանի կենդանիների պահպանման մարմնի պատուաւոր անդամ: 1950-ականներին Շաարշը որդիների՝ **Սուրեն** եւ **Կարօ Վանեանների** հետ բեռնափոխադրումներ է կատարել Սուրանի եւ Չադի միջեւ: Ինչպէս շատ այլ հաստատութիւններ, «S&S Vanian»-ը 1975 թուականին բռնագրաւել է Սուրանի կառավարութիւնը:

Վանեանները հայ համայնքի ղեկավարներ եւ եռանդուն անդամներ էին, որոնք մեծապէս օժանդակել են Խարթումի հայկական դպրոցին եւ եկեղեցուն: Ներկայումս ընտանիքի ոչ մի սերունդ Սուրանում չի մնացել⁵¹:

Սուրիասի եղբորորդին՝ **Նիկողոս Վանեանը**, 1903-ին ընտանիքով հաստատուել է Օմդուրմանում՝ դառնալով սուրանահայ առաջին ընտանիքը: Կինը՝ **Ազապի Վանեանը**, ողջ է եղել 1960-ին:

Սուրանի հարուստ եւ անուանի վաճառականներից են եղել արաբկիրցի Սեդրակ, Նազարեթ, **Ղուկաս**, **Յովհաննէս** եւ **Մատթէոս Քիրքճեան** եղբայրները: Առաջինը Ղուկասն է եկել Սուրան, 1898-ին Օմդուրմանում զբաղուել առեւտրով, այնուհետեւ իր մօտ կանչել եղբայրներին (մի եղբայրը՝ Յարութիւնը, զոհուել է 1896-ի կոտորածների ժամանակ): 1902-ին Օմդուրմանում հիմնուել է «Քիրքճեան եղբայրների ընկերութիւնը»՝ 20 տարի ժամկետով: Այն սկզբնապէս զբաղուել է ուլունքի առեւտրով, այնուհետեւ մասնաճիւղեր հիմնելով

⁵¹ Տեղեկութիւնների մի մասը մեզ յայտնել են Վանեանների սերունդներ Ռուբինա Սվաճեանը, Անայիս Սվաճեան-Վանեան-Քուլիբերը (Մեծ Բրիտանիա) եւ Կարօ Վանեանը (Արաբական Միացեալ Էմիրութիւններ):

Սուրանի գլխավոր քաղաքներում՝ զբաղուել են հացահատիկի, խեժի, քնջութի առևտրով՝ դառնալով Սուրանի պարենատրման գլխավոր հայթափչը: Ներկայացուցչական տներ են հաստատել նաև Երուպայում, Սուրանի քաղաքներում ձեռք են բերել կալուածքներ: Ընկերութիւնն իր գործունէութիւնը դադարեցրել է 1922-ին, երբ եղբայրները բաժանուել են եւ իւրաքանչիւրը հիմնել է իր առանձին առևտրական հիմնարկը: Նազարէի որդի **Սարգիս Քիրքճեանը** տնօրինել է այդ հիմնարկներից մէկը, որի սնանկացումից յետոյ տեղափոխուել է Լոնդոն՝ զբաղուելով արմտիքի արտածում-ներածումով, դարձել մեծահարուստ եւ բարերար: Մատթոս Քիրքճեանն Օնդուրմանում բացել է երկրի առաջին արդիական ձիթարանը, նաև օճառի եւ ալիւրի գործարաններ: Դուկասի զաւակներ **Տելմաք** եւ **Հայկազուն Քիրքճեանները** տնօրինել են «Քորդոֆան» խեժի եւ կաշուի առևտրի հիմնարկները Եգիպտոսում եւ Սուրանում: Ունեցել են նաև տասնէակ ապրանքատար նւտեր⁵²:

Կեսարացի **Սարգիս Իզմիրլեանը** (1880–1967) 1898-ին եկել է Եգիպտոս, 1902-ին հաստատուել է Սուրանի Էլ Օբէիդ քաղաքում: Մինչեւ 1920-ը զբաղուել է վաճառականութեամբ, ապա՝ գիւղատնտեսութեամբ, մշակելով ու արտահանելով բամբակ եւ յայտնի դառնալով որպէս «Սուրանի բամբակի թագաւորը»: 1920-ին անդամակցել է Խարթումի քաղաքապետարանին: 1953-ից զբաղուել է գիւղատնտեսական մեքենաների ներածմամբ, Խարթումում բացել մեքենաների նորոգութեան գործարան, երկրի տարբեր վայրերում՝ այլեւայլ փոքր գործարաններ: Աֆրիկայի առաջին բամբակազտման գործարանը կատարուել է Իզմիրլեան ընկերութեան միջոցով: 1913–1945 թթ. եղել է Սուրանի առևտրական ժողովի անդամ, մի տարի՝ փոխնախագահը, մի քանի տարի՝ պատուոյ ատենադպիրը, 16 տարի՝ քաղաքապետութեան անդամ: 32 տարի՝ 1917–1949 թթ.,

⁵² Տես **Կերենիկ Եպիսկոպոս Փղատեան**, Սուրանի հայ գաղութը, «Պայքար», 21.07.1960:

հմտօրէն վարել է Սուղանահայ գաղութի վարչութեան ատենապետութիւնը: Ամենայն հայոց կաթողիկոսի կողմից պարգևատրուել է Գրիգոր Լուսատրչի շքանշանով: 1962-ին Բէյրութում լոյս է տեսել նրա «Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին (Անձնական յուշերուս ընդմէջէն)» գրքոյկը, որտեղ զարգացրել է այն միտքը, «թէ բնաջնջումի ջարդեր տեղի պիտի չունենային, եւ մենք այժմ մեր հայրենիքի մէջ պիտի ըլլայինք, տանուտէրի բոլոր իրաւունքներով, եթէ մեր անկեղծ, բայց անուղիղ... հայրենասիրութիւնը չըլլար անուղեր»⁵³, որ հայութեանը պատուհասած դժբախտութիւնների մեծագոյն պատասխանատուները եղել են մեր ղեկավարները, որ առաջնողներ չենք ունեցել բառի իրական իմաստով՝ առանց, սակայն, արդարացնելու թշնամուն: «Հագուագիտ Հայու տիպար մըն է՝ Տիար Սարգիս Իզմիրլեան, ինքնօգնութեամբ զարգացած, ուշիմ եւ վարչագէտ: Երեսուն երկու տարիներ շարունակ նախագահն եղած է Սուտանահայ գաղութին, որ իր սիրուած եւ յարգուած մականին տակ ապրած է խաղաղ, եւ հատուածական կազ ու կռիւ չեն համարձակած մուտք գործել գաղութին մէջ, նոյնիսկ դոյզն չափով: Իր շրջանին՝ Հայերը ճանչցուած են իբրեւ ուրոյն աշխարհական համայնք Սուտանի մէջ... Իր կենցաղագէտի եւ վարչագէտի կարողութիւններով անգլիական շրջանին, Հայերը ստացած են նախանձեղի վիճակ, յարգուելով՝ իշխանութիւններէն, իբրեւ երկրին օգտակար տարր, եւ սիրուելով՝ տեղական ժողովուրդէն»⁵⁴:

Սարգիսի գործը շարունակել են զուակները՝ Աւետիս եւ Տիգրան Իզմիրլեանները⁵⁵, որոնք իրենց հիմնած ընկերութիւնը հօր անունով կոչել են «Սարգիս Իզմիրլեան կորպորացիա

⁵³ Տիգրան Յարութիւնեան, Հեղինակին մասին, էջ 13:

⁵⁴ Անդ, էջ 11:

⁵⁵ Տես անդ: Տես նաեւ Տ. Յ., Սարգիս Իզմիրլեան՝ (կենսագրական համառոտ գիծեր), Սարգիս Իզմիրլեան. Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին, էջ 9: Իզմիրլեանի կենսագրութիւնը մանրամասն տես George Jerjian, Sarkis Izmirlian: a biography: [England], [2008]:

ՄՊԸ»: Շուեյցարաբնակ Տիգրան Իզմիրլեանը վերահսկել է գեոմանուշի միջազգային արտածումը եւ առետուորը: 1990-ին Տիգրան Իզմիրլեանը հիմնել է «Սարգիս եւ Մարի Իզմիրլեան հիմնադրամը», որը Հայաստանում հովանաւորել է տարբեր ոլորտներում իրականացուող բազմաթիւ ծրագրեր (կրթութիւն, առողջապահութիւն, տնտեսական զարգացում, մշակութային ժառանգութեան պահպանում): Յիշենք, որ Տիգրան Իզմիրլեանի որդին՝ նոյնպէս Սարգիս Իզմիրլեան, «Բահա մար ռեզորթս» ընկերութեան նախագահն է եւ գլխաւոր գործադիր տնօրէնը, որը զբաղւում է շինարարական բիզնեսով Մեծ Բրիտանիայում, նաեւ ստեղծել է հայկական կազմակերպութիւնների աջակցող հիմնադրամ:

1903-ին Սուրբան է ժամանել ԱՄՆ-ում գիտատնտեսական կրթութիւն ստացած թոքաքցի **Գրիգոր Պօզանեանը**, որին Սուրբանի կառավարութիւնը յանձնարարել է ազարակ հիմնել եւ տեղացիներին ազարակապանութիւն սովորեցնել: Նա է հիմնել բրիտանացի գաղութային գործիչ լորդ Հերբերթ Զիլըների բացած քոլեջի գիտատնտեսական բաժնի ազարակը, որի համար Սուրբանի կառավարութիւնից ստացել է արծաթ մեդալ եւ մրցանակ: Պօզանեանն արտադրել է բամբակի տեսակներ, որոնք բարձր են զնահատել Եգիպտոսի եւ Սուրբանի ազարակապանները: Պրոֆեսոր Սեյրըր Եագուպ Արփին փաշայի հետ Սուրբան այցելութիւնից յետոյ իր գրած «Արդի Սուրբանը» գրքում գովեստով է խօսել Պօզանեանի գործունէութեան մասին⁵⁶:

Մինչեւ 1930-ական թթ. Սուրբանի ծխախոտի ողջ առետուորը եղել է հայերի ձեռքում, որից յետոյ բրիտանական ընկերութիւններ են տիրացել դրանց: Եգիպտոսի «Մաթոսեան» ծխախոտի ընկերութիւնը Սուրբանում ունեցել է մասնաճիւղեր, որոնք ղեկավարել են Յովհաննէս, Մովսէս, Յակոբ ու Յովսէփ Արսլանեանները եւ նրանց քրոջորդի **Միմոն Գասպարեանը**: Արսլանեանները Սուրբան են եկել 1904-ին, Գասպարեանը՝

⁵⁶ Տե՛ս **Դերենիկ եպիսկոպոս Փղատեան**, Սուրբանի հայ զարուքը, 22.06.1960:

1903-ին: Չբաղուել են նաև կերպասեղենի վաճառականութեամբ: Սուղանում մասնաճիւղեր են ունեցել նաև եգիպտահայ «Կամսարական» և «Մելքոնեան» ծխախոտի ընկերութիւնները, որոնց ներկայացուցիչներն են եղել **Պօղոս Շահինեանը** և մարզուանցի **Գրիգոր Գրիգորեանը**: Վերջինս եղել է նաև Ալեքսանդր Մանթաշեանի ներկայացուցիչը Սուղանում, ինչպէս նաև Սուղանահայ զարութային վարչութեան և ՀԲԸՄ Խարթումի մասնաճիւղի անդամ: Նրա գործը շարունակել են որդիները՝ **Կարօ** և **Աւօ Գրիգորեանները**⁵⁷:

Նմանապէս 20-րդ դարի սկզբին արաբկիրցի **Ֆիլիպ Արզարեանը** հաստատուել է Սուղանի Քոթոք քաղաքում և զբաղուել առեստրով: 1912–1947 թթ. բնակուել է Օմդուրմանում, որից յետոյ տեղափոխուել է Կահիրէ՝ Օմդուրմանի իր տունը կտակելով համայնքին, որի եկամուտը յատկացուել է Խարթումի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեցեղուն: Նրա նուիրատութեամբ է կառուցուել նաև Կահիրէի Արզարեան դարմանատունը⁵⁸:

Արաբկիրցի **Գեորգ Ճերճեանը** (Ճիերճեան, 1870–1947) ուսանել է Կարինի Սանասարեան վարժարանում, այնուհետև քիմիկոսի մասնագիտութիւն ստացել Շուեյցարիայում (Յիւրիխ) և Գերմանիայում: 1900-ին վերադառնալով Կարին՝ պաշտօնավարել է Սանասարեան վարժարանում, նաև զբաղուել լուսանկարչութեամբ: 1900–1907 թթ. 240 լուսանկարներ է կատարել Արաբկիրում և Կարինում, որոնցից պահպանուել է մօտ 100-ը: Տեղափոխուել է նախ Եգիպտոս, ապա՝ Սուղան, որպէս «Ալբերտ Չինգէր» գերմանական առևտրական տան տնօրէն: 1923-ին հաստատուել է սեփական առևտրական տունը, զիսաւորապէս զբաղուել գերմանական դեղորայքի և քիմիական նիթերի ու պարարտանիւթերի ներածումով: Երբ Սուղանի հայ համայնքը համալրուել է

⁵⁷ Տե՛ս անդ, 22.07.1960:

⁵⁸ Տե՛ս անդ:

մտատրականներով՝ բժիշկներ, ատամնաբույժներ, դեղագործեր, գիտատնտեսներ, հիմնականում երոսյական քարձրագոյն կրթութեամբ, այդ հանգամանքը հնարատրութիւն է տուել Խարթումուն եւ Օմդուրմանուն ստեղծելու մտատրականների կամ, ինչպէս իրենք են ասել «քոլեջականների» մի մեծ խմբակ՝ Գրիգոր Ճերճեանի գլխատրութեամբ, որոնք տարբեր երկրներից ստացել են հայերէն գրքեր եւ մամուլ: Խարթումուն հիմնուել է Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան մասնաճիւղ, որը տարեկան 60 եգիպտական ոսկի է հայթայթել միութեան համար⁵⁹: Ճերճեանը եղել է Սուրանի ՀԲԸՄ մասնաճիւղի հիմնադիրներից եւ անդրանիկ վարչութեան ատենապետը: Նա համարուել է ժամանակի ամենագարգացած անձը Սուրանի հայ համայնքում, տիրապետել է հայերէն, ֆրանսերէն, անգլերէն, գերմաներէն եւ լատիներէն լեզուներին, օժտուած եղել գրական եւ գիտական կարողութիւններով: Ճերճեանի մահից յետոյ նրա գործը շարունակել են որդիները՝ Արսէն եւ Էդուարդ Ճերճեանները, որոնք հետագայում տեղափոխուել են Մեծ Բրիտանիա: Էդուարդ Ճերճեանը եղել է արեւմտագերմանական «Բաուեր» ֆիրմայի գործակալ, Սուրան է ներմուծել դեղորսայք եւ քիմիական արտադրութեան ապրանքներ: Համագործակցել է նաեւ Լեհաստանի եւ Չեխոսլովակիայի տարբեր արտաքին առետրական կազմակերպութիւնների հետ: Հետագայում տնօրինել է «Ճերճեան» առետրական ընկերութիւնը: Իսկ Գեորգ Ճերճեանի թոռ **Չորջ Ճերճեանը** (ծն. 1955, Սուրան) անգլիագիր գրող է, տաս գրքի հեղինակ, նաեւ «Էմմի» մրցանակի արժանացած կինոարտադրիչ: 2014-ին առանձին հատորով հրատարակել է մեծ հօր լուսանկարները («Յերեկուայ լոյս» մէկ հարիւրամեակ անց»), նոյն թեմայով 2015-ին ստեղծել է վաւերագրական շարժանկար: Մեծ հօր լուսանկարների նեգատիւները նուիրել է Երեւանի Յեղասպանութեան

⁵⁹ Տե՛ս **Յովհաննէս Մէքսնեան**, Սուտանահայ գաղութը, էջ 142:

թանգարան-ինստիտուտին:

1907-ին Սուդան է եկել թալասցի Գրիգոր Սալըրեանը (°-1952) որպէս «Չոհրապեան եւ Ինիւզեան» առետրական տան ներկայացուցիչ: Թողնելով այդ գործը՝ զբաղուել է կաշուի արտածմամբ՝ շուտով դառնալով կաշուի մեծագոյն վաճառականը Սուդանում: Եղել է ազգային հանրային գործիչ եւ բարերար: Չառակներից **Պետրոս Սալըրեանը** ներգաղթի ժամանակ մեկնել է Հայաստան, իսկ **Արմենակ եւ Նուբար Սալըրեանները** շարունակել են զբաղուել առետրով Պորտ Սուդանում⁶⁰:

ՀԲԸՄ գործուն անդամ, արաբկիրցի Չենոբ Խաչիկեանը Սուդանում է ապրել 1908-ից, որտեղ ստանձնել է երոպական մի քանի առետրական տների ներկայացուցչութիւնը, 1915-ին հիմնել «Չենոբ Խաչիկեան եւ ընկերութիւն» առետրական տունը: Երեք որդիները՝ **Վահէ, Ազատ եւ Ժիրայր Խաչիկեանները**, շարունակել են իր գործը: Խարթումում խանութի տէր Ազատ Խաչիկեանը 1960-ին այցելել է Հայաստան, պատրաստուել է ֆիլմ նկարահանել Հայաստանի մասին: Երեսնի պատմութեան թանգարանին է նուիրել «Գեներալ Գարդանի յիշողութիւնները» գիրքը⁶¹: Ամուսնացել է սուսորո-իտալուիի Թերեզա Դրեշերի հետ, որը սովորել է հայերէն գրել-կարդալ եւ հայկական դաստիարակութիւն է տուել զաւակներին՝ Սուդանում ծնուած **Արարատ, Արմինէ եւ Արմէն Խաչիկեաններին**: Երբ 1963-ին Սուդանում քաղաքական իրադրութիւնը լարուել է, Թերեզան զաւակների հետ վերադարձել է Իտալիա (Գորիցիա), 1970-ին նրանց է միացել Ազատը: Նրա երեք զաւակները, լինելով Աֆրիկայում ծնուած հայեր, դարձել են էսկիմոսական սահմակավազքի վարպետներ, Իտալական Ալպերում հիմնել են էսկիմոսական

⁶⁰ Տե՛ս **Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեան**, Սուդանի հայ գաղութը, անդ, 22.07.1960:

⁶¹ Տե՛ս Սփիւռքահայ կինօաշխատատրի նուէրը, «Սաառնակ», 1.10.1960: Մայր հայրենիքում. լուրեր Մայր հայրենիքից, «Էջմիածին», 1960, ք. Թ, էջ 55:

սպորտի առաջին դպրոցը⁶²:

Այս շրջանի սուդանաբնակ ազգայիններից յիշենք նաև հետեւեալ անունները՝ մազկերտցի **Յարութին Տիարպէքիբեան** (1885–1955, նուիրատուութիւններ է կատարել Չաիլիի հայկական վարժարանի եւ Խարթումի հայկական եկեղեցու շինութեան համար), տիգրանակերտցի վաճառական **Բենիամին Իսայի** (1888–1955), որի որդիները կերպասեղէնի վաճառատուն են ունեցել Խարթումում, 1925-ից Խարթումում բնակուած ազգէհիրցի **Գարեգին Գոճակեօզեան** (°–1950)⁶³: Հիսուածեղէնի առաջին գործարանը Սուդանում հիմնել է **Սեդրակ Գալիսագեանը**: **Գեորգ Գասապեանը** զբաղուել է կերպասի մեծաքանակ առետրով, նաև կառուցել է լուցկիի գործարան: **Նափոլ Շալվարճեանն** ունեցել է իղի, **Կայծակ Յասրիքաթորեանը**՝ հագուստ մաքրելու եւ արդուկելու, **Լեւոն Չօլաքեանը**՝ ալիւմինի, **Նորայր Չօլաքեանը**՝ կօշիկի ներկի եւ ալիւմինի գործարաններ⁶⁴: Լեւոն Չօլաքեանը տնօրինել է ալիւմինէ սպասքի եւ մետաղեայ ապրանքների գործարաններ, նրան է պատկանել «Աֆրիքան հոլիվեր» ալիւմինէ եւ էմալէ սրասքի գործարանի 25 տոկոսը⁶⁵:

Արաբկիրցի **Գառնիկ Եկաւեանը** (1906–1988), հնչակեան «քսան կախադաններից» Հրանտ Եկաւեանի եղբորորդին, փրկուելով Մեծ եղեռնից՝ ապաստանել է նախ Եգիպտոսում, ապա՝ Սուդանում: Պաշտօնավարել է «Բիտոր» ընկերութիւնում որպէս քարտուղար, աշխատել Ազգային բանկում որպէս հաշուապահ: Դուստրը՝ **Չուարթ Եկաւեանը**, բիզնես

⁶² Տես Արարատը կհասնի Արարատին. Սուդանում ծնուած իտալացի հայը էսկիմոսական սահմակավազքի վարպետ է <https://armeniasputnik.am/exclusive/20190901/20246470/sudanum-cncav-italaci-hayy-eskimosakan-sahnakavazqi-varpete.html> (դիտուած՝ 11.02.2021):

⁶³ Գաղութ գաղութ, «Յառաջ», 6.12.1950:

⁶⁴ Տես **Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեան**. Սուդանի հայ գաղութը, անդ, 24.07.1960:

⁶⁵ Տես **Արմէն Բարդաւեան**, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 106:

վարչարարութիւն է ուսանել Խարթումի Չուրա համալսարանում⁶⁶:

Սուդանում գործել են հետեւեալ հայ բժիշկները՝ Էքմիքճեան, Գասպարեան, Սողիկեան, Ինճճիկեան, ատամնաբոյժներ Լուսֆիկ Ալեանաք, Գրիգոր Սեյյօնքեան, Նուպար Բալայեան, Միհրան Պիճիկեան⁶⁷, Յակոբ Թմիզեան, դեղագործներ եւ դեղավաճառներ Միհրան Թերզեան, Գառնիկ Սարաֆեան, Հէնրի Պարութեան, Լեւոն Գապատայեան⁶⁸:

Եղել են նաեւ կառավարական պաշտօնեաներ՝ Գրիգոր Գաիանճեան, Վարդան Ընքապապեան, Եզնիկ Թերզեան, Ահարոն Մալխասեան, Արտաշ եւ Պետրոս Դանիէլեաններ, Ենուք Թագուորեան, Մինաս Պերպէրեան (եղել է Օմդուրմանի Ազգային բանկի տնօրէնը)⁶⁹:

Մինչեւ 1946-ը Սուդանի ժամագործները գրեթէ ամբողջութեամբ հայեր են եղել: Նրանց մէջ յիշում են արաբկիրցի Արթին Առաքելեանը, Խաչիկ եւ Մեսրոպ Խաչիկեանները, Աւօ Իշխանը, Թագուր Ազարիկը: Սուդանում յիշում են նաեւ ոսկերիչներ ակնցի Կարախա Քանարեանը, հալէպցի կաթուղիկ Սելիմը, զմիւռնիացի Պօղոս Յովհաննէսեանը, արաբկիրցիներ Արիստակէս Տէմիրճեանը

⁶⁶ Վկայութիւնը՝ Չուարթ Եկաւեանի (25.10.2021 ելգիր):

⁶⁷ Միհրան Պիճիկեանի՝ 1967-ին բացած դատը Եգիպտոսում վախճանուած Յակոբ Ստեփանեանի կալուածքի համար, որպէս ուրոյն հետաքրքրութիւն ներկայացնող դէպք, երբ տրամախաչուել են սուդանական, հայկական եւ եգիպտական օրէնքները, յիշուած է Խարթումի համալսարանի ուսանող Եագուր Ահմէդ Մոհամէդ Բոլադի՝ 2006-ին գրուած «Սուդանի դատարանների միջազգային իրաւասութիւնը» քէզում (տե՛ս Sudan Courts International Jurisdiction by Yagoub Ahmed Mohamed Bolad, supervised by professor Akolda Man Tier <https://core.ac.uk/download/pdf/71675788.pdf> դիտուած՝ 19.02.2021): Միհրան Պիճիկեանն ունեցել է մէկ որդի՝ Ալբերտ Պիճիկեան (1932–2002):

⁶⁸ Տե՛ս Դերենիկ եպիսկոպոս Փոլատեան, Սուդանի հայ գաղութը, անդ, 22.07.1960:

⁶⁹ Տե՛ս անդ:

(մահ. 1947) եւ **Վաղինակ Լուսինեանը**⁷⁰: 1901-ին Սուդանում է հաստատուել պոլսեցի **Անդրանիկ (Անտոն) Գազանճեանը**, որը բացել է այդ ժամանակաշրջանի միակ լուսանկարչատունը Խարթումում: Եղել է մայրաքաղաքի ամենայայտնի լուսանկարիչը եւ Սուդանի սլավառական լուսանկարիչը, 1933-ին գնահատագրի արժանացել: 1926-ին Եգիպտոսից իր մօտ է բերել երեք հայ որբերի՝ **Կարապետ Եզիկեանին**, **Յովհան Բրուտեանին** եւ **Կարապետ Կօշկարեանին**, որոնց լուսանկարչութիւն է սովորեցրել: Իր բիզնեսը զարգացրել է հարեւան երկրներում եւս՝ վաճառելով աֆրիկեան ջունգլիներում արած իր լուսանկարները, իր բարեկամ **Առաքել Մեմերճեանի** հետ շրջագայելով հարեւան երկրներում եւ կատարելով լուսանկարներ: Նրա աշխատանքը շարունակել են որդիները՝ **Հայկ** եւ **Գեորգ Գազանճեանները**: Սուդանում են գործել նաեւ լուսանկարիչներ զմիտնիացի **Արամ Յովհաննեսեանը** (յայտնի Օբի Արամ անուամբ), **Նուպար Եկմալեանը**, **Յակոբ Մելքոնեանը**, **Նազարեթ Գալմքեարեանը** (հետագայում՝ «Ակֆա» ընկերութեան Սուդանի բաժանմունքի սեփականատէր), **Կարապետ** եւ **Յակոբ Գարուաշեանները**⁷¹:

Օմդուրմանում 1907-ին հաստատուած արաբկիրցի **Վահրամ Մարմեանը** զբաղուել է բեռնափոխադրումներով: 1921-ին զմիտնիացի **Լեւոն Գապատայեանը** բացել է «Խարթումի դեղի խանութ եւ նոր դեղատուն» ընկերութիւնը: Հետագայում, 1957-ին, վերոյիշեալ **Կարօ** եւ **Աւօ Գրիգորեանների** հետ հիմնել է «Գրիգար» գործարանը, որ զբաղուել է անուշեղենի եւ սլահաձոցների պատրաստութեամբ: Ժամանակին այն համարուել է ամնախաղէպ մի երեսոյթ Սուդանում: Գործարանի ընդհանուր կառավարիչն է եղել **Գրիգոր Գալփագեանը**, նրա օգնականը՝ **Վահրամ Գասպարեանը**⁷²: Վաճառականներից յիշում են նաեւ հետեւեալ անունները. **Խարթումում՝ Յարութիւն, Մանասէ** եւ

⁷⁰ Տես անդ, 23.07.1960:

⁷¹ Տես անդ:

⁷² Տես անդ:

Կայծակ Թեմայքեճեան եղբայրներ (ներածել են սողունների կաշի, կահոյք, պարեն, ծխախոտ եւ բոռք), **Թորոս Պարսամեան** («Պարսամեան մոտո-քար» ֆիրմայի տնօրէն, զբաղուել է Անգլիայից մարդատար մեքենաների գնումով, բոքի մեծաքանակ վաճառական, ապահովել է Սուդանի բոքի կարիքի 80 տոկոսը⁷³), **Արթիւր Ղազարեան** (նորածեւութեան խանութի տէր), **Գրիգոր Պոտտորեան** (դեղորայքի եւ ուտեստի ներածում), **Պարոյր, Ժիրայր եւ Նուպար Կիւմիշեան** եղբայրներ (տնային ապրանքների խանութ), **Օմիդորմանում Մարկոսեան** եղբայրներ (նրանց է պատկանել բաղաքի լաւագոյն նպարավաճառանոցը), **Վահան, Հայկ եւ Հրանդ Տէր-Պետրոսեան** եղբայրներ, **Արսէն Կարապետեան, Յովհաննէս Ճանոյեան**⁷⁴: Վերոնշեալ Գրիգոր Պոտտորեանը Սուդանում հաստատուել է 1935-ին, հետագայում դարձել խոշոր գործարար (դեղորայք է ներմուծել Անգլիայից, Գերմանիայից եւ այլ երկրներից), ունեցել սեփական դեղագործարան: Տիրապետել է մի քանի լեզուի, յաճախ ճամփորդել է Եւրոպա: Եղել է հայ համայնքի ականաւոր գործիչ, արժանացել է ոսկէ մեդալի Ամենայն հայոց կաթողիկոսից: Նրա նախաձեռնութեամբ եւ մասնակցութեամբ համայնքի ընդհանուր ժողովն արգելել է տաս հոգուց բաղկացած դաշնակցականների գործունէութիւնը համայնքում⁷⁵:

1920-ականներին որոշ ժամանակ Խարթումում է բնակուել Անդրանիկի զինուոր, Բոսթոնի «Հայրենիք» օրաթերթի երբեմնի խմբագիր **Երուանդ Խաթանասեանը** (1893–1980): Այստեղ նրա եւ **Վերգիւն Ալեանաքի** ընտանիքում ծնուել է **Սեդա** դուստրը

⁷³ Տե՛ս Արսէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 106:

⁷⁴ Տե՛ս Դերենիկ Եպիսկոպոս Փայատեան, Սուդանի հայ գաղութը, 24.06.1960:

⁷⁵ Տե՛ս Արսէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 105:

(հետագայում՝ Սեդա Սոնենց-Փափագեան, 1925–2022)⁷⁶:

1926-ին Խարթումում **Գրիգոր Սեֆերեանը** հիմնել է «Սեֆերեան եւ ընկերութիւն» սահմանափակ պատասխանատուութեամբ ընկերութիւնը, որը գործում է մինչ օրս: Այն ապահովում է շէնքների կառուցումներ եւ ենթակառոյցային նախագծեր, էլեկտրամեխանիկական ծառայութիւններ, ներկման, սանիտարական հանգոյցի աշխատանքներ, բանջարեղէնի եւ սննդամթերքի առաքում, գիւղատնտեսական, արդիւնաբերական, էլեկտրամեքենաների ու տարբեր սարքատրումների բաշխում եւ այլ աշխատանքներ: Սեֆերեանը եւ նրա եղբայրը հետագայում ձեռք են բերել «Մուրատեան եւ Հիւսիսեան ընկերութիւն» առետրական տունը՝ անուանելով «Սեֆերեան տուն» (տնօրէն՝ **Միսաք Փափագեան**): Այն զբաղուել է Եթովպիայից սուրճի ներմուծմամբ, միաժամանակ եղել «Ֆոլքսվագեն» ավտոմեքենաների ընկերութեան ներկայացուցիչը Սուդանում: Սեֆերեանների առետրական գործընկերները եղել են **Արթին Իսլիշեանը** եւ **Երուանդ Հիւսիսեանը**. վերջինս եղել է Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան գործուն անդամ: Հետագայում սեւամորթ կնոջ հետ հաստատուել է Միլանում, որտեղ էլ մահացել է:

1930-ին **Նազարեթ Էօմիրեանը** Օմդուրմանում հիմնել է գազատրած ջրերի մեծ գործարան, որը ժամանակին եղել է քաղաքի առաջին ու մեծագոյն գործարաններից: Էօմիրեանը գործօն դեր է կատարել ազգային-եկեղեցական կեանքում, եղել Հայ երիտասարդաց միութեան հիմնադիր անդամ, ազգային վարժարանի հոգաբարձու եւ Սուդանահայ գաղութային վարչութեան անդամ:

Մեծ մասամբ քրիստոնէաներով բնակեցուած Գեդարեֆ քաղաքի հայերը եղել են արաբկիրոցիներ եւ ակնցիներ: Այստեղ հայերից առաջինը 1906-ին հաստատուել է **Ֆիլիպ Գալփագեանը** (1886, Արաբկիր – 1938, Գեդարեֆ), որ

⁷⁶ See In Memory of Seda Sonentz-Papazian, “The Armenian Weekly,” 3.02.2022:

առեւտրական մեծ դիրքի է հասել եւ 40-ից աւելի արաբկիրքիներ է բերել Սուդան: Մեծ ազդեցութիւն է ունեցել կառավարական շրջանակներում, 12 տարի եղել է կառավարական յանձնակատար: Առաջին անգամ ինքն է Գեղարեֆում ինքնաշարժի ճանապարհներ բացել, փոստային ծառայութիւններ իրականացնել մեքենաներով (մինչ այդ իրականացրել են ուղտով): Առաջին անգամ հիմնել է արդիական ջրաղացներ, ստռոյցի գործարան եւ ձիֆհանք: 1937-ին Գալփագեանը Գեղարեֆի իր տունը կտակել է հայ համայնքին՝ յոյսով, որ տարածքի վրայ հայկական եկեղեցի կառուցուի, մի մասն էլ կտակել է ՀԲԸՄ Ալեքսանդրոփայի եւ Կահիրէի Աղքատախնամ ընկերութիւններին:

Առաջին աշխարհամարտից յետոյ Գեղարեֆում աւելացել է հայերի թիւը, արդէն 1938-ին քաղաքն ունեցել է 120 հայ բնակիչ, մեծ մասը՝ առաքելականներ, մօտ 2-3 տուն՝ կաթոլիկ եւ բողոքական հայեր: Գրեթէ բոլորը զբաղուել են առեւտրով, մասնատրապէս՝ շինանիւթերի, ավտոպահեստամասերի, հացահատիկի, խէժի եւ քնջութի իւղի վաճառականութեամբ եւ Եւրոպա արտահանմամբ, նաեւ բեռնափոխադրութեամբ: Բարեկեցիկ կեանքով ապրող հայերն օժանդակել են Ալեքսանդրէթի սանճաքի գաղթականների տեղատրման գործին եւ Լիբանանի հայ ազգային բուժարանին: Գեղարեֆի հայերն ունեցել են իրենց կանոնադրութիւնը, որով տնօրինել են դպրոցական եւ համայնքային բոլոր գործերը: Ըստ այս կանոնադրութեան՝ ողջ իրաւասութիւնը կենտրոնացել է վարչական ժողովի վրայ:

1920-ականների վերջին Գեղարեֆի հայերը դպրոց ունենալու համար դիմել են տեղի բրիտանական իշխանութիւններին եւ տէր դարձել ընդարձակ հողատարածութեան, որի վրայ մտադիր են եղել կառուցել նոր դպրոց: Քաղաքի՝ քսան տնից բաղկացած հայութիւնը դպրոցի շինութեան համար հաւաքել է շուրջ 300 ոսկի: Ֆիլիպ

Գալփագեանը եւս 200 ոսկի նուիրատութիւն է կատարել⁷⁷: 1930-ին հիմնուել է Գեղարեֆի հայ դպրոցը՝ 14 աշակերտով, **Հրանդ Թռչիկեանի** տնօրէնութեամբ: Նոյն պաշտօնը ստանձնել են նաեւ **Արսէն Վարդանեանը**, որից յետոյ ելեք անգամ տնօրէն է ընտրուել **Յարութիւն Պենկեանը**, 1937–1939 թթ. **Յովսէփ Թըզըրեանը**, 1939–1940 թթ.: **Արսէն Արգարեանը**: Դպրոցի ուսուցչուհիներն են եղել **Ռոզ Էքմէքճեանը**, **Հայկանուշ Սեմերճեանը** եւ **Մարի Էթօեանը**: Գործել է մինչեւ 1954-ը՝ փակուելով բաւարար աշակերտ չլինելու պատճառով: Հայկական դպրոցում ուսանել են նաեւ մի քանի տեղացի յոյներ: Գեղարեֆի հայերը թէն եկեղեցի չեն ունեցել, սակայն ամէն շաբաթ երեկոյ իրենց տներում խումկ են ծխել: Աւելի քան 25 տարի տեղի ազգային դպրոցում կիրակի օրերը խորան են կանգնեցրել եւ արաբկիրցի **Սարգիս Փողահարեանի** առաջնորդութեամբ ժամերգութիւն կատարել: Նման արարողութիւններ կատարել են նաեւ տեղի յունական եկեղեցում: 1950-ից յետոյ Գեղարեֆի հայերը սկսել են տեղափոխուել Խարթում, հիմնական պատճառն ազգային վարժարան չունենալն էր: Սակայն 1960-ին տակաւին գործել է Գեղարեֆի գաղութային վարչութիւնը (ատենապետ՝ **Արշակ Կարապետեան**, եղել է Արեւելեան Սուղանի գօրաբաժնի ընդհանուր հայթայթիչը): Գեղարեֆի հայերի մէջ յիշում են հացագործ **Հրանդ Էքմէքճեանը** եւ իր **Արաքսի** դուստրը, բեռնափոխադրումների գործի կազմակերպիչ **Գրիգոր Սեմերճեանը** եւ **Գրիգոր Նորսիկեանը**, **Յարութիւն** եւ **Հոփսիանէ Պոյաճեանները** եւ այլք⁷⁸:

Հայկական փոքր համայնք է եղել նաեւ Եթովպիայի սահմանին մօտ գտնուող Զասալա քաղաքում, այստեղ հաստատուած առաջին հայերն էին **Տիլսիգեան** եղբայրները Առաջին աշխարհամարտից առաջ: Նրանք ունեցել են առեւտրական մեծ ընկերութիւն, որի մասնաճիւղեր են բացել

⁷⁷ Տես Հայերը Կէտարեֆի մէջ, «Արեւելք», 26.01.1938:

⁷⁸ Գեղարեֆի բոլոր հայերի անունները տես **Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեան**, Սուղանի հայ գաղութը, անդ, 2-3.08.1960:

Ասմարա, Ադիս Աբեբա եւ Ադեն քաղաքներում: 1930-ականներին Քասալայում բնակուել է մօտ 30 հայ: 1936-ին **Գեորգ Եիզիդպաշեանը** եղել է Քասալայի հայերի ներկայացուցիչը կառավարութիւնում, որի միջամտութեամբ կառավարութիւնն ընդարձակ հողատարածք է յատկացրել հայերին՝ թաղամաս եւ դպրոց ունենալու համար: Որդին՝ **Տիգրանը**, եղել է Խարթումի համալսարանի շրջանաւարտ: Երբ 1940-ին իտալացիները գրաւել են Քասալան, այնտեղ մնացել է միայն **Խաչիկ Սեներճեանը**, իսկ 1959-ին՝ միայն Եիզիդպաշեան ընտանիքը⁷⁹:

Ուսդ Մադանի քաղաքում հատատուած առաջին հայն, ինչպէս նշուեց, արաբկիրցի Յակոբ Ղազարեանն էր՝ 1893-ին, որն ամուսնացել է տեղացի աղջկայ հետ, եղել խոշոր կալուածատէր: 1910-ականներին Հալէպից Ուսդ Մադանի են տեղափոխուել հայ կաթողիկներ՝ հացագործ **Բահջէք Հարդադը**, առետրականներ **Բէշիր Խայաթը** (Տիգրան Շալճեան) եւ **Ժան Շաշադին**, ճաշարանատէր **Միշէլ Թերուսը** (Միքայէլ Թորոսեան) եւ այլք, որոնք հայութիւնից հեռացած են եղել: 1930-ին քաղաքում ապրել է 11 ընտանիք՝ 35-38 հոգի⁸⁰: Վաճառական **Միոն Օհանեանը** 25 տարի եղել է Ուսդ Մադանիի Միացեալ դպրոցի հոգաբարձութեան ատենապետը, 1930-ից՝ քաղաքի հայերի ներկայացուցիչը կառավարութիւնում: **Տիգրան Թաշճեանը** եղել է Եգիպտոսի ազգային բանկի Ուսդ Մադանիի մասնաճիւղի տնօրէնը⁸¹:

Հայեր բնակուել են նաեւ Սուդանի հետեւեալ բնակավայրերում՝ **Բողոք** (1900-ից այստեղ առետրով են գրադուել **Տիլիպ** եւ **Եդիա Արգարեանները**), **Մալաքալ** (1914-ին՝ արաբկիրցի **Սարգիս Դարբինեանն** ունեցել է առետրական տուն եւ աղօրիք), **Մելուտ** (1916-ից՝ հալէպցի **Հայկ Եարտըմեան**), **Ռենք** (անկիւրացի **Կղեմէս Տարաքճեան**), **Քոստի** (առետրականներ, արաբկիրցի **Յովհաննէս** եւ **Պօղոս**

⁷⁹ Տէն անդ, 4.08.1960:

⁸⁰ Նրանց ցանկը տէն անդ, 7.08.1960:

⁸¹ Տէն անդ, 6.08.1960:

Տէրունեաններ), Էդ-Դուելյմ (վաճառական Յարութին Տիարպէրեան), Էլ Օբէիլ (Տելեմաք եւ **Յակոբ Քիրքճեաններ**՝ վաճառատան եւ բեռնակառքերի բիզնես, Աղանի Հերմես, Նեկտար Սապա), Աքբարա (ազարակապաններ Վիկտոր եւ **Շաքէ Պօզանեաններ**, մեքենագործ **Լեւոն Միրալեան**), Մեֆազա (1922-ից՝ փոխադրիչ Պետրոս Մալումեան), Տենդելոի (վաճառական **Մարգար Գարրիլեան**), Էլ Ֆաշըր (առետրական **Յակոբ Տէրմեճեան**), Արեքըր (պաշտօնեայ Յարութին Փափազեան), Հասա-Հեսաս (մեքենագործներ **Հայկ Սիմոնեան**, **Հայրապետ Եազճեան**)⁸²:

1940-ականներին Սուդանի հայութեան թիւը եղել է 1000⁸³: Եւ չնայած նրանց ինքնաբաւ եւ բարեկեցիկ վիճակին՝ նրանցից ոմանք նոյնպէս 1947-ին միացել են հայրենադարձութեան քարաւաններին: Սուդանահայ ներգաղթի կոմիտէի մէջ ընդգրկուած են եղել Վահրամ Մալումեանը, **Ժիրայր Պալեանը** եւ **Կարապետ Օհանեանը**: Մինչեւ 1947 թ. մարտը հայրենադարձուելու համար Սուդանում ցուցակագրուել է 502 մարդ⁸⁴: Սուդանից հայրենադարձուել են **Նաչաճեան**, **Սեմերճեան**, **Ֆապրիքաթորեան** եւ **Ուլիկեան** ընտանիքները, նաեւ հառուկենոս անհատներ, ինչպէս, երաժիշտ Կայծակ Թեմպէրճեանը, Բողոքում բնակուած **Խաչատուր Չաղացպանեանն** ընտանիքով: Եգիպտոսից հայրենադարձուել է Խարթումում ծնուած գրականագէտ **Հայկ Գասպարեանը** (1912–1972) կնոջ՝ ապագայ հոշակաւոր երգչուհի Գոհար Գասպարեանի հետ: Հայկ Գասպարեանը Սուդանում շատ քիչ է ապրել. հայկական կրթութիւնն ստացել է Կահիրեւում, ապա ուսանել է Լոնդոնի համալսարանի գրականութեան բաժնում:

⁸² Տես անդ, 9.08.1960:

⁸³ Տես **Արմէն Բարալեան**, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 105:

⁸⁴ Տես **Յովիկ Մելիքսեթեան**, Հայրենիք-Սփիւռք առնչութիւնները եւ հայրենադարձութիւնը, էջ 199:

Ակնցի Խաչատուր Մեմերճեանը (ծնեալ Ամիրեան), 1915 թուականին հօրը՝ Օհանին ու քրոջը կորցնելուց յետոյ ընտանիքի միւս անդամներին (մօրը՝ Աննային, եղբայրներին՝ Ղազարին, Յարութիւնին, Առաքելին եւ քրոջը՝ Հռիփսիմէին) փախցրել է երկրից: Նրանք մեկնել են Սիրիա, Եթովպիա եւ վերջապէս հաստատուել են Մուլանի Գեղարեֆ քաղաքում: Խաչատուրն իր վրայ է վերցրել ընտանիքի պատասխանատուութիւնը եւ մինչեւ կեանքի վերջ չամուսնանալով՝ նուիրուել եղբայրների եւ քրոջ ընտանիքներին: Սուղանում Խաչիկի օգնութեամբ Առաքելը (1909, Ակն – 1961, Երեւան) եւ եղբայրները բացել են կտորի խանութ, նաեւ կտորեղէն են արտահանել հարեւան երկրներ: 1948-ին Առաքելը ընտանիքով՝ կնոջ եւ Աննա, Ալիս, Օհան զաւակների հետ հայրենադարձուել է Հայաստան, որտեղ էլ ծնուել է նրանց չորրորդ զաւակը՝ Ազատուիին: Ընտանիքի պատմութիւնը գրի է առել թողը՝ Առաքել Մեմիրճեանը, որը պատմութիւնը եզրափակել է այսպէս. «Պապիս եղբայրները, իրենց եղբօր վաղաժամ մահից յետոյ, Սուղանում տուն եւ հող են գնում՝ Առաքել Մեմերճեանի անունով եւ այն ժառանգում Առաքելի զաւակներին: Ժառանգելուց ուղիղ 50 տարի յետոյ, Սիրիայում բնակուող հօրաքոյրս կարողանում է գտնել փաստաբան եւ ժառանգութիւնը հաստատելով՝ այդ հողն ու տունը վաճառել Մուլանի Ղպտիսկան եկեղեցուն: Գումարի՝ հօրս հասանելիք բաժինը 50 տարի անց հասաւ ինձ»⁸⁵:

Պոլսահայ Սկրտիչ Ուլիկեանը (1904–1997) 16 տարեկանում մեկնել է հօր մօտ՝ Եգիպտոս: Այստեղ ստացել է ավտոմեխանիկի մասնագիտութիւն: Իմանալով, որ հարեւան Սուղանում ավտոգործի մասնագէտների մեծ պահանջարկ կայ, Սկրտիչը քիչ դրամագլխով մենակ մեկնել է Մուլանի Էլ-Օբեյդ քաղաքը, որտեղ չի ունեցել ոչ մի ծանօթ: Այնտեղ նա տեղեկացել է Էլ-Օբեյդում ապրող վերոյիշեալ Սարգիս Իզմիրլեանի մասին, ծանօթացել հետը եւ նրանից որոշ

⁸⁵ Առաքել Մեմիրճեան, <http://www.fayrenadardz.org/hy/lifestory/arakel-semerijan> (դիտում՝ 23.04.2020):

դրամական օժանդակութիւն ստանալով՝ գրանցել է մարդկանց եւ բեռների փոխադրումների գրասենեակ, շորս բեռնատարներով ապրանքափոխադրումներ իրականացրել ողջ Սուդանով մէկ: Սկրտիչ Ուիլկեանը մտերմացել է Էլ-Օբէյդի կինոթատրոնի տնօրէն, յոյն գործարար Կիրիակո Հերմեսի ու նրա հայուհի կնոջ՝ վերոյիշեալ Աղանի Հերմեսի հետ (ամուսնու մահից յետոյ նա է տնօրինել կինոթատրոնը): Սկրտիչն ամուսնացել է Աղանի Հերմեսի խարթումաբնակ քրոջ դստեր **Ազատուհի Մաթոսեանի** հետ: Վերջինս ծնունդով Անկարայի հայ ունետոր ընտանիքից էր. հայրը՝ **Մինասը**, եղել է Անդրանիկ զօրավարի զինուորը, այնուհետեւ ընտանիքով տարագրուել են, հաստատուել են Խարթումում, որտեղ Մինասն ունեցել է մի քանի խանութ: Սկրտիչ եւ Ազատուհի Ուիլկեանների հինգ զաւակները ծնուել են Սուդանում, եւս երկուսը՝ Խորհրդային Միութիւնում: Ուիլկեանները հայրենադարձուել են 1947-ին, 1949-ին ընտանիքով արտաքուտել են Սիբիր, որտեղ մնացել են մինչեւ 1955 թուականը: Այստեղ Ուիլկեանները, այլ արտաքուտների պէս, կեանքի եւ մտաւոր պայքար են մղել⁸⁶, մինչեւ որ ազատուելով՝ մեկնել են եւ մէկ տարի բնակուել Ուզբեկստանում, ապա վերադարձել են Հայաստան⁸⁷:

⁸⁶ Ուիլկեանը ԽՍՀՄ կառավարութեանը նամակ է գրել. «Մեզ արտաքսեցին Սիբիր՝ Ալթայի շրջան, որտեղ երկար ժամանակ դատը ձմեռ եւ սաստիկ սառնամանիքներ են: Իմ գալու օրումսից անորստունջ աշխատել եմ անտառում: Բայց հիմա անհնար է նման ցորտ եղանակին աշխատել: Մէկ օր աշխատում եմ եւ շարաքներով հիւանդ եմ, քանի որ մենք եկել ենք Աֆրիկայից ու ձիւն ու ձմեռ չեն տեսեր» (Н. Н. Аблажеёв, С чужбины на чужбину... Армянские иммигранты в алтайской ссылке (1949–1958 гг.), Новосибирск, 2018, стр. 140): Կարապետ եւ Սկրտիչ Ուիլկեանների մասին տես անդ, էջ 267:

⁸⁷ Անձնական հանդիպում Սկրտիչ Ուիլկեանի որդու՝ Անդրանիկ Ուիլկեանի եւ թոռնուհու՝ Ազատուհի Ուիլկեանի հետ (28.02.2020, Երեւան): Տես մեր յօդուածը՝ **Artsvi Bakhchinyan, From Sudan to Siberia: Mkrtych Ulukyan's Odyssey**, "The Armenian Mirror-Spectator," 4.06.2020 (նոյնը տես Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ հայերը, հ. 2, էջ 292-299): **Այծուի**

Գեոեւս 1900-ականների վերջին, 1910-ականների սկզբին Եգիպտոսի առաջնորդարանի նախաձեռնութեամբ Սուդանի հայերը միջոցառում են կազմակերպել՝ եկեղեցի կառուցելու նպատակով, սակայն ձեռնարկն անյաջող է անցել⁸⁸: Մինչև Խարթումում հայկական եկեղեցու կառուցումը տեղի անգլիկան եւ դպրոցի եկեղեցիներն իրենց շէնքերը միշտ տրամադրել են հայկական ժամերգութեան եւ պատարագների համար: Հայերի հանդէպ մշտապէս բարեացակամ է եղել մասնատրապէս Սուդանի անգլիկան եկեղեցու առաջնորդ Գոլին եպիսկոպոսը, որը նրանց տրամադրել է Ամենայն Սրբոց Մայր եկեղեցին Խարթումում, որտեղ հայերը դպրաց դասի միջոցով երբեմն իրենց պաշտամունքն են կատարել:

Եթովպիայի եւ Սուդանի հայերը ենթակայ են եղել Եգիպտոսի թեմին, որի առաջնորդը բազմազբաղ լինելով՝ քիչ անգամ է ժամանակ եւ պատեհութիւն ունեցել սոյն համայնքները հովուելու: Իսկ Խարթում այցելած հայ եկեղեցականները յաճախ չեն մեկնել հայաբնակ միւս բնակավայրերը. օրինակ, Խարթումից ինքնաշարժով տաս ժամուայ ճանապարհի վրայ գտնուող Գեդարեֆ հասնելու համար յաճախ մեծ գումար են պահանջել, որի պատճառով տեղի հայերը տարիներ ի վեր հայ քահանայ չեն տեսել:

Սուդանահայութիւնն առաջին անգամ այցելու հովիւ ունեցել է 1932-ին՝ ի դէմս Երուսաղէմի միաբան Տիրան վարդապետ (այնուհետ՝ եպիսկոպոս) Ներսոյեանի, որը մէկ ամիս մնացել է Սուդանում, հանդիպել Խարթումի, Գեդարեֆի, Օմդուրմանի, Աթբարայի եւ Բերբերի հայերին, պարբերաբար պատարագ մատուցել Խարթումի անգլիկան եւ դպրոցական եկեղեցիներում, կատարել է մօտ 40 մանուկների մկրտութիւնը, հանդիպումներ ունեցել նաեւ Խարթումի դպրոցների եւ յոյների առաջնորդների, Խարթումի ընդհանուր կառավարիչ Սարսֆիլդ

Բայիչինեան, Սուդանից Սիբիր. Սկրտիչ Ուլիկեանի ողիսականը, «Ազգ», 4.09.2020: **Арцив Бахчинян**, Из Судана – в Сибирь. Одиссея Мкртича Уликяна. «Литературная Армения», 2020, но 3, էջ 114-125:

⁸⁸ Տե՛ս Յովհաննէս Սէքւմեան, Սուդանահայ գաղութը, էջ 143:

Հոլի հետ, բանախօսութեամբ հանդես եկել հայ եկեղեցու մասին: Տիրան վարդապետը, ընդառաջելով սուղանահայերի ցանկութեանը, կազմել է եկեղեցու շինութեան յանձնախումբ եւ հանգանակութիւն է կատարել⁸⁹: Նրա մեկնելուց յետոյ անհրաժեշտ գումարը չի հաւաքուել, թէւ 1937-ին Սուղանի հայերը կրկին արծարծել են եկեղեցու շինութեան հարցը, ստեղծել նրա շինարարութեան նոր յանձնախումբ: Սակայն Եզիպտոսի առաջնորդական փոխանորդ Մամբրէ եպիսկոպոսի եւ համայնքի միջեւ եղած անհասկացողութեան պատճառով այդ ձեռնարկը եւս խափանուել է⁹⁰: Նոյն տարի եկեղեցու շինութեան հիմնադրամի յանձնախումբը դիմել է Երուսաղէմի Թորգոմ պատրիարք Գուշակճեանին՝ խնդրելով Սուղան ուղարկել անգլերէնին տիրապետող վարդապետ, որը կատանձնի համայնքի հովուութիւնը: Սակայն այս փափագը նոյնպէս ի դերել է եղել Եզիպտոսի Առաջնորդարանի՝ հարցին ընթացք չտալու պատճառով⁹¹: Սուղան այցելած հայրապետական երկրորդ նուիրակը եղել է Եզիպտոսից Խորէն աւագ քահանայ Մելիքշահը 1939-ին: Նա քարոզել է Գեղարեֆի Ազգային վարժարանի սրահում, նաեւ այցելել Մեղին, Քասալա եւ Մոհաֆազա գիւղերի եւ Խարթումի հայերին⁹²:

Սուղանում հայկական եկեղեցի կառուցելու հարցն արծարծուել է դեռեւս 1933-ին: Հին սերնդի սեւեռուն գաղափարն է եղել եկեղեցի կառուցելը, ուստի 20 տարում երկու անգամ հանգանակութիւն են կատարել, սակայն անհրաժեշտ գումարը չեն հաւաքել⁹³: 1949-ի վերջին, տաս տարի հոգետր հովուից զրկուած լինելուց յետոյ,

⁸⁹ Տե՛ս Կրօնական առաքելութիւն մը Սուտանի հայ գաղութին, «Միոն», 1932, Յունիս, էջ 192:

⁹⁰ Տե՛ս Դերեմիկ եպիսկոպոս Փոլատեան, Սուղանի հայ գաղութը, անդ, 26.07.1960:

⁹¹ Տե՛ս անդ:

⁹² Տե՛ս Լուրեր Սուտանէն, «Չարթօնք», 5.01.1940:

⁹³ Տե՛ս Գաղութ գաղութ, «Յառաջ», 12.09.1950:

սուղանահայութիւնն ընդունել է Եգիպտոսի առաջնորդարանի կողմից ուղարկուած Պարզեւ ծայրագոյն վարդապետ Վրթանէսեանին: Վերջինս հայ համայնքի վարչութեան անդամների հետ այցելել է Սուղանի ընդհանուր կառավարչին, նաեւ Խարթումի եւ շրջակայքի կառավարիչ Ուոլեսին, որը խոստացել է ամէն դիւրութիւն ընծայել հայկական եկեղեցու շինութեան համար: Կառավարիչն ասել է, որ հայերը վայելում են ոչ միայն իր, այլեւ տեղի Գէլթօրփ եպիսկոպոսի համակրանքը, «որովհետեւ Սուտանի մէջ անոնք հաւատարիմ, օրինապահ եւ աշխատասէր գաղութ մըն են»⁹⁴: Պարզեւ վարդապետը ժամերգութիւն եւ պատարագ է մատուցել, քարոզել անգլիկան եւ դպտիների եկեղեցիներում: Այցելել է հայ ընտանիքներին, օրհնել տները, կատարել մկրտութիւն, նշանդրէք: Եկեղեցու շինութեան համար գումար է հաւաքուել եւ ի պահ դրուել դրամատան մէջ⁹⁵:

Սուղանահայութեանը կարճ ժամանակով հոգետր այցելութիւն են կատարել նաեւ Յոսիկ քահանայ Նշանեանը, Պետրոս քահանայ Ֆերեճեանը եւ Ջաւէն վարդապետ Արզումանեանը⁹⁶: Սակայն ժողովուրդը ցանկացել է ունենալ ոչ թէ այցելու եկեղեցականներ, այլ սշտական հովիւ եւ եկեղեցի, որին կից վերջապէս կունենան նաեւ դպրոց եւ մանկապարտէզ: Խարթումի հայկական եկեղեցու հիմքերի օծութիւնը կատարուել է 1953-ի գարնանը, նորաբաց հայկական դպրոցի հարեանութեամբ: Եկեղեցու եւ դպրոցի շէնքերի կառուցման հիմնական գումարը տրամադրուել են **Չուարթ, Յակոբ, Նարդուիի եւ Էդուարդ Սէֆերեանները**՝ ի յիշատակ իրենց ամուսին եւ հայր Գրիգոր Սէֆերեանի⁹⁷: Եկեղեցու հիմնարկէքը եւ օծումը կատարել է Եգիպտոսի առաջնորդ Մամբրէ

⁹⁴ Հայերը Սուտանի մէջ, «Յառաջ», 5.01.1950: Տես նաեւ Սուտանի հայ գաղութը, «Ապագայ», 7.01.1950:

⁹⁵ Տես անդ:

⁹⁶ Տես **Դերենիկ եպիսկոպոս Փղատեան**, Սուղանի հայ գաղութը, անդ, 26.07.1960:

⁹⁷ Տես Գաղութ գաղութ, «Յառաջ», 4.11.1954:

արքեպիսկոպոս Սիրունեանը: Կառուցման ծախսը Սէֆերեաններից բացի հոգացել են սուղանահայ ազգայիններ Տելեմաք Քիրքճեանը, Գեորգ եւ Արսէն Ճերճեանները, Նափու Շալվարճեանը, Գեորգ Եիզիդպաշեանը եւ այլք⁹⁸: Եկեղեցու եւ դպրոցի ծախսը միասին եղել է 26 հազար անգլիական ոսկի: 1955-ին Խարթումի նորակառոյց եկեղեցում տեղի է ունեցել Աւարայրի ճակատամարտին նուիրուած յիշատակի հանդիսութիւն, երգեցողութիւն՝ հայկական վարժարանի տնօրէն **Բիզանդ Տիւկերեանի** ղեկավարութեամբ, աշակերտները երգել են, իսկ Տիւկերեանը բանախօսել է Աւարայրի մասին⁹⁹: Սակայն Խարթումի Ս. Գրիգոր Լուսաւորիչ հայոց եկեղեցին եւ դպրոցը պաշտօնապէս բացուել են 1957-ին՝ Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեանի օժմամբ, ներկայ են գտնուել անգլիկան եւ դպտիների եկեղեցիների առաջնորդները, բողոքական եկեղեցիների հովիւներ, իսլամական հոգեւոր առաջնորդը, պետական անճնաւորութիւններ, տարբեր երկրների դեսպանատների ներկայացուցիչներ: 1959-ին Խաղ արքեպիսկոպոս Աջապահեանի կարգադրութեամբ Սուղանի համայնքն ունեցել է իր ժամանակաւոր հոգեւոր հովիւը՝ ի դէմս **Սուրէն վարդապետ Չինչինեանի**, Լիբանանից: Նա է այցելել եւ հոգացել նաեւ Օմդուրմանի, Գեղարեֆի, Ուաղ Մաղանիի եւ միւս հայ համայնքների հոգեւոր կարիքները:

Խարթումի հայոց եկեղեցուն եւ դպրոցին շէնքեր են կտակել Սեդրակ Չորջը, Ֆիլիպ Աբգարեանը, Յարութիւն Պոյաճեանը, Մարի Չիլինկիրեանը, Գարեգին Ծատուրեանը, Թորոս Կիպեանը:

1960-ին Սուղանում հիւրընկալուել է Դերենիկ եպիսկոպոս Փօլատեանը, որը հովուական այց է կատարել ոչ միայն մեծ քաղաքներում բնակուող հայերին: Գեղարեֆում նա

⁹⁸ Տե՛ս **Յովհ. Վարժապետեան**, Սուտանի հայ գաղութը այսօր, «Զարթօնք», 13.02.1960:

⁹⁹ Տե՛ս Գաղութ գաղութ, «Յառաջ», 10.03.1955: Թէեւ լրատութեան մեջ նշուած է եկեղեցի, սակայն եկեղեցին բացուել է երկու տարի անց:

պատարագ է մատուցել դպրոցական եւ յունական եկեղեցիներում, որին մասնակցել են նաեւ ոչ հայեր, իսկ **Եղորարդ** եւ **Լուսին Գործեանների** տանը բանախօսել է Հայաստանի եւ Ս. Էջմիածնի մասին: Այցելել է նաեւ Ուադ Մադանիի փոքրիկ հայօջախին, առաջին անգամ այդ քաղաքում հայկական պատարագ մատուցել տեղի յունական եկեղեցում եւ քարոզել անգլիկան եկեղեցում: Գերեմիկ Եպիսկոպոսն այդ քաղաքների հայերին ցուցադրել է իր հետ բերած հայաստանեան շարժանկարները, որոնց ներկայ են եղել նաեւ սուղանցիներ¹⁰⁰:

1930-ականների սկզբին Խարթումում հիմնուել է Հայկական ակումբը (յիշտում է նաեւ Հայկական սրահ անուամբ), որտեղ երբեմն կազմակերպել են գեղարուեստական եւ թատերական հանդեսներ, սակայն առաւելապէս եղել է ընտանեկան հաւաքավայր: Ակումբի շէնքն իր բակով եղել է ազգային կալուածք, որն ակումբի վարչութիւնը վարձել է ազգային իշխանութիւնից: 1960-ի տնտեսալով՝ ակումբն ունեցել է մօտ 70 անդամ: Խարթումի հայերը սովորութիւն են ունեցել այնտեղ միասին դիմաւորել Կադանդը¹⁰¹:

1932-ին **Մարտիկ Չարայհանէլեանը** հիմնել է Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութեան Սուղանի մասնաճիւղը, որի բասկետբոլի խումբը ղեկավարել է Մանասէ Թեմպեքէճեանը, որը մինչ այդ բասկետբոլի հայկական խումբ է կազմել Գեղարեֆում: Բասկետբոլի այդ խումբը մրցել է տեղի անգլիական թիմի հետ: Մանասէի՝ եղբայր Կայծակ Թեմպեքէճեանը, աշակերտած լինելով հայ երգահան Բարսեղ Կանաչեանին, 1935-ին կազմակերպել է սուղանահայ առաջին երգչախումբը, նաեւ դպրաց դաս, որն անգլիկան եկեղեցում էկումենիկ ծիսակատարութիւնների, ժամանակ հայերէն է երգել:

¹⁰⁰ Գեղարեֆի հայերի մասին տես 30.07–3.08.1960:

¹⁰¹ Տես Գերեմիկ Եպիսկոպոս Փղառեան, Սուղանի հայ գաղութը, 28.07.1960:

1940-ին կազմուել է Խարթումի «Երիտասարդաց միութիւնը», որն ունեցել է սեփական «Հրանդ» մարզակումբը (16.800 քառակուսի մետր տարածքով)՝ ասելի քան ութսուն անդամով¹⁰²: Այն անուանուել է ի յիշատակ հովանաւոր Գրիգոր Սալըրեանի վաղամեռիկ որդու՝ **Հրանդ Սալըրեանի**: Միութեան նպատակն է եղել հայ երիտասարդութեան մէջ վառ պահել ազգային ոգին՝ սպորտի եւ մշակոյթի միջոցով:

Խարթումի Հայկական ակումբում հիւրընկալուել է 1920 թ. Հայաստանի Հանրապետութեան քանակում որպէս սպայ ծառայած եւ Հայաստանի վերաբերեալ հատորով հանդէս եկած անգլիացի Օլիվեր Բոլլոտինը¹⁰³: Այնտեղ երբեմն ելոյթներ են ունեցել հիւրախաղերով Խարթում եկած հայ երգիչներն ու դերասանները: 1930-ականներին Խարթումում հայերէնով ներկայացուել է Շեքսպիրի «Համլետը»՝ եգիպտահայ դերասանուհի Վալենտինա Ամիրայեանի գլխաւոր դերակատարմամբ¹⁰⁴: 1932 թուականին Խարթումում համերգով հանդէս են եկել երգիչ-դերասաններ Հայկ եւ Էմմա Արծիւները. այդ համերգի մասի գրախօսական է հրատարակել անգլիալեզու «Սուդան դէյլի հերալդ» թերթը (1932, մարտի 2)¹⁰⁵: Աւելի ուշ, 1960-ին երեք դասախօսութեամբ հանդէս է եկել Դերենիկ եպիսկոպոս Փօլատեանը՝ նաեւ ցուցադրելով հայաստանեան շարժանկարներ, իսկ տեղի Բարեսեր տիկնանց միութիւնը ներկայացրել է «Ուշ լինի, նուշ լինի» երաժշտախաղը: «Շատ գոհ մնացի: Սուդանի այս ակտիւրում վրայ այդպիսի յաջող խաղարկութիւն չէի ակնկալեր», – գրել է Դերենիկ եպիսկոպոսը¹⁰⁶:

Ըստ 1974-ին այնտեղ այցելած մի լիբանանահայի՝

¹⁰² Տե՛ս Գաղութ գաղութ, «Յառուջ», 12.09.1950:

¹⁰³ Տե՛ս Սարգիս Իզմիրլեան, Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին, էջ 63:

¹⁰⁴ Տե՛ս Artsvi Bakhchinyan, Valentina Amirayan (Arnaud): ‘Nightingale of the Nile’, “The Armenian Mirror-Spectator,” 24.11.2017:

¹⁰⁵ Տե՛ս Հայկ եւ Էմմա Արծիւներ, Աշխարհով մէկ, Երևան, 1964, էջ 140:

¹⁰⁶ Դերենիկ եպիսկոպոս Փօլատեան, Սուդանի հայ գաղութը, 29.07.1960:

«Հրանդ» մարզարանն «աւելի համալիր է, քան ակումբ: Հսկայ տարածութիւն՝ օժտուած մեծ լողաւազանով, ֆութպոլի եւ պասքէթպոլի դաշտերով, փոքրերու յատուկ խաղավայրով, բացօթեայ թատրոնով եւ արդիական ճաշարանով: Հողը հայութեան նուիրուած է պետութեան կողմէ: Բոլոր ազգերն ալ ունին նոյնանման համալիրներ, եւ բոլոր համալիրներուն հողը նոյնպէս նուիրուած է պետութեան կողմէ»¹⁰⁷: Իսկ հայաստանցի ճարտարապետ Վարազդատ Յարութիւնեանը, որ նոյնպէս այցելել է Սուդան, գրել է. «...միասին մեկնեցինք երիտասարդական մարզակումբ: Խաղահրապարակներ, լողաւազան, շուրջ 150 տեղանոց դահլիճ»¹⁰⁸:

1950-ին Սուդանում ապրել է մօտ 800 հայ (Խարթում, Օնդուրման, Գեդարեֆ, Ուադ Մադանի): Համայնքն ունեցել է բարեկեցիկ վիճակ, աղքատներ գրեթէ չեն եղել, մեծ մասը լեզուների տիրապետող, ունետր վաճառականներ եւ արհեստատրներ են: Խարթումում եւ Գեդարեֆում ունեցել են ազգային վարչութիւն: Խարթումի՝ հինգ հոգուց բաղկացած Ազգային վարչութիւնը, ընտրուած ազգայինների քուէներով երկու տարուայ համար, զբաղուել է ներքին խնդիրներով եւ լուծել հայերի միջու եղած ներքին տարածայնութիւնները (յատկանշական է, որ մինչեւ Բ. աշխարհամարտը հայերն իրար դէմ դատ չեն բացել, յետոյ մի քանի դէպք եղել է): Վարչութիւնն իր հերթին ընտրել է նաեւ հոգաբարձութիւն, որը սերտ կապեր է հաստատել Սուդանի կառավարական շրջանակների հետ: Չնայած համայնքն այդ ժամանակաշրջանում չի ունեցել դպրոց, երիտասարդները սահուն հայերէն են խօսել եւ կարդացել, բացի այդ, օտար դպրոցներում հայերէնին մէկ-երկու ժամ է յատկացուել: Երիտասարդները ծառայել են առնւտրական մեծ

¹⁰⁷ Պօղոս Շահմելիքեան, Դամբորդութիւն յիշողութեան մէջ, Անթիլիաս, 2018, էջ 283:

¹⁰⁸ Վարազդատ Յարութիւնեան, Աշխարհի ճամփաներով, մասն առաջին, Երեւան, 2000, էջ 185:

հաստատութիւններում: Խարթումում ունեցել են երկու ակումբ, տարեցների եւ երիտասարդների հաւաքատեղիները՝ վերոյիշեալ Հայկական ակումբը եւ Հայ Երիտասարդաց Միութեան ակումբը: Առաջինը համարուել է Խարթումի ամենաճոխ եւ արդիական ակումբը¹⁰⁹: Այն ունեցել է մի փոքր գրադարան, իսկ սրահը գործածուել է հայերեմի դասընթացների համար: 1950 թուականին ակումբը տեղափոխուել է ուրիշ մի ազգապատկան շէնք: Հայ Երիտասարդական Միութեան «Հրանդ» մարզակումբն ունեցել է ընդարձակ խաղադաշտ, կազմակերպել են հանդէսներ, երեկոյթներ, բանախօսութիւններ եւ քատերական ներկայացումներ, ինչպէս՝ եգիպտահայ դերասան Արփիարի ներկայացումները 1955-ին¹¹⁰:

1951-ին մարտին Խարթումի Ազգային վարչութեան նախագահ Շաւարշ Վանեանը պատրաստուել է քաղաքապետարանին ներկայացնել արդի ոճով կառուցուելիք հայկական դպրոցի նախագիծը: Նախատեսուել է ունենալ մեծ սրահ եւ մատոտ: Վանեանի եւ Միսաք Փափազեանի նախաձեռնութեամբ սուղանահայութիւնը հանգանակութիւն է կատարել Վենետիկի Միսիթարեանների համար¹¹¹: Իսկ 1951 թ. վերջին Խարթումում բացուել է հայկական ամենօրեայ դպրոց՝ 80 աշակերտով եւ երեք ուսուցչուհիով (**Նուարդ** եւ **Աղանի Նազգաշեաններ**, **Էլիզ Փալանճեան**), տնօրէնն էր Բիւզանդ Տիւկէրեանը¹¹² (Սուղանի հայութեանը վերաբերող

¹⁰⁹ Տես Հայերը Սուտանի մէջ, «Յառաջ», 3.02.1950: Ա. Սարեան, Միլանոյէն Խարթում (Սուտան), անդ, 16.03.1950: Գաղութ գաղութ, անդ, 12.09.1950:

¹¹⁰ Տես Սուտանահայ կեանք, «Արաքս», 2.06.1955:

¹¹¹ Տես Ա. Սարեան, Դպրոց կը շինեն Խարթումի մէջ, «Յառաջ», 21.03.1951:

¹¹² Տես Գաղութ գաղութ, «Յառաջ», 29.12.1951: Դերեմիկ եպիսկոպոսի վկայութիւնը, որ Խարթումի հայկական դպրոց եղել է արդէն Առաջին աշխարհամարտից յետոյ (տ.է.Ն. Դերեմիկ եպիսկոպոս Փոլստեան, Սուղանի հայ գաղութը, անդ, 26.07.1960), չի համապատասխանում իրականութեանը:

յօղուածներով աշխատակցել է Կահիրէի «Արեւին», 1958-ին տեղափոխուել է ԱՄՆ): Գործել է եռամեայ մանկապարտէզ, որից յետոյ ուսումը շարունակուել է ութամեայ դպրոցում: Շրջանաւարտները հիմնականում յաճախել են Խարթումի «Կոմբոն» քոլեջը, որտեղ պարտադիր կերպով նրանք շաբաթական երկու անգամ ունեցել են հայոց լեզուի պարապմունք: Սուդանահայերից ոմանք իրենց զուակներին ուսման են ուղարկել Կիպրոսի Մելգոնեան հաստատութիւն¹¹³:

Դպրոցի բացումից ի վեր տարեվերջի հանդէսները դարձել են Խարթումի հայերի հանրային կեանքի անբաժանելի մասը: Այսպէս, 1953-ի հոկտեմբերի 28-ին խարթումահայերը նշել են Թարգմանչաց տօնը, տեղի է ունեցել բանախօսութիւն, արտասանութիւն, ցուցադրուել են կենդանի պատկերներ: Դպրոցի տնօրէն Բիւզանդ Տիւկերեանը ներկաներին խնդրել է օժանդակել շէնքի համար պիտոյքներ ձեռք բերելու գործին, եւ կէս ժամում հանգանակուել է 600 եգիպտական ոսկի¹¹⁴: Ակումբում գործել է նաեւ շուրջ 80 սան ունեցող Ազգային նախակրթարանը՝ Պարսամեան մանկապարտէզը, բարերարի՝ Թորոս Պարսամեանի անունով: Վերջինիս նուիրած ավտոբուսն ամէն առաւօտ հաւաքել է հայ մանուկներին եւ բերել նախակրթարան: 1960-ին հայկական դպրոցն ունեցել է 50 աշակերտ, սակայն մօտ 60 հայ աշակերտ յաճախել են օտար վարժարաններ: Դպրոցի տնօրէն են եղել Սրբուհի Վեցմատեանը, Յովհաննէս Եղնիկեանը, իսկ հոգաբարձութեան անդամներ՝ Հայկ Պոտտրեանը, Երեմ Պէնկեանը, Նշան Բարձիկեանը եւ Յակոբ Խաչիկեանը: Ամենօրեայ դպրոցում դասաւանդումը եղել է հայերէն:

Դպրոցը հետեւեալ կերպ է նկարագրել Վարազդատ Յարութիւնեանը. «Դպրոցի տնօրէն Օնիկ Գասպարեանը հիփրանոց եկաւ ու միասին մեկնեցինք: Դպրոցի շէնքը կից է եկեղեցուն, իրար հետ կապուած են ընդհանուր նախասրահով:

¹¹³ Տես Արմէն Բարպաեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 107:

¹¹⁴ Տես Գաղութ գաղութ, «Յառաջ», 17.11.1953:

Յաջորդաբար այցելեցի գրադարանը, մանկապարտեզը, դասարանները: Պատերին փակցուած են Մուրթ Մեսրոպ Մաշտոցի, գորավարներ Վարդանի եւ Անդրանիկի, Վազգէն Ա-ի եւ Խորէն կաթողիկոսների լուսանկարները, ատյճներ, բանաստեղծութիւններ: Մի խօսքով, եկեղեցին ու դպրոցը միասին հայապահպանութեան մի կատարեալ օջախ են այստեղի անապատային շրջապատում... Կարծաւորեալ հիւրընկալուեցի տնօրէնի տանը: Դպրոցի դասատուներն ինքն ու կինն են: Բաւականին լաւ վարձատրուում են, սպրտում են բարեկեցիկ պայմաններում»¹¹⁵: Յարութիւնեանը հայկական ակումբում հանդէս է եկել Հայաստանի պատմական յուշարձանների պահպանութեան, Երեւանի անցեալին, ներկային ու ապագային նուիրուած դասախօսութեամբ: «Արդէն ակումբում էր դեսպանութեան աշխատակից Օդանանեանը: Դահլիճում ամէն ինչ նախապատրաստուած է: Նուիրածս ձայնապնակները դրուած էին ձայնարկիչին: Սրահում հնչում էր կոմիտասեան հայախունչ երաժշտութիւնը... Սրահն այլեւս այնքան լցուեց, որ ոսանք մնացին կանգնած:

Վահէ Խաչիկեանը բացման խօսք ասաց, ողջունեց ինձ եւ ընկերներին:

Նախ՝ մատուցուեց գեղարուեստական յայտագիր. ելոյթ ունեցաւ երիտասարդների երգչախումբը: Դահլիճում հնչեցին հայկական երգեր, արտասանուեցին Եղիշէ Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» եւ Միլվա Կապուտիկեանի «Խօսք իմ որդուն» բանաստեղծութիւնները:

....Յիրաւի, գեղեցիկ վերջաւորութիւն ունեցաւ Խարտումնու գտնուելու մեր վերջին օրը: Յամոզուեցի, որ հայը, որտեղ էլ գտնուի, ջանք է թափում հայ մնալ: Արաբական երկրներում կարծես դա յաջողում է»¹¹⁶:

1973-ին Խարթումի հայկական դպրոցն ունեցել է 40 աշակերտ: Ուսման վարձը եղել է խիստ խորհրդանշական՝

¹¹⁵ Վարագդառ Յարութիւնեան, Աշխարհի ճամփաներով, անդ:

¹¹⁶ Անդ, էջ 185-186:

տալեկան երկու սուղանական ֆունտ: Աշակերտներին ապահովել են ձրի սնունդ, դասագրքեր եւ փոխադրամիջոց: Դպրոցի տնօրէնն է եղել **Օշական քահանայ Աշըղեանը**¹¹⁷ (1923–^o), որը Սուղանում բնակուել է 1971-ից՝ հոգևոր կոչում ստանալուց յետոյ, մինչ այդ դասաւանդել է Իրաքի, Յորդանանի, Սիրիայի եւ Լիբանանի հայկական դպրոցներում: Դպրոցի ուսուցիչներն են **Թեմի Լաւաղեանը, Վեհանոյշ Թաթոսեանը, Օզլենա Քիրքճեանը, Մոլի Ճերճեանը** եւ արաբերէնի ուսուցչուհի Սաիդա Ֆաթախին: Դասաւանդուել են հայոց լեզու, անգլերէն, արաբերէն, հայոց պատմութիւն, հայ եկեղեցու պատմութիւն, ընդհանուր եւ Հայաստանի աշխարհագրութիւն, մաթեմատիկա, բնագիտութիւն, երաժշտութիւն եւ մարմնամարզութիւն: Հայերէնի դասաւանդումն իրականացուել է ՀԽՍՀ միջնակարգ դպրոցների համար նախատեսուած ծրագրով, մնացած առարկաներինը՝ Լիբանանի եւ Եգիպտոսի հայկական դպրոցների ծրագրերով¹¹⁸:

1954-ին Սուղանի հայերի ընդհանուր թիւը եղել է 850, որոնք բնակուել են Խարթումում (400 հոգի) եւ Օմդուրմանում: Խարթումի ազգային վարժարանն ունեցել է 125 աշակերտ: Համայնքն ապրել է խաղաղ, անաղմուկ եւ պատուաբեր կեանքով՝ յարգուելով մանաւանդ անգլիացիներից: Նոյն թուսլկանին «Հրանդ» մարզական միութեան պարահանդէտում Ազգային վարժարանի տնօրէն Բիւզանդ Տիւլկերեանի դեռատի դուստրը՝ **Սոնիա (Սոնիկ) Տիւլկերեանը**, արտասանել է մի արարերէն բանաստեղծութիւն՝ ձօնուած Սուղանին եւ Արաբական երկրների միութեանը: Ներկայ է եղել վարչապետ Իսմայիլ Էլ Ազհարին իր նախարարական կազմով, որն

¹¹⁷ Նրա անունը Սուղանում ԽՍՀՄ դեսպանութեան առաջին քարտուղար Վ. Գուսարովն իր մի զեկտցագրում յիշել է Աբրահամ Օշկատոն ձեւով (տե՛ս Արմէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 113-114):

¹¹⁸ Տե՛ս անդ, էջ 107-108:

անձամբ դրուատել է Սոնիկի ամուսնը, իսկ արաբալեզու թերթերը զովեստով են արտայայտուել հայուհու մասին¹¹⁹: Յաջորդ տարի եւս, երբ Խարթումի Ազգային վարժարանի տարեվերջի հանդեսին ներկայ են գտնուել Սուդանի կրթական նախարարը, Ազգային վարչութեան անդամները եւ օտար հրաւիրեալներ, եղել են հայերէն, արաբերէն եւ անգլերէն ելոյթներ, կրթութեան նախարարն իր հիացմունքն է յայտնել հայ մանուկների արաբերէն անթերի առողջանութեան առթիւ եւ դարձեալ զովել արաբերէն յուզիչ արտասանութեամբ աչքի ընկած Սոնիա Տիլկերեանին¹²⁰: Հետագայում Սոնիա Տիլկերեանը տեղափոխուել է ԱՄՆ, հանդես եկել հայկական թատերախմբերում, 1969-ին նկարահանուել է «Պաղտաւար արբար» հայկական շարժանկարի գլխաւոր դերում:

1955-ին Հայ ազգային վարչութիւնը սկսել է ստղանահայ ամբողջական վիճակագրութիւն կազմելու աշխատանքները՝ համայնքի անդամների մարդահամարի նպատակով հարցարաններ բաժանելով բոլոր հայերին¹²¹: 1956-ին Սուդանի անկախութիւն հռչակուելուց յետոյ տեղացի հայերը ստացել են քաղաքացիութիւն, նաեւ նոր հայեր են այստեղ հաստատուել Եգիպտոսից եւ Եթովպիայից՝ փնտրելով աշխատանքի հնարաւորութիւն: Այս թուականին Խարթումի հայկական դպրոցն ունեցել է 33 աշակերտ, իսկ մանկապարտէզը՝ 11 սան¹²²: Իսկ 1957-ին Խարթումի հայերը տօնել են Մայիսի 28-ի տարեդարձը դաշնակցական Ծ. Վեցմատեանի բնակարանում՝ բազմաթիւ համակիրների եւ բարեկամների ներկայութեամբ¹²³:

1959-ին հրատարակուած մի յօդուած¹²⁴ մանրամասն

¹¹⁹ Տե՛ս Գաղութ գաղութ, «Յառաջ», 25.11.1954:

¹²⁰ Տե՛ս Գաղութ գաղութ, «Յառաջ», 2.06.1955:

¹²¹ Տե՛ս Սուտանահայ կեանք, «Արքս», 2.06.1955:

¹²² Տե՛ս Ս. Գառապրեան, Սփիւռքահայ գաղթօջախներն այսօր, էջ 176:

¹²³ Տե՛ս Գաղութ գաղութ, «Յառաջ», 15.06.1957:

¹²⁴ Չաւէն վարդապետ Արզումանեան, Սուդանահայ գաղութը այսօր, էջ 41-42:

տեղեկություններ է տալիս այդ թուականին Սուդանի 800 հոգանոց (200 ընտանիք) համայնքի մասին, որոնցից 635-ն ապրել են Խարթումում եւ Օմդուրմանում, մնացածը՝ այլ քնակավայրերում:

Ազգային կազմակերպությունների մէջ յիշում են՝

ա) Սուդանահայ գաղութային ժողովրդ: Բաղկացած է եղել եօթ հոգուց, որոնք ընտրուել են երեք տարին մէկ անգամ: Եղել է իրաւատէրն ազգային անշարժ կալուածքների եւ պատասխանատուն պետութեան առջեւ: Այդ թուականին ժողովի նախագահը եղել է օրուայ հոգեւոր հովիւը, իսկ Սուդանահայ գաղութային ժողովի կազմը եղել է հետեւեալը՝ Գրիգոր Պոտուրեան (ատենապետ), Թորոս Պարսամեան (փոխատենապետ), Տիգրան Յարութիւնեան (ատենադպիր), Միսաք Փափազեան (փոխատենադպիր), Նազարէթ Էօֆիւրեան (գանձապահ), Լեւոն Չօլաքեան (խորհրդական): Ըստ Կանոնագրքի՝ Ժողովի իրաւասութիւնները հետեւեալն են՝ ներկայացնել համայնքը պետական իշխանութիւնների առջեւ, տնօրինել համայնքի սեփականութիւն հանդիսացող անշարժ եւ շարժական գոյքը, կտակային գումարները եւ նուիրատութիւնները, հսկել համայնքի հանդարտութիւնը եւ համերաշխութիւնը, հարկ եղած դէպքում միջամտել ազգային գոյծունէութեանը, քննարկել ամուսնական եւ այլ անձնական խնդիրներ:

բ) Եկեղեցու հոգաբարձութիւնը: Նշանակուել է գաղութային ժողովի կողմից, հսկել եկեղեցու եւ գերեզմանատան գործառնութիւնը: Այդ թուականի անձնակազմն էր՝ Պարոյր Կիւմիւշեան (ատենապետ), Վաղինակ Լուսինեան (ատենադպիր), Հայկ Տէր-Պետրոսեան (գանձապահ), Էդուարդ Ընքապապեան (խորհրդական), Աւետիս Մարկոսեան (խորհրդական):

գ) Դպրոցի հոգաբարձութիւն: Այն եւս նշանակուել է Գաղութահայ ժողովի կողմից: Հսկում է ազգային վարժարանի ուսումնական, վարչական եւ տնտեսական գործունէութիւնը: Այդ թուականի անձնակազմն է՝ Հայկ Պոտուրեան

(ատենապետ), **Գեորգ Պրոքթեան** (ատենադպիր), Նշան Բարձիկեան (գանձապահ), Յակոբ Խաչիկեան (փոխգանձապահ), Երեմ Պենկեան (հաշուապահ):

դ) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եւ Խարթումի Ազգային վարժարան: Եկեղեցու եւ դպրոցի շէնքերը միացած են առանձին բաժանումներով եւ յարմարութիւններով, հողն ու շէնքն ազգային կալուածքներ են, մօտաւորապէս 6000 քառակուսի մետր նուիրուած է հայ համայնքին Սուդանի կառավարութեան կողմից: Եկեղեցու հիմնարկէքը կատարուել է 1953-ին, օծուել է, ինչպէս նշուեց, 1957-ին՝ եգիպտահայոց առաջնորդ Մամբրէ արքեպիսկոպոս Սիրունեանի ձեռքով: Կառուցուել է հայկական ոճով, ունի ամէն յարմարութիւն: Դպրոցի շէնքն ունեցել է սրահ, տեսչարան եւ չորս դասասենեակ: Կրթական ծրագիրը կազմուած է եղել մանկապարտէզի եւ նախակրթարանի բաժիններից: Մանկապարտէզն ունեցել է երեք դասարան՝ տասնմեկ աշակերտով, նախակրթարանը՝ հինգ դասարան՝ երեսուներեք աշակերտով: Դպրոցի աւագ ուսուցիչն է **Յովհաննէս Եթենեգեանը**, ուսուցչական կազմը բաղկացած է չորս հոգուց:

զ) Հայկական ակումբ: Ծառայել է երեկոյեան ժամանցի համար, ազգային կալուածք է, որ ակումբը վարձել է ազգային իշխանութիւններից: 1959-ին ակումբն ունեցել է հինգ հոգուց բաղկացած վարչութիւն, անդամների թիւը եղել է 65:

է) «Հայ երիտասարդաց միութիւն»: Հիմնուել է 1940-ին, իր տրամադրութեան տակ է «Հրանդ» մարզարանը, 16 հազար քառակուսի մետր հողը տրամադրուած է միութեան կառավարութեան կողմից:

ը) «Հայ բարեսէր տիկնանց միութիւն»: Հիմնուել է 1954 թուականին, վարչութեան հիմնադիր անդամներն են եղել **Վիկտորեա Սալորեանը, Մարի Վանեանը, Մարօ Փանոսեանը, Զապէլ Տիվկերեանը, Վերժին Օհանեանը, Ռոզ Դուրյան, Գոհար Դանիէլեանը, Ալիս Ղազերեանը, Սեդա Շալվարճեանը**: Անդամների թիւն է 100, ունի իր վարչութիւնը, միութեան հաւարքավայրը: Միութեան նպատակն է եղել օգնել

չբաւորներին, աշխատել եկեղեցու բարօրութեան համար, իրենց եկամուտի մէկ չորրորդը յատկացում է եկեղեցուն: 1959-ին միութեան վարչութեան կազմն է եղել՝ Վեհանոյշ Բարձիկեան, Երան Գասպարեան, Լինդա Կիմիշեան, Չապէլ Կրօսըն, Ալիս Մարկոսեան, Չապէլ Նազարէթեան, Արշակունի Տէրունեան¹²⁵:

1950-ականների վերջին Սուդանի հայութեան թիւը եղել է 800, որից 650-ը բնակուել է Խարթումում, իսկ 1960-ին Սուդանի հայութեան ընդհանուր թիւը եղել է 1200: Նրանց մօտ 95 տոկոսն ընդունել է Սուդանի քաղաքացիութիւն (բացառութեամբ Լիբանանից գաղթած որոշ հայերի)¹²⁶: Սուդանահայերի ապրելակերպը տարբեր է եղել այլ համայնքներից: Շատ փոքրաթիւ լինելով՝ բոլորն անխտիր ծանօթ են եղել միմեանց: Սովորութիւն չի եղել միմեանց տուն այցելել, քանի որ ամէն երեկոյ համայնքի 99 տոկոսը հաւաքուել է «Հրանդ» մարգարանում: Ըստ մի այցելուի՝ «Կուսակցական վեճեր բնաւ տեւի չեն ունեցած, ոչ ալ կ'ունենան, քանի որ գաղափար չունին որեւէ հայկական կուսակցութեան մասին: Եղած են տարբեր հայկական գաղութներու մէջ եւ կը կարծեն, թէ ամէնէն համերաշխ գաղութն է, որ հանդիպած են»¹²⁷: Ամռան չոր եւ խիստ շոգ եղանակին համայնքը գրեթէ ամայացել է, մեծ մասամբ մեկնել են եւրոպական երկրներ: Գրեթէ բոլորն իրենց բարձրագոյն ուսումը ստացել են Անգլիայում, հագուազիւտ են եղել միայն երկրորդական ուսումով բաւարարուողները¹²⁸:

Յատկանշական է, որ Սուդանի հայերն իրենց զգոյշ են պահել Խորհրդային Միութեան հանդէպ՝ ձգտելով չանել

¹²⁵ Տես Դերենիկ Եպիսկոպոս Փոլատեան, Սուդանի հայ գաղութը, անդ, 29.07.1960:

¹²⁶ Տես Արմէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 105:

¹²⁷ Տես Չաւեն վարդապետ Արզումանեան, Սուդանահայ գաղութը այսօր, էջ 287:

¹²⁸ Տես անդ, էջ 287-288:

այնպիսի գործողություններ. որ տեղական իշխանությունների մէջ կասկած չառաջացնեն: Ըստ 1963-ի մի փաստաթղթի սուղանահայ **Սեդրակեանը** վկայել է, որ շատ հայեր կցանկանային այցելել ԽՍՀՄ, սակայն զգուշանում են այդ հարցով դիմել սուղանական իշխանություններին, որոնք անբարեհաճ են վերաբերում Խորհրդային Միութեանը: Այդ պատճառով էլ սուղանաբնակ հայերը կապ չունեն Սուղանում խորհրդային դեսպանատան հետ եւ ձեռնպահ են մնում Հայաստանից տպագիր նիւթեր ստանալուց: Նա վկայել է, որ Սուղանի ներքին գործերի նախարարությունը կասկածով է վերաբերուել իրեն, քանի որ վերջինս յաճախ նամակներ է ստացել Երեւանում հաստատուած իր աներձագից¹²⁹: 1967-ին Սուղանում ԽՍՀՄ դեսպանատան՝ հայ համայնքի մասին գրուած տեղեկանքում վկայուած է, որ երկրում սկսուած սուղանացունը եւ քողարկուած խտրականութիւնը ստիպել է տեղի հայերին եւ այլ եւրոպացիների հեռանալ երկրից (Կանադա կամ Աւստրալիա), իսկ ոմանք ցանկութիւն են յայտնել հայրենադարձուել Խորհրդային Հայաստան¹³⁰:

1960-ականների վերջին Սուղան այցելած ճարտարապետ Վարագրաստ Յարութիւնեանն իր ուղեգրութեան մէջ նշել է. որ Խարթումում հանդիպել է խորհրդային դեսպանատան աշխատակիցներ Մ. Օդամանեանին եւ Միքայէլեանին եւ իմացել, որ նախատեսուած են հանդիպումներ տեղի հայերի հետ: «Հայաստանից այսքան հեռու հայազգի գործիչների ու տեղաբնակ հայերի պիտի հանդիպեմ, թէւ կարճատեւ, բայց հետաքրքիր ու անմոռաց...

...Ահա եւ նրանք՝ եղբայրներ Ազատ եւ Վահէ Խաչիկեանները (երկուսն էլ՝ առեւտրականներ), դպրոցի տնօրէն Օնիկ Գասպարեանը: Պատմեցին գաղթավայրի ու նրա հոգսերի մասին: Մի ժամանակ հայերի թիւը այստեղ 1000-ի էր հասնում, հիմա կրճատուել է՝ հասել 250-300-ի: Ունեն

¹²⁹ Տես Արմէն Բարդախան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104-105:

¹³⁰ Տես անդ, էջ 106:

եկեղեցի, նրան կից 4 դասարանոց դպրոց, երիտասարդական մարզակումբ, նաեւ ակումբ՝ մեծերի համար: Գաղութի ղեկավարը Գրիգոր Բոտորեանն է (Պոտորեան – Ա. Բ.), մեծ ձեռնարկատէր, պատուատր եւ կիրթ մի անճնատրութիւն: Տեղի մեծահարուստներից Բարասմեանն ու Գիրջեանը (Քիրքճեա՞ն) նիւթապէս օգնում են հայապահպանութեան այստեղի օջախներին:

Ազատ Խաչիկեանը չորս անգամ այցելել է Հայաստան, ուրախացել մեր յաջողութիւններով, նաեւ դժգոհել է տուրիստների նկատմամբ եղած սահմանափակումների համար: Չեն թոյլատրել հանդիպել իր հայրենակիցներին: Դեսպանութեան աշխատակիցներ Միքայէլեանի եւ Օդամանեանի հետ չեն կարողանում ինչպէս հարկն է հաղորդակցուել, երկուսն էլ հայերէնին չեն տիրապետում»¹³¹:

Եւ մէկ վկայութիւն սուղանահայութեան մասին նոյն ժամանակաշրջանից: 1974-ի Նոր տարուայ շրջանին լիբանանահայ երաժիշտ Պօղոս Շահմէլիքեանը հայկական «Ֆայլ ֆինգըրս» նուագախմբով լեկնել է Սուղան՝ մէկ ամսով ճիւղացնելու սուղանահայերի կեանքը: «Որո՞ւ մտքէն կանցնէր, թէ պիտի ունենայինք հայկական գաղութ մը Սուտանի մէջ: Եւ ինչ գաղութ: Քանակով փոքր, սակայն որակով՝ զարգացած, նիւթապէս ինքնաբաւ ընդամէնը քանի մը տասնեակ ընտանիք»¹³², – գրել է նա: Արդէն օղակայանում նրանք զգացել են այն վստահութիւնը, որ Սուղանի իշխանութիւններն ունեցել են հայերի հանդէպ՝ իրենց ընդունելով պետական գործիչների բաժնում, առանց ուղեբեռի քննութեան: «Ֆայլ ֆինգըրս» խումբը յաջորդ տարի նոյնպէս հիւրընկալուել է Սուղանի հայութեան կողմից, սակայն Լիբանանում սկսուած պատերազմի պատճառով ստիպուած երեք ամիս մնացել է երկրում: «Սուտանահայութիւնը մէկ մարդու նման տէր կանգնեցաւ մեզի եւ առաջարկեց, որ հոն մնանք, որքան որ

¹³¹ Վարագրատ Յարութխնեան, Աշխարհի ճամփաներով, էջ 184-185:

¹³² Պօղոս Շահմէլիքեան, Ճամբորդութիւն յիշողութեան մէջ, էջ 283:

կամենանք»¹³³: Պօղոս Շահմելիքեանը սուրանահայերին բնութագրել է որպէս մեծ մասամբ զարգացած, արուեստասէր եւ ինքնահաստատուած անձինք: Նա յիշել է **Գալուստ Ամիրայեանին**, որը մտերիմ է եղել Սուրանի նախագահի հետ (հետագայում կնոջ՝ **Լիւսի Գարրիշեանի** եւ երկու որդիների հետ տեղափոխուել է ԱՄՆ), **Վարուժան Չիրքինեանին**. որը եղբօր հետ տնօրինել է ոչ միայն Սուրանի, այլեւ ողջ Աֆրիկայի ամենանշանաւոր կօշիկի գործարաններից մէկը («*Խարթում բնակող ռեւէ հայ մտահոգութիւն չունի գործ փնտռելու: Անվարան կը դիմէ Չիրքինեան եղբայրներուն եւ նոյն օրն իսկ արդէն ընդունուած է գործի, տեղացի գործատրներէն շատ ատելի բարձր վարձատրութեամբ*»¹³⁴), Կարօ Վանեանը, որին պատկանել են ձիարշախ լաւագոյն ձիերը, որոնց անուանել է Հայաստան, Արարատ, Մասիս եւ ծածկուած են եղել հայկական եռագոյն ծածկոցով, Գօգօ անունով մի հայ, որ գրօսաշրջիկներին ուղեկցել է վայրի կենդանիների որսորդութեան եւ **Արշօ** անունով մի հայուհու. որը եղել է Խարթումի ամենանշանաւոր վարսայարդարուհին¹³⁵: Շահմելիքեանը նկատի ունի **Արշօ Պալեանին**, որը յոյն ամուսնու եւ երկու զաւակների հետ այժմ բնակւում է Անգլիայում եւ Խարթումի առաջնակարգ ոսկերիչներից մէկը համարուած **Գրիգոր Լուսինեանին** (մահ. 2017, ԱՄՆ): Շահմելիքեանը հանդիպել է նաեւ մի սեւամորթի, որը մաքուր հայերէն է խօսել իրենց հետ: «*Ինչո՞ւ կը զարմանաք, – րսաւ, – գոյնը սեւ է ըսելով՝ հայ ըլլալու իրատունք չունի՞մ*»: Այդ խառնածինը ցանկացել է հայուհու հետ ամուսնանալ, բայց բոլոր հայ աղջիկները մերժել են նրա ամուսնութեան առաջարկը, իսկ սեւամորթի հետ չի բախտատրուել, որից յետոյ դարձել է գինեմոլ: Եւ յատկանշական է, որ նա «*Սուտանահայութեան միակ աղքատ հայն էր*»¹³⁶:

¹³³ Տե՛ս անդ, էջ 288:

¹³⁴ Անդ, էջ 284:

¹³⁵ Տե՛ս անդ, էջ 284-285:

¹³⁶ Անդ, էջ 286-287:

Վերոյիշեալ Վարուժան Սարգիս Չիրքինեանը (1917, Սուրբան – 2010) հետազայում բնակուել է Մեծ Բրիտանիայում: Կարօ Վանեանը եղել է Սուդանահայ գաղութային վարչութեան նախագահ: 1974-ին հիմնադրել է «Արարատ ինթերնէշնըլ» միութիւնը՝ ներկայացնելով աշխարհի խոշորագոյն հանրային առևտուր իրականացնող էլեկտրատէլեբոլայի եւ երկաթուղային ընկերությունները: «Արարատը» գրասենեակներ ունի Դուբայում, Խարթումում, Լաս Վեգասում եւ Լոս Անջելեսում: Կարօ Վանեանն այժմ բնակում է Դուբայում:

Մէկ անգամ յիշուած Աւետիս (Աւօ) Մարկոսեանը (ծն. 1937) բնակուել է Ջուբայում, զբաղուել սպիրտային խմիչների ներածմամբ: Ողջ կեանքում զբաղուել է աֆրիկեան կենդանիների որսով եւ տնօրինել «Վայրի կեանք սաֆարի» ընկերութիւնը՝ Սուդանում, գործած համանման երկու ընկերութիւններից մէկը: Այն զբօսաշրջիկներին սաֆարի է տարել Սուդանում եւ այլ երկրներում (Տանզանիա, Կոնգո, Չիմբաբվե, Չամբիա, Բոտսվանա): Նրան է պատկանել 17.298 քառակուսի մետր տարածքով սավաննա Ջուբայից արեւելք եւ Թրիթ քաղաքից հիւսիս¹³⁷:

Սուդանի առաջին կին բժիշկներից է եղել **Չարուիի Սարգսեանը** (1929, Խարթում – 1986, Լոնդոն): Ծնուել է **Վահան Սարգսեանի** (°–1930) եւ եգիպտոսի Աքիաթ Մոհամեդ Նաջմի ընտանիքում: Ունեցել է մի քոյր՝ **Թագուիի**: 1946–1952 թթ. ուսանել է Բիչընըրի բժշկական դպրոցում (այժմ յայտնի որպէս Խարթումի համալսարան): Չարուիին եւ Խալիդա Չահիրն առաջին սուդանցի կանայք էին, որ բժշկական կրթութիւն են ստացել ութ տղամարդկանց հետ: Չարուիին սեփական կլինիկա է տնօրինել Վադ Մադանիում: 1955-ին ամուսնացել է Սասդ Մուստաֆա Աբուելայի հետ (հետազայում՝ խոշոր գործարար) եւ թողել է բժշկութիւնը: 1960-ին իսլամ է ընդունել՝ վերանուանուելով Թուրայա Մոհամեդ Սասդ: Նրա մասին

¹³⁷ Նրա մասին տես Africa's Big Game Safaris Popular – and Costy, “Los Angeles Times,” 24.05.1984:

2020-ին յօդուածով հանդէս է եկել թոռնուհին՝ Եուսրա Արդէլմոնէյնը¹³⁸:

1956-ին Խարթումի համալսարանի արվեստի բաժինն է աւարտել **Շաքէ Բէշթեբեանը**¹³⁹ (1934–2018)՝ դուստրը **Գասպար եւ Մանիկ (Եաղութեան) Բէշթեբեանների** (1914–1990): Այնուհետեւ քրոջ՝ **Միզան Բէշթեբեանի** եւ մօր հետ տեղափոխուել է Մեծ Բրիտանիա, գրադարանավարի մասնագիտութիւն է ստացել Լոնդրոնում եւ 35 տարի աշխատել է Սթենֆորդի գրադարանում:

1960–1970-ական թթ. **Սուրեն Իսթենտերեանը** հանդէս է եկել Սուդանի «Ալ հիլալ» ֆուտբոլային ակումբում: Հետագայում եղել է «Ալֆա» ընկերութեան Սուդանի բաժանմունքի սեփականատէր եւ Սուդանի հայ համայնքի ղեկավար մարմնի անդամ:

1981–1984 թթ. Խարթումի ազգային վարժարանի տնօրէնն է եղել ծնունդով հալէպցի, Երեւանի պետական համալսարանի հայկական բանասիրութեան բաժանմունքի շրջանաւարտ **Մանուէլ Բէօսէեանը**, որի կինը՝ Մարոկկոյում ծնուած, Իտալիայում եւ Հայաստանում ապրած **Միրվարդ Չարեանը** (այժմ՝ Կանադա), դասաւանդել է տարրական դասարաններում եւ մանկապարտէզում, որոնցում այդ ժամանակ սովորել է 30 երեխայ: Բէօսէեանը կազմակերպել է բազմաթիւ մշակութային եւ մարզական միջոցառումներ «Հրանդ» մարզարանում:

Կինոդերասան **Իբրահիմ Խանը** (Աբրահամ Իշխանց, 1936, Ուադ Մադանի – 2007, Կահիրէ) իսլամացած հայի եւ մարոկկոյական ծագումով սուդանուհու զուակ էր: 1950-ականների սկզբին նկարահանուել է առաջին սուդանական կարճամետրաժ շարժանկարում՝ «Թոր Ալ-Կարր

¹³⁸ **Yousra Abdelmoneim**, Sudan's First and Youngest Female Doctor- Dr. Zarouhi Sarkissian, <https://www.yousraabdelmoneim.com/post/sudan-s-first-and-youngest-female-doctor-zarouhi-sarkissian> (դիտուած՝ 16.12.2022):

¹³⁹ Տես **Յովսէփ Թրզրեան**, Սուտանահայ յաջողակ ուսանողուհի օր. Շաքէ Բէշթեբեան, «Արաքս», 5.05.1956:

բուժարանում» վերնագրով: Այնուհետև տեղափոխուել է Եգիպտոս, որտեղ նկարահանուել է շուրջ 40 ֆիլմում, 80 հեռուստասերիալում եւ չորս թատերախաղում: Իբրահիմի եղբայրներից **Իսհաք Իշխանցը**, եղել է հոգեբոյժ, ունեցել անձնական բուժարան, իսկ **ժաք Իշխանցը**, եղել է ճարտարապետ: Վերջինս կրթութիւնն ստացել է Լեհաստանում եւ յայտարարել է, որ իր հայկական ու սուղանական արմատները հնարատրութիւն են տուել վերամշակելու ճարտարապետութիւնը՝ փոխանակ պարզ ընդօրինակման: Իսհաքը եւ ժաքը բնակուում են Լոնդոնում, ունեցել են նաեւ մի քոյր՝ **Լայլան**, որն ամուսնացած է եղել Սուրանի բնական ռեսուրսների նախարարի հետ¹⁴⁰: Ուշագրաւ է, որ թէեւ Իշխանցները ծնուել են իսլամացած հայի ընտանիքում, սակայն նրանց կենսագրութեան մէջ շեշտուում է իրենց հայազգի լինելը:

Խարթումի հայ համայնքից են սերել ամերիկեան ճարտարագէտ **Գառնիկ Երուանդ Թերզեանը** (1928–2010)՝ որդին տիգրանակերտցի Եզնիկ եւ Հռիփսիմէ Թերզեանների, կանադական թատրոնի, հեռատեսիլի ու կինոյի բեմադրիչ, դերասան եւ գրող **Հրանտ Ալեանաքը** (ծն. 1950), ամերիկեան թատրոնի եւ կինոյի դերասան **Կորկէն (Գուրգէն) Ալեքսանդրը**՝ որդին **Գեորգ** եւ **Աննի Իսքենտերեանների**, ամերիկեան երգչուհի եւ երգահան **Այլին Արթինը**:

1976-ին Սուղանում բնակուել է 350 հայ¹⁴¹: Համայնքի ընդհանուր ժողովի մարմնի պատուաւոր նախագահին է եղել **Գրիգոր Պոտուրեանը**, անդամները՝ **Էդուարդ Ճերճեանը**, **Միսաք Փափագեանը** («Սաֆարեան» առեւտրական

¹⁴⁰ Տե՛ս **Հայկ Աազեան**, Եգիպտական սինեմայի հայ տղամարդ դերասանները, «Չահակիր», 26.07.2018:

¹⁴¹ Տե՛ս **Արմէն Բարդաղեան**, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 107: Ուստիեւ անստոյգ է թում 1980-ի յունիսի տուեալը, ըստ որի սուղանաբնակ հայերի թիւը եղել է 300 ընտանիք (մօտ 2500 հոգի, տե՛ս անդ, էջ 114) եւ 1983-ի ապրիլի տուեալը, ըստ որի նրանց թիւը եղել է 600 (տե՛ս անդ, էջ 104):

ընկերութեան սեփականատէր), Գառնիկ Եկատեանը, Սուրէն Իսքենտէրեանը, Նազարէք Գալենքարեանը, **Նուպար Եիգիդրայաշեանը** («Ակֆա» ընկերութեան Սուդանի բաժանմունքի սեփականատէր) եւ Տիգրան Յարութիւնեանը: Համայնքում գործել է երիտասարդական կազմակերպութիւն (ղեկավար՝ **Պետրոս Փոլաճեան**), երգչախումբ, թատերական խմբակ: Մշակութային եւ զանգուածային միջոցառումները ղեկավարել է Օշական քահանայ Աշրղեանը: Նրա նախաձեռնութեամբ նոյն 1976 թուականին Խարթումի հայկական ակումբում ցուցադրուել են Հայաստանի եւ Կովկասի վերաբերեալ շարժանկարներ՝ մօտ 150 հոգու ներկայութեամբ¹⁴²:

Թէ քահանան, թէ՛ համայնքի երեւելի գործիչները պարբերաբար հանդիպել են Սուդանում ԽՍՀՄ դեսպանութեան պաշտօնեաների հետ՝ իրենց հետաքրքրութիւնն ու նուիրումներին արտայայտելով Խորհրդային Հայաստանի հանդէպ՝ խնդրելով նպաստել Հայաստանից դասագրքերի եւ «ֆիլմերի ստացմանը, հնարատրութիւն տալ սուդանահայ երիտասարդներին ուսումը շարունակել Հայաստանի բուհերում եւ այլն:

1976 թուականի տուեալով՝ Սուդանի հայապատկան միջոցները կազմել են՝ ա) կանխիկ դրամ՝ շուրջ 120 հազար սուդանական ֆունտ, բ) սնշարժ գոյք՝ շուրջ 500 հազար սուդանական ֆունտ, որոնք հիմնականում գոյացել են առանձին անհատների նուիրատրութիւններից: Ստացուող եկամուտները փակել են դպրոցի, մանկապարտեզի, ակումբի պահպանման եւ այլ միջոցառումների համար կատարուող ծախսերը, ինչպէս նաեւ որպէս նպաստ բաշխուել են առաւել չունետր ընտանիքներին¹⁴³:

Հայերի զանգուածային հեռացումը Սուդանից սկսուել է

¹⁴² Տէս անդ, էջ 113:

¹⁴³ Տէս անդ, էջ 108:

1970-ականներին, երկրում սկիզբ առած ազգայնացման, քաղաքականութեան պատճառով, երբ շատ հայեր եւ այլազգիներ գրկուել են իրենց ունեցուածքից: 1970-ականներին Սուդանի նախագահ Ջաաֆար Նիմէիրիի արմատական վարչակարգի ժամանակ հայերի մի շարք: սեփականութիւնը, նաեւ հայկական ակումբի հողատարածքը առգրաւուել է պետութեան կողմից: Ըստ գործարար, Խարթումում օժանելիքի խանութի տեր **Էլիզաբեթ Չինչինեանի**՝ այդ քաղաքականութեան պատճառով համայնքի թիւը սկսել է նուազել¹⁴⁴, որն ակտիւացել է 1983-ի սեպտեմբերին երկրի ընդունած շարիաթի (իսլամական օրէնքների) ու քաղաքական իսլամի աճի, նաեւ քաղաքական եւ տնտեսական անկայունութեան պատճառով¹⁴⁵: Սրան աւելացնենք նաեւ 1989-ին քաղաքական գործիչ Օմար ալ Բաշիրի կազմակերպած հեղաշրջումը եւ 2003-ի Դարֆուրի ցեղասպանութիւնը, երբ Սուդանի իշխանութիւնները ոչնչացրել են մի քանի աֆրիկեան ժողովուրդների: Այս աղետալի իրադարձութիւններից յետոյ հայերի թիւը եղել է 300: Սուդանահայերը տեղափոխուել են Եգիպտոս, ԱՄՆ, Կանադա, Մեծ Բրիտանիա եւ Ֆրանսիա:

2009-ին «Թայմ» շաբաթաթերթում լոյս է տեսել Բեթուա Շարմանի յօդուածը Սուդանում մնացած հայերի մասին: Ըստ հեղինակի՝ Խարթումի Սբ. Գրիգոր Լուսատրիչ եկեղեցին, որ մի ժամանակ ունեցել է 2000 ծովա, այժմ ունի ընդամենը 50-ը: Համայնքի համար խնդիր են խառնամուսնութիւնները, քանի որ շատ հայեր ստիպուած են ամուսնանալ ղպտիների եւ եթովպացիների հետ, որոնց զաւակներն արդէն հայախօս չեն,

¹⁴⁴ Տե՛ս **Betwa Sharma**, Keeping Armenia Alive in the Capital of Sudan, “Time Magazine,” 9.06.2009:

¹⁴⁵ Տե՛ս **Robert S. Kramer, Richard Andrew Lobban, Carolyn Fluehr-Lobban**, Historical Dictionary of the Sudan, անդ: Այս մասին մանրամասն տե՛ս **Տիգրան Ղանալանեան**, Ափրիկեան երկու համայնքների պարպումը. հայերի արտագաղթը Եթովպիայից եւ Սուտանից, Եգիպտոսի, «Սուտանի եւ Եթովպիոյ հայերը...», հ. 2, էջ 255-280:

խօսում են կամ արաբերեն, կամ ամհարի: Հայկական եկեղեցու քահանան՝ հայր **Գաբրիել Սարգսեանը**, ձգտել է վերածնել հայկական դպրոցը: Ոսկերչական խանութի տեր է եղել Պողոս Յովհաննեսեանը (այժմ՝ ԱՄՆ): Որպես համայնքի ականատր դեմք յիշուած է արդէն յիշուած Գրիգոր Պօզաճեանի թողը՝ **Ժիրայր Հոնր Զարլզ Պօզաճեանը**¹⁴⁶: Վերջինիս մեծ հայրը եղել է գիտատնտեսական ճարտարագէտ եւ Դարմալի քաղաքում ունեցել է սեփական ազարակ: Նրա չորս թոռները զբաղուել են գործարարութեամբ: **Դուիթ Պօզաճեանը** տնօրինել է արտածման եւ ներածման ընկերութիւն, **Գօգօ (Գրիգոր) Պօզաճեանը** (°-2021)՝ «Դարմալի էնթերփրայզ» ձեռնարկութիւնը, որը Դարմալի ազարակում զբաղում է զանազան մշակարոյսեր անեցնելով (մանգո, լայն, համեմունքներ, անասնակեր), **Նուպար Պօզաճեանը** պաշտօնավարել է ՄԱԿ-ի Խարթումի գրասենեակում (հետագայում տեղափոխուել է Աւտրալիա, որտեղ մահացել է): Ժիրայր Պօզաճեանին է պատկանում Խարթումի «Բիզ բայթ» ռեստորանը: Նա ամուսնացած է սիրիահայ **Լիւսի Պօզաճեանի (Նազարեան)** հետ: Վերջինս եղել է հայկական դպրոցի ուսուցչուհի եւ տնօրէն, իսկ դպրոցի փակուելուց յետոյ դարձել է արաբալեզու դպրոցի տնօրէն: Նրանք ունեն երկու որդի՝ **Կարօ** եւ **Հրանտ**: Կարօ Պօզաճեանը մասնագիտութեամբ թուային տուեալների գիտնական է, 2016-ից բնակում է Երեւանում, իսկ Հրանտը Խարթումում աշխատում է ճանապարհորդական ընկերութիւնում եւ ունի սեփական օժանելիքի խանութ:

Այլ հայ գործարարներից կարող ենք նշել Խարթումի «Սէֆերեան եւ ընկ.» ֆիրմայի ներկայացուցիչ, բարերար, ծնունդով լիբանանցի **Հրաչ Մարտիկեանին** (նրաւ է պատկանել Խարթումի մեծագոյն սուպերմարկետներից մէկը, նուիրատութիւններ է կատարել հայ եկեղեցում Հայաստանում եւ արտերկրում), «Օրթեփ» ճարտարագիտական եւ

¹⁴⁶ Տե՛ս **Յ. Ծուլիկեան**. Հայ համայնքը կը նօսրանայ Սուտանի մէջ, «Ժամանակ», 24.09.2009:

առեւտրային կազմակերպութեան նախագահ **Սեդրակ Աւետիս Եզիկեանին** (մահ. 2023) եւ «Ջոզեֆ» ընկերութեան ղեկավար **Ջոզեֆ Վարդանին**, որը Խարթումում ունի երոնիտի խանութ:

Հաւանաբար վերոյիշեալ Թագուր Ազարիկի սերունդներից է կենսաբան, Մուդանի Գիտութիւնների ակադեմիայի գիտաշխատող **Մոնա Ա. Ազարիկը**:

2011 թուականին սուդանահայութեան մասին գրուած ճանաչողական մի յօդուածում հայերի թիւը նշուած է 50, հիմնականում՝ տարեցներ, որոնց մէջ կան բժիշկներ, բանկի աշխատողներ: Ամենայայտնի ընտանիքներն են **Պօզաճեանները, Ենուվեանները եւ Չինչինեանները**: Յօդուածը եզրափակուած է այսպէս. «Մուդանի հայերը նրանց շարքում են, ովքեր այլեւ ոչ մի դեր չեն խաղում՝ հաշուի առնելով հիմնականում համայնքի անկարողութիւնը եւ արտագաղթի շարունակուող տրամադրութիւնները: Նրանք դիմացել են քաղաքացիական պատերազմներին եւ երկրի պառակտումներին, տնտեսական փլուզմանը եւ կրօնական հետապնդումներին, որոնք, ի վերջոյ, հանգեցրին նրանց քանակի կտրուկ անկմանը: Եւ թում է, որ Մուդանի հայերն արդէն համակերպուել են այն մտքի հետ, որ համայնքի պատմութիւնն աւարտուած է»¹⁴⁷: Նոյնն է ասում նաեւ Պօղոս Շահմելիքեանը. «Փոքրաթիւ այդ գաղութէն այսօր քանի մը ընտանիք մը միայն մնացած է: ...Հայկական գաղութ մը եւս կորսուեցաւ»¹⁴⁸:

Իրականում, այն ամբողջովին չի անհետացել, թէեւ ակնյայտ է, որ նրա վերացումը ժամանակի հարց է: 2020 թուականի տուեալով Մուդանում բնակուած է 50 հայ՝ Խարթումում եւ Գուդարեֆում: Կան մի քանի սիրիահայ ներգաղթածներ, որոնք գրաւում են փոքր բիզնեսով: 1951-ին բացուած հայկական դպրոցը փակուել է 2005-ին՝ աշակերտների նուազ թուի պատճառով: Պետութիւնը գրաւել է

¹⁴⁷ Арман Акопян, Последние армяне Судана, «Ноев ковчег», октябрь, 2011

¹⁴⁸ Պօղոս Շահմելիքեան, Ճամբորդութիւն յիշողութեան մէջ, էջ 288:

նաեւ «Հրանդ» մարզարանի տարածքը: Հատուկենա սուղանահայեր (անգամ՝ իւռոնամուսնութիւններէից ծնուած) ձեռք են բերել Հայաստանի Հանրապետութեան անձնագրեր՝ շարունակելով բնակուել Սուղանում¹⁴⁹:

Սուղանահայ համայնքի վերաբերեալ գլուխն ամփոփենք՝ նկատելով, որ իր պատմութեամբ եւ նկարագրով այն համեմատելի է եզիպտահայ եւ արաբահայ միւս գաղթօջախների հետ, բացառութեամբ այն հանգամանքի, որ սուղանահայութիւնը գերծ է մնացել ազգային կուսակցութիւններից:

Տանգանիա

Ըստ Հրաչեայ Աճառեանի՝ 1891-ի տուեալով Հնդկական ովկիանոսի ափին գտնուող Լինդի քաղաքում բնակուել է մի հայ առետրական, իսկ 1901-ին կազմաւորուել է Դար-էս-Սալամի (Տանգանիա) հայկական փոքրիկ համայնքը, կազմուած եզիպտահայերից եւ հնդկահայերից¹⁵⁰: Ոչ մի լրացուցիչ տուեալ այս փոքրիկ գաղութի մասին առայժմ մեզ չի յաջողուել գտնել:

21-րդ դարում հայաստանցի որոշ գործարարներ փորձել են բիզնես սկսել Տանգանիայում, որոնք յաջողութեամբ չեն պսակուել: 2015–2018 թթ. Տանգանիայում է աշխատել երեսանցի գործարար Մանուկ Գեորգեանը, որը Դար-էս-Սալամում գրանցել է «Լաւաշ բեյքրի» հացի արտադրութեան ձեռնարկութիւնը՝ լաւաշ մատակարարելով քաղաքի ամենահեղինակատր խանութներին: Արտադրանքի վրայ գրուել է «հայկական հաց»՝ փաթեթի վրայ նշելով լաւաշը որպէս ԵՈՒՆԵՍԿՕ-ի կողմից մարդկութեան ոչ նիւթական

¹⁴⁹ Սուղանի հայութեան ներկայ իրավիճակի վերաբերեալ մի շարք տուեալներ մեզ են տրամադրել սուղանահայեր Կարօ Պողանճեանը (այժմ՝ Հայաստան) եւ Յասմիկ Գողանճեանը (այժմ՝ ԱՄՆ), որոնց յայտնում ենք մեր շնորհակալութիւնը:

¹⁵⁰ Տե՛ս Աճառեան, Հայ գաղթականութեան պատմութիւն, էջ 473-474:

Ժառանգութեան նմուշ:

Տոգո

1967-ին Արեւելեան Աֆրիկայի Տոգո պետութեան մայրաքաղաք Լոմէում հաստատուել է ծնունդով գործարար **Վազգէն Բաքալեանը** (Պագալեան): Ծնուել է Լառնակայում (Կիպրոս), մանկուց բնակուել է Բէլքութում: Լիբանանում նա առաջինն է բացել մակարոնի գործարան եւ արաղաց: 1960-ականներին Տոգոյում հաստատուած լիբանանցի մի գործարարի առաջարկով ներդրումներ է կատարել այդ երկրում, զբաղուել է ցորենի եւ ալիւրի արդիւնաբերութեամբ եւ վաճառքով: Կարճ ժամանակում յարծել է այդ բնագաւառում մենիշխան ոչ միայն Տոգոյում, այլեւ հարեան Գանայում (Թեմա եւ Թակորադի) եւ Բէնինում: 1971-ին Լոմէում հիմնել է եւ մինչեւ մահը ղեկավարել Տոգոյի արաղացների գլխաւոր ընկերակցութիւնը: Ժամանակին Լոմէի միակ հայ բնակիչ Վազգէն Բաքալեանը եւ իր կին Էլիզաբեթը յարգուած անձինք են եղել Տոգոյի հանրապետութեան կողմից, լայն կապեր են ունեցել կառավարական շրջանակների եւ մասնաւորապէս նախագահ Էյադեմայի հետ: Որդին՝ Գանայում բնակուած Սերժ Բաքալեանը, շարունակել է իւր գործը¹⁵¹:

Ուզանդա

Միսիթարեան միաբանութեան անդամ հ. **Վահան Վարդապետ Յովհաննէսեանը** (1894, Չաւախք – 1977, Վենետիկ), որը 1937-ից եղել է Ադիս Աբեբայի «Գէորգոֆ» հայկական վարժարանի տնօրէնը, 1943-ին գերեզմարուել է անգլիացիների կողմից եւ մինչեւ 1947-ն անցկացրել Բենիայի եւ Ուզանդայի համակենտրոնացման ճամբարներում:¹⁵²

¹⁵¹ Տես **Յակոբ Վարդիվառեան**, Արեւմտեան Աֆրիկէի ջաղացպան հայը, «Նոր Մարմարա», 6.07.1988:

¹⁵² Տես **Հ. Վահան Վարդապետ Յովհաննէսեան**, «Յառաջ», 21.12.1977:

Հետագայում իր յիշողութիւններում նա գրել է, որ Ուզանդայում տեղեկացել է այնտեղ ապրող երկու հայի մասին: Սէկը եղել է Ջինջա քաղաքում բնակուող ներածում-արտածումով զբաղող առետրական **Արթինը**, ծագումով Տիգրանակերտի (Դիարբեքիի) շրջանից, որ եղել է թուրքախօս: Յովհաննէսեանը նշել է, որ շատ հիասքափուել է՝ հանդիպելով հայի, որը մայրենի լեզուն չի իմացել:¹⁵³ Իսկ միւսը երկրում բաւական յայտնի մեծահարուստ, Էնթերե քաղաքի բնակիչ **Մայրլ Մոսէսն** էր, որին են պատկանել Վիկտորիայի շրջանի գրեթէ բոլոր հիւրանոցները եւ հանքեր՝ Թրանվալում: Վերոյիշեալ Մայրլ Մոսէսը (1873, Բաղդադ – 1.10.1955, անդ), որի բուն անունը Միքայէլ Մովսիսեան էր, նախնական կրթութիւնն ստացել է Բաղդադի Ս. Թարգմանչաց վարժարանում, ապա՝ Հնդկաստանում: Այնտեղ պաշտօնավարել է ծովային առետրանաւերի վրայ որպէս գրագիր: Առաջին աշխարհամարտի ժամանակ ծառայել է բրիտանական բանակում: 1910-ականներին տեղափոխուելով Ուզանդա՝ իր գործընկեր դոկտոր Հենթերի հետ միասին ընդգրկուել է բամբակի առետրի մէջ, ապա միասին ձեռնարկել են նաեւ ոսկու եւ անագի հանքագործութիւն եւ ձգախեղձի (կաուչուկ) մշակութիւն՝ մեծ յաջողութեան հասնելով ու տեր դառնալով մեծ հարստութեան: 1950-ին Հենթերի մահից յետոյ Մայրլ Մոսէսը ձեռք է բերել նրա բաժինները՝ դառնալով բովանդակ հարստութեան միակ սեփականատէրը: Յատկանշական է, որ այս հայորդին է հիմնել Ուզանդայի առաջին պարբերականը՝ «Ուզանդա հերալդը» 1912-ին, դառնալով նրա տէրն ու տնօրէնը: Այն շարունակուել է մինչեւ 1950-ականները՝ լինելով երկրի երկու հիմնական անգլիալեզու պարբերականներից մէկը: Բրիտանական կառավարութեանը իր հաւատարիմ ծառայութեան համար պարգևատրուել է Բրիտանական կայսրութեան շքանշանով: Մոսէսն անգաւաթ է մահացել, եւ յայտնի չի եղել նրա թողած հարստութեան

¹⁵³ Տե՛ս Հ. Վ. Յովհաննէսեան, Սիրտս հայ մը կ'ուզէր, «Յառաջ», 1969:

չափը¹⁵⁴:

Քենիա

Առաջին հայը, որ յայտնուել է Քենիայի տարածքում, եղել է նախորդ ենթազխտում յիշուած Մայքլ Մոսէսը, որը եկել է մօտ 1917-ին եւ զբաղուել հիւրանոցային բիզնէսով¹⁵⁵:

Քենիայում համայնքը սկսել է ձեւատրուել 1940-ականների կէսից՝ ի հաշիւ Եգիպտոսից, Սուդանից եւ Եթովպիայից արտագաղթած հայերի:¹⁵⁶ 1954-ի տունեալով՝ Քենիայում բնակուող հայերի թիւը 45 է, 30-35-ը՝ Նայրոբիում: Ազգային կեանք չի եղել: 1955-ին Քենիայում բնակուել է տաս տուն հայ ընտանիք, գործարարներ եւ պաշտօնեաներ, բոլորն էլ բարեկեցիկ վիճակում: 1958 թուականի վերջին Քենիա է այցելել Դերենիկ Եպիսկոպոս Փօլատեանը, որը երկրի հայութեան թիւը նշել է 79 հոգի: Ըստ նրա՝ «*Գրեթէ բոլոր հայերն ալ յտեղծ եկած են Քենիա եւ հետզհետէ բարելաւած են իրենց կացութիւնը եւ ոմանք ալ նիւթական կարեւոր դիրքի տիրացած*»¹⁵⁷: Եթէ հայ հոգեւորական է այցելել Քենիա՝ յոյն

¹⁵⁴ Տէն Վարդան Մեքընեան, Մայքըլ Մոզըս, «Արաքս», 28.12.1957: Արեւելեան Աֆրիկայում ասիական քաղաքական գործիչներին նուիրուած մի հատորում Մայքլ Մոսէսը սխալմամբ ներկայացուել է որպէս «*հնդկական ծագումով տարագիր Պարսկաստանից*» (տէն Robert G. Gregory, Quest for Equality: Asian Politics in East Africa, 1900-1967, Hyderabad and London, 1993, էջ 182):

¹⁵⁵ Տէն Քենիայի հայ գաղութը, «Արարատ», 6.09.1967: Տէն նաեւ Արմէն Բարալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

¹⁵⁶ Քենիայի հայերի մասին տունեալները վերցուած են հետետեալ աղբիւրներից՝ Գաղութ գաղութ, «Յառաջ», 3.04.1954, անդ, 7.10.1955, անդ, 11.04.1958: Հայերը Քենիայի մէջ, «Պայքար», 2.11.1955: Մարտիրոս Մոզան, Ճամբու մօթեր. Նայրոպիէն (Քենեա, Արեւել. Աֆրիկէ) Նիւ Եօրք, «Հայրենիք», 13.02.1957: Լուրեր Քենիայէն, «Հայաստանի կոչմակ», 27.03.1955, էջ 837: Դերենիկ Եպիսկոպոս, Աֆրիկէի հայերը, «Չարթօնք», 17-19, 21.06.1960:

¹⁵⁷ Տէն Դերենիկ Եպիսկոպոս, Աֆրիկէի հայերը, «Չարթօնք», 17.06.1960:

համայնքը սիրով տրամադրել է իր եկեղեցին հայերին¹⁵⁸:

Քենիաբնակ հայերից առաջին հերթին յիշենք հայագիր գրող, լրագրող, լեզուների ուսուցիչ **Յովսէփ Թըզըրեանի** (1884–1980) անունը: Առաջին աշխարհամարտի ժամանակ զորակոչուել է օսմանեան բանակ, որը լքել է ընկերոջ հետ: Հետագայում երկուսով միացել են ազատագրական ջոկատներին, Յովսէփը որպէս թարգմանիչ աշխատել է բրիտանական բանակում: Ապրել է Յունաստանում (Միտիլիից աշխատակցել է Թեոդիկի «Ամէնուն տարեցոյցին»), Եգիպտոսում, Սուդանում, Քենիայում, կեանքի վերջում՝ ԱՄՆ-ում: Քենիա է տեղափոխուել Խարթումից, որտեղից սուդանահայ համայնքի մասին լուրերով պարբերաբար աշխատակցել է եգիպտահայ «Արաքս» պարբերականին¹⁵⁹: 1955-ին հաստատուել է Նայրոբիում, բացել է սեփական գրասենեակ, որտեղ անգլերէնի, ֆրանսերէնի եւ արաբերէնի մասնաւոր դասեր է տուել օտարներին: Բանաստեղծութիւններով հանդէս է եկել ամերիկահայ «Հայաստանի կոչնակ» եւ «Նոր օր» պարբերականներում,¹⁶⁰ յօրուածներով՝ Նայրոբիի անգլիալեզու մամուլին, մասնաւորապէս «Աֆրիքան ստանդարտ» թերթին: *«Իբրեւ գրող եւ վաստակաւոր ուսուցիչ՝ ան կը ջանայ հայկական զգացումը վառ պահել Ափրիկէի այդ հեռաւոր ափերը ապաստան գտած հայերուն մէջ: Յիրաւի անոնց անսփիլոն քահանան է ինք»*¹⁶¹: Յովսէփ եւ **Կիպա Թըզըրեաններն** ունեցել են մի դուստր՝ **Մարլէն Հինտոյեան** եւ մի որդի՝ **Տրդատ Թըզըրեան** (1922, Յունաստան – 1982, Սան

¹⁵⁸ Տես Փոքրաթիւ հայ գաղութ մը Արեւելեան Ափրիկէի մէջ, «Զարթօնք», 2.09.1966:

¹⁵⁹ Տես, օրինակ, Սուտանահայ յաջողակ ուսանողուի օր. Շաքէ Քէշքեբեան, «Արաքս», 5.05.1956: Սուտանահայ կեանքէն, անդ, 23.06.1956:

¹⁶⁰ Տես նրա «Պարտեզիս թառամած ծաղիկները» բանաստեղծութիւնը, «Նոր օր», 6.05.1969:

¹⁶¹ **Դերենիկ Եպիսկոպոս**. Ափրիկէի հայերը, «Զարթօնք», 17.06.1960:

Ֆրանցիսկո): Վերջինս եղել է «Մարուաթա» մեքենաների ընկերութեան տնօրէնը, ապա՝ ֆրանսիական «Միմկա» ինքնաշարժի ընկերութեան Արեւելեան Աֆրիկայի միակ մասնաճիւղի տնօրէնը եւ «Էյր ֆրանս» օդանաւային ընկերութեան առեւտրական նեկայացուցիչը Արեւելեան Աֆրիկայի երեք երկրում (Քենիա, Ուգանդա, Տանզանիա): Նախքան Քենիայից հեռանալը՝ տնօրինել է սեփական ճամփորդական գործակալութիւն: Կատարելապէս տիրապետել է ֆրանսերէն, անգլերէն, արաբերէն, յունարէն եւ Քենիայի տեղական սլահիլի լեզուներին: Ամուսնացած է եղել Վերժին (Վիրջինիա) Թըզըրեանի (1921–2020) հետ, ունեցել է երեք որդի, որոնցից **Եսայի-Եսօ** (ծն. 1947) եւ **Ժիրայր** (ծն. 1949) **Թըզըրեանները** 1962-ին առաջինն են հանդիսացել Նայրոբիի անգլիական երկու դպրոցներում:¹⁶² Եսօն 19 տարեկանում աւարտել է Նայրոբիի Լորդ Դէլամէր անգլիական բարձրագոյն վարժարանը, ապա մետաղագիտական ճարտարագիտութիւն է ուսանել ԱՄՆ-ի Փասիֆիք համալսարանում, պաշտօնավարել մի շարք հաստատութիւններում: Ի դէպ, Եսօ Թըզըրեանի դուստրն էրզշուհի եւ թատերագիր, ամերիկահայ «Չուլալ» վոկալ տրիոյի անդամ Անայիս Թըզըրեանը (Թեքերեան):

1954-ին Քենիայի մայրաքաղաք Նայրոբիում մասնաւոր այցով եղել է Նիւ Եօրքի բնակիչ Սարտիրոս Մոզեանը, այցելել քրոջն ու քեռայրին՝ **Սաքենիկ** եւ Արամ **Տասնապետեաններին**: Արամ Տասնապետեանը (մահ. 1958) ծնունդով Երուսաղէմից էր, անդամ ՀՅԴ կուսակցութեան: Նրանք ունեցել են երեք զաւակ՝ **Մարի**, **Յակոբ** եւ **Սարգիս Տասնապետեաններ**: Մոզեանը Նայրոբիում հանդիպել է նաեւ **Խրիշայեան** եւ **Սիմոնեան** ընտանիքներին, «*որոնք Նայրոպի գտնուած օրերուս ալ իրենց հայկական ստանդական հիւրասիրութիւնը անպակաս ըրին*»:¹⁶³

Մարի Տասնապետեանը (Մերի Բէյթս) 1950-ից եղել է

¹⁶² Տէն Երկու պատանիներու յաջողութիւնը, «Արաքս», 17.11.1962:

¹⁶³ **Մարտիրոս Մոզեան**, Ճամբու նօթել.....

Քենիայի կառավարչի անձնական քարտուղարը, կարևոր պաշտոն զբաղեցրել Գաղթականության ազգային բաժանմունքում: Ամուսինը՝ անգլիացի Վ. Բէյթսը, հիանդանոցներում իրականացրել է մեքենաշինական աշխատանքներ, որոշին՝ **Ռորերա Բէյթսը**, ուսանել է Լոնդոնում: **Յակոբ Տասնապետեանը** եղել է կառավարական երկրաչափ եւ «Շէլ» ընկերության գլխավոր պաշտօնեաներից: 1956-ին Նայրոբիում կայացել է նրա նշանախօսութիւնը խորթումարնակ **Բրաքին Սելբոնեանի** հետ: Յովսէփ Թրզրեանը հանդէս է եկել հայերէն եւ անգլերէն ճառով, իսկ հայ, յոյն եւ անգլիացի ներկաները կատարել են հայկական պարեր¹⁶⁴: Սարգիս Տասնապետեանը բնակուել է Նայրոբիից 206 մղոն հեռու Էլդորեայում, զբաղուել ազարակապանութեամբ եւ կաթնատնտեսութեամբ:

Մովսէս Հինտոյեանը իր քեռայրի **Վահրամ Խրոյպեանի** եւ գաւակների հետ սեփականատէր է եղել մի մեծ լուացքատան եւ քիմիական մաքրման կենտրոնի Նայրոբիից դուրս՝ 70-ից ատելի աշխատողներով: Այդ հաստատութիւններն ունեցել են երկու մասնաճիղ մայրաքաղաքում, մէկն էլ՝ Նաքուրում: Մովսէսի եղբայր **Գրիգոր (Գոգօ) Հինտոյեանը** եղել է մեքենագէտ, աշխատել անգլիական օդանաւային ընկերութիւնում: Մովսէսի քոյրը՝ **Մանուշակ (Վիոլետ) Շելյոսթը**, ապրել է Նայրոբիից դուրս, անգլիացի ամուսնու՝ Հերի Շելյոսթի եւ երեք զուակների հետ աշխատացնելով երբօր խանութը:

Նայրոբիի նշանաւոր մեծահարուստներից է եղել կալուածատէր, առեւտրական, հին եւ նոր ինքնաշարժեր վաճառող **Երուանդ Սաաթնեանը** (ծագումով հաճընցի): Նա ունեցել է նաեւ ազարակ Կուկարի գիւղաքաղաքի մօտ: Որդին՝ **Սիրաք Սաաթնեանը**, տնօրինել է Նայրոբիից 28 կիլոմետր հեռու գտնուող Թիքա բնակավայրի «Բլի ֓օսթս» հիւրանոցը:

Քենիայում 1950-ականներին բնակուել է նաեւ միգերիահայ Արտաշէս Օտապաշեանի դուստրը՝ **Նէնսի-Սերին** ամուսնու՝

¹⁶⁴ Տես Հայկական փառաւոր նշանաւոր մը Արեւելեան Ափրիկէի մէջ, «Արաքս», 25.08.1956:

Արմենակի հետ:¹⁶⁵ Նաքուրուից 23 մղոն հեռու Վերին Ջիլջիլ վայրում Արտաշես Օտապաշեանն ունեցել է մեծ ագարակ, որտեղ զբաղուել է ցորենի մշակութեամբ, անասնապահութեամբ եւ կաթնատնտեսութեամբ:

Քենիայի հայերի մէջ յիշում է նաեւ ծնունդով իրանահայ **Արեւանոյշ Բեյինգեմը** (ծնեալ Գալստեան), կրթուած մի կին, որն ամուսնու՝ անգլիացի զինուորական Վիլեամ Չարլզ Բեյինգեմի հետ հաստատուել Նայրոբիից 172 մղոն հեռու գտնուող Լումբվա գիւղաքաղաքում, զբաղուել սուրճի առեստրով: Արեւանոյշ Բեյինգեմն ունեցել է մի որդեգիր՝ Դոնալդ Բեյինգեմը (1935–1955), որը եղել է բրիտանական սպայ: Վերջինս 19 տարեկանում 1955-ի հոկտեմբերի 20-ին զոհ է զնացել Քենիայում սկիզբ առած հակաբրիտանական մաու մաու շարժմանը¹⁶⁶: Վերոյիշեալ Յովսէփ Թըզըրեանը Նայրոբիի անգլիալեզու մամուլում մի յուզիչ յօդուած է հրատարակել Դոնալդի մասին¹⁶⁷: Վերջինիս մահից յետոյ ծնողները տեղափոխուել են Մեծ Բրիտանիա:

Նայրոբիում հիւրանոցի, շէնքերի եւ ռեստորանի տէր են եղել **Յարութիւն** եւ **Անժէլ Թովմասեանները**: Յարութիւնը Քենիա է տեղափոխուել Եթովպիայից. նա կայսր Հայլէ Սէլասիէ կայսեր որդեգրած 40 որբերից էր: Նրանց որդիներից **Վիկտորը** լուսանկարչութիւն է ուսանել Լոնդոնում, **Լետնը** եղել է ելեկտրագէտ, իսկ **Տիգրանը** զբաղուել է տպագրական գործերով:

Պերճ Սիմոնեանն ունեցել է մեքենաների նորոգութեան կառատուն, նրա եղբայր **Յակոբ Սիմոնեանը** զբաղուել է ապրանքների փոխադրութեամբ: Իրենց հետ Նայրոբի են տարել նաեւ իրենց 90-ամեայ մօրը: Ֆրանսիական նաթի ընկերութիւնում պաշտօնավարել է **Տիրան Փիլոսեանը**:

¹⁶⁵ Տե՛ս **Սուրէն Ա. Տասրեան**, Նիկերիա եւ նիկերահայ գաղութը, էջ 12:

¹⁶⁶ Տե՛ս Հայ գաղութ մը Հարաւ. Ափրիկէի մէջ. հայ մը զոհ մաու մամուներու, «Ազգակ», 4.09.1957: Նոյնը տե՛ս «Յառաջ», 7.09.1957:

¹⁶⁷ Տե՛ս Արեւելեան Ափրիկէի մեր աշխատակցին մասին, «Արաքս», 14.01.1956:

Հաշուեքննական աշխատանքով է զբաղուել **Վազգէն Պօղոսեանը**: Բանկային համակարգում բարձր պաշտօն է զբաղեցրել **Ջ. Մարկոսեանը**:

Քենիայում ծնուած **Էդմոնդ Խրլոպեանի** (ծն. 1942) Եղեռնից մազապարծ վանեցի հայրը նախ ապրել է Ադիս Աբեբայում, որտեղ ամուսնացել է հայուհու հետ, ունեցել երկու որդի, այնուհետեւ 1938-ին տեղափոխուել են Քենիա: Էդմոնդը կրթութիւնն ստացել է Նայրոբիի Ուելսի արքայազնի անուան քոլեջում: Մեզ տուած հարցազրոյցում նա յայտնել է հետեւեալը. «*Նայրոբիի հայ ընտանիքներից, մեզնից բացի, ես յիշում եմ տատիկիս ընտանիքը՝ Հինտոյեանները, հինգ քոյր եւ երկու եղբայր, որոնք էին՝ մայրս, որն աւագն էր. Վիրջինիա Թրզրբեանը, Լուիզ Էսոյեանը, Ջուլիետ Քելին, Վիոլետ Շելդաթը*»¹⁶⁸:

1966-ին Քենիայի հայերի մէջ յիշուած են ծնունդով եգիպտահայ այրի տիկին **Անահիտ Առնատուտեանն** իր չորս զաւակներով, նրա եղբայր **Գուգոն** եւ իր երկու դուստրերը:¹⁶⁹ Առնատուտեանը (°–2020) հետագայում երեք որդիների եւ մէկ դստեր հետ տեղափոխուել է Մեծ Բրիտանիա: Նրա զաւակներից **Էդդի Առնատուտեանը** (ծնուած 1950)-ին, Քենիայում) գրականագէտ է, որն ուսումնասիրում է հայ գրականութիւնը:

Քենիայի հայերից երկրի պատմութեան մէջ հետք է բողել մարզիկ **Չոն (Չեք) Յակոբեանը** (1935, Սուդան – 2019, Սիլոնէյ, Աւստրալիա), որը եղել է Քենիայի խոտի հոկէյի թիմի դարպասապահը, մասնակցել է 1960, 1964 եւ 1968 թթ. ամառային օլիմպիական խաղերին: Մասնակցել է նաեւ Արեւելեան Աֆրիկայի սաֆարիի մտտոցիկլետի մրցումներին:

¹⁶⁸ **Artsvi Bakhchinyan**, Edmond Kherlopian: From Kenya to South Africa and Zambia, “The Armenian Mirror-Spectator,” 8.08.2019. **Արծուի Բախչինեան**, Աֆրիկահայր. Քենիայից՝ Հարաւային Աֆրիկա եւ Չամբիա, «Ազգ», 29.08.2019:

¹⁶⁹ Տէս Փոքրաթիւ հայ գաղութ մը Արեւելեան Աֆրիկէի մէջ, «Զարբօնք», 2.09.1966:

Նրան անուանել են «Քենիական հոկեյի լեգենդ»:

1967-ին Քենիայի հայերի թիւը եղել է մօտ 80, որոնցից 70-ը բնակուել է Նայրոբիում¹⁷⁰: Բացի վերոյիշեալ մի քանի անուններից՝ այդ թուականի տեղեկատուութան մէջ յիշուած է նաեւ **Յովհաննէս Տոկոտֆի** անունը, որը պատասխանատու պաշտօն է զբաղեցրել ավտոմեքենաների ընկերութիւնում: Նրա ֆրանսուի կինը սահուն հայերէն է խօսել, հայախօս են եղել նաեւ դուստրերը՝ **Իվէթը** եւ **Դիանան**, որոնք ամուսնացել են օտարազգիների հետ: Դիանան եղել է քարտուղարուի Քենիայի ֆրանսիական դեսպանատանը¹⁷¹:

Քենիաբնակ հայերն ազգային կեանքով չեն ապրել: 1958-ին, երբ Դերենիկ Եպիսկոպոս Փօլատեանը երկու շաբաթով այցելել է Նայրոբի, կազմակերպուել են դասախօսութիւններ, հայաստանեան շարժանկարների ցուցադրութիւններ եւ եկեղեցական արարողութիւններ: 1959-ի յունուարի 4-ին եւ 6-ին Նայրոբիի յունական նորակառոյց եկեղեցում առաջին անգամ հայկական պատարագ է մատուցուել Քենիայում, երգել եւ արւասանել են Սաթենիկ եւ Մերի Տասնապետեանները¹⁷²:

1963-ին բրիտանական վարչակազմից անցումն անկախ պետականութեան Քենիայում շատ բռնի է կատարուել, բոլոր ոչ սեւամորթները թիրախատրուել են միայն այն պատճառով, որ նրանք սպիտակամորթ կամ ասիացի էին, ուստիւ մէկ տասնամեակ անց ոչ սեւամորթ բնակիչներ, ներառյալ հայեր, երկրում չեն մնացել:

1983-ի տուեալով՝ Քենիայում մնացել է ընդամենը տաս հայ¹⁷³:

Բրազիլացի կինոդերասանուի **Ալի Ուիլոուի** կենսագրութեան մէջ նշում է, որ նա ծնուել է 1990-ին,

¹⁷⁰ Տե՛ս Արմէն Բաղդեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

¹⁷¹ Տե՛ս Քենիայի հայ գաղութը, «Արարատ», 6.09.1967:

¹⁷² Տե՛ս Դերենիկ Եպիսկոպոս, Աֆրիկէի հայերը, «Չարթօնք», 19.06.1960:

¹⁷³ Տե՛ս Արմէն Բաղդեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

Փարիզում, ամերիկացի հոր եւ քենիացի հայ մօր ընտանիքում:
Հայաստանցի կինովաւերագրող, «Բարս մեղիա»
կինոստուդիայի հիմնադիր նախագահ **Վարդան
Յովհաննիսեանը** 2008 թուականից սկսած տարուայ մէջ մի
քանի ամիս բնակում է Քենիայում եւ կինոնախագծեր
իրականացնում այնտեղ եւ այլ աֆրիկեան երկրներում
(Սոմալի, Տանզանիա, Սուդան, Ռուանդա, Բոտսվանա):
Քենիական Լամո կղզում նկարահանել է «Դանքիմենթարի»
փաստագրական կինոնկարը (բեմադրիչ՝ Արման Երիցեան,
2009): Աշխատել է «Ավրորա» մրցանակաբաշխութեան
համար՝ նկարահանելով Սուդանի եւ Բուրունդիի
մրցանակակիրներին:

ՀԱՅԵՐԸ ՀԱՐԱՄԱՅԻՆ ԱՖՐԻԿԱՅՈՒՄ

1667 թուականին Ֆրանսիայից Հնդկաստան մեկնելու ճանապարհին Մադագասկարում է եղել նորջուղայեցի առևտրական **Մարգարա Աազշենցը**, որը նշանակուել է ֆրանսիական Արեւելա-Հնդկական ընկերութեան Հնդկաստանի բոլոր կայանների տնօրէն¹: Նա եղել է ֆրանսիական ծովային արշաւախմբի երկու ղեկավարներից մէկը, որ մեկնել է Հնդկաստան՝ այնտեղ ֆրանսիական գործարաններ հիմնելու²:

Նոյն ժամանակաշրջանում Աֆրիկա այցելող հայ վաճառականների գոյութիւնն է վկայում նաեւ այն, որ 1699-ին Ամստերդամում լոյս տեսած Ղուկաս Վանանդեցու «Գանձ չափոյ, կշռոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի» գրքում յիշուել են նաեւ մի քանի հարաւ-աֆրիկեան երկրներ (Կոնգո, Անգոլա, Չանգիբար) եւ հակիրճ տուեալներ դրանց բնական պաշարների, նաեւ բնակիչների վերաբերեալ. *«Կօնգ առատ ամեն սերմամբք, պտղովք եւ տնկօք, ունի թամար հինդի, շաքար ջօլզինդի, պղինձ, երկաթ, արծաթ, լաւ մարմար, յասպիս քար եւ այլ պատուական ջաւահիր. զանազան եւ զարմանալի գազանք: Են կէսակէս Զրիստոնեայք: Նոյնպէս եւ Անգոլա, որ եւ Դօնգ ասի: Բարբստանու մարդն է դժնեայ եւ*

¹ Stu Le puissant royaume du Japon: la description de François Caron, 1636, 2003, էջ 39, 41: Նրա մասին մանրամասն տես **Սեպուռի Դաւիթ Ապանեան**, Միջցամաքամասային կենցաղ մը. ֆրանսական Արեւելա-Հնդկական ընկերութեան տնօրէն Մարտիրոս Մարգարայ Աազշենցի համաշխարհային մանրապատմութիւնը (Global Microhistory) (1666–1688), «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 2016, թիւ 1-12, Յոնուար-Դեկտեմբեր, էջ 175, 190-191:

² Стu Ю. Г. Барсегов, Из истории борьбы армянского купечества против европейского пиратства в XVII в. (в связи с захватом «Нового Иерусалима» и «Санкта Круза», «Պատմ.արամաշիրական հանդէս», 1984, ք. 2, էջ 36: Բարսեղովը նրա անունը նշել է Մարգարա աւագ Շիմենց ձեռով:

մարդակեր. երկիրն զագանաբնակ: Մօնօմօթապա կամ Բենօմօթա է բարեխառն երկիր փոքր ինչ. առատ արօտի, ցորենով, բուսով, պտղով, եղեգնաշաքարով եւ այլ զանազան մրգօք. ունի պատտական մադան ոսկոյ, եւ այլ. իրեանց լեզուաւ Աստուծոյ ասեն Ատունօ, հաւատով՝ շատն կռապաշտ է: Մօնօյմուգ փոքր կղզի Բրիստոնեայ ունի Փօթթուգէզի ազգէն. վայելուչ. պտղաբեր եւ շատամեղր, ոսկի, արծաթ, պղինձ եւ այլ զանազան թռչուն եւ գազան. ընտանի եւ վայրի: Չանգէբար է առատ ոսկով, եւ ֆլիկեռիք շատ, բնակօղք են Սէյիտի, որ է Մահմետական. կան եւ փոքր Բրիստոնեայք յ'ազգէն Փոթթուգալլիոյ, որք ունին բերդս եւ շէնս ոչ սակաւ»³:

Պարզաբանենք Վանանդեցու նշած աֆրիկեան երկրները: Բարբստան, այսինքն կաֆրերի (եւրոպացի գաղութարարների կողմից սեւամորթներին տրուող արհամարհական անուանումը) երկիր. Կաֆրարիա է կոչուել հարաւ-արեւելեան Աֆրիկայի՝ մինչեւ Հնդկական ովկիանոս հասնող շրջանը: Մօնօմօթապա կամ Բենօմօթա, յայտնի նաեւ որպէս Մվենե Մուտապա, եղել է վաղ պետական միատրում Չամբեզի եւ Լիմպոպո գետերի միջագետքում. կործանուել է 1693-ին, ռոգուի ցեղերի կողմից: Մօնօյմուգ կղզու անունն անճանաչ է, իսկ Չանգէբարը նոյն Չանգիբարն է (Չ-ն եւ գ-ն հաւանաբար սոսկ վրիպակ է):

Չամբիա

Այս երկրի մայրաքաղաք Լուսակայում է բնակուել վիրաբոյժ Գրիգոր Երզնկացեանը (1942–2022): Ծնուել է Ադիս Աբեբայում: Հաւանաբար որդին է եթովպահայ նկարիչ Հայկ Երզնկացեանի: 1979-ին Իռլանդիայում վիրաբուժական փորձառութիւն ձեռք բերելուց յետոյ վերադարձել է Աֆրիկա եւ հաստատուել է Չամբիայում: Զբաղեցրել է մի շարք կարեւոր վարչական պաշտօններ, 1995-ին ստացել է Չամբիայի

³ Դովլաս Վանանդեցի, Գանձ չափոյ, կշռոյ, թոյ եւ դրամից բոլոր աշխարհի, Ամստերդամ, 1699, էջ 55-56:

համալսարանի վիրաբուժութեան աւագ ուսուցչապետի աստիճան: Նա Վիրաբուժական քոլեջների միջազգային դաշնութեան անդամ է: Երզնկացեանը հիմնադիրներից է աֆրիկեան ութ երկրներ (Եթովպիա, Էննիա, Տանզանիա, Ուգանդա, Մալավի, Մոզամբիկ, Չամբիա, Չինբաբվե) ընդգրկող Արեւելեան, Կենտրոնական եւ Հարաւային Աֆրիկայի վիրաբույժների համալսարանի (ԱԿՀԱՎՀ): Եղել է այդ համալսարանի խորհրդի ամենաերկարատեւ անդամը. նաեւ՝ համալսարանի փոխնախագահը, նախագահը եւ ռեկտորը: Իր վաստակի եւ ներդրումի համար 2012 թ. պրոֆեսոր Երզնկացեանն արժանացել է ԱԿՀԱՎՀ պատուաւոր անդամի կոչման: Եղել է Չամբիայի վիրաբուժական միութեան նախագահը: Հեղինակ է աֆրիկեան վիրաբուժութեան վերաբերյալ բազմաթիւ աշխատութիւնների, որոնցում անդրադարձել է նաեւ Աֆրիկայում քաղցկեղով հիւանդների բացայայտման հարցերին: 2007-ին ԱԿՀԱՎՀ սկսել է համագործակցել Իռլանդիայի վիրաբույժների քաղաքական քոլեջի հետ, որի մէջ կրկին մեծ է եղել պրոֆեսոր Երզնկացեանի դերը: Համագործակցութեան արդիւնքում աֆրիկեան վիրաբուժութեան համակարգը մեծ բարեփոխումներ է ունեցել, համալրուել է նորագույն եւ ժամանակակից միջոցներով ու սարքաւորումներով: Տարածաշրջանում արձանագրվել է նաեւ ուսանող վիրաբույժների թուի մեծ աճ, ինչպէս նաեւ Չինբաբվեում, Չամբիայում եւ Ռուանդայում բազմաթիւ վիրաբույժներ զարգացրել են իրենց գիտելիքները եւ ծանօթացել հիմնական վիրաբուժական մեթոդներին:

Երզնկացեանը բազմիցս եղել է Հայաստանում, մասնակցել Հայ բժիշկների համագումարներին⁴:

⁴ Տե՛ս Հայ պրոֆեսորը՝ աֆրիկեան 8 երկրների վիրաբուժական կազմակերպութեան նախագահ. հարցազրոյց պրոֆ. Գրիգոր Երզնկացեանի հետ, վարեց Յակոբ Ծուլիկեանը, «Ազգ», 12.07.2007: Բարձրար պրոֆեսոր Գրիգոր Երզնկացեանն արժանացել է Իռլանդիայի

Վերոնշեալ **Էդմոնդ Խրլոպեանը** (ծն. 1942, Նայրոբի, Քենիա) 1969–1993 թթ. սպրել ու աշխատել է Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւնում: 1993-ին հաստատուել է Չամբիայում, տարիներ շախունակ եղել Լուսակայի «Արուիլա փրինթերս» ՍՊԸ-ի գործադիր տնօրէնը: Ունի երկու որդի, որոնցից **Նաթան Խրլոպեան**ն ապրում է Լուսակայում: 2019-ին այցելել է Հայաստան կնոջ՝ հարաւ-աֆրիկոսի Վենդի Մենսֆիլդ Խրլոպեանի (1963–2021) հետ⁵: Մեզ տուած հարցազրոյցում նա ասել է. «Չնայած որ մեծացել եւ կրթուել եմ ամբողջութեամբ անգլիախօս հասարակութեան մէջ, մենք տանը ապրում էինք որպէս հայեր, խօսում էինք հայոց լեզուով եւ կերակուր էինք պատրաստում ու ուտում էինք այնպէս, ինչպէս մեր ծնողներն էին մեզ սովորեցրել»⁶:

Այն հարցին, թէ Չամբիայում իրենից եւ Գրիգոր Երզնկացեանից բացի կան այլ հայեր, Խրլոպեանը յիշել է յոյնի հետ ամուսնացած մի հայուհու (այժմ ապրում են Կիպրոսում) եւ մի հայ ատանմարոյժի (վերջինս նոյնպէս հեռացել է Չինթաբվէից)⁷:

Լուսակայի Մայուլունգա 6 հասցեում գտնուում է «Արարատ յոջ» համալիրը, որն ընդգրկում է հիւրանոց, ռեստորան եւ բար: Այնտեղ որոշ ժամանակ աշխատել է **Սիխայիլ Փիլոսեանը**, ծնունդով Տաշքենդից:

Աւելացնենք, որ ամերիկեան դերասանուհի **Ջուլիա Ռոզի** (ծն. 1973, Լուսակա) կենսագրութեան մէջ նշում է, որ նա ծնուել է Չամբիայում, հայրը նորվեգացի է, մայրը՝ հայ դերասանուհի Ստամբուլից. վերջինիս ինքնութիւնը չենք կարողացել պարզել:

Վիրաբույժների Թագավորական Քոլեջի բարձրագոյն պարզելին, <https://nt.am/am/news/224555/> (մուտքը՝ 30.09.2016):

⁵ Artsvi Bakhchinyan, Edmond Kherlopian, անդ, Արծուի Բախչինեան, Աֆրիկահայը... անդ:

⁶ Նոյն տեղում:

⁷ Տես անդ:

Զինբաբվե (Ռոդեզիա)

Վերջին փոփոխությունները:

Ֆրանսաբնակ Սիրվարդ Գուրեանը 1954-ի Յունուարի 28-ին նամակ է գրել «Յառաջին» Բուլաուայո քաղաքից՝ յայտնելով, որ հինգ ամիս է իրենք Ռոդեզիայում են (ամուսնու հետ ըստ երեսոյթին) եւ որ իրենցից զատ այստեղ այլ հայ չկայ⁸:

2019-ին մենք՝ Էլեկտրոնային նամակագրութիւն ենք հաստատել այս երկրում՝ ծնուած՝ Մարիաննա Բայերեան-Կոնտուրաճեանի հետ, որը՝ հօր մասին յայտնել է հետեւեալը: Պոլսահայ հայրը մեծացել է Յունաստանում: Նա առաջին հայն էր, որ գաղթել է Ռոդեզիա 1950-ականների կեսին: 1980-ականների սկզբին երկրի կառավարութիւնում եղած փոփոխութիւնները պատճառ են հանդիսացել, որպէսզի սպիտակամորթ բնակչութիւնը հեռանայ Աֆրիկայից: Նրա իմացութեամբ՝ այդուհանդերձ, մի քանի հայ ընտանիք դեռեւս ապրում է Հարարեում⁹:

Մասնագիտութեամբ քարտեզագիր Գրիգոր Էօճիւրեանը որոշ ժամանակ բնակուել է Զինբաբվեում, այնուհետեւ 1980-ականներին տեղափոխուել Լոս Անջելես: Կազմել է Մեծ եղեռնի քարտեզը: 1987-ին, նրա վկայութեամբ, Զինբաբվեում հայութիւն չկայ, եղել է 12-15 հայ ընտանիք, որ հետագայում գաղթել են ԱՄՆ, Կանադա եւ ՀԱՀ¹⁰: Ուստիեւ թերեւս ճշգրիտ չէ 1983-ի տուեալով՝ Զինբաբվեում բնակուող հայերի թիւը եղել է 20¹¹:

2017-ին գրուած մի յօդուածում վկայուած է, որ Զինբաբվեում բնակուող հայերի թիւը չի գերազանցում 30-ը՝ ներառեալ այնտեղ հաստատուածների թոռներն ու ծոռները: Դա վկայել է Առողջապահութեան համաշխարհային

⁸ Տե՛ս Սիրվարդ Գուրեան, Չայն մը Ափրիկէի խորերէն, «Յառաջ», 3.03.1954:

⁹ Անձնական ելզիր (9.09.2019):

¹⁰ Տե՛ս Եղեռնի քարտեզագիր Էօճիւրեան, «Հորիզոն», 23.03.1987:

¹¹ Տե՛ս Արմեն Բաղդաճեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

կազմակերպության Չինքաբվեի գրասենեակի նախկին տնօրեն, բժիշկ-համաճարակաբան **Լեոն Արեւշատեանը**: Նա Չինքաբվեի մայրաքաղաք Հարարեում է բնակում 1998 թուականից: Հայաստանում եղել է յատուկ վտանգաւոր հիւանդութիւնների հանրապետական կենտրոն տնօրեն, Երեւանի բժշկական ինստիտուտի առողջապահութեան կազմակերպման ամբիոնի վարիչ: Եղել է Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան տարածաշրջանային ներկայացուցիչը Աֆրիկայի մի շարք երկրներում, հարաւ-աֆրիկեան առողջապահութեան ծրագրի խմբի ղեկավար եւ Չինքաբվեի գրասենեակի տնօրեն: Նա 20 տարի աֆրիկեան տարածաշրջանում է աշխատել՝ Նիգերիայից մինչեւ Կոնգո, եղել ատիլ քան 30 աֆրիկեան երկրներում: Բժշկութիւնից բացի զբաղում է գրական գործունէութեամբ:¹²

Ըստ Արեւշատեանի՝ Չինքաբվեում բնակուող հայերի մի մասն ունի քաղաքացիութիւն, ոմանք՝ ժամանակաւոր կեցութեան իրաւունք, զբաղում են բժշկութեամբ եւ բիզնէսով: Հայերը Չինքաբվեում փոքրաթիւ են, բայց կապուած են միմեանց¹³:

Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւն

Աշխարհի՝ արմատի հանքերով ամենից հարուստ տարածաշրջանում՝ Հարաւային Աֆրիկայում (1961-ի անկախութիւնից յետոյ՝ Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւն, ՀԱՀ) հայերը բնակութիւն են հաստատել 19-րդ դարավերջից: Սակայն Հարաւային Աֆրիկայում հայկական առաջին, թէկուզ հեռաւոր առնչութիւնը վերաբերում է 15-րդ դարին: Երբ պորտուգալացի ծովագնաց Վասկո դա Գաման այս տարածք է հասել 1497 թուականի փետրուարի 3-ին, ծովաճոցն

¹² Տե՛ս Ծարունակելի, «Նորք», 2017, ք. 4, էջ 4:

¹³ Տե՛ս Չինքաբվեի փոքրաթիւ հայերն աշխատում են հիմնականում բժշկութեան ասպարէզում. Լեոն Արեւշատեան, <https://news.am/arm/news/422973.html> (ղխտուած՝ 29.10.2018):

անուանել է Aguada da Sao Bras՝ Սուրբ Բրասի ջրատեղի, ի պատիւ կաթոլիկ եկեղեցու հայ սուրբ Վլասիոսի (մահ. 316)¹⁴:

Հրաչեայ Աճառեանի վկայութեամբ՝ Հարաւային Աֆրիկա գաղթած առաջին հայը եղել է սամաթիացի մի երիտասարդ, որը ռուս-թուրքական պատերազմից յետոյ (խօսքը հասանաբար 1877–1878 թթ. պատերազմի մասին է) հասել է Բարեյուտոյ հրուանդանը, ամուսնացել հոլանդուհու հետ եւ հիրանոց է բացել: Իսկ 1896-ին Քեյփթաունում բնակուել է մի հայ արհեստատր, որը թղթակցել է Պոլսի «Արեւելք» օրաթերթին¹⁵:

1902–1905 թուականին Հարաւային Աֆրիկայում է բնակուել 1890-ից Չիլիում հաստատուած վանեցի **Սկրտիչ Բինայեանը** չիլիացի կնոջ եւ զաւակների հետ, սակայն անյաջողութեան մատնուելով՝ 1905-ին տեղափոխուել է Բուենոս Այրես¹⁶:

20-րդ դարի սկզբին Հարաւային Աֆրիկայում է եղել աշխարհի տարբեր երկրներում դեզերած պոլսեցի **Երուանդ Յակոբեանը** (հետագայում՝ ֆրանսաբնակ գործարար եւ Հայ Բարեգործական Ընդհանուր Միութեան բարերար անդամ): Եղել է Հրաչեայ Աճառեանի դասընկերը Պոլսի Սամաթիայի հայկական վարժարանում: Կ.Պոլսում զբաղուել է երաժշտական գործիքների առքուվաճառքով: Համիդեան կոտորածներից յետոյ նա յայտնուել է Հարաւային Աֆրիկայում: 1897 թուականին Փրեթորիա մայրաքաղաքում նախագահ Փոլ Զրուգերը եւ նրա գործադիր յանձնախումբը նրանից գնել է 15-րդ դարի մի հայերէն Շարակնոց եւ 17-րդ դարի հայերէն մի ձեռագիր Աւետարան, որն այսօր կոչուում է «Փրեթորիայի ոսկէ Աւետարան»: Շքեղօրէն պատկերազարդուած այս մատեանը պահուում է քաղաքի

¹⁴ Sfr Armand Tchouhadjian, Saint Blaise Evêque de Sébaste: Saint du IVe siècle universel et populaire, [France] 2004, էջ 367:

¹⁵ Sfr Հրաչեայ Աճառեան, Հայ գաղթականութեան պատմութիւն, էջ 473:

¹⁶ Sfr Վարդան Մատթոսեան, Հարաւային կողմն աշխարհի: Հայերը Լատին Ամերիկայի մէջ սկիզբէն մինչեւ 1950, Անթիլիաս, 2005, էջ 26-27:

Ազգային մշակութային պատմութեան թանգարանում եւ մինչեւ 2007 թուականը երբեք չի ցուցադրուել կամ հետազօտուել: Նրա ուսումնասիրութեամբ զբաղուել եւ գիտական յօդուածով հանդէս է եկել Հարաւային Աֆրիկայի համալսարանի արուեստի պատմութեան, տեսողական արուեստների եւ դիցաբանութեան բաժնի հետազօտող Բերոլ Սթեյնը¹⁷:

Յակոբեանը 1915-ին մի անգլիացու հետ մեկնել է Աֆրիկայի անժանօթ տարածքներ, այցելել Խաղաղ ովկիանոսի կղզիներ, հաւաքել վագրի մորթի, ադամանդ, փղոսկր՝ վաճառքի ուղարկելով Եւրոպա: Հանդիպել է արկածների, նաւակով այցելել է մարդակերների կղզի, ենթարկուել յարձակման, մի բարձր ծառ բարձրանալով՝ հրազենով սպանել եւ քշել է վայրենիներին¹⁸:

Հարաւային Աֆրիկայի Եոհաննեսբուրգ քաղաքում Յակոբեանը տեսել է վաճառքի հանուած վագրի մորթիներ՝ Ստառով: Հետամուտ լինելով դրա նշանակութեանը՝ պարզել է, որ այն «Մարտիրոս» վայրի գազանների մորթիների ամենամեծ գործարանի տիրոջ անուան սկզբնատառն է: *«Յակոբեան, որուն ազգային բնագողը զինքը չէր խաբեր երբեք այս տեսակ պարագաներու մէջ, կը կոտակէ թէ Հայ մը դուրս պիտի գայ այդ անժանօթ «Մարտիրոս»ին մէջէն: Եւ այս անգամ ալ իր հոտառութիւնը յուսախաբ չըներ զինքը: Հասցէն կը գտնէ եւ անմիջապէս կ'ելլէ կ'երթայ «Մարտիրոս»ի վայրի մորթի մթերանոցը: Հոն թուլն դէմքով հայկական տիպարի մը առջեւ կը գտնէ ինքզինքը նւ առանց վարանելու հայերէն կը բարեւ գայն:*

–Բարեւ ձեզ...

Մարդը տեղէն կը ցատկէ՝ Հայո մը անակնկալ այցելութենէն ցնցուած, այնքան թունդ կ'ելլէ իր մէջ ցեղին կարօտը, զոր յազեցնելու յոյսն անգամ չէր կրնար մտքէն անցնիլ, անշուշտ,

¹⁷ Steyn Carol Steyn, Pretoria's Golden Gospel Book: A Study of a Luxury Seventeenth-Century Armenian Manuscript, "South African Journal of Art History," Johannesburg, volume 22, number 3, 2007, էջ 218-237:

¹⁸ Տե՛ս Հրաչեայ Աճառեան, Կեանքիս յուշերից, Երեւան, 1967, էջ 39-40:

երկար տարիներ է ի վեր: Ու Հայաստանցիի իսկատիպ շեշտով մը կը գոչէ.

–Վայ, Աստծոյ բարին, բարի եկար, դուն Հա՞յ ես, ո՞ր տեղացի ես...:

–Հայ եմ, Պոլսեցի եմ...

–Նստի՛ր, նստի՛ր, ախպեր ջան:

Ու մարդը ինքզինքն ելած չգիտեր ինչ պատիւներ շռայլել իր ազգակից հիւրին: Վերջապէս գայն իր գիւղը կը հրաւիրէ շոգեկառքի առաջին կարգի տոմսակ մը յանձնելով անոր, երթալու համար մինչեւ գիտլին ամէնէն մերձակայ կայարանը, ուրկէ իր ծառաները պիտի առնեն բերեն զինքը գիտլական իր ասպարանը:

Պ. Մարտիրոս գիւղը Բաֆրերու բանակ մը ունի իր տրամադրութեան տակ, որոնք իրեն կը ծառայեն եւ իրեն համար վայրի կենդանիներ կ'որսան: Անոնցմով շրջապատուած, անոնցմէ գրեթէ պաշարուած, կատարելապէս արքայական կեանք մը կը վարէ ան իր սեփական գիտլին մէջ:

Առաջին կիրակի օրը, Երուանդ Յակոբեան թրէնը կ'առնէ՝ այցելութեան երթալու համար Պ. Մարտիրոսին: Կայարանէն իշխանավայել թափորով մը տուն կ'առաջնորդէ զինքը արհիպիեցի նորօրինակ նապապին կողմէ որկուած զինեալ Բաֆրերու խումբ մը: Պ. Մարտիրոսի բնակարանը արնադարձային բուսականութեամբ լեցուած հրաշագեղ պարտէզներու մէջ համակ պամպուէ շինուած տուն մըն էր: Ներսը շքեղօրէն կահաւորուած եւ պատերն ու գետինները ծածկուած վայրի գազաններու մորթերով:

Պ. Մարտիրոս փառատը ընդունելութիւն մը կ'ընէ Երուանդ Յակոբեանին եւ պահ մը վերջը սեղան կը նստին: Բայց մեր բարեկամը հագիւ բանի մը պատառ կուլ տուած է, երբ յանկարծ կը սկսի գունաթափիլ, դողդղալ:

–Ի՞նչ կայ, ի՞նչ ունիս, – կը հարցնէ տանտէր խնդումներս ու անայլայլ հանգստութեամբ մը:

–Բայց, Պալոն Մարտիրոս, նայեցէք սա պատուհանէն, վագր մը կու գայ կոր, կատակ չէ ասիկա...

Արդարեւ, բաց պատռտանց մը կը տեսնուէր վագրի մը մօտենալը ուր մոլոր գալարումներով...

Բայց գազանասպան հայ Ափրիկեցին հազիւ բարեհաճելով նայուածք մը նետել դուրսը ազատ պտըտող վագրին, Երուանդ Յակոբեանի ուսը կը շոյէ եւ խնդալով կ'ապահովցնէ իր հիւրը.

–Մի՛ վախնար, նա երախայ է դեռ, պէտք է տակաւին մեծնայ՝ վագր դառնալու համար...:

Յակոբեանի համար գէշ «քառորդ ժամ» մը անցած էր, սակայն, այդ սեղանին շուրջը:

Պ. Մարտիրոս կըստիպէ զինքը, որ իր մօտ մնայ, բաժնէ իր կեանքը, վայելէ իր բնակարանը, պարտէզները. ամէն ինչը: Բայց Երուանդ Յակոբեան չի կրնար դիմանալ ահռելի տաք կլիմային, եւ շաբաթ մը վայելելէ յետոյ Պ. Մարտիրոսի հիւրասիրութիւնը, ինքզինքը քաղաք կը նետէ, անկէ ալ մեկնելու համար, իր հետ հանելով ամենագեղեցիկ ու թանկագին վագրի մորթ մը, գոր Պ. Մարտիրոս ընծայ ըրած էր ի յիշատակ իր անակնկալ այցելութեան¹⁹:

Մէջբերման մէջ առկայ Մարտիրոսի ուղղակի խօսքից երեւում է, որ նա եղել է արեւելահայ...

1904-ին հարաւ-աֆրիկահայերի թիւը տաս էր, որոնցից երկուսը բնակուել են Դելագոս ծովածոցում (այժմ՝ Մոզամբիկում), ուրը՝ Եոհաննէսբուրգում (պոլսեցի, հալէպցի, բէյրութցի, իզմիրցի, սերաստացի, շապինգարահիսարցի, բոլորն էլ՝ առեւտրականներ եւ արհեստաւորներ): Դելագոս ծովածոցում բնակուող պոլսեցի Հ. Ազնաւորեանը քաղաքից երկու ժամ հեռաւորութեան վրայ գտնուող Քաթեմբէ վայրում հողատարածութիւն է վերցրել եւ Թրանսվաալում առաջին անգամ սկսել է բանջարեղէնի եւ պտղատու ծառերի մշակութիւնը: Հաւանաբար նա է կառուցել Արմենիա

¹⁹ Ե. Գ. Աղաբօն, Ռ՞Վ է Երուանդ Յակոբեան եւ ի՞նչպէս բարերար անդամ եղաւ Հայկ. Բարեգ. Ընդհ. Միութեան, «Միութիւն», Գահիրէ, 1913, ք. 15, Մարտ, էջ 41: Նոյնը տես Ե. Գ. Աղաբօն, Գաղափարի նշխարներ, Մարտչլ, 1934, էջ 65-67:

ամբարտակը Վաալ գետի վրայ:²⁰

1910 թուականին օւմանեան հիւպատոսը Եօհաննէսբուրգում եղել է **Յովհաննէս Մաժակեանը**, որը մինչ այդ նոյն պաշտօնն է վարել Յունաստանում եւ Սերբիայում:

1912 թուականին Բոսթօնի «Հայրենիքում» տպագրուել է առնուազն երկու թղթակցութիւն Հարաւային Աֆրիկայից Եոհաննէսբուրգում բնակուող Յ. Հ. եւ Հ. Յ. ստորագրութեամբ թղթակցից, որը տեղեկութիւններ է հաղորդել նաեւ տեղի հայ համայնքի մասին: Ըստ առաջին տեղեկատուութեան, «*Տեղոյս մէջ կայ սլաւոնացի հայ գաղութ մը եւ յոյսերը հոգիէ բաղկացած. գրեթէ բոլորն ալ աշխատատեղ են՝ հողագործ, կոշկակար, մսագործ, ծխափամառ, ժամագործ եւ հիւպատոս: Մէկը ամուսնացած է աֆթոսի մը հետ, միւսը՝ գաղղիացիի, ուրիշը՝ անգլուսիի, մէկն ալ՝ սուրիացիի եւայլն: Միայն երկու հոգի կը փառիաքին յարաբերութիւն ունենալ երկրի եւ հայերու հետ, մնացեալները պաղած եւ ապագայնացած են արդէն: Տեղոյս տանկահայատակ գաղութը չորս հազարի կը հասնի, ստուար թիւ մը կը կազմեն սուրիացիները, երկրորդ տեղը կըռնեն յոյները. հրեաներ շատ քիչ են: Կարող եւ անշահախնդիր հիւպատոսի մը սլետքը խիստ զգալի է. ներկայ հիւպատոսը շատ հեռի է անաչառ ըլլալէ: Տնտեսական վիճակը, մանաւանդ առեւտուորը շատ լաւ է. եթէ մարդ քիչ մը դրամագլուխ ունենայ, կրնայ աղտոյ գործ մը ունենալ: Բժիշկ, դեղագործ, հացագործ, մսագործ, եւ այլն շատ աշխատանք ունին: Հանրերու մէջ աշխատողները մեծ մասամբ հարեցող եւ ախտատրներ են: Քանի մը ասիացիներ կան, որ խնայողութեամբ մեծ դրամ կը շինեն. տղայ մը գիտեմ, որ ամսական 40-45 ոսկի կը վաստկէ: Առհասարակ միջավայրը խիստ անվստահելի է, ապականած, հաւատարիմ մարդիկ բնաւ չկան: Բայց քիչ շատ ճարպիկ, խելքը գլխին մէկը, որ շիտակ եւ ազնիւ ճանապարհով երթայ, կրնայ շուտով լաւ դիրք ձեռք բերել: Դժբախտաբար այս*

²⁰ Տե՛ս **Հրաչեայ Աճառեան**, Հայ գաղթականութեան պատմութիւն, էջ 473: Տե՛ս նաեւ **Զոհրաբ Նալբանդեան**, Հարու-Աֆրիկեան Հանրապետութիւն, «Հայ Սփիւռք» հանրագիտարան, էջ 351:

կողմով հայերը չեն կրնար պարծենալ»²¹ Նոյն թղթակիցը ամիսներ անց մէկ այլ թղթակցութեան մէջ տեղեկութիւններ է տուել Հարաւային Աֆրիկայի մասին, նկարագրել երկրի պայմանները, նշել կարեւոր զարգացման մասին եւ որ Եռիաննէսքուրգը տասը տարուայ առաջընթացից յետոյ կարող է մրցել եւրոպական գլխաւոր քաղաքների հետ: Կլիման լաւ է, լեզու իմացողը ճարպկօրէն կարող է լաւ դրամ վաստակել: Նկարագրել է գլխաւոր յարեւտներն ու գործելը, նաեւ հանքերը: Գաղթականութիւնը դեռ աւելանում է: «Բայց Թիւրքիոյ հպատակները, որ իոս հարուստ քարեկամ չունին, չեն կրնար անցնիլ, ամէն նորեկ պէտք է իր քով ունենայ 20-25 անգլ. ոսկի, հակառակ պարագային՝ Թրանսվաալ չ'ընդունիլ: Այս անպատեհութեան պատճառ եղած է տաճկաց հիւպատոսը, որ ապիկար եւ անկարող մէկն է. ուրիշ ազգեր դիւրաւ կը յաջողին մտնել, մինչդեռ Թիւրքիայէն եկողներու դէմ միշտ արգելքներ կը հանուին»²²:

Արտառոցութեան է հասնում 1921 թ. Հարաւային Աֆրիկայի ցեղախմբերից մէկի կողմից հայ որբերին օգնութիւն ցուցաբերելու մասին փաստը: Այս մասին վկայում է Հայոց Տեղասպանութեան թանգարան-ինստիտուտի հաւաքչական աշխատանքների շնորհիւ 2013-ին յայտնաբերուած հագուագիւտ մի փաստաթուղթը: Ըստ դրա՝ Հարաւային Աֆրիկայի Անկախ եկեղեցու պատուելիներից մէկն իր կարիքաւոր փիճակում գտնուող համայնքի (չուրջ 250 մարդ) անունից հանգանակութիւն է կատարել յօգուտ թուրքական բարբարոսութիւններից տուժած հայերի: Թէեւ այն կապ չունի հայ համայնքի հետ, սակայն հաշուի առնելով նիւթի բացառիկութիւնը՝ փաստաթուղթը ներկայացնում ենք ամբողջութեամբ.

²¹ Յ. Հ., Հարաւային Աֆրիկէի հայերը (Մեր սեփական թղթակցէն), «Հայրենիք», 5.03.1912, էջ 5-6:

²² Հ. Յ., Հարաւային Աֆրիկէն (մեր սեփական թղթակցէն), «Հայրենիք», 23.07.1912, էջ 5:

«Շահաառուները դարձան բարեգործներ

Ոչ վաղ անցեալում աֆրիկեան մի ցեղախումբ ճանաչեց քրիստոնէութիւնն ու ընդունեց քրիստոնէական գաղափարներն ու նպատակները:

Թէ ինչպէս նրանք իմացան Մերձատր Արեւելքում իրենց քրիստոնէայ եղբայրների կարիքների մասին, պարզ չէ, բայց նրանք եկան այդ գիտակցութեանը եւ այդ ոգով հանգանակութիւն կատարեցին «Մերձատր Արեւելքի Նպաստամատոյց»ին՝ սովեալ հայերին սնունդով ապահովելու համար:

Հանգանակուած գումարը ճանապարհորդութեան ընթացքում ոչ միայն չարժէզրկուեց, այլեւ դարձաւ ատելի օգտակար:

Հարսուային Աֆրիկայի Անկախ եկեղեցու պատուելի Ժ. Դ. Մբենկո-Նեանգին ուղարկել է մի լուսանկար: Նա ունի շուրջ երկու հարիւր յիսուն հետետոյդ: Լուսանկարի տղամարդիկ այդ միաբանութիւնից են, որոնց նա խրախուսել եւ օգնել է յաղթահարելու տեսախցիկի առաջ կանգնելու սնահաւատութիւնը: Լուսանկարի առաջին երկու շարքում «կարմիր» հետետոյդներն են, ովքեր իրենց ներկում են կաւաքարով եւ գնում են դէպի գիւղ մերկ մարմնով: Հետեւում գտնուողները, ովքեր կրում են բաճկոններ ու մանեակներ, ատելի քաղաքակիրթ չէին, քան իրենց քոյրերն ու եղբայրները երկու տարի առաջ:

Անկախ նրանց քաղաքակրթութիւնից, քրիստոնէական բարեգործութիւնը նրանց սրտերում էր, որն էլ փրկեց իրենց քրիստոնէայ եղբայրներին: Նրանց բարեգործութիւնը արժանի է երախտագիտութեան»²³:

²³ Հայոց Յեղասպանութեան հարսուաֆրիկեան արձագանգները, «Ասպարէզ», 12.12.2013:

Յիշենք նաեւ, որ մինչ այդ, 1920 թ. աշնանը Ազգերի լիգայի գլխավոր ժողովում Հարաւային Աֆրիկայի ներկայացուցիչ լորդ Ռոբերտ Սեսիլը ժողովին խնդրել է «անմիջապէս նկատի առնել հայերի իրավիճակը եւ քննութեան ներկայացնել Ասամբլեայի առաջարկութիւնները՝ հսկադարձելու վտանգը, որն իրականում սպառնում է հայ ցեղի մնացորդացի վրայ, ու նաեւ հիմնել մի կայուն եւ մշտական գործերի վիճակ այդ երկրում»²⁴:

Եռհանգէսըրգի՝ 1885–1935 թթ. քաղաքային լուսանկարների մի արժանի յիշուած են նաեւ «հայկական մայքը» (Armenian pavement) եւ «հայ կանանց փողոցային շուկան» (Armenian women street Market)²⁵: Յաւոր, մանրամասնութիւնները բացակայում են այս ուշագրաւ իրողութիւնների վերաբերեալ...

1940-ականներին ՀԱՀ-ում բնակուել է տաս հայ ընտանիք²⁶: 1948-ին Հարաւային Աֆրիկայում է հաստատուել ծնունդով տրապիզոնցի գործարար Վաչէ Գարագաշեանը (1918–?), որը Բ. աշխարհամարտից առաջ հիսուածքեղէնի արտադրութեամբ է զբաղուել Ռումինիայում: Խուսանաւելով համայնավարական համակարգից՝ նա մեկնել է նախ Անգլիա, Եգիպտոս, այնուհետեւ հաստատուել է Հարաւային Աֆրիկայում: Հիսուածքեղէնի ճարտարարուեստի իր գիտելիքները նա գործադրել է նախ Բիմբըրլիում, որտեղ հիմնել է մի փոքր գործարան: Նրա գործունէութիւնը գրաւել է «ադամանդի արքայ» սրբ Էոնեստ Օփէնհայմերի ուշադրութիւնը: Վաչէ Գարագաշեանը բացել է Հարաւային Աֆրիկայում մետաքսեայ շալի արտադրութեան առաջին գործարանը, որը տարեկան արտադրել է վաճառել է երկու

²⁴ Oliver Baldwin, Six Prisons and Two Revolutions, New York, 1925, p. 26.

²⁵ Տե՛ս Peter Kallaway, Patrick Pearson, Johannesburg: Images and Continuities: a History of Working Class Life Through Pictures, 1885-1935, 1986, էջ 67, 71:

²⁶ Տե՛ս Թեոփիլ որդի, Հարաւային Աֆրիկէի հայերը, «Հայաստանի կոչնակ», 22.01.1944, էջ 82-83, անդ, 29.01.1944, էջ 107-109:

միլիոն շալ: Որոշ ժամանակ անց Գարագաշեանն իր արտադրութիւնը տեղափոխել է Ռոսլին (Փրեթորիայից 20 կմ հիւսիս-արեւմուտք)՝ այդ կերպ իրականացնելով սեւամորթների նահանգների սահմաններին ճարտարարուեստի սպակենտրոնացումը քաջալերելու կառավարական ծրագիրը: Այդ ժամանակ Ռոսլինը ամայի մի վայր էր, եւ ոչ ոք չէր կարող գուշակել, թէ մի օր այն դառնալու է արդիւնաբերական մեծ կենտրոն: 1970-ականներին Վաչէ Գարագաշեանի ընկերութիւնը միակն է եղել Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւնում, որ հիսուսածեղէնի ճարտարարուեստի համար արտադրել է ջերմափոխադրիչ տպագրական թուղթ, տարեկան երկու միլիոն մետր սաւան, հագուստեղէն եւ բազմաւտեսակ տպածոյ կտորեղէն, որը մինչ այդ Հարաւային Աֆրիկան ներկրել է այլ երկրներից:²⁷

Վաչէ Գարագաշեանն ունեցել է երկու որդի՝ Ռոլանդ Ե. Գարագաշեան (1947–2000) եւ Միշայէլ-Մայքլ Գարագաշեան: Ռոլանդը եղել է ՀԱՀ-ի «Մետաքսի եւ տեքստիլի արդիւնաբերութիւն» գործարանի տնօրէնը: Սա միակ գործարանն է եղել Հարաւային Աֆրիկայում, որ արտադրում է խանգա (զգեստի տեսակ): Եղել է ՀԱՀ-ի հայ համայնքի վարչութեան ատենապետը: Ռոլանդ Գարագաշեանը սպանուել է իր տանը, կողոպտիչների ձեռքով: Այսօր նրա գործը շարունակում է Ֆիլիպ Գայագաշեանը, որը տնօրինում է «Շերաթոն» տեքստիլի ձեռնարկութիւնը:

1951 թ. Հարաւային Աֆրիկայում են հաստատուել հայազգի պարուհիներ Ալեքսանդրա Մալիոնէն (1907–2002) եւ Եւգենիա Թումանեանցը (1913–2000) իրենց մօր՝ ֆրանսիական ծագումով Օլգա Թումանեանցի (Ռելիէ, 1888–1957) հետ: Նրանք դուստրերն էին ցարական բանակի կապիտան, ծնունդով բարուեցի Բագրատ Օսիպովիչ Թումանեանցի (1870? – 1918/19): Վերջինս Ռուսաստանի քաղաքացիական

²⁷ Տե՛ս Լայոնէլ Քալիսթիքոյէլ, Հայերը Հարաւային Ափրիկէի մէջ, «Չարթօնք», 27.08.1981: South African Panorama, vol. 25, “South African Information Service,” 1980, pp. 45-46.

պատերազմի ժամանակ սպանուել է կարմիրների կողմից, կինը եւ երեք դուստրերը փախել են Երուսա, սայրել Բեռլինում, Մարսելում, Փարիզում: Ալեքսանդրան եւ Եւգենիան Երկրորդ համաշխարհային պատերազմից առաջ պարային համարներով շրջագայել էին Հիւսիսային Աֆրիկայում, սպա հաստատուել Իտալիայում: Հետագայում Ալեքսանդրա Մալիոնէն Եօհանէսթուրցում յաջողութեամբ զբաղուել է կոմմետիկայի արտադրութեամբ՝ «Ալեքսանդրա դե Թումանոֆ» անուամբ²⁸:

Ալեքսանդրիայում ծնուած **Յովհաննէս Յովհաննիսեանը** (Օհաննէս Օհանիսեան) կրթութեամբ իրաւաբան է: Նա Հարաւային Աֆրիկայում հաստատուել է 1967-ին եւ զբաղուել է գործարարութեամբ: Եոհաննէսթուրգի կենտրոնում է գտնուել նրա հիմնած ընկերութիւնը, որը զբաղում է ճամպուկների արտադրութեամբ եւ վաճառքով: Եղել է Հարաւային Աֆրիկայի հայկական ընկերակցութեան ատենապետը²⁹:

Երաժիշտ եւ ճարտարապետութեան լուսաւորութեան մասնագէտ է **Փօլ Հայկ Փամպուքեանը** (ծն. 1949, Եոհաննէսթուրգ): Ծնողները Հարաւային Աֆրիկա են գաղթել 1948-ին, Աթէնքից (հայրը եղել է ծագումով Մարսշից, մայրը՝ ծնեալ **Վարվառեան**, Բուրսայից): Հինգ տարի երաժշտութիւն է ուսանել **Քէյփթաունի** համալսարանում, սովորել նուագել կլառնետ, այնուհետեւ կրթութիւնը շարունակել է Լոնդոնի Գիլդիոլ երաժշտական դպրոցում: Երաժշտութիւն է գրել թատրոնի եւ հեռատեսիլի համար: Չբաղուել է նաեւ հայ երաժշտութեամբ, հետաքրքրուել յատկապէս հայ հոգեւոր երգարուեստով: 1970-ականների վերջին հարաւ-աֆրիկեան հեռատեսիլով ելոյթ է ունեցել նուագավար Լորիս Գզնաւորեանի հետ (վերջինս Հարաւային Աֆրիկա էր հրաւիրուել ռադիոկայանի սիմֆոնիկ նուագախումբը ղեկավարելու համար): Առաջին անգամ լինելով՝ բազմաթիւ

²⁸ Տես **Б. М. Горелик**. Русский некрополь в Южной Африке. «Генеалогический вестник». Выпуск 19. СПб, 2004, էջ 32:

²⁹ Տես **Լայոնէլ Քալիսթիքեյ**, Հայերը Հարաւային Աֆրիկէի մէջ, անդ:

հարաւ-աֆրիկացիներ ճանաչել են իրենց մէջ բնակվող փոքրաթիւ համայնքին³⁰: 1977-ից զբաղուել է նաեւ լուսատրութեան ձեւաւորմամբ, դարձել Փրեթորիայի պետական թատրոնի գլխաւոր լուսային ձեւաւորողը: Եղել է «Production Projects» լուսատրման եւ բեմադրութեան ընկերութեան համահիմնադիրը, որը մասնագիտացած է լուսատրման ձեւաւորման եւ վաճառքի մէջ: Այս ընկերութեան կազմում Փամպութեանը մասնակցել է արդիւնաբերական եւ թատերական ծրագրերի միջազգային: մի շարք խոշոր հաստատութիւնների (BMW, Mercedes Benz, Ford, Toyota, VW, Alfa Romeo, IBM, SAPPI, World Gold Council). հետ, որոնք բեմադրութիւններ են իրականացրել Փարիզում, Նիւ Եորքում, Բազելում, Վենետիկում, Հավայեան կղզիներում եւ Բեռլինում: 1990-ին Եոհաննէսթրուդում հիմնել է «Paul Pamboukian & Associates Lighting Design» լուսատրութեան ձեւաւորման կենտրոնը, որ զբաղում է ճարտարապետութեան, ներքին յարդարման, լանդշաֆտի եւ թատերական լուսատրութեան ձեւաւորմամբ: Այդ թուականից ի վեր աշխարհի բազմաթիւ երկրներում Փամպութեանն իրականացրել է 600-ից աւելի ճարտարապետական նախագծեր (հիւրանոցներ, առողջարաններ, հանրային շինութիւններ եւ այլն): Հայագի մասնագէտը յաճախակի հանդէս է գալիս լուսատրութեան ձեւաւորման վերաբերեալ դասախօսութիւններով եւ անդամ է Եվրոպական լուսատրութեան ձեւաւորողների ընկերակցութեան (ELDA)³¹:

1950-ականներին Հարաւային Աֆրիկայի Սփրինգս քաղաքում է բնակուել Բուլղարիայում ծնուած **Խաչիկ (Աքսել) Փափազեանը** իր նորվեգուի կնոջ հետ: Նա աշխատել է կնոջ եղբօր տնօրինած յղկաթոքի գործարանում: 1959–1960 թթ. այնտեղ բնակուել է Փափազեանի առաջին ամուսնութիւնից ծնուած որդին՝ **Էրիկ Փափազեանը** (ծն. 1939), որն աշխատել է

³⁰ Տե՛ս անդ:

³¹ Անձնական էլեկտրոնային նամակ Փօլ Հայկ Փամպութեանից, 25.11.2007:

ոսկու հանքի շահագործման գրասենեակում (հետագայում նա Նորվեգիայում դարձել է ճանաչուած լեզուաբան): Նրա քույրը եւ եղբայրը նոյնպէս իրենց դպրոցական կրթութիւնն աւարտել են Սփրինգսում: Յոկաթոբի գործարանն ամերիկացիների կողմից գնելուց յետոյ Խաչիկ Փափազեանը տեղափոխուել է Փարիզ³²:

1960-ականների վերջին Եոհաննէսուրզում եւ շրջակայքում բնակուել է 100-ից ատի հայ՝ մեծ մասամբ պետական ծառայողներ, առեսարականներ եւ գործարարներ: 1970-ականներին նրանց բիւրը համալրուել է Եթովպիայից գաղթած ընտանիքներով: 1970-ին ստեղծուել է Հարաւային Աֆրիկայի հայկական ընկերութիւնը՝ կիրակնօրեայ դպրոցով, հայկական պարերի եւ այլ խմբակներով: Գործել է ՀԲԸՄ մասնաճիւղը, որը ղեկավարել է համայնքի նախագահ Ժաք Ատանալեանը³³: Ընկերութիւնը կազմակերպել է հայոց պատմութեան եւ մշակույթի յիշարժան տարեթուերին նուիրուած հանդիպումներ՝ հայ ստեղծագործ մտատրականութեան ներկայացուցիչների, պետական ու կրօնական գործիչների մասնակցութեամբ:

1979-ին հարաւ-աֆրիկեան «Սաութ Աֆրիքա փանորամա» պարբերականում Լայոնէլ Քափսփիքտէլի ստորագրութեամբ լոյս է տեսել «Հայերը Հարաւային Աֆրիկայում» յօդուածը, որը թարգմանաբար տպագրուել է հայ մամուլում³⁴: Այնտեղ վկայուած է հարաւաֆրիկահայ Ն. Փամպուքեանի՝ համայնքի անունից ասուած խօսքը. «*Իւրաքանչիւր հայ ընտանիք սերտ կապեր հաստատած է աֆրիկեաններուն եւ անգլիախօս հարաւ-աֆրիկեցիներուն հետ: Մեր երիտասարդներէն շատեր միջամուսնութիւններ կնքած են եւ կազմած ընտանիքներ: Մենք կը սիրենք այս ընտանիքը եւ իր ժողովուրդը, եւ մեծ հաւատք*

³² Անձնական էլեկտրոնային նամակ Էրիկ Փափազեանից, 1.05.2017:

³³ Տես Զոհրաբ Նալբանդեան, Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւն, անդ:

³⁴ Տես՝ Լայոնէլ Քափսփիքտէլ, Հայերը Հարաւային Աֆրիկէի մէջ, անդ: Տես նաեւ՝ “The Armenian Reporter,” 28.08.1980.

ունինք իր ապագային հանդէպ:³⁵

1983-ի տուեալով ՀԱՀ-ում բնակուել է 200 հայ³⁶, 1987-ին՝ մօտ 120 հայ³⁷, 1989-ին՝ 100 հայ: Համայնքը որոշել է աւելի կազմակերպուել, հրաիրել դասախօսներ, անհատներ ու խմբեր Հայաստանից եւ Սփիւքօից: 1989-ի հոկտեմբերին Եոհաննէսբուրգը տաս օր հիւրընկալել է արուեստի փառատօն՝ 22 երկրի արուեստագէտների ու խմբերի մասնակցութեամբ, ստաջին անգամ մասնակցել է նաեւ հայ համայնքը: Ելոյթներ են ունեցել երգչուհի Էլիզ Թաշճեանը եւ դաշնակահար Վաչէ Մանկրեանը ԱՄՆ-ից, հայկական տաղաւարն ու հայ երգն ամենից գնահատուածների շարքում են եղել³⁸: 1995–1996 թթ. ՀԱՀ միութեան քարտուղարը եղել է Հալէպում ծնուած եւ Երեւանում բարձրագոյն կրթութիւն ստացած **Սարգիս Պարոնեանը**:

1990-ի ապրիլի 24-ին հարաւ-աֆրիկահայերը ցոյցի են դուրս եկել Եոհաննէսբուրգում՝ պահանջելով դատապարտել Հայոց ցեղասպանութիւնը:

1992-ին Եոհաննէսբուրգում կայացած Հարաւային Աֆրիկայում բնակուող փառատօնում հայկական ցուցափեղկը ճանաչուել է լաւագոյնը:

1993–1995 թթ. 20-25 հայ ընտանիք ՀԱՀ են տեղափոխուել Բուլղարիայից եւ Հայաստանից³⁹, սակայն հետագայում ՀԱՀ-ի կառավարութիւնը խստացրել է ներգաղթի քաղաքականութիւնը, եւ հայերի հոսքը կրճատուել է:

³⁵ Անդ:

³⁶ Տե՛ս Արմեն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

³⁷ Տե՛ս Եղեռնի քարտէսագիր Էօճիւրեան, «Հորիզոն», 23.03.1987:

³⁸ Տե՛ս Արմեն Տոնոյեան, Հայ երգը Հարաւային Աֆրիկէի մէջ, «Խորհրդային Հայաստան», 7.01.1990:

³⁹ Հայաստանից ՀԱՀ արտագաղթի իրողութիւնն արտացոլվել է նաեւ գեղարուեստական գրականութեան մէջ. «*դուստրը փաղոց տեղափոխուել էր մինչեւ անգամ ՀԱՀ... անգամ Քեյիթաւանում ապրող դատեր ամուսինն աշխատում էր մասնագիտութեամբ*» (Гоар Маркосян-Каспер, Кариатиды. Таллинн, 2005, стр. 24-25):

Իտալահայ գործիչ Պիետրո Քուչուբեանը 1998-ին հրատարակած հայօջախներ կատարած այցելութիւնների մասին իր գրքում ներկայացրել է նաեւ իր այցը Հարաւային Աֆրիկա: Եոհաննէսբուրգում հանդիպել է դրանից քսան տարի առաջ Միլանից Հարաւային Աֆրիկա տեղափոխուած մի ծնունդով՝ զմիտնիացի հայուհու, որի որդին եղել է Եօհաննէսբուրգի մերձակայքի 150 հոգիանոց հայ համայնքի ղեկավարը⁴⁰:

2003-ի տուեալով՝ ՀԱՀ-ում բնակուել է շուրջ 300 հայ:⁴¹ 2007-ին ՀԱՀ-ի հայերի հետ ունեցած նամակագրութիւնից ճշտել ենք, որ ստոյգ թուաքանակ չկայ այդ երկրի հայերի վերաբերեալ, բոլորը նշում են 300-400 հոգի՝ հիմնականում գրասենեակային աշխատողներ, առետրականներ եւ արհեստատրներ: 2000-ականներին կազմակերպութիւն ունեցել է հետեւեալ վարչական մարմինը՝ Մարքին Սուամայեան (նախագահ), Գուրգէն Ճաղասեան (փոխնախագահ), Վիգէն Տէր-Մարգսեան (գանձապահ), Էրիք Գայայեան, Վլադիմիր Յակոբեան, Էդուարդ Սիրականեան եւ այլք: Նրանք նշում են ՀՀ անկախութեան եւ միւս ազգային տօները:

Երեւանցի Նաիրա Տէր-Մարգարեանն ասարտել է Եոհաննէսբուրգի համալսարանի տնտեսական եւ կառավարման գիտութիւնների բաժինը: Նոյնպէս երեւանցի Իգարելա Սաֆարեանը Ճնողագուրկ հայ երեխաների օգնութեան միութեան Եոհաննէսբուրգի մասնաճիւղի նախագահն է:

Մի քանի տարի Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութեան օպերայում է աշխատել տեւոր Ժան Անսրլեանը:

Ամերիկացի հօր եւ հայ մօր զուակ կինովաւերագրող Շարին Անդերսոնը որոշ ժամանակ ապրել եւ աշխատել է Հարաւային Աֆրիկայում: Հետաքրքրական է, որ նրա

⁴⁰ Տե՛ս Պիետրո Քուչուբեան, Սփռումները. ուղեորութիւն աշխարհի հայկական համայնքներ, Երեւան, 2013, էջ 113:

⁴¹ Տե՛ս Չոհրաբ Նալբանդեան, Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւն, էջ 352:

«Չարենց. փնտրելով իմ հայ բանաստեղծին» փաստագրական ֆիլմը (2009) Հայաստանի, ԱՄՆ-ի և Հարավային Աֆրիկայի համատեղ արտադրութիւն է:

Հարավային Աֆրիկայում է բնակւում տեղացի հոլանդացու հետ ամուսնացած հայ-ճապոնական ծագումով կանադացի արձակագրուհի **Ալիքա Քօուէան Վոլքվինը** (ծն. 2000)՝ գրող Կոստան Չարեանի թոռան թոռը:

Ըստ զինբաբվէաբնակ բժիշկ Լեւոն Արեւշատեանի՝ 2017-ին Հարավային Աֆրիկայում ապրել է շուրջ 300 հայ, որոնք ցանկացել են հայկական եկեղեցի կառուցել, բայց հարցը մնացել է առկախ⁴²:

Հարավային Աֆրիկայում կեանքի անկայուն և վտանգաշատ բնոյթի պատճառով հայերն այստեղից էլ յաճախ արտագաղթում են, հիմնականում Կանադա և Աւստրալիա: Ըստ տեղացի մի հայուհու. «*Երբ Իտալիայից արտագաղթեցինք, հարավային Աֆրիկան իսկապէս դրախտ էր, մարդիկ սիրալիր էին, կեանքից գոհ, լաւ աշխատում էին, լաւ գործարքներ կատարում, շատ ժամանակ կար բարեկամներին յատկացնելու, ամէն երեկոյ հաւաքոյթ էր: Հիմա լարում ենք ապրում, ինչպէս հրեաները Իսրայէլում: Մինչդեռ մենք էլ ենք սիրում Մանդելային, պայքարել ենք սեւամորթների հետ իրավիճակը փոխելու համար, սակայն, ինչպէս տեսնում էք, արդիւնքը հիասթափեցնող է: Սպիտակները տազնապի մէջ են: Անորոշ վիճակում ենք...»⁴³:*

Յիշենք նաեւ, որ տարբեր երկրների հայ գործարարներ և քաղաքական գործիչներ ՀԱՀ-ում և այլ աֆրիկեան երկրներում զբաղում են հանքարդիւնաբերութեամբ: Ծարուսրազէտ, շինարար, ձեռնարկատէր, քաղաքական գործիչ **Նուր Մխիթարեանը** ՀԱՀ-ում զբաղում է ոսկու և թանկարժէք քարերի արտադրութեամբ, մշակմամբ և արտահանութեամբ:

⁴² Տե՛ս Չինբաբվէի վոքբաթի հայերն աշխատում են հիմնականում բժշկութեան ասպարէզում, անդ:

⁴³ **Պիետրո Զուլկեան**, Սփռածները, էջ 114:

Մաղազասկար

Առաջին հայը, որ ապրել է այս կղզում, հաւանաբար եղել է Մարոկկոյում, ապա Մաղազասկարում ֆրանսիական պետութեան պաշտօնեայ **Սկրտիչ Անաշիկեանը**, որը մահացել է 1893-ին, Մաղազասկարում⁴⁴:

Ինչպէս արդէն նշուեց, 1920-ականներին Քեմալ Աթաթիւրքը ցանկացել է արեւմտահայ գաղթականներին ուղարկել Ալժիր եւ Մաղազասկար, որը չի իրականացել: Մաղազասկարը հայագաղութ դարձնելու մասին երկու տասնամեակ անց յիշել են արդէն հայերը: 1946-ին Երուսաղէմի «Հայ դիտակ» շաբաթաթերթն իր խմբագրականներից մէկում մտահոգութիւն է յայտնուել ներգաղթին շմիացած հայերի ճակատագրի հանդէպ եւ բարձրաձայնել «իբրեւ հայ» ապրելու «ուրիշ կարելիութիւններու մասին»: Մասնաւորապէս նշուել է, որ «Մեր կարծիքով լաւագոյն պայմաններ ներկայացնող տեղերը երոսլական մեծ կառավարութիւններուն գաղթավայրերն են..... Արեւելեան եւ Արեւմտեան Ափրիկէի մէջ կը գտնուին գաղթավայրեր, նոյնքան դիրամատչելի պայմաններով: Մատակասկար, աշխատանքի ու հարստութեան հսկայ ամբարանոցը, կը տառապի աշխատող ձեռքերու պակասէն: Այս բոլոր կարելիութիւններուն առընթեր, մենք զացած ու թխմուած ենք մեծ մասամբ այնպիսի երկիրներու մէջ, ուր ոչ միայն կը խճողենք բնակչութեան խտութիւնը, այլ եւ կը բաժնենք երկրին շատ համեստ, մինչեւ իսկ խնդն արտադրութեան ու ճարտարարուեստին քանակութիւնը, նոյն ատեն առանց կապելու մեր ասպագան որեւէ շօշափելի ապահովութեան: Հաւաքական ու միական դիմում մը յիշեալ գաղթավայրերէն որեւէ մէկուն տիրող կառավարութեան, կը խորհինք, թէ բանակցութիւններու եւ նոր ապահովութեան շրջան մը կրնան բանալ գաղթաշխարհի հայութեան անվթար պահպանումին տեսակէտէն»⁴⁵:

⁴⁴ Տե՛ս Հրաչեայ Աճառեան, Հայ գաղթականութեան պատմութիւն, էջ 474:

⁴⁵ Հայաստան եւ գաղթաշխարհը, «Հայ դիտակ», 13.04.1946:

Մնունդով սերաստացի Խաչիկ Լուսիկեանը 1922-ից բնակուել է Մադագասկարում: 1932-ին Յունաստանից նրա մօտ է տեղափոխուել հայուի Ռվսաննան, ամուսնացել են, ունեցել զաւակներ⁴⁶: Լուսիկեանը 1947-ից բանաստեղծութիւններով աշխատակցել է «Հայաստանի կոչնակին»՝ մինչեւ վերջինիս հրատարակութեան դադարումը 1968-ին⁴⁷:

Եթովպահայ ժամագործ Անդրանիկ Գնաճեանը (1915–2002) 1941–1942 թթ. բնակուել է Մադագասկարում, աշխատանքի անցել Անտանանարիվուի միակ ժամացոյցի խաւնութում, այնուհետեւ վերադարձել է Եթովպիա⁴⁸:

Ֆրանսահայ պետական գործիչ, կրթութեամբ իրաւագետ Ժաք (Արշակ) Մուրադեանը (1910, Կոնշ-ան-Ուշ, Ֆրանսիա – 1992, Փարիզ) աշխատել է մի քանի աֆրիկեան երկրներում որպէս զաղութային ծառայութիւնների օգնական վարչարար. Սենեգալում՝ 1930-ականներին, նահանգապետ Ուրանգուիում (ֆրանսիական հասարակածային Աֆրիկա)՝ 1945–1947 թթ., այլեւայլ պաշտօններ է զբաղեցրել Մադագասկարում (1947–1952), Չադում (1952–1954) եւ Նիգերում (1958–1960): 1960–1962 թթ. եղել է Կենտրոնական Աֆրիկեան Հանրապետութեան Գերագոյն յանձնակատար: Ալֆոնս Գույի ծածկանումը հրատարակել է արեւելագիտական աշխատութիւններ, այդ թում՝ «Իսլամն արեւմտեան Աֆրիկայում»⁴⁹:

Նկարչուի Մարիամ Ասլամագեանը յիշել է, որ երբ ինքը մեկնել է Մադագասկար, այնտեղ հանդիպել է Անդրանիկ անունով մի գործարարի: «Իմանալով, որ զայիս է հայ նկարչուի Մարիամ Արշակի Ասլամագեանը, նա որոշեց

⁴⁶ Խ. Լուսիկեան, Բոնագաթ եւ ներգաղթ, «Հայաստանի կոչնակ», 25.10.1947, էջ 990:

⁴⁷ Նբ.ա մասին տես՝ Հայ բանաստեղծ մը ի Մադագասկար, «Հայաստանի կոչնակ», 1968, էջ 358:

⁴⁸ Stéu Victoria Gomelsky, From Addis Ababa to London: A watchmaking family's Odyssey, "New York Times," 7.11.2007:

⁴⁹ Արշակ Ժաք Մուրադեան Նոր Հեարիտեան կղզիներու կառավարիչ, «Ջահակիր», 24.11.1966:

ծանօթանալ ինձ հետ, քանի որ Մաղազասկարում ուրիշ հայեր չկային: Մաղազասկարում անցկացրածս ութ օրերի ընթացքում նա ինձ ցոյց տուեց բոլոր ամենահետաքրքիր բաները: Վերջին օրը հրաւիրեց ռեստորան՝ հրաժեշտի ճաշի:

–Տիկին Մարիամ, ես ապրում եմ մենակ, առանց ընտանիք: Մնացէք ինձ հետ, ես հարուստ մարդ եմ, ողջ երկրի համար դեղ եմ հայթայթում:

Ես նրան պատասխանում եմ. «Ես ծեր մայր ունեմ, ես չեմ կարող նրան մենակ թողնել»:

–Մայրդ կապրի մեզ հետ: Ես քաղաքից դուրս, ովկիանոսի ասփին առանձնատուն ունեմ: Այնտեղ դու արուեստանոց կունենաս:

–Չեմ կարող, ես սիրում եմ իմ Հայաստանը, Արարատ լեռը: Երբ ես տեսնում եմ նրան, մերշնչանք է ծնում:

Այդպէս մենք բաժանուեցինք»:⁵⁰

Մաղազասկարում հայերի բնակութեան լրացուցիչ ապացոյց է Ստեփան Ալաջաջեանի «Մայրիկի համար» պատմուածքը, որտեղ յիշուած են Մաղազասկարին մերձ Կոմորեզ կղզում ապրող հայեր Մարկոսը եւ Թովմասը⁵¹:

Ռուս դերասան Ալեքսանդր Պանկրատով-Չեռոնին մի հարցազրոյցում յիշել է, որ մի անգամ Մաղազասկարում չինական ռեստորանում լսելով իրենց ռուսերէն խօսակցութիւնը՝ իրեն է մօտեցել տէրը, հպարտութեամբ ասել է, որ ինքը հայ է եւ զրոյցի վերջում նրան է նուիրել հայկական կոնեակ: «Այնքան յուզիչ էր՝ նուէր ստանալ հայկական կոնեակ Մաղազասկարում»:⁵²

⁵⁰ Мариам Асламазян, Давтар жизни, Гюмри, 2016, стр. 7.

⁵¹ Տես Ստեփան Ալաջաջեան, Մաղենն ապրում է Փարիզում, Երևան, 1975, էջ 64-71:

⁵² Տես Гаяне Данилеян, Александр Панкратов-Черный, он же Панкратян <http://sobesednik.gdesigngroup.org/ru/culture/4089-2013-06-09-07-55-26> (ղխտուած՝ 14.11.2011, այժմ ջնջուած):

1983-ի տոնելով՝ Մաղազասկարում բնակուել է 60 հայ⁵³:

Աելացնենք, որ Մաղազասկարում աշխատել է ամերիկեան հայազգի բուսաբան **Մարդի (Մարտիրոս) Դարեանը** (1933–2015): Նա եղել է կղզու արմատենիների մասնագետը, որի անունով միայն Մաղազասկարում աճող հազուագիտ ամատենիներից մէկը կոչում է *Marojejya darianii*:

Նամիբիա

Երեսանցի ճանապարհորդ Վարդան Սարգսեանն իր «Տնից հեռու» հաղորդաշարերի թողարկումներից մէկը պատրաստել է Նամիբիայում, որտեղ հանդիպել է այդ երկրում ապրող միակ հային՝ **Կարէնին**: Վերջինս՝ պատմում է, որ աշխատել է Նոր Հաւրընի աղամանդի գործարանում, որի սեփականատերը 2004-ին գործարան է բացել Նամիբիայում, եւ 70 հայեր եկել են՝ նամիբիացիներին աղամանդի մշակութիւն սովորեցնելու: Բոլորը վերադարձել են՝ Կարէնից բացի:

Սվազիլենդ (Էսվատինի)

Էսվատինիում (մինչեւ 2018-ը՝ Սվազիլենդի քազաորութիւն) 2016-ի տոնելով ապրել է ընդամենը ութ հայ: Սակայն յատկանշական է, որ այդ երկրում կայ հայկական եկեղեցի. հանրայայտ մի փաստ, բազմիցս կրկնուած, որը սակայն մենք եւս պիտի կրկնենք:

Գրամէքենաների առետրական, Սվազիլենդի քաղաքացի **Գրիգոր Տերպալեանը** (Տեր-Պալեան, լատինատառ տառադարձութեամբ՝ Դերբալեան) Սվազիլենդի Սայբեբեհ (Սոճիների հովիտ) կոչուող անբնակ վայրում 1989-ին կառուցել է Սուրբ Յարութիւն փոքրիկ եկեղեցին (իր փոքրութեան պատճառով յնճախ կոչում է մատուռ): 1990-ից Յունաստանից մի հայ վարդապետ եկել է եկեղեցին օժելու եւ

⁵³ Տե՛ս Արմէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները, էջ 104:

մկրտել երկու երեխայի:

Գրիգոր Տերպալեանը ծնունդ է 1914 թուականին, Այնթապում: Հայոց ցեղասպանութեան ժամանակ Գրիգորի մայրը 20 օրական որդու հետ ոտքով հասել է ամուսնու մօտ՝ Կահիրէ եւ մի քանի ամսից մահացել: Գրիգորը նախնական հայկական կրթութիւն է ստացել Կահիրէում: 12 տարի աշխատել է Խարթումում, ապա՝ Եօհաննէսբուրգում՝ «Օլիվէթի» ընկերութիւնում: Հասուն տարիքում Գրիգոր Տերպալեանը տեղափոխուել է Սվազիլէնդ՝ մայրաքաղաք Մբաբանէից ոչ հեռու գտնուող Սայբեբէիը: Սոճու հովտի կենտրոնում, որի բնապատկերը նրան յիշեցրել է Հայաստանը, Գրիգորը գնել է 11 ակր հողատարածք ու կառուցել հայկական փոքրիկ եկեղեցի, որի շինարարութիւնը տեւել է չորս տարի՝ 1985–1989 թթ., շուրջ 60 հոգու նուիրատութեամբ, սեփական ձեռքերով եւ սեւամորթ բարեկամների օգնութեամբ: Ներսում կարող են նստել 24 հոգի: Մոմակալները, պատկերներն ու կրօնական իրերը նուիրել են Տեր-Պալեանի հայ բարեկամները: Կառոյցի շուրջը նա տնկել 1770 սոճի եւ եղեւնի: Եկեղեցու կողքի փոքրիկ գետը Դերբելեանն անուանել է Արաքս՝ կողքը տեղադրելով այդ անուամբ վահանակ: Մի կտոր Հայաստան՝ Աֆրիկայի խորքում...

Ըստ այցելուի՝ եկեղեցու պահակի տան «*Ապակիների միջից երեսում են Հայաստանի մեծ աշխարհագրական քարտէզը, Արարատը պատկերող նկաներ, գորգեր, փայտէ խաչքար... Գնում ենք բլրի միւս կողմը, անցնում գետակի միւս ափը, մեր դիմաց կանգնած է այն, ինչ կառուցողի պատկերացմամբ պէտք է լինէր հայկական եկեղեցի. թիթեղեայ կտուրով մի զանգակատուն, գետնահարկ քառակուսի մի եկեղեցի: Դռան կողքերին երկու փայտէ սիւն է եւ մի ցուցամակ. «Հայկական մատուռ, Մուրբ Յարութիւն, Էջմիածին»⁵⁴:*

2016-ի յունուարի 13-ին Սվազիլէնդի Մսուաթի Գ թագաւորը, ընդառաջելով հայ համայնքի ներկայացուցիչների

⁵⁴ Պիետրո Բուչուկեան, Սփռուածները, էջ 119-120:

խնդրագրին՝ հայկական Սուրբ Յարութեան եկեղեցին եւ վանքապատկան հողերը պաշտօնապէս փոխանցել է Էջմիածնի կաթողիկոսարանին: Եկեղեցին եւ վանքապատկան հողերը խնամելու հարցում սկզբիւնղոցի հայերին օգնում են հարեւան ՀԱՀ-ի հայերը⁵⁵:

Սոյն գլուխն ամփոփելով՝ նոյնպէս նշենք Հայաստանի եւ տարբեր երկրների հայազգի գործիչների, որոնք որոշ ժամանակ տարբեր առաքելութիւններով գործել եւ պաշտօնավարել են Աֆրիկայի երկրներում՝ թողնելով որոշակի հետք:

Տակաւին 1926-ին Մադագասկարի օպերային նուսագախմբում կէս տարի պաշտօնավարել է ծնունդով պուլեցի ֆրանսաբնակ նուսագալար, հետագայում սոսալինեան բռնութեան զոհ **Գեորգ Եաղուպեանը** (1890–1941):

Աֆրիկայի հետ է կապուած հայազգի ֆրանսիական ովկիանոսագետ, աշխարհի առաջին կին ովկիանոսագետ **Անիտա Կոնտիի** (Գարագոչեան, 1899–1997) գործունէութեան տալ տարին: Ալժիրի ֆրանսիական կառավարութիւնը նրան յանձնարարել է ուսումնասիրել Արեւմտեան Աֆրիկայի ձկնային պաշարները, եւ 1941-ին Կոնտին նաուով մեկնել է այդ տալաժաշրջան՝ լինելով միակ կինը նախ անձնակազմում: 1943–1952 թթ. Կոնտին հետազօտել է Մարիկիայի, Սենեգալի, Գվինեայի եւ Կոտ դ'Իվուարի ծովափնեայ շրջանները, յատակի բնոյթը, ձկնային պաշարները, նկարագրել նոր

⁵⁵ Տես Հարաւային Ափրիկէի մէջ գտնուող Սուրբ Յարութիւն մատուռը փոխանցուած է հայ համայնքին, «Ասպարեզ», 19.01.2016: Տեղալեւանի մասին մանրամասն տես նաեւ **Pablo R. Bedrossian**, *Un armenio en Swazilandia*, https://pablobedrossian.com/2016/08/20/un-armenio-en-swazilandia-por-pablo-r-bedrossian/?fbclid=IwAR0uzRCjFpFu3EyNPo_mKcm4j11iIK-JeRtphemO2Xo_3qE5sFvEj7ii6w (դիտուած՝ 4.05.2020):

ձկնատեսակներ, տարեց տեղաբնակներից փաստագրել տեղական ձկնորսութեան աւանդոյթները եւ մշակել ձկնորսութեան մանրամասն քարտէզներ՝ նպատակ ունենալով կերակրել ֆրանսիական բանակին եւ փրկել տեղական բնակչութեանը սովից, միաժամանակ հաւատարիմ մնալով գիտութեանը:

1949 թուականին Նիգերիա եւ Կոտ դ'Իվուար է ճամփորդել եգիպտահայ նկարչուհի Նորա Ազատեանը (1924–2021), ստեղծել տեղական տեսարաններով նկարաշար⁵⁶:

Տրանսահայ Սիւզան Մովսեսեանը որպէս հիւանդապահուհի 1952–1955 թթ. աշխատել է Լամբարէնում (Գաբոն), Ալբերտ Շուեյցերի առաքելութեան հետ⁵⁷, 1971-ին գիրք է հրատարակել այդ մասին⁵⁸:

ԱՄՆ-ում աֆրիկեան երաժշտութեան տարածման գործում անգնահատելի ծառայութիւններ է մատուցել էթնօերաժշտագետ Լէօ Սարգսեանը (1921–2018): ԱՄՆ-ում նա շատ յայտնի չի եղել, մինչդեռ նրա անունն իսկական լեգենդ է եղել Աֆրիկա մայրցամաքում: Միյիոնաւոր աֆրիկացիներ նրան ճանաչել են որպէս «Աֆրիկայի երաժշտութեան մարդը», որն աշխարհում առաջինն է հանրաժողովրդական աֆրիկեան երաժշտութիւնը: 1958-ին տիկնոջ՝ Մէրի Անտոնեանի հետ մէկ տարի աշխատել է նորանկախ Գանա հանրապետութեան ձայնասփիւռում եւ ուսումնասիրել տեղական երաժշտութիւնը: Այնուհետեւ աշխատել է Հասարակածային Գվինեայի եւ Լիբերիայի ձայնասփիւռում: 1965-ից Վաշինգթօնի «Ամերիկայի ձայն» ձայնասփիւռի կայանով քառասուն տարի շարունակ վարել է «Երաժշտութեան ժամ Աֆրիկայում» հաղորդումը, հեռարձակել աֆրիկեան տարբեր ժողովուրդների երգեր, հիւրընկալել նշանաւոր աֆրիկացիների (օրինակ, Սվազիլենդի թագուհուն): 2005-ին Վաշինգթոնում բացուել է

⁵⁶ Գաղութ գաղութ, «Յառաջ», 7.02.1950:

⁵⁷ Տե՛ս «Յառաջ», 13.01.1973:

⁵⁸ Տե՛ս **Suzanne Movsessian**, *Depart du Bourget pour Lambarene (Gabon), Marsat*, 1971:

«Աֆրիկեան երաժշտութեան Լեօ Սարգսեան գրադարանը», որտեղ հաւաքուած են աֆրիկեան երաժշտութեան բազմաթիւ ձայնագրութիւններ եւ հրատարակութիւններ⁵⁹:

Ֆրանսիայի ճանաչուած աֆրիկագէտներից էր պատմաբան, լրագրող, պետական գործիչ **Ժաք Բուլինը**, իսկական անունով՝ Ժոզեֆ Ժաք (Յակոբ) Բաթմանեանը (1924, Հելյուպոլիս, Եգիպտոս – 2001): 1963–1969 թթ. եղել է Կոտ դ'Իվուարի նախագահ Հուֆայէթ Բոհնիի, 1965–1972 թթ. Նիգերի նախագահ Դիորի Համանիի քաղաքական եւ տնտեսական խորհրդականը: Փարիզում հրատարակել է թերթ Նիգերի համար, տեղեկատու գրականութիւն Կոտ դ'Իվուարիի վերաբերեալ: 1962-ին Լոնդոնում հրատարակել է «Արաբական գործոնն Աֆրիկայում» անգլերէն զիրքը, 1980-ին Փարիզում՝ մենագրութիւն աֆրիկացի պետական գործիչ Ֆելիքս Ուֆուե-Բուանյիի մասին:⁶⁰ Արժանացել է Կոտ դ'Իվուարի, Նիգերի եւ Գաբոնի հանրապետութիւնների ազգային շքանշաններին:

1970-ականներին Լազոսի ԱՄՆ դեսպանատանը պաշտօնավարել է ամերիկահայ **Լեօն Պալեանը** (ծն. 1921)՝ պոլսահայ նշանաւոր ճարտարապետների սերունդից:⁶¹

Ամերիկահայ բժիշկ-ախտաբան **Ռորերտ Նալբանդեանը** (1922–1997) 1970-ին ղեկավարել է Գանայում համաճարակի դէմ տարուող պայքարը⁶²:

Մէկ այլ ամերիկահայ բժիշկ եւ կենսաքիմիկոս՝ **Միքսան Կիլեանը** (ծն. 1930), տարիներ շարունակ պաշտօնավարել է աֆրիկեան երկրներում, համագործակցել նշանաւոր հումանիտար Ալբերտ Շուեյցերի հետ:

⁵⁹ St'iu Elyssa Karanian, Music for the Global Village, "The Armenian Reporter International," 15.03.2008. Նրա մասին մանրամասն տես **Արժուի Բախշինեան**, Աֆրիկեան երաժշտութեան Կոմիտատը՝ Լեօ Սարգսեան, «Ազգ», 6.08.2018:

⁶⁰ St'iu Jacques Baulin, La politique africaine d'Houphouët-Boigny, Paris, 1980.

⁶¹ **Լեօն Արեշաւեան**, Նախաբան, էջ 154:

⁶² St'iu Discover cure for "Negro Disease" of blood, "Jet," Dec. 17, 1970, p. 20:

Ամերիկահայ պարաոլիբ **Լեօ Ղարիբեանը** 1976-ին Նայրոբիում բեմադրել է «Կաբարտ» ներկայացումը:

Ֆրանսահայ արուեստաբան **Պատրիկ Տօնապետեանը** 1987-ին ֆրանսերեն է դասաւանդել Լագոսում (Նիգերիա):

Ամերիկահայ բեմադրիչ **Քարլա Կարապետեանը** նկարահանել է «Իմ ընկեր վարձկանը» վաերագրութիւնը (2005)՝ Հասարակածային Գվինեայում յեղաշրջման փորձի մասին:

Լիբանանահայ ռոք երգչուհի **Այլին Խաչատրեանը** (ծն. 1978) մի քանի ամիս ապրել է Կոտ դ'Իվուարում՝ ուսանելով աֆրիկեան երգեցողութիւն:

Ֆրանսիական «Բժիշկներ առանց սահմանների» կազմակերպութեան անդամ **Սեզո (Սլրտիշ) Թարգեանը** Հայաստանում եւ Արցախում աշխատելուց յետոյ որպէս բժիշկ գործել է Սիեռա Լեոնէում, Կոնգոյում, Նիգերում եւ Կենտրոնական Աֆրիկեան Հանրապետութիւնում:

1990–1998 թթ. ամերիկահայ **Մոնա Եակոբեանն** աշխատել է որպէս Հիւսիսային Աֆրիկայի վերլուծաբան ԱՄՆ Պետական դեսպարտամենտի հետախուզութեան եւ հետազօտութիւնների բիրոյում:

2016–2022 թթ. ֆրանսաբնակ լիբանանահայ գործարար **Րաֆֆի Տեր-Մարտիրոսեանը** (գրում է Դերմարդիրոսեան) եղել է Բուրկինա Ֆասոյի ներքին գործերի եւ պաշտպանութեան նախարարություններում զենքի զման հիմնական միջնորդը: Մտերիմ է եղել երկրի նախագահ Կաբորէի հետ, որի գահընկեց լինելուց յետոյ փախուստ է սուել Բուրկինա Ֆասոյից:

Խորհրդային Միութեան տիրապետութեան ժամանակաշրջանում սեւամորթ Աֆրիկայի երկրներում աշխատել են մի շարք հայ մասնագէտներ՝ դիւանագէտներ, բժիշկներ, գիտնականներ, արուեստագէտներ:

Նախ յիշենք հայ դիւանագէտներին: **Աշոտ Մելիք-Շահնազարեանը** (1931–2004) 1960–1964 թթ. եղել է Գվինեա-ԽՍՀՄ դեսպանութեան կցորդ, 3-րդ քարտուղար, 1964–1965

թթ. ԽՍՀՄ ԱԳՆ Աֆրիկայի պետութիւնների վարչութեան 2-րդ քարտուղար, 1966–1968 թթ.՝ Սենեգալ-ԽՍՀՄ դեսպանութեան 2-րդ քարտուղար, 1968–1969 թթ.՝ Չաիր-ԽՍՀՄ դեսպանութեան 1-ին քարտուղար, ժամանակավոր հաւատարմատար, 1989–1992 թթ.՝ Մալի-ԽՍՀՄ դեսպանութեան խորհրդական: 1970–1973 թթ. **Էդուարդ Մալայեանը** (ծն. 1947) աշխատել է Կոնգոյի (այն ժամանակ՝ Չաիր) ԽՍՀՄ դեսպանատանը: 1973–1987 թթ. **Գեորգի Տեր-Ղազարեանցը** (ծն. 1923) եղել է ԽՍՀՄ արտակարգ եւ լիազօր դեսպանը Սենեգալում եւ Գամբիայում: **Աշոտ Եղիազարեանը** (ծն. 1943) 1976–1976 թթ. եղել է ԽՍՀՄ ԱԳՆ 2-րդ Աֆրիկեան բաժնի 2-րդ քարտուղար, 1976–1983 թթ.՝ Անգոլայում ԽՍՀՄ դեսպանութեան 2-րդ, ապա՝ 1-ին քարտուղար: 1977–1981 թթ. Մոզամբիկի ԽՍՀՄ դեսպանատանն է աշխատել **Կարինէ Ղազիմեանը** (1955–2012): 1981–1989 թթ. տնտեսական գիտութիւնների դոկտոր **Սերգեյ Սարկիսովը** (ծն. 1947) աշխատել է Անգոլայում ԽՍՀՄ առևտրի ներկայացուցչութիւնում: 1984–1990 թթ. **Տիգրան Կայրախանովը** (ծն. 1944) եղել է Թունիսում ԽՍՀՄ խորհրդական-դեսպանորդ, 1994–1998 թթ.՝ Ռուսաստանի Դաշնութեան արտակարգ եւ լիազօր դեսպան Մաքիտանիայում: 1986–1991 թթ. ՀԽՍՀ արտաքին գործերի նախարար **Անատոլի Մկրտչեանը** (1931–2011) 1991–1992 թթ. եղել է հարաւ-աֆրիկեան պետութիւններից Լեսոթոյի Թագավորութիւնում ԽՍՀՄ, այնուհետեւ՝ Ռուսաստանի Դաշնութեան արտակարգ եւ լիազօր դեսպան: **Արեգ Յովհաննիսեանը** (ծն. 1965) 1988–1991 թթ. թարգմանիչ է աշխատել Տրիպոլիում (Լիբիա): 1990–1993 թթ. Մարոկկոյում ԽՍՀՄ, այնուհետեւ՝ Ռուսաստանի դեսպանատան գլխաւոր հիւպատոսը Կասաբլանկայում եղել է **Սուրեն Յարութիւնեանը** (1939–2019): 1987–1988 թթ. **Կարեն Կարապետեանը** (ծն. 1962) պոլստուգալերենի թարգմանիչ է աշխատել Անգոլայում: **Վահրամ Աբաջեանը** (ծն. 1958) տարբեր առաքելութիւններ է իրականացրել աֆրիկեան երկրներում, 2010–2011 թթ. եղել է

Խարթումում «Քարթեր» կենտրոնի երկարաժամկետ դիտորդների համակարգող, 2013–2014 թթ.՝ Մաղազասկարում ընտրութիւնների Երոպական Միութեան դիտորդական առաքելութեան երկարաժամկետ դիտորդ, 2015–2018 թթ.՝ Մալիում ՄԱԿ-ի ՄԻՆՈՒՍՍԱ առաքելութեան քաղաքացիական հարցերով աւագ մասնագետ: **Գրիգոր Յովհաննիսեանը** (ծն. 1971) 1996–1998 թթ. աշխատել է որպէս Յատուկ Համակարգողի խորհրդական ծրագրերի եւ հանրային կապերի գծով ՄԱԿ-ի Յատուկ Առաքելութիւն Աֆրիկեան Մեծ Լճերի տարածաշրջանում (Ռուանդա, Չադի, Բուրունդի, Ուգանդա, Տանզանիա, Կենտրոնական Աֆրիկեան Հանրապետութիւն, Քենիա), իսկ 1998–2000 թթ. եղել Քինշասայի եւ Բրազավիլի գրասենեակների ղեկավարը ՄԱԿ-ի Քարտուղարութեան համակարգող գրասենեակում (Կոնգոյի Դեմոկրատական եւ Կոնգոյի հանրապետութիւններ):

Ռուսաստանի գլխաւոր օդաչու, Ռուսաստանի Դաշնութեան հերոս, Քաղաքացիական ավիացիայի պետական գիտահետազօտական ինստիտուտի գլխաւոր տնօրէնի տեղակալ, ծնունդով երեւանցի **Ռուբէն Եսայեանը** (ծն. 1946) 1981–1984 թթ. աշխատել է Անգոլայում, որտեղ ընթանում էր քաղաքացիական պատերազմ: Այնտեղ նշանակուել է Անգոլայի պաշտպանութեան նախարարի անձնական օդաչու: 1983 թուականին Եսայեանը իր ԵԱԿ-40 ինքնաթիռով պէտք էր մի վայր հասցնէր կուրացի մասնագէտների պատուիրակութեանը, երբ ցուցարարների արձակած հրթիռը դիպել է աջ շարժիչին եւ հրդեհ է սկսուել: Եսայեանին յաջողուել է մասնագէտներին անվնաս ցած իջեցնել եւ այդ սխրանքի համար ստացել է «Ժողովուրդների բարեկամութեան» շքանշան:

Երեք տարի Գվինեայի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետութիւնում աշխատել է գիտատնտեսական գիտութիւնների թեկնածու, Դաղստանի գիտատնտեսութեան ինստիտուտի դասախօս **Գուրգէն Խաչումովը** (ծն. 1930): Նաթի եւ գազի որոնման մասնագէտ **Լեւ Կալամկարովը** (ծն.

1932) ԽՍՀՄ-ի կողմից օգտակար հանածոների հետախուզման աշխատանքներ է իրականացրել Գվինեական ծոցում (Նիգերիա, Անգոլա, Գաբոն եւն): ՀՀ ԳԱԱ արտասահմանեան անդամ, ֆիզիկամաթեմատիկական գիւ.ութիւնների ղրկտոր, Սանկտ-Պետերբուրգի պետական համալսարանի պրոֆեսոր, ծնունդով տաշքենդցի **Ռեբերտ Յայութիւնեանը** (ծն. 1937) 1967–1971 թթ. մաթեմատիկա՝ եւ մեխանիկա է դասաւանդել Խարթումի համալսարանում⁶³: 1980-ին Մադագասկարում օգտակար հանածոների արշաւախումբը ղեկավարել է հայաստանցի երկրաբան **Լեւոն Յակոբեանը**: Մադագասկարում այդ արշաւախումբը յայտնաբերել է բիրտղապակու հանքավայրեր, այդ առիթով Մադագասկարի եւ ԽՍՀՄ-ի միջեւ կնքուել են պայմանագրեր, Լեւոն Յակոբեանին յանձնուել է երկրի բարձրագոյն պարզելը՝ «Ասպետի» շքանշանը եւ Մադագասկարին մատուցած ծառայութիւնները վաւերագրող մի պատուոգիր:⁶⁴

Գանայի Բուի բնակավայրի հիդրոէլեկտրակայանի շէնքի ճարտարապետներն են հայաստանցիներ **Տիրան Մայութեանը** եւ **Ս. Բ. Պետրոսեանը** (համահեղինակ՝ Ռ. Ա. Եագուբով): 1962-ին Գանայում եւ Գվինեայում կառուցուելիք երկու խոշոր հիդրոէլեկտրակայանների կառուցման գործին մասնակցել են հայաստանցի ճարտարագետներ **Ա. Տեր-Յովհաննիսեանը**, **Ն. Աւագեանը** եւ **Գուրգէն Ղազարեանը**⁶⁵: Յատկապէս վերջինս մեծ ներդրում է ունեցել Բուիի հիդրոէլեկտրակայանի ստեղծման գործում, եղել է նախագծի գլխատր ճարտարագետը եւ վայելել է տեղացիների

⁶³ Այս մասին յիշել է նաեւ Վարազդատ Յարութիւնեանը (տես նրա Աշխարհի ճամփաներով, էջ 185):

⁶⁴ Տես **Ա. Խրիմեան**, Մադագասկարի շքանշանը, «Սովետական Հայաստան», 1986, թ. 2, էջ 7:

⁶⁵ Տես Հայ ճարտարագետները ջրաէլեկտրակայաններ կը շինեն Ալիբիկէի մէջ, «Արաքս», 3.03.1962:

բացարձակ սերն ու յարգանքը⁶⁶: Բուի գիւղի մօտ կառուցուած խորհրդային մասնագէտների կեցավայրում գործել են շարժական փոքրիկ էլեկտրակայաններ, որոնցից մէկի վրայ եղել է «Երեւանի էլեկտրամեքենաշինական գործարան» մակագրութիւնը⁶⁷: Գուրգէն Ղազարեանը կռահել է, որ Բուիում կան ստորերկրեայ ջրեր, և նրա շնորհիւ գիւղն օժտուել է խմելու թարմ ջրով: Բուիի մօտի խորհրդային ասանում գործել է նաեւ բժիշկ **Գէորգ Ստեփանեանը**, որը մեծ ներդրում է ունեցել տեղի առողջապահական գործի կազմակերպման մէջ. նրա մօտ բուժուելու կամ խորհրդակցութեան է եկել օրական 60-70 մարդ⁶⁸:

Հայ ճարտարապետներ **Գերասիմ Գէորգեանի** (1927–[°]), **Վալտեր Մնացականեանի** (ծն. 1937) և **Գրիգոր Ազիզեանի** (ծն. 1947) նախագծերով շէնքեր են կառուցուել Սոմալիում:

Բժիշկներից յիշենք հետեւեալ անունները: 1971-ին Լուսակայում (Չամբիա) բժշկական ինստիտուտ է հիմնել բժիշկ **Սուրէն Չոբրաբեանը** (1921–[°]): Վիրաբոյժ, զինեկոլոգ **Էդուարդ Ասանեսեանը** (ծն. 1938) 1972–1975 թթ. աշխատել է Նիգերիայի Բենուէ-Պլատո շրջանում, բարեխիղճ աշխատանքի համար նրա անունը գրանցուել է Նիգերիայի ԽՍՀՄ դեսպանատան պատուոյ գրքում: 1973–1975 թթ. Ուզանդայում է աշխատել երեւանցի վիրաբոյժ **Գէորգի Մանուկեանը** (ծն. 1937), որն արեւելեան մահանգներից մէկում իրականացրել է աւելի քան 2000 վիրահատութիւն՝ միաժամանակ դասաւանդելով բժշկական քոլեջում: Երկար տարիներ Գվինեայի Ժողովրդա-Դեմոկրատական Հանրապետութիւնում աշխատել է բժիշկ **Վլադիմիր Դանիէլեանը** (ծն. 1943), որը եղել է մայրաքաղաք Կոնակրիի

⁶⁶ Նրա մասին տես Արտաշէս Քալանթարեանի «Արեւը հասարակածում» ուղեգրութեան մէջ (Արտաշէս Քալանթարեան, Պատմուածքներ, Աշխարհի ճանապարհներին, էջ 339-353):

⁶⁷ Տես Արտաշէս Քալանթարեան, Պատմուածքներ, Աշխարհի ճանապարհներին, էջ 347:

⁶⁸ Տես անդ, էջ 351:

համալսարանի ֆիզիոլոգիայի դասախօս, գլխատրել է խորհրդային բժիշկների խումբը: Արժանացել է Կոնակրիի համալսարանի պատուատր դոկտորի աստիճանի:

Երբեմն աֆրիկեան երկրներում անց են կացուել ԽՍՀՄ օրեր՝ Հայկական ԽՍՀ օրինակով: 1983-ին Մադագասկարում կազմակերպուել են երեսնեան օրեր, ներկայացուել են Հայաստանը պատկերող լուսանկարներ, ցուցադրուել են Երեսնի Մանկական պատկերասրահի աշխատանքների⁶⁹: 1989-ին ԽՍՀՄ-Կոնգո համագործակցութեան շրջանակներում հայաստանեան օրեր են կազմակերպուել Անգոլայում եւ Կոնգոյում: Փառատօնը ներառել է «Հայաստան՝ երկիրը եւ մարդիկ» լուսանկարչական, նկարչուի Լաւինիա Բաժբեուկ-Մելիքեանի գեղանկարների եւ «Աֆրիկան հայ երեխաների աչքերով» ցուցահանդէսները, գորգերի եւ ասեղնագործութեան ցուցադրութիւն, ելոյթ է ունեցել «Երեսան» ջազ համոյթը: Ի դէպ, հայ երեխաների տաս աշխատանք նուիրուել է Կոնգոյի կառավարութեանը⁷⁰: Աւելորդ է ասել, որ այդ միջոցառումներին մշտապէս ներկայ են եղել տեղի հայերը...

Այստեղ յիշենք նաեւ, որ ԽՍՀՄ-ը Աֆրիկայի երկրներ է ուղարկել նաեւ ՊԱԿ-ի գործակալների: Նրանցից էին, Կանադայի քաղաքացի, ծնունդով եգիպտահայ **Ջերի Բրոքիս Դերձակեանը** (ծն. 1931), որը 1976–1978 թթ. գործել է Գվինեայում, **Էդուարդ Չարչեանը** (ծն. 1938), որը 1977–1981 թթ. Նիգերիայում ԽՍՀՄ դեսպանատան երկրորդ քարտուղարն էր, եւ լիբանանահայ **Ստեֆան Արգումանեանը** (ծն. 1944), որը գործել է Գանայում⁷¹:

⁶⁹ Տես Տաք, ջերմ օրեր Անտանանարիվույում (sic), «Սովետական արուեստ», 1983, ք. 12, էջ 50:

⁷⁰ Տես Հայկական օրեր Աֆրիկայում, «Հայրենիքի ձայն», 27.12.1989:

⁷¹ **Felix Corley**, Armenians in Mitrokhin's KGB notes, <https://www.aniarc.am/2018/03/07/armenians-in-mitrokhins-kgb-notes/> (դիտուած՝ 24.04.2020):

1988-ից Անգոլայի մայրաքաղաք Լուանդայում է ապրում ծնունդով բաբուեցի հայուհի, անգոլացու հետ ամուսնացած **Լարիսա Ասկիմովա-Շօաօն** (ծն. 1964): Ուսանել է Պետերբուրգի Ռուսական արուեստի ինստիտուտում: Դաշնամուրի դասեր է ասանդում Լուանդայի երաժշտական քոլեջներում:

..1989–2006 թթ. Մոզամբիկի կրթութեան նախարարութիւնում են աշխատել **Վրէժ** եւ **Ժաննա Յակոբեանները** (ներկայումս բնակւում են Մեծ Բրիտանիայում):

Երեսանցի **Կարէն Բարսամեանը** 2008-ին աշխատել է Մոզամբիկի Միատրուած Ազգերի Կազմակերպութեան պարենային ծրագրում որպէս հաղորդակցութեան տեխնոլոգիաների ղեկավար:

1995-ից Չիմբաբվեում է բնակւում տեխնիկական գիտութիւնների թեկնածու, երեսանցի **Էդուարդ Մայիլեանը**, որ զբաղւում է առեստրով: 2001-ին հայ մամուլին տուած հարցազրոյցում նա պատմել է, որ հայերը հիմնականում աշխատանքի են մեկնում Հիւսիսային Աֆրիկայի երկրներ եւ Նիգերիա, որտեղ կլիման անլի մեղմ է եւ անելի շատ հայեր կան: Հայերը Չիմբաբվեում զբաղւում են գրասենեակային աշխատանքով, առեստրով, ոսկերչութեամբ եւ այլ արհեստներով, աշխատում շինարարական ընկերութիւններում: *«Պէտք է միայն լաւ տիրապետել անգլերէնին՝ Չիմբաբվէի պետական լեզուին: Իսկ եթէ նաեւ սովորել մեծ էթնիկ խմբերի լեզուն՝ շոնան եւ նդերելեն, ապա յաջողութիւնը երաշխաւորուած է»:*⁷²

Երեսանցի օդայու **Յակոբ Ծաղարեանը** 1998-ին հիմնադրել էւ մինչեւ 2007-ը տնօրինել է «Ֆենիքս ավիա» ընկերութիւնը, որը բեռնատար եւ ուղետրատար թռիչքներ է իրականացրել Կոնգոյում եւ Քենիայում՝ երկրների ներսում եւ դրացի երկրներ՝ Անգոլա, Կենտրոնական Աֆրիկեան Հանրապետութիւն, Գաբոն, Չադ, Հասարակածային Գվինեա: «Ֆենիքս ավիան»

⁷² Армянин, он и в Африке армянин, особенно если владеет языком идибеле, «Новое время», 16.11.2001.

Քենիայում ունեցել է պետական բարձր մակարդակի յարաբերություններ: Այս ավիաընկերությունը քենիական «Աստրալ ավիեյշըն» կարգատրող ընկերութեան հետ մէկտեղ եղել է «Քենիական ավիատոլիների», «Սեյշելեան ավիատոլիների» ու տարածաշրջանի մի քանի պետական ընկերությունների եւ երոպական բեռնատար ավիա-ընկերությունների պաշտօնակար գործընկերը: Նայրոբին, լինելով բեռների հաւաքման կենտրոն, աւելի փոքր օդանաւերով թռիչքներ է իրականացրել տարածաշրջանային երկրներ՝ Սեյշելներ, Ուգանդա, Տանզանիա, Չինքաբվէ, Չամբիա, Ռուանդա, հասցնելով երոպական բեռներ (հիմնականում՝ Աֆրիկայում չարտադրուող էլեկտրատեխնիկա եւ կենցաղային ապրանքներ), իսկ հակառակ ուղղութեամբ ամէն օր Երոպա արտահանելով հիմնականում մեծ քանակութեամբ ծաղիկ եւ ձուկ:

Երեսնցի **Յասիկ Բարայեանը** 2007-ին աւարտել է Նայրոբիի Աֆրիկայի Միջազգային համալսարանը, որտեղ ուսանել է աստուածաբանութիւն՝ իսլամական շեշտադրութեամբ: Նա այդ ուսումնական հաստատութեան առաջին հայ ուսանողն է եղել: 2007–2008 թթ. Յասիկն աշխատել է Նայրոբի «Չափել» գրասենեակում, ապա վերադարձել է Հայաստան:

Երեսնցի քաղաքագէտ, վերլուծաբան **Սօսի Թաքիկեանը** մէկ տասնամեակ աշխատել է Երոպայում, Ասիայում եւ Աֆրիկայում ԵԱՀԿ-ի, ՄԱԿ-ի եւ ԵՄ առաքելութիւնների հետ: Աֆրիկայում աշխատել է 2012–2019 թթ., այդ թում 4.5 տարի՝ Կենտրոնական Աֆրիկեան Հանրապետութիւնում եւ աւելի կարճատեւ՝ Գ-վինէա Բիսաուում, Եթովպիայում եւ Գամբիայում, առաջին երեքում՝ ՄԱԿ-ի առաքելութիւններում, իսկ վերջինում՝ Երոմիութեան ծրագիր իրականացնող մասնաւոր ընկերութիւնում: Այդ բոլոր երկրներում նա տեղական իշխանութիւններին ՄԱԿ-ի անունից աջակցել է Անվտանգութեան հաստատութիւնների

բարեփոխումների եւ կարողութիւնների բարձրացման, անվտանգութեան լաւ կառավարման ու վերահսկման, եւ անվտանգութեան քաղաքականութեան ու ռազմավարութեան մշակման ոլորտներում թէ՛ համապատասխան ծրագրերի իրագործման եւ թէ՛ խորհրդատուութեան տրամադրման միջոցով: Յատկապէս նշանակալից է եղել համարեայ հինգ տարի ԿԱՀ-ում քաղաքացիական միջէթնիկ պատերազմի ժամանակ խաղաղապահ առաքելութիւնում կատարած աշխատանքը քաղաքացիական բնակչութեանը պաշտպանելու համար պատասխանատուութեան մանդատով: Սօսի Թաքիկեանը նաեւ գործուղումներ է ունեցել Ուզանդա եւ Մալի, ու ճամփորդել է՝ Քենիայում, Տանզանիայում, Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւնում, Սենեգալում, Կամերունում, Տոգոյում, Սեյշելներում, Եգիպտոսում եւ Մարոկկոյում:

Որպէս ԵՈՒՆԻՍԵՖ կազմակերպութեան պաշտօնեայ Լիբերիայում եւ Մոզամբիկում է աշխատել ծնունդով գիւմրեցի **Լիլիթ Ումրոյեանը**, որն ամուսնացել է մոզամբիկցու հետ:

2007-ից Նիգերիայում է ապրում լիբանանահայ **Յովիկ Խաչատուրեանը**, որը Արուջայում գործող «ADM Nigeria» ՍՊԸ-ի գլխաւոր տնօրէնն է: 2016-ին ամուսնացել է երեւանցի տնտեսագէտ **Իրենա Աետնդեանի** հետ, որն Արուջայում զբաղում է վարսաւիրութեամբ⁷³: Նոյն այս քաղաքում Արուջայում, 2019-ից ապրում է հայաստանցի **Դալիթ Պօղոսեանը**, որն աշխատում է “Webbfontaine” միջազգային ծրագրային ապահովման ՏՏ ընկերութիւնում⁷⁴:

Չամբիայում է աշխատում բժիշկ **Աբերտ Մանասեանը**,

⁷³ Անճնական ելզիր, 26.02.2020: Այս ընտանիքի մասին տես Невероятная история на армянско семейство в Нигерия, «Вахан», 25.09.2019:

⁷⁴ Անճնական ելզիր, 3.03.2020:

որն աւարտել է Երեւանի բժշկական ինստիտուտը: Որպէս Ալաբամայի (ԱՄՆ) համալսարանի դոցենտ՝ 2008-ից աշխատում է Լուսակայում, զբաղում նախաձեռնողական օրգանիզմների ուսումնասիրութեամբ⁷⁵:

2019-ին միջազգային լրատուամիջոցները գրեցին Գ-իւմրու «Մօր ու մանկան աւստրիական հիւանդանոցի մանկաբարձ գինեկոլոգ **Արմէն Սկրտչեանի** (ծն. 1984) մասին, որը երեք ամսով աշխատել է Սուդանում, «Գթութեան մայր» հիւանդանոցում: Նա բազմաթիւ ծնունդներ է ընդունել, ու նրա պատուին մի շարք աֆրիկացի նորածինների անուանակոչել են Արմէն (մէկին՝ Դոկտոր Արմէն, մի աղջկայ էլ՝ Արմինէ)⁷⁶:

Հայերի անունները 21-րդ դարի սկզբի Աֆրիկայում յիշատակում են նաեւ ոչ դրական կողմերով: 2007-ի մարտի 15-ին «Արմէնպրեսը» հաղորդագրութիւն է տարածել Քենիայում ծագած քաղաքական գալթակոլութեան մասին, որի կիզակէտում են յայտնուել հայաստանցիներ **Արթուր Մարգսեանը** եւ **Արթուր Մարգարեանը**, որոնց միջազգային լրատուամիջոցներն ու քենիական մամուլը ներկայացրել է որպէս եղբայրներ: Քենիայի ընդդիմութեան առաջնորդներից Ռեյլա Օդինգան հայ եղբայրներին մեղադրել է, որ նրանք որպէս վարձկաններ օգտագործուել են Քենիայի իշխանութիւնների կողմից որոշ լրատուամիջոցների վրայ յարձակումներ գործելու համար: Մարգսեանը եւ Մարգարեանը հերքել են մեղադրանքները...

Ըստ վերոյիշեալ Էդուարդ Մայիլեանի՝ Աֆրիկայում մեծացող հայերի զաւակները ոչ իսկ ցանկանում են վերադառնալ Հայաստան...⁷⁷ Ամենութեք, թէկուզ աֆրիկեան

⁷⁵ Անձնական ելզիր, 2.09.2019:

⁷⁶ *St'u Armenian Doctor saves newborn sudanese baby's life: Baby named after doctor*, <https://horizonweekly.ca/en/armenian-doctor-saves-newborn-sudanese-babys-life-baby-named-after-doctor/> (դիտում՝ 2.12.2019):

⁷⁷ *Армянин, он и в Африке армянин....*

ջունգլիները, միայն թե Հայաստանից դուրս: Հայութեան մէջ, ցաօք սրտի, արմատակալած հոգեբանութիւն, որի հետեւանքով էլ առաջացել է ու ընդլայնում է աշխարհագրութիւն չճանաչող Հայ Սփիւռքը եւ մեզ մղում կատարել նմանատիպ ուսումնասիրութիւններ...

Աւելացնենք նաեւ, որ մի շարք հայ եւ հայազգի մտաւորականներ եւ արուեստագէտներ ներշնչուել են Աֆրիկայով, սեւամորթների պատմութեամբ եւ ինքնատիպ մշակոյթով:

1936-ին տնտեսագէտ **Վահան Տոտումեանցը** հանդէս է եկել «Քոռփերացիան նեգրերի մէջ» յօդուածով⁷⁸:

1952–1967 թթ. ԱՄՆ Կենտրոնական հետախուզական վարչութիւնում Աֆրիկայի եւ Մերձաւոր Արեւելքի մասնագէտ է եղել **Ալիս Ատանալեանը**, որն անդամակցել է ամերիկեան Աֆրիկայի հետազոտութիւնների ընկերակցութեանը:

16 անգամ Աֆրիկայի տարբեր երկրներում է եղել եւ նկարաշարեր է ստեղծել հայազգի ռուսական նկարչուհի **Միրէյ Շահինեանը** (1918–2012), որը նաեւ գրել է ճամփորդական նօթեր Աֆրիկայի մասին: Նկարիչ **Լեւոն Նալբանդեանը** (1924–1994) աֆրիկեան մեծ նկարաշար է ստեղծել, յատկապէս Նիգերիայում: **Հենրիկ Սիրաւեանը** (1928–2001) Նիգերիա է այցելել 1975-ին եւ ստեղծել աֆրիկեան նկարաշար: Մադագասկարում շրջել է նկարաշար է ստեղծել գեղանկարչուհի **Մարիամ Ասլամագեանը** (1907–2006):

Խորհրդահայ երգահաններից **Սերգէյ Բալասանեանը** (1902–1982), ի թիւս աշխարհի տարբեր ժողովուրդների երգերի, ձայնագրել է մշակել է նաեւ աֆրիկեան ժողովուրդների մի շարք երգեր, իսկ **Կարէն Խաչատրեանը** (1920–2011) գրել է **Չանգիբարի** (1964) եւ **Սոմալիի** (1972) պետական օրհներգերը: Օպերային երգիչ, Ռուսաստանի

⁷⁸ Տես Վ. Տոտումեանց, Քոռփերացիան նեգրերի մէջ, «Հայրենիք», 8.02.1936:

վաստակաւոր արտիստ **Սերգեյ Դաւիդեանը** (1923–1996) 1979–1983 թթ. դասաւանդել է Ալժիրի կոնսերվատորիայում

Ռուսագիր հայ գրող **Պետրոնի Ամատունին** (1916–1982) օղաչուի մասնագիտութեան բերումով շրջել է Ալժիրում, Քենիայում եւ այլ աֆրիկեան երկրներում, գրել այդ երկրների մասին:

Եղել են նաեւ հայազգի աֆրիկագետներ: Ռուսաստանի յայտնի աֆրիկագետներից էր պատմաբան **Կարէն Բրուտեցը** (1924–2017), որը Մոսկուայում լոյս է ընծայել «Ասիայի եւ Աֆրիկայի սոցալիզմ-ազատագրական պայքարը» (1959), «Ընդդէմ ժամանակակից գաղութատիրութեան գաղափարա-խօսութեան» (1961), «Գաղութատիրութիւն առանց կայսրութեան» (1963), «Ժամանակակից յեղափոխական ժողովրդավարութիւնը» (1968), «Ժողովուրդների ստրկացման մի նոր ձեւ» (1969), «Գաղափարների պայքարն արդի աշխարհում» (1978), «Ազատագրուած երկրները 70-ական թուականներին» (1979) եւ այլ ռուսերէն աշխատութիւններ:

Հայազգի ռուսական լեզուաբան **Վլադիմիր Պլունգեանը** (ծն. 1960) աֆրիկեան լեզուների մասնագետ է, աւելի քան 20 տարի աշխատել է Ռ-Դ ԳԱԱ Լեզուաբանութեան ինստիտուտի աֆրիկեան լեզուների ամբիոնում: 1984 թուականից ի վեր ուսումնասիրել է դոգմի լեզուները Մալիում եւ մասնակցել Մալի կատարուած միջազգային արշաւին (1992 թուական): Պլունգեանը հրատարակել է մի շարք յօդուածներ եւ երկու մենագրութիւն դոգմի լեզուների վերաբերեալ, առաջինն է նկարագրել այդ լեզուաընտանիքի ամենամեծ լեզուներից մէկը թոմո-սոն:

Ռուսական եւ ամերիկեան աֆրիկագիտութեան ճանաչուած դէմքերից է **Գեորգի Դերլուգեանը** (ծն. 1961), որը մասնագիտացել է Մոզամբիկի եւ Աֆրիկայի հարաւի պարտիզանական շարժումների պատմութեան մէջ, պաշտպանել ատենախօսութիւն «Մոզամբիկի պարտիզանական պատերազմի սոցիալ-քաղաքական ասպեկտները»

թեմայով: Աֆրիկեան մշակութային ժառանգութեան պահպանման գործին իրովսանն նպաստել է նաեւ հայազգի ռուսական բանասէր **Գայիանէ Անպէտրովա-Շառովան** (1925–2004), որը Պետերբուրգի համալսարանում աշխատելու տարիներին աֆրիկացի ուսանողներից գրառել է հեքիաթներ, ամփոփել «Մամպրուսիի հեքիաթներ» (1967) եւ «Անգոլայի ժողովուրդների հեքիաթներ» (1975) ռուսերէն ժողովածուներում⁷⁹:

Հայազգի ռուս դիւանագետ, պատմաբան **Բորիս Ասոյեանը** (1945–1992) եղել է ԽՍՀՄ գիտութիւնների ակադեմիայի Աֆրիկայի ինստիտուտի աշխատակից, ապա՝ ԽՍՀՄ արտաքին գործերի նախարարութեան Աֆրիկայի արտաքին գործերի նախարարութեան բաժնի վարիչի տեղակալ, Բոտսվանայում ԽՍՀՄ արտակարգ եւ լիազօր դեսպան: 1973–1978 թթ. որպէս «Նովոյէ վրեմնա» թերթի թղթակից աշխատել է Ուզանդայում, եղել ՊԱԿ-ի գործակալ: Ուսումնասիրել է Աֆրիկայի երկրների ազգային-ազատագրական շարժումը, հրատարակել «Ազատութեան ճանապարհները» (1982), «Զիմբաբվէ» (1983), «Վայրի սագերը» սպանում են լուսադեմին. Գաղտնի պատերազմ Աֆրիկայի դէմ» (1984), «Հարաւային Աֆրիկա. ի նշ կլիմի վաղը» (1985), «Տակաւին զարմանալի Աֆրիկա» (1987) աշխատութիւնները:

Այստեղ նշենք, որ հակառակ երեկոյթը (աֆրիկացին զբաղուի հայազիտութեամբ) չի եղել բացառութեամբ մէկ դէպքի: Լիբերիայում ծնուած եւ ԱՄՆ-ում մեծացած **Մունահ Սաքսուքը** Կալիֆոռնիայի համալսարանում կենսաբանութիւն ուսանելուն զուգահեռ հետեւել է հայոց լեզուի եւ Հայոց ցեղասպանութեան դասընթացների, գրել յօդուած Մեծ եղեռնի մասին:⁸⁰

⁷⁹ Նրա մասին մանրամասն տես մեր յօդուածը՝ **Արծուի Բախչինեան**, Այդ իսիստ պէտքական կինը՝ Անպէտրովա Գայանան, «Ազգ», 15.08.2018:

⁸⁰ Mounah Saksouk, From Africa to Armenian Studies, <http://hayernaysor.am/en/archives/8983> (դիտում՝ 30.12.2013):

Յիշենք նաեւ, որ 1960-ականներին, երբ աֆրիկեան մշակույթը համեմատաբար նոր էր Արեւմուտքի համար, եղաւ մի արուեստագէտ, որն օգնեց լրացնել այդ բացը նկարչութեան միջոցով: Հայ հօր եւ եթովպացի մօր զաւակ, ամերիկարնակ նկարիչ **Սկունդեր Պօդոսեանը** (1937–2003) համարում է Արեւմուտքում առաջինը ճանաչում ստացած աֆրիկացի նկարիչը:

ՀԱՅ-ԱՖՐԻԿԵԱՆ ՇՓՈՒՄՆԵՐ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ

Հայերը սեամորթների հետ շփուել են բոլոր ցամաքամասերի ամենատարբեր երկրներում, ընդամին՝ Հայաստանում եւ հարակից երկրներում...

Ադասի Այվազեանն իր «Նեգրոնք» պատմուածքում ներկայացրել է 19-րդ դարում զինուորական Մեծլումովի կողմից Պարսկաստանից Հայաստան բերուած սեամորթ քոյր եւ եղբոր՝ Ալիի եւ Լէյլայի կեանքի պատմութիւնը, որն, անշուշտ, պատմական հիմք ունի Այդ սեամորթներն ապրել են Ալեքսանդրապոլում, եւ նրանց տոհմն այդուհետ կոչուել է «Նեգրոնց Մեծլումովներ»: Լէյլան մի հայից ունեցել է երկու զաւակ, իսկ Ալին հետագայում բնակուել է Թիֆլիսում:

Հաւանաբար հենց այդ սեամորթին կամ Արխագիայում բնակուող Ածիւքժա գիւղից Թիֆլիս եկած աֆրիկեան ծագումով բնակիչներից մէկին է նկատի ունեցել արձակագիր Միքայէլ Մանուէլեանն իր «Նեգրը» մանրապատումում. «Չեմ յիշում երբ էր, քանի տարի առաջ, բայց վաղուց էր, շատ վաղուց: Նա միշտ նստած էր իր տան դռան սուղեւ արեւի տակ, տաքանում էր, նա փաթաթուած էր տաք վերարկուի մէջ, բայց գարնան արեւը նրա պաղած արիւնը չէր կարողանում ջերմացնել: Ժամերով նստած էր արեւի տակ, բայց չէր տաքանում: Այնքան մոռայլ ու տխուր էր նրա դէմքը: Ես երբէք նրան չեմ մոռանալ. սեւ դէմքի վրայ է, ճերմակած գանգուր մազերը, աւելի էին խտացնում նրա թշուառութիւնը: Նա յիշեցնում էր մայր երկրից իլուած տրօպիք բոյսի, որ խամրում մեռնում է հիւսիսում: Նա արեւի տակ նստած երագում էր իր երկրի տաք արեւը... Ուլ գիտէ բաղդի որ քմահաճոյքովն էր նա ընկել այս ցուրտ երկիրը: Ես նրան տեսնում էի ամէն օր իր դռան առաջ կծկուած: Բայց մի շաբաթից աւելի է, որ նա այլ եւս չկար. ամէն օր տուն գնալիս էլ չէի հանդիպում նրան: Նա մեռաւ: Այնքան չտաքացաւ, որ

վերջը մեռա»¹:

Ի դեպ, որ 1910 թուականին մի վրացի վաճառական Թիֆլիս է բերել մի վեցամեայ սեւամորթ երեխայի՝ Բաշիր Չամբեին, «վասն զուարճութեան», ինչպէս ինքն է ասել: Այս սեւամորթը տարիներ անց դարձել է հրշէջ: Ամուսնացել է հայուհու՝ Ելենա Դանիւլեանի հետ: Նրանց սերունդները խառնուել են ռուսների եւ վրացիների հետ²:

1911-ին Նիւ Եօրքի «Արագած» հանդէսում լոյս է տեսել Երուարդ Գօլանճեանի «Խափշիկուսին» վիպերգը ցեղային խտրականութեան դէմ: Վահան Թոթովենցն իր «Ամերիկա» պատմուածաշարի (Երեւան, 1929) երեք պատմուածքում («Երկու հրդեհ», «Մէյրի Ըղըրվուր» եւ «Թոմ») եւս ներկայացրել է սեւամորթների հանդէպ խտրականութիւնն ԱՄՆում:

Աֆրիկացիների դիմաքանդակներ է պատկերել փարիզաբնակ արձանագործ Յակոբ Գիւրջեանը: Ըստ Հենրիկ Իգիթեանի՝ «Գիւրջեանի պորտրետային քանդակաշարքում առանձնայատուկ տեղ են զբաղում նեգրական կերպարները, որոնց նա անդրադառնում է իր բովանդակ ստեղծագործութեան ընթացքում: Ըստ երեսոյթին, քանդակագործին զբաւել են նրանց արտայայտիչ դիմագծերը: Բելգիական պրանիտից պատրաստած կանացի երկու դէմքերը լուսագոյն ձեւով են ներկայացնում մոդելների բնոյթը: Զարի սեւ գոյնը որոշիչ գործոն է այստեղ. նա տուեալ դէպքում ֆունկցիոնալ խնդիր ունի, բառիս լաւ իմաստով նմանակում է նեգրական դէմքի գոյնը: Գիւրջեանի անվիճելի յաջողութիւններից մէկը՝ «Նեգրի գլուխը», ցուցադրում է Փարիզի Ժամանակակից արուեստի թանգարանում: Յատկանշական է, որ մահուանից առաջ կատարուած վերջին գործը դարձեալ նեգրի գլուխ է եղել: Այս դիմաքանդակը կտրականապէս տարբերում է նախորդներից, եւ բանը ոչ այնքան մոդելի անհատականութիւնն է, որքան կերպարի մեկնաբանումը: Մեր առջեւ հսկարտ մի մարդու, արթնա-

¹ Միքայէլ Մանուէլեան, Նեգրը, «Գեղարուեստ», 1911, թ. 4, էջ 112:

² Steu Van Baiburt, An African in Tbilisi, "The Armenian Mirror-Spectator," 12 01.1985:

ցող Աֆրիկայի գաւակի կերպարն է, եւ ոչ թէ նեզր ստրուկի»³:

Ստաւել հետաքրքիր են հայ-սեւամորթ առնչութիւնները վար խորհրդային Հայաստանում: Դեռեւս 1923-ին գրաքննադատ Արտաշէս Կարինեանը հանդէս է եկել «Նեզրերի գրականութիւնը» յօդուածով⁴: Նոյն թուականին սեւամորթ բանաստեղծ, ամերիկեան բանուորական կուսակցութեան անդամ Կլոդ Մաք-Քեյը (1890–1948) այցելել է Մոսկուա, այդ առթիւ հայերէն թարգմանաբար լոյս են տեսել նմուշներ նրա պոեզիայից (թարգմանիչ՝ Այվազ)⁵: 1927-ին խորհրդային Հայաստան է այցելել Ամերիկայի սեւամորթ կոմերիտականների ղեկավար Ջոնսոնը, որը սովորելիս է եղել Մոսկուայում: Նա ծանօթացել է Հայաստանի կոմերիտմիութեան աշխատանքներին: Յատուկ Երեւանի «Աւանգարդ» թերթի համար գրել է մի յօդուած, որ սկսել է «*Ամերիկայի ճնշուած նեզր երիտասարդութեան անունից ես ողջունում եմ ձեզ՝ Հայաստանի ընկերներ»* կոչով, այնուհետեւ ներկայացրել սեւամորթների հանդէպ կիրառվող ցեղային խտրականութիւնն ԱՄՆ-ում, նրանց լինչահարման, մարդկային իրաւունքների պայքարի մասին: «Աւանգարդում» յօդուածի հետ մեկտեղ տպագրուել է ընկեր Ջոնսոնի լուսանկարը ՀԼԿԵՄ կենտկոմի քարտուղար Լ. Մարտիրոսեանի հետ⁶: Յիրաւի, չափազանց տարաշխարհիկ է թւում սեւամորթ կոմերիտականի ներկայութիւնը 1920-ականների վերջի խորհրդային նոր տարազի մէջ մտած գաւառական Երեւանի խորքին...

1930-ին Երեւանում լոյս է տեսել Խնկո-Ապրո «Խափշիկ Ջոյը ինչպէս պիտներ դարձաւ» գործը:

³ Յակոբ Գիրջեան, Երեւան, 1966, էջ 11:

⁴ Արտաշէս Կարինեան, Նեզրերի գրականութիւնը (Ռ-ընէ Մաբան, «Բատուալ», վէպ), «Պայքար», 1923, թ. 1, էջ 4-5:

⁵ Կլոդ Մակ-Կեյ, նեզր բանաստեղծ, «Կարմիր աստղ», 21.01.1923:

⁶ Ինչպէս է ապրում նեզր երիտասարդութիւնը. սեւամորթ կոմերիտական ընկ. Ջոնսոնի յօդուածը, «Աւանգարդ», 9.07.1927:

Իսկ 1935-ին Հայֆիլիարմոնիայում համերգով հանդես է եկել սեւամորթ երգչուհի Կորեստի Արլէ-Տիցը (1881–1951), որին նուսագակցել է ամուսինը՝ ռուս դաշնակահար, պրոֆեսոր Բորիս Տիցը: Սեւամորթ երգչուհին ի թիւս աֆրիկեան, հնդկացիական, Հերիդեան կղզիների բնիկների երգերի եւ Չայկովսկու ռոմանսների՝ կատարել է նաեւ Կոմիտասի «Գարուն ա» երգը⁷: Նմանապէս ատլի քան տարաշխարհիկ մի պատկեր՝ կոմիտասեան երգը սեւամորթ երգչուհու շուրթերին 1930-ականների Երեւանի նորաստեղծ ֆիլիարմոնիայում... Նրանից երկու տարի անց, 1937-ին Երեւանի Ֆիլիարմոնիայում հինգ համերգով հանդես է եկել միւետրքաբնակ սեւամորթ երգչուհի Սելեսին Բոլլը (հայ մամուլում նրա անունը հանդես է եկել Յելեստին Կոոլ ձեւով⁸): 1939-ին նրա պատկերը վրձնել են նկարիչներ Արփենիկ Նալբանդեանը եւ Սկրտիչ Քամալեանը:

1953-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում ներկայացուել է «Հռչակաւոր կապիտանների ակումբը» մանկապատանեկան թատերախաղը: Ըստ ժամանակի թատերախօսի՝ «Ներկայացումը ցոյց է տալիս, թէ Ամերիկայում ու ժամանակակից կապիտալիստական երկրներում սպիտակ տերերը որքան անխնայ են ճնշում ու ոչնչացնում նեգրերին, բանտեր ու տաժանավայրեր քշում Ջեկսոնի նման ազնիւ ու առաջաոր մարդկանց»⁹:

Հայ գրականութեան մէջ եւ շարժանկարում երբեմն ներկայացուել են սեւամորթ հերոսներ: Դեռեւս 1930-ին նկարահանուած Ա. Դանիելեանի՝ պիոներական ճամբարի առօրեան ներկայացնող «Առաջին ճառագայթները» («Ա՛յ քեզ տղաներ») խաղարկային շարժանկարի հերոսներից է եղել մի սեւամորթ (դերակատար՝ Հ. Դանիելեան): Անուշաւան Տեր-Ղեւոնդեանի «Արեւի ցոլքերում» մանկական օպերայի

⁷ Երգչուհի Արլէ Տիցի համերգները, «Խորհրդային արուեստ», 1935, ք. 4, էջ 12:

⁸ Հայֆիլիարմոնիա, «Խորհրդային Հայաստան», 28.08.1937:

⁹ Վարսիկ Գրիգորեան, «Հռչակաւոր կապիտանների ակումբը», «Պիոներ կանչ», 17.02.1953:

գլխատր հերոսը սեւամորթ Բերբերօն է, որ հասնում է Խորհրդային Միութիւն եւ այնտեղ ձեռք բերում *«խկական հայրենիք, ազատութիւն եւ երջանկութիւն»*¹⁰: 1956-ին Ստեփան Կետրկովն էկրանաւորել է Փիթեր Արրահամսի «Ամպրոպի արահետով» վէպը, որի գործողութիւնները կատարում են Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւնում եւ ներկայացնում են սպիտակամորթ աղջկայ եւ սեւամորթ երիտասարդի սիրոյ պատմութիւնը: Երեւանից դուրս ստեղծուել են աֆրիկեան բնապատկերներ պատկերող տաղաւարներ, նկարահանուել են ոչ միայն հայ եւ ռուս դերասաններ, այլեւ մի քանի սեւամորթներ, որոնց մէջ՝ Մակոյի դերակատար Տիտո Ռոմալիոն՝ ազգութեամբ բրազիլացի խորհրդային դերասան եւ էստրադային արտիստ (ծն. 1923)¹¹:

Ստեփան Ալաջաջեանի «Անապատում» վէպի գործողութիւնները կատարում են 1942-ին լիբիական անապատներում, գործող անձինք են բրիտանական վաշտի զինուորները, որոնց մէջ են հայրողի Տիգրան Արազեանը եւ կամերունցի սեւամորթ Քոմոն: Վերջինիս մասին հեղինակը նշել է. *«Նա յարգանք է ունեցել եւ յարգանք ունի դէպի սպիտակները: Սպիտակ ցեղը ինչ-որ բարձր արարած է, այդպէս ասել են հենց իրենք՝ Կամերունի սպիտակները, այդպէս են ներշնչուել իրենք՝ նեգրերը, եւ նա հաւատում է այդ բանին. չէ՞ որ Կամերունում մի սպիտակ սլահում է մի քանի նեգրի. կարող է այդ նեգրերին սպանել. ծեծել, աշխատեցնել ինչպէս սեփական հորթուկին, չէ՞ որ սպիտակները կարող են գրքեր կարդալ, գրալ են օգտագործում ճաշի համար, լաւ են հագնուում, իսկ ի՞նչ գեղեցիկ կանայք ունեն. ձիւնի պէս սպիտա՞ւր»*¹²:

Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում հայերի եւ

¹⁰ Սովետական Հայաստանի երաժշտութիւնը, Երեւան, 1973, էջ 94:

¹¹ Նրա մասին մանրամասն տես մեր յօդուածում **Արծուի Բախչինեան**, Սեւամորթ դերասանը «Հայֆիլմում», «Ազգ», 15.07.2016:

¹² **Ստեփան Ալաջաջեան**, Երկեր երեք զրբով, գիրք 1, Երեւան, 1976, էջ 38:

սեւամորթների առնչութիւններն Ամերիկայի Միացեալ Նահանգներում (որի հայ գաղթականներին, ի դէպ, ժամանակին եանկիները սեւամորթների տեղ դրած՝ ենթարկել են ցեղային խտրականութեան): ԱՄՆ-ում բնակտող նախկին հայաստանցիները տեղի աֆրիկեան ծագումով բնակչութեան համար նոր բառ հնարեցին՝ «սեւական», մինչ արեւմտահայերէնում շարունակում է գործածուել «խափշիկ» բառը: ԱՄՆ-ի քաղաքացիական պատերազմի տարիներին (1861–1865 թթ.) Լուիզիանա նահանգում բնակուել է հարուստ ազարակատեր Կիրակոսեանը: Նա ունեցել է սեւամորթ ստրուկներ, որոնց ազատութիւն է շնորհել: Սակայն հաւատարիմ ծառաները չեն ցանկացել լքել տիրոջը, շարունակել են ապրել նրա մօտ եւ կրել են նրա հայկական ազգանունը: Չարմանալի է, որ այդ սեւամորթների մօտ աւանդոյթ է դարձել իրենց զաւակներին հայկական անուններ տալը: 1950 թուականին սեւամորթ Կիրակոսեանները բնակուելիս են եղել Փենսիլնիա նահանգի Սենթ Հիլի շրջանում, Սենթ Լուիզ քաղաքում եւ Եուֆալա գիւղում: Սեւամորթ Պետրոս Կիրակոսեանի եւ խափշիկուհի Ջորջիանա Ուայթի զաւակները կոչուել են Խաչիկ, Հրանտ, Չաքար, Գարեգին, Անդրանիկ, Չաբել, Հայկանուշ եւ Վերգինէ: Նրանց մասին պատմել է Հայ ազատ ծածկանունով հանդէս եկող մի ամերիկահայ յօդուածագիր «Հայ անուն կրող խափշիկներ» յօդուածում¹³: Իսկ ամերիկաբնակ Աստղիկ Սուրեանը գրել է «Խափշիկ «հայուհին» յօդուածը՝ իր հանդիպման մասին մի ամերիկացի սեւամորթուհու, որի մեծ հայրը հայ է եղել¹⁴:

1927 թուականին բեմադրիչ Ռուբէն Մամուլեանը (1898–1937) Նիւ Յորքի «Գիւլը» թատրոնում բեմադրել է Դիւրբուզ Հէյուարդի «Փորգի» թատերախաղը՝ արուեստի պատմութեան մէջ առաջին անգամ բեմ հանելով սեւամորթներից բաղկացած ոչ պրոֆեսիոնալ մի դերասանակազմ: Լաւագոյնս

¹³ Տե՛ս «The Armenian Mirror-Spectator», 11.08.1951.

¹⁴ Աստղիկ Սուրեան, Խափշիկ «հայուհին», «Հայաստանի կոչնակ», 18.07.1942, էջ 986:

ուսումնասիրած լինելով սեւամորթ մեծ բնակչութիւն ունեցող Չարլսթոն նաւահանգստային քաղաքի սեւամորթների կեանքն ու կենցաղը՝ Մամուլեանին յաջողուել է ամենայն հարազատութեամբ վերարտադրել այդ մշակոյթն ամերիկեան բեմահարթակում: Ներկայացումը հսկայական յաջողութիւն է ունեցել եւ համարուել աննախադէպ երեսոյթ ամերիկեան քատրոնի պատմութեան մէջ: Ինչն է սակայն յատկապէս նշանակալից տուեալ դէպքում, Մամուլեանի բեմադրութեան շնորհիւ ամերիկեան մտայնութեան մէջ նշմարուել է որոշ յեղաշրջում դէպի սեւամորթները, ամերիկացիները սկսել են համակրանքով եւ մարդավայել վերաբերուել նրանց հետ: Մամուլեանը բեմում ներկայացրել էր արժանիքներ, որին մինչ այդ անհաղորդ էին մնացել սեւամորթ ռասային վերից նայող սպիտակամորթները՝ նրանց ազգային ծէսերի գեղեցկութիւնը, երգ ու պարի իրատեսակ թովչանքը, հոգեկան եւ մշակութային արժէքների ինքնատիպութիւնը: Եվ սեւամորթներն իրենք էլ չէին կարող երախտապարտ չմնալ երիտասարդ հայորդուն, որը սիրային մի մելոդրամ կարողացել էր վերածել իրենց ազգային արժանապատւութիւնը շեփորող ասքի: Մամուլեանն իր բեմադրութեան լաւագոյն պարզելը համարել է սեւամորթների անհուն սերը եւ նուիրումածութիւնն իր հանդէպ, որոնք հոգի չեն խնայել իր համար: Ինչպէս վկայել են բեմադրիչի ծնողները՝ *«Իւր խմբի սեւամորթները պաշտում են նորան ու անուանում են իրենանց ազատարար: Սքանչելի է տեսնել այն յարգանքն ու սերը, որով շրջապատուած է նա սեւամորթների կողմից»*¹⁵:

Ի դէպ, 1935-ին Մամուլեանին էր վիճակուած բեմադրել նաեւ սեւամորթների կեանքը պատկերող առաջին օպերայի՝ Ջորջ Գերշվինի «Փորգի եւ Բես» ստեղծագործութեան բեմադրութիւնը՝ հիմնուած վերոյիշեալ «Փորգիի» վրայ:

Նոյն 1935ին սփիւռքահայ գրող Չարուիի Գալէմբարեանը գրել է «Ամերիկացին սեւամորթներու հանդէպ» յօդուածը¹⁶,

¹⁵ ՀԱԱ, ֆ. 395, ց. 1, գ. 77, ք. 10:

¹⁶ Տես «Նոր լուր», 12.03.1935:

հետագայում ամերիկահայ Եզնիկ Ազնակեանը բանախօսել է սեւամորթների գրականութեան վերաբերեալ¹⁷: 1970-ական թթ. համայն աշխարհում մեծ հռչակ ձեռք բերեց սեւամորթ արձակագիր Ալեք Հեյլիի «Արմատներ» վեպը՝ ԱՄՆ-ում սեւամորթների հանդէպ խտրականութեան մասին: Այն թարգմանուել է 17 լեզուներով, ներկայացուել հեռուստատեսութեամբ: Այդ ստեղծագործութիւնն արձագանք է գտել նաեւ հայ իրականութեան մէջ, արեւմտահայ թարգմանութեամբ որպէս թերթն տպագրուելով Ստամբուլի «Մարմարա» օրաթերթում: Ստեղծագործութեան հեռուստաբեմադրութեան առթիւ ամերիկահայ հեղինակ Հոփլիսիմէ Այվիսընը գրի է առել իր մտորումները. «*Այդ վայրկեանին, երբ դիտում էի նկարը, ցանկութիւն ունէի ինձ մօտ նստած ունենալ մի սեւամորթ մամիկ: Ուզեցի ձեռքս դնել նրա ուսին, սեղմել նրան կրծքիս, սփռփելու համար եւ իբրեւ մխիթարանք բանալ նրա առաջ եթէ ոչ մեր հայոց պատմութեան անցեալի հատորները, այլ գտնէ 20-րդ դարի դէպքերը, համեմատելու համար իրենց տառապանքը մերինին հետ*»: Չուզահեռներ անցկացնելով հայոց եւ սեւամորթների պատմութեան մէջ՝ Այվիսընը շեշտում է, որ եթէ խափշիկների հանդէպ մեծագոյն անարդարութիւնն իրականացուել է 17-18-րդ դարերում, ապա հայերի հանդէպ՝ «լուսաւորեալ» 20-րդ դարում: Նա բաղդատում է սեւամորթներին տուած նեզր անուանումը «գեաւորի» հետ: Եւ ապա եզրակացնում է. «*Երանի՜ ձեզ, որ վերջապէս Ալեքս Հեյլի ունեցաք եւ պիտի ունենաք ուրիշ «Արմատներ», ուրիշ արդարութիւն որոնողներ: Երանի՜ ձեզ, որ կարողացաք ցուցադրել ձեր մեծ վիշտը աշխատով մէկ, շահեցիք նոր բարեկամներ, նոր ցաւակցողներ, նոր համակիրներ*»...

Սակայն հայերը մնում են սպիտակամորթ, ուստիւ 1992-ի

¹⁷ 1963-ին գրուել է, որ Քերոլ Սարգսեանը Ֆլորիդայում բանախօսել է սեւամորթների հակամարտութեան մասին (Carole Sarkisian Speaks at Negro Conference in Florida, «Լրաբեր», 9.07.1963), սակայն մեզ թում է, որ նա եղել է հայի հետ ամուսնացած ամերիկուհի:

ապրիլ-մայիսին Լոս Անջելեսում տեղի ունեցած սեւամորթների խռովութիւնը, որի արդիւնքում զոհուել է 63 մարդ, չէր կարող չաարտուել նաեւ հայ զոհով (երկու մոլեռանդների կողմից Ալթադենայի (Քալիֆորնիա) իր տանը սպանուել է հայուհի Լիսի Ռոզ Մարոնեանը (1940–1992), եւ համապատասխան «գրոյց» է տեղի ունեցել հայ եւ սեւամորթների խմբաւորումների միջեւ): Մարդասպանները (18 եւ 19 տարեկան) դատապարտուել են ազատազրկման¹⁸...

Աշխարհի տարբեր երկրներում, Աֆրիկայից բացի, յայտնի են հայերի հետ սեւամորթների հետ ամուսնութիւնների ոչ սակաւ դէպքեր¹⁹ (ԱՄՆ, Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա, Իտալիա, Շուեդիա, Յունաստան, Աւստրիա, Ճապոնիա): Ուշագրաւ է, որ այդ ընտանիքների մեծ մասը կարողանում է արտայայտուել հայերէն: Հայ գրականութեան դասականներ Լեւոն Շանթի եւ Մուշեղ Իշխանի՝ Ֆրանսիայում եւ ԱՄՆ-ում բնակուող սերունդների մէջ կան մուլատներ:

Մերի Լու Սազեանը առաջին հայ օրիորդն էր ԱՄՆ-ում, որ 1968-ին Բերքլիում ամուսնացել է սեւամորթի՝ Մոնթերեյի լեզուագիտական դպրոցի շրջանաւարտ Գորդոն Ջեքսոնի հետ²⁰:

Հայ-սեւամորթ ծուլումի արդիւնք են արդէն յիշուած սուղանահայ առեւտրական Երուանդ Հիւսիսեանի դուստրը՝

¹⁸ Pasadena: 2 Teen-Agers Get Probation for Crimes During Riots, “Los Angeles Times,” 6.10.1994.

¹⁹ «Մեր քաղկին մէջ ամէն սեղի ու տեսակի, ամէն տարիքի ու բնատրութեան, ամէն խելքի ու կարողութեան, ամէն ցեղի ու ազգութեան [մարդ կ'այ]: Նոյնիսկ կ'ըստի, թէ Թորոսին կ'ննջ թխութիւնը ծովերը գնալ-գալէն չէ... Իրականին մէջ, Թորոսի մեծ հայրը սեւամորթ է եղեր. այո, ձեր գիտցած ափրիկեան խափշիկներէն: «Է՞, հայուն ափրիկեցին կ'ըլլա՞յ մը», այտի զարմանաք...: Ինչո՞ւ չըլլայր» (Վաչէ Ասրունի, Մեր քաղի մարդիկ, Անթիլիաս, 2017, էջ 453):

²⁰ Միացեալ Նահանգներու մէջ առաջին հայ օրիորդը ամուսնացաւ սեւամորթի մը հետ, «Արեւ», 12.04.1968: Այս ամուսնութեան մասին տե՛ս նաեւ՝ Society, “Jet,” 18.01.1968, էջ 38:

նկարչուհի **Մառի Մնտիկեանը** (Իտալիա), ամերիկեան բանաստեղծ **Սոթեր Թորեզեանը** (ծն. 1941), որը 1969-ին օժանդակել է Սքանֆորդի համալսարանում աֆրոամերիկեան ուսումնասիրութիւնների կենտրոնի ստեղծմանը, նշանաւոր ֆրանսիական կատակերգու **Պասկալ Լէժիտիմուսը** (ծն. 1959, Փարիզ), դուտորը անթիլցի Թէօ Լէժիտիմուսի եւ Մադլէն Քամպորեանի, որ կապուած է ֆրանսահայ զաղութին, ամերիկեան կինոբեմադրիչ-օպերատորներ **Ալէն եւ Ալբերա Հազս** երկուորեակ եղբայրները (ծն. 1972)՝ ծնունդով իրանահայ Աիդա Սկրտչեանի որդիները, հռչակաւոր երգիչ Ռէյ Չարլզի եւ ֆրանսահայ երգչուհի **Ալլէթ Քոչունեանի** որդին՝ ամերիկաբնակ **Վենսան Քոչունեանը**: Ֆրանսիացի սեւամորթ ջութակահարուհի **Պասկալ Կորդեան ժուրդը**, ծնուած Մարտինիկ կղզում, քառորդ հայ է. մեծ հայրը եղել է ցեղասպանութիւնից փրկուած հայ: Արդի ուսմական բանաստեղծ **Կ. Ս. Ֆարայը** (ծն. 1971, Մոսկուա), նոյնպէս ունի հայ-աֆրիկեան ծագում: Նրա հայրը եղել է զինբաբուից, մայրը՝ հայուհի, ուսագիր բանասէր, բանաստեղծուհի, Պատրիս Լումումբայի անվան ինստիտուտի ռուսերէնի դասախօս Ելենա Հրահատի Ազիզեանը (1931–1984): Ֆարայը բնակուել է Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւնում եւ ԱՄՆ-ում, զբաղում է անգո-ամերիկեան բանաստեղծութեան ռուսերէն քարգմանութեամբ: Երգչուհի **Սոնա Նալբանդեանը** (ծն. 1998) ծնուել է ԱՄՆ-ում, հայրը երեւանցի է, մայրն ունի գանայական, իռլանդական եւ գերմանական ծագում: Սոնան վոկալ արուեստը կատարելագործել է Երեւանում, մասնակցել հայկական հեռատեսիլի նախագծերի: Ֆրանսիացի դերասան **Ալեքսանդր Աջջեանը** ծնուել է Բանգիում (Կենտրոնական Աֆրիկեան Հանրապետութիւն), հայ հօր եւ աֆրիկուհի մօր ընտանիքում: Մանկութիւնն անցել է Ֆրանսիայում եւ Եռհաննէսբուրգում: 2011–2020 թթ. նկարահանուել է 10-ից անէլի հեռուստաֆիլմերում: Ֆուտբոլիստ **Ժառ ժորդի Մոնրոյ Արարատը** (ծն. 1996) կոլումբացի սեւամորթ հօր եւ աֆրիկահայկական ծագումով ամերիկուհի մօր (Լիսեւիա Մոնրոյ)

գառակ է, որը 2018 թուականի մարտին հրատիրուել է Հայաստանի հաւաքական: Ամերիկոսի գրող **Նադիա Օվուսուն** (ծն. 1982, Դար էս Սալամ, Տանզանիա) գանացի հօր եւ ամերիկահայ մօր գառակ է: Թէս մայրը նրան լքել է, երբ աղջիկը եղել է երկու տարեկան, սակայն հետագայում Նադիան գտել է մօրը եւ նրա մասին գրել իր «Աֆթերշոք» անգլերէն յուշագրքում (2020)՝ անդրադառնալով նաեւ մօր հայկական ժառանգութեանը: Հայ հօր եւ սեւամորթ մօր գառակ է նաեւ ամերիկոսի գրող **Քարին Ռոզ Սկրտչեանը**, որը յաճախ հանդէս է գալիս հայկական նախաձեռնութիւններով:

Յատկապէս ԱՄՆ-ում հայ-սեւամորթ խառնուրդներից ոմանց մէջ առկայ է որոշակի հայկական ինքնութիւն՝ կապուած հայ ազգականների միջավայրում մեծանալու, հայկական մանկապարտէզ, երբեմն նաեւ դպրոց, հայկական ամառային ճամբարներ, հայկական պարախմբեր յաճախելու հետ²¹: Բոսթօնի երիտասարդ բնակիչ **Լեւոն Բրանսոնը** յատուկ յօդուած է գրել՝ «սեւամորթ հայ» լինելու հետ կապուած իր ինքնութեան եւ փորձառութեան հետ՝ նշելով, որ Յեղասպանութիւնից փրկուած մեծ ծնողներ ունենալը, հայկական պարերը եւ այլ իրողութիւններ զարգացրել են իր հայկական ինքնութիւնը²²:

Եթէ խորհրդային տարիներին այլամերժութեամբ սաջի ընկնող Հայաստանում աֆրիկացի ուսանողներ ունենալու հարցն անյաջողութեամբ է պսակուել, ապա իրավիճակը փոքր-ինչ մեղմուել է 21-րդ դարի սկզբին, երբ Հայաստանում ժամանակատրապէս կան մշտական բնակութիւն են հաստատել Աֆրիկայի տարբեր երկրների բնիկներ:

Հայաստանի հատուկեմտ սեւամորթների մէջ կան

²¹ Հայ-սեւամորթ ինքնութեան մասին տես **Carolina Gazal**, Armenian-ish. Insights into the hyphenated Armenian though the biracial lens, “AGBU,” June 2023, էջ 12-15:

²² Տես **Levon Brunson**, Black Kochari. On Being Black and Armenian, “The Armenian Weekly,” 18.06.2020:

որդեգրուածներ կամ հայ մայր ունեցողներ²³, ինչպէս՝ երգիչ **Հրանտ Յովսէփեանը** (ծն. 1987), աֆրիկացի հօր եւ լիտվոսի մօր զաւակ, որ նկարահանուել է Տիգրան Խզմալեանի «Պիեռլէկինօ կամ Օդից թեթեւ» կինոնկարում, իր նոյնպէս սեւամորթ քրոջ՝ **Գայիանէ Յովսէփեանի** հետ հանդէս եկել հայկական երգերի կատարումներով, թողարկել խտապնակ: 1999-ից Հայաստանում է բնակուել նիգերիացի **Չորջ Օդոն**, որը զբաղուել է խոհարարութեամբ եւ յաղթող է դարձել 2013-ին Ախթալայում խորովածի աւանդական փառատօնում (հետագայում տեղափոխուել է Դուբայ): Կան նաեւ հաւառուկենո աֆրիկացի ուսանողներ, ինչպէս, Ֆրանսիական համալսարանի ուսանող սենեգալցի **Շեյխ Օմար Նընջայը**, որը վարժ խօսում է հայոց լեզուով: Այսօր Հայաստանում շատերն են ճանաչում նիգերիոսի **Ֆլորա Մինասին** եւ յատկապէս նրա գեղեցկուտի դուստր **Սիրուն Իսկեն Մինասին** (ծն. 1991, Նիգերիա): Կրթութեամբ մաթեմատիկոս Ֆլորան ամուսնացել է Հնդկաստանից Նիգերիա աշխատանքի եկած հայ-անգլիական ծագումով կալկաթացի գինեկոլոգ-վիրաբոյժ **Աշլի Վանիկ Մինասի** հետ, տնօրինել են սեփական հիւանդանոցը: 1994-ին լսելով Արցախի պատերազմի մասին՝ վերջինս կնոջ, դստեր եւ **Վանիկ** որդու հետ տեղափոխուել է Հայաստան: Ինը տարի բնակուել են Մեղրիում, որտեղ հիմնել են «Մինասեան» բժշկական կենտրոնը, համանման մի կենտրոն էլ ստեղծել են Ասկերանում եւ Երեւանում: Մեղրիում ծնուել է նրանց **Տիգրան** որդին, այնուհետեւ որդեգրել են Սառա դստերը: Մինաս գոյզի զաւակները գնացել են հօր ճանապարհով՝ ստանալով բժշկական կրթութիւն: 18 տարի համատեղ ամուսնական կեանքից յետոյ Ֆլորան եւ Աշլին բաժանուել են: Հայագոյի ամուսինը վերադարձել է Աֆրիկա, շարունակել աշխատել

²³ Տողերիս հեղինակի մանկութեան տարիներին իրենց ապրած շէնքում բնակուում էր մի մուլասուտիկ՝ **Ֆիլոմենա Բենեդիկտի Գասպարեանը**, անգղլացի հօր եւ բաբուեցի հայ մօր զաւակ, ինչը չափազանց արտառոց էր Խորհրդային Հայաստանի իրականութեան համար:

Նիզերիայում, Ռուանդայում եւ Ֆիլիպիններում²⁴, իսկ Ֆլորան քնակում է Նիզերիայում՝ եւ Հայաստանում: Պլաստիկ վիրաբույժ եւ հանրային դեմք Սիրուն Մինասը ճանաչուել է «Կանանց ակումբ» հունորային նախագծում ունեցած ելոյթներով: Վանիկ Մինասը Նիզերիայում տնօրինել է արագ սննդի կէտ եւ պատասխանատու է Yandex.Taxi ծառայութեան Աֆրիկեան մայրցամաքի գալոգացման համար:

2021-ին Հայաստանում հաստատուել է հայ-նիզերիական **Էզուկամ** ընտանիքը. նրա որդին՝ **Դանիել Էզուկամը**, ծնուել է Հայաստանում, սակայն կեանքի մեծ մասն անցկացրել է այլ երկրներում²⁵: 2023-ին Համացանցում մեծ տարածում է գտել Հայաստանում կայացած Աստրիայում բնակուող գանացի կուլտուրիստ **Չորջ Քոֆի Անոպրոնենի** եւ նրա հայուի կնոջ հարսանիքի տեսագրութիւնը:

Հայաստանում երկու տարի ապրած ֆրանսիացի գրող Մաքսանս Սմանիոտտոն իր «Հայաստանը՝ կաղապարներից դուրս» գրքում յիշել է երեւանաբնակ կոնգոլեզացի **Մոնգոյին**. *«Ժամանելով փար՝ տեսանք շատ նիհար, երկու մետր հասակ ունեցող տղամարդու: Սեւամորթ: Աֆրիկացի: Ապշել էի: Նա ձեռքի շարժումով կանգնեցնում էր դեպի փար ուղղորդուող մարդկանց, հրաւիրում նայել փարի մուտքի կամերային face controle անցնելու համար եւ կարգի էր հրավիրում հարբած ու ագրեսիւ յանախորդներին:*

— *Ֆրանսերէն խօսու՞մ էք, - հարցրի ես:*

— *Այո, խօսում եմ, ֆրանսիացի եմ, — սուրսահարեան սուր առոգանութեամբ հարցրեց մա:*

...., *Մի երեկոյ, երբ դուրս էի գալիս հերթական փարային երեկոյթից, տեսայ նրան՝ Մոնգոյին, որը շախմատ էր խաղում*

²⁴ **Նոյլի Բարայեան**, Հայը լքել է. նիզերիացին որդեգրել փոքրիկ Սաւան իր սեւամորթ մայրիկին շատ-շատ է սիրում, «Առաւօտ», 26.11.2011:

²⁵ Հայ-նիզերիական ընտանիքի որդին գորակոչուել է Հայկական բանակ https://armenpress.am/arm/news/1088340.html?fbclid=IwAR2ijxweB3obpmELvau8ytIT-BAP5p9FG8fvIvxPaG_WvQsHNchT6ihVEsQ (ղիտում՝ 1.08.2022)

հայի հետ: Ամենաքիչը տաս հայ էլ լռութեամբ հետետում էին խտրին: Ժամանակ առ ժամանակ միայն շշմջում էին ու խաղացողների ընտրած մարտավարութիւնները մեկնաբանում: Նայում էի նրանց՝ արքեցած ու զարմացած: Արժէր զայ Հայաստան՝ տեսնելու, թէ ինչպէս է կոնգոլեզացին շախմատ խաղում հայի հետ կէսգիշերն անց, փաբի դիմաց»²⁶.

2018-ից Հայաստանում է սպրում գվինեացի **Սիլա Արդուլայը** (ծն. 1993), որը տեղափոխել է Վարդաշէնի անօթեանների կացարանում: 2018 թ. օգոստոսին նա հասել է Իրան, որտեղից առանց իմանալու, ոտքով անցել է Արաքս գետը եւ յայտնուել հայկական կողմում: Մաթեմատիկա եւ ինֆորմատիկա է ուսանել Գվինեայի համալսարանում, սակայն Երեւանում զբաղում է պատահական աշխատանքներով: Խօսում է հայերէն, սովորում է գրել եւ կարդալ: Սի առիթով Արդուլայն ասել է. «Կարող է ծիծաղելի թուալ հայերի համար, բայց ես Հայաստանում եմ եւ ուզում եմ հայ դառնալ, սիրում եմ Հայաստանը: Եթէ անգամ տաս տարի մնամ Հայաստանում առանց փաստաթղթերի. ոչինչ չի փոխուի: Եթէ ինձ այստեղ լաւ եմ վերաբերում, ես կմնամ այս երկրում: Եթէ դու փախել ես եւ քեզ փրկել եմ. չես կարող երախտաւոր լինել, Հայաստանն ինձ փրկել է: Կուզեմայի լաւ աշխատանք ունենալ Հայաստանում եւ օգնել իմ ընտանիքին»:²⁷

Ժամանակ առ ժամանակ Հայաստանի ֆուտբոլի թիմերում հանդէս են եկել աֆրիկացի մարզիկներ: Մեր հաշուումներով՝ տարբեր ժամանակներում հայկական ֆուտբոլում հանդէս են եկել 70-ից ատի թուտբոլիստներ աֆրիկեան 19 երկրներից, հիմնականում՝ կարճաժամկետ, այդ իսկ պատճառով զանց ենք առնում նրանց անունների յիշատակումը: Սակայն

²⁶ Maxence Smaniotto, L'Arménie au-delà des clichés. Editions Thaddee, 2018, p. 64.

²⁷ Անի Սարգսեան, **Քրիստիմ Ադալարեան**, Անօթեանների կացարանի գվինեացի բնակիչը. «Ես սիրում եմ Հայաստանն ու ուզում եմ հայ դառնալ» (<https://hetq.am/hy/article/117366> դիտուած՝ 25.05.2020):

առանձնացնենք Կոտ դ'Իվուարից արհեստավարժ ֆուտբոլիստ **Եստ Սիլվեն Կուասիի** (ծն. 1989) անունը, որը որպես կիսապաշտպան 2012–2014 եւ 2017–2020 թթ. հանդես է եկել Երեւանի, Վանաձորի, Գիլիջանի տարբեր թիմերում: 2021-ին վերադարձել է Հայաստան, հաստատուել Տաւուշի Թեղուտ գիւղում, որտեղ երեխաների համար սեփական միջոցներով անվճար ֆուտբոլի դպրոց է բացել: *«Ես աֆրիկացի եմ, բայց իմ սիրտն ու արիւնը հայկական է: Հայերն ինձ իրենց եղբոր պէս են ընդունել, ու ես իսկապէս շատ եմ սիրում Հայաստանը: Ուր գնում եմ, առաջինը ցանկանում եմ հայի հանդիպել»*,– ասել է հայերէնին լաւ տիրապետող Սիլվեն Կուասիին²⁸:

Աւելացնենք, որ 21-րդ դարում համացանցային ծանօթությունների միջոցով հայաստանցի աղջիկներ ամուսնանում են նաեւ աֆրիկացիների հետ: *«Հայաստանեան իրականութեան մէջ քիչ չեն դէպքերը, երբ հայերն ամուսնանում են երոպացի, ասիացի, ինչու ոչ նաեւ աֆրիկացիների հետ»*²⁹: Համաշխարհայնացուող աշխարհի համար օրինաչափ, սակայն գոյաբանական եւ ժողովրդագրական խնդիրներ ունեցող Հայաստանի ու հայ ժողովրդի համար՝ ցաւալի իրողութիւն...

²⁸ Ես աֆրիկացի եմ, բայց սիրտս Հայաստանինն է. իվուարցի ֆուտբոլիստը սպորտային ակումբ է հիմնել Տաւուշի մարզում, <https://armsport.am/271141/> (դիտումած՝ 23.02.2022):

²⁹ **Անուշ Մնացականեան**, Выиждешь за меня? կամ Will you marry me?, «Ազգ», 2.12.2022:

ԱՄՓՈՓՈՒՄ

Աֆրիկեան մայրցամաքում հայերի ներկայութիւնը դարերի պատմութիւն ունի: Այն սկիզբ է առել մեր թուականութիւնից առաջ՝ ընդգրկելով մայրցամաքի հիւսիսային եւ հիւսիսարեւելեան շրջանները: Հայեր բնակուել են ոչ միայն Աֆրիկայի հնագոյն պետական միաւորում Եգիպտոսում եւ Եթովպիայում (որոնց հայօջախների պատմութիւնը բաւական ուսումնասիրուած է, ուստի եւ՝ զանց առնուած տոյն աշխատութեան մէջ), այլեւ Աֆրիկայի այլեայլ երկրներում՝ հիւսիսից հարաւ, արեւմուտքից արեւելք: Սույն աշխատությունը տեղեկություններ է հաղորդում աֆրիկեան 23 պետութիւնների (Ալժիր, Գանա, Չամբիա, Չիմբաբվէ, Թունիս, Լիբերիա, Լիբիա, Կամերուն, Կոնգո, Կոտ դ'Իվուար, Հարաւ-Աֆրիկեան Հանրապետութիւն, Մադագասկար, Մարոկկո, Նիգերիա, Չադ, Չիբութի, Սիեռա Լեոն, Սուդան, Սվազիլենդ, Տանզանիա, Տոգո, Ուգանդա, Բենիսա) հայօջախների եւ հայերի մասին: Փոքրաքիւ հայեր Արեւմտեան, Կենտրոնական, Արեւելեան եւ Հարաւային Աֆրիկայում հաստատուել են ինչպէս մայրցամաքի գաղութատիրութեան, այնպէս էլ անկախութեան ժամանակաշրջաններում: Եթէ 20-րդ դարի առաջին քառորդին հիմնականում Մադրերում (հիւսիսարեւմտեան Աֆրիկայում) հաստատուել են Մեծ եղեռնից մազապործ գաղթականների փոքր խմբեր՝ ապրելով փոքրիշատե ազգային կեանքով (յատկապէս Ալժիրում եւ Մարոկկոյում), ապա Երկրորդ աշխարհամարտից յետոյ հիմնականում Միջին Արեւելքից հայեր են հաստատուել «սեւ» Աֆրիկայի այլեայլ երկրներում եւ յատկապէս Հարաւային Աֆրիկայում՝ դառնալով խոշոր ձեռներեցներ եւ առետրականներ: Աֆրիկահայ հայօջախներից քանակի եւ ազգային դիմագծի առումով յատկապէս առանձնանում է Սուդանի համայնքը՝ կազմուած եգիպտահայերից եւ մասամբ՝ արեւելահայ գաղթականներից, որը 1930–1960-ական թթ. ապրել է համայնքային աշխոյժ կեանքով՝ ունենալով եկեղեցի

և դարոց: Սակայն ինչպես ամենուրեք Աֆրիկայում, այս համայնքը նոյնպես ժամանակի ընթացքում նուսգել է անշքացել է:

20-րդ դարի վերջին Աֆրիկայում ժամանակաւոր կամ մշտական կայք են հաստատել հայեր աշխարհի ամենատարբեր երկրներից, նաեւ՝ Հայաստանի Հանրապետութիւնից: Աֆրիկեան հանրութեան զարգացմանն իրենց նպաստն են բերել հայ գործարարներ, առեւտրականներ, տարբեր մասնագիտութիւնների տէր անձինք, ինչպէս նաեւ աշխտեղ ժամանակ առ ժամանակ պաշտօնավարած զանազան երկրների հայազգի դիւանագէտներ, միջազգային կազմակերպութիւնների աշխատողներ, բժիշկներ, ճարտարագէտներ:

Աֆրիկան իր տարաշխարհիկութեամբ է զարգացող երկրների ընձեռած աշխատատեղերի քանակով շարունակելու է դէպի իրեն ձգել տարբեր մասնագիտութիւնների տէր հայերի, սակայն այդ երկրներում նոր համայնքների առաջացման հաւանականութիւնը կարելի է գրոյական համարել:

THE ARMENIANS IN AFRICA

The Armenian presence on the African continent has a centuries-old history. It began BCE, covering the northern and north-eastern regions of the continent. Armenians lived not only in the ancient states of Africa, in Egypt and Ethiopia (whose history of Armenian settlements has been sufficiently studied, and therefore skipped in this work), but also in other African countries, from north to south, from west to east.

Current study provides information on Armenian communities and Armenian presence in 23 African states (Algeria, Cameroon, Chad, Congo, Djibouti, Ivory Coast, Ghana, Kenya, Liberia, Libya, Madagascar, Morocco, Nigeria, Sierra Leone, South African Republic, Sudan, Swaziland, Tanzania, Tunisia, Togo, Uganda, Zambia, Zimbabwe).

A small number of Armenians settled in West, Central, East and South Africa both during the colonial and independence periods of the continent. In the first quarter of the 20th century, small groups of survivors of the Armenian Genocide in Ottoman Empire found shelter mainly in the Maghreb (north-west Africa), living some national life (especially in Algeria and Morocco).

After the Second World War, Armenians mainly from the Middle East settled in other countries of "black" Africa and especially in South Africa, becoming big entrepreneurs and traders. Among the African-Armenian communities in terms of number and national aspect, the Sudanese community, made up mainly of Egyptian Armenians, stands out especially in the 1930-1960s. The Armenians in Sudan lived a prosperous community life, possessing their own church and a school. However, like everywhere in Africa, this community also declined and became desolate over time.

At the end of the 20th century, Armenians from various countries of the world, including the Republic of Armenia, established temporary or permanent sites in Africa. From time to time Armenian businessmen, traders, people with various professions, as well as

Armenian diplomats, international organizations employees, doctors, engineers from different countries worked in many African countries there, contributed to the development of those countries in different spheres.

Africa, with its exotic nature and large working opportunities continues to attract Armenians with various professions, but the probability of the emergence of new communities in those countries can be considered zero.

LES ARMÉNIENS EN AFRIQUE

La présence des Arméniens sur le continent africain remonte à plusieurs siècles. Elle a commencé bien avant notre ère, se localisant dans les régions du nord et du nord-est du continent. Les Arméniens ont vécu non seulement dans l'Égypte ancienne et en Éthiopie (l'histoire d'établissement des Arméniens dans ces deux pays a été suffisamment étudiée, et donc n'est pas abordée dans cet ouvrage), mais aussi dans d'autres pays africains, s'étendant du nord au sud et de l'est à l'ouest.

L'étude actuelle fournit des informations sur les communautés arméniennes présentes dans 23 pays africains : Afrique du Sud, Algérie, Cameroun, Congo, Côte d'Ivoire, Djibouti, Ghana, Kenya, Libéria, Libye, Madagascar, Maroc, Nigeria, Ouganda, Sierra Leone, Soudan, Swaziland, Tanzanie, Tchad, Tunisie, Togo, Zambie, Zimbabwe.

Un petit nombre d'Arméniens s'est installé partout en Afrique pendant les périodes de la colonisation et de l'indépendance du continent. Dans le premier quart du XX siècle, de petits groupes de survivants du Génocide arménien perpétré dans l'Empire ottoman ont trouvé refuge principalement au Maghreb (Afrique du nord-ouest), où ils ont pu mener une vie communautaire (en particulier en Algérie et au Maroc).

Après la Seconde Guerre mondiale, la plupart des Arméniens du Moyen-Orient sont venus s'installer dans d'autres pays d'Afrique dite "noire", comme en Afrique du Sud, où ils sont devenus de grands entrepreneurs et commerçants. Parmi ces communautés, en termes de nombre et préservation identitaire, se démarque celle du Soudan, composée principalement d'Arméniens d'Égypte, surtout dans la période de 1930-1960. Les Arméniens y menaient une vie communautaire prospère et possédaient leur propre église et une école. Cependant, comme partout en Afrique, cette communauté aussi connut un déclin pour finir par disparaître au fil du temps.

À la fin du XX siècle, on a vu apparaître en Afrique des îlots

temporaires ou permanents d'Arméniens venus du monde entier, y compris de la République d'Arménie. Des Arméniens de professions diverses, hommes d'affaires, commerçants, médecins et ingénieurs, ainsi que des diplomates d'origine arménienne, des employés d'organisations internationales, ont travaillé dans de nombreux pays africains et ont contribué au développement de ces pays.

Avec sa nature exotique et ses nombreuses opportunités de travail, l'Afrique continue d'attirer des Arméniens de divers horizons, mais la probabilité d'émergence de nouvelles communautés dans ces pays peut être considérée comme nulle.

BA ARMENIEN NA AFRICA

Kovandi ya ba armeniens na kati ya ba madele ya Africa ewuti mbala ba mbula ya koleka ebele. Ebandi kala koleka tango na biso na kati ya bisika ya likolo na ya ngambu ya loboko ya mwasi ya mabele ya Africa. Ba armenien ba vandaki kaka te ya mboka ya Egipti ya kala mpe na mabele ya Ethiopi (lisano ya kovandi ya ba armenien na kati ya ba mboka mibale oyo etangamaki ya koka kasi eko tangama na buku oyo te) mpe ba mboka misusu ya africa ko banda likolo na se mpe ngambu na ngambu.

Kasi to yebe ndenge bizaleli ya ba oyo ba vandi na ba 23 mboka ya africa oyo: Afrique du Sud, Algérie, Cameroun, Congo, Côte d'Ivoire, Djibouti, Ghana, Kenya, Libéria, Libye, Madagascar, Maroc, Nigeria, Ouganda, Sierra Leone, Soudan, Swaziland, Tanzanie, Tchad, Tunisie, Togo, Zambie, Zimbabwe. Mwa mike pe ba vandaki ba esika nionso na Africa na ntangu ya boyumbu et na lipanda ya mokili ya africa. Na ngonga ya liboso ya katikati ya tangu ya XX siecle, mukie oyo ya banso ba bikaki na genocide oyo ba ottoman basalaka bazalaki ko vanda na Maghreb (Africa ya likolo ya ngambu ya loboko ya mibali), wapi ba bandaki vo vanda na ekolo (mingi na Algérie na ya Maroc).

Sima ya bitumba munene ya mboka, ebele ya ba armeniens oyo ya ba mboka a katikati yo mokili ba yaki na ba mboka ya Africa ya batou mwindu neti africa ya se wapi bako maki ba mokonzi na bateki. Na kati na bango, soki to tali tangu na bango na ebombeli ya bizazeli oyo ya soudan oyo esalama na ba armeniens ya egipti, mingi oyo ya tangu ya 1930 1960. Ba armenien ba bandaki ko vanda na elongo ba zalaki ba eglise na ba kelasi na bango. Kasi neti ba esika nionso ya Africa, ekolo wana mpe ayebaki ba tangu ya mpasi tina ko sila na tangu.

Na suka ya siècle XX, to monaki na Africa na mboka na mawi oyo ewumelaka na oyo libela y aba armenien ba wuti mikili mobimba na oyo ya Armenie. Ba armeniens ya misala nionso, comelecants, ya mbongo, minganga, misala ya maboko na bayo

bas ala ba misala ya letat ba zalaki ko sala na ba mboka ebele ya Africa ba bakisaki pe ko bonga ya ba mboka wana. Na ezalali na ye na ba chance ya musala Africa ezo ben da ba armeniens bipayi na bipayi kasi chance na bango ya ko tombwana bisika wana ekoki monama te.

Ekomami oyo ebalusami na lingala epayi ya
GARRO NANIKIAN

ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՍԿԶԲՆԱՂՔԻՒՐՆԵՐԻ ԵՒ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

ա. Արխիւային նիւթեր

1. Հայաստանի ազգային արխիւ (ՀԱԱ)

Ֆոնդ 326, ցուցակ 1, գործ 340 ; ֆ. 362, ց. 13, գ. 54; ֆ. 374; ց. 1, գ. 13-15; ֆ. 395, ց. 1, գ. 77; ֆ. 430, ց. 1, գ. 853, 855-856; ֆ. 875, ց. 4, գ. 360; ֆ. 875, ց. 13, գ. 1, 13, 135:

բ. Մանուլ

«Ազատ օր», Աթենք,
«Ազգ», Երեւան
«Ազգ-պահակ», Պօսթըն
«Ազգասէր», Կալկաթա
«Ազդակ», Պէյրուս
«Ազդարար», Պէյրուս
«Ալիք», Թեհրան
«Այգ», Պէյրուս,
«Անահիտ», Փարիզ
«Ապագայ», Մոնթրէալ
«Ապագայ», Փարիզ
«Առաւօտ», Երեւան
«Ասպարէզ», Ֆրեզնո
«Աւանգարդ», Երեւան
«Արագած», Փարիզ
«Արաս», Պուքրէշ
«Արարատ», Պէյրուս
«Արաքս», Ալեքսանդրիա
«Արեւ», Գահիրէ
«Արեւելք», Իսթանպուլ
«Արմենիա», Մարսէյլ
«Բազմավէպ», Վենետիկ
«Բանբեր Հայաստանի արխիւների», Երեւան
«Բիւզանդիոն», Կ.Պոլիս
«Գեղարունեստ», Թիֆլիս

«Դրոշակ», Աթենք
«ԵՊՀ հայագիտութեան հարցեր», Երեւան
«Երեւան», Փարիզ
«Երիտասարդ Հայաստան», Նիւ Եօրք
«Եփրատ», Հալէպ
«Զարթօնք», Պէյրութ
«Էջմիածին», Էջմիածին
«Ժամանակ», Իսթանպուլ
«Լուսարձակ», Վառնա
«Լրաբեր», Նիւ Եօրք,
«Կարմիր աստղ», Թիֆլիս
«Կավոջ», Փարիզ
«Լսորհրդային արուեստ», Երեւան
«Լսորհրդային Հայաստան», Երեւան
«Հայ դիտակ», Երուսաղէմ
«Հայաստանի կոչնակ», Նիւ Եօրք
«Հայրենիք», Պօսթըն
«Հայրենիքի ձայն», Երեւան
«Հորիզոն», Թիֆլիս
«Հորիզոն», Մոնթրէալ
«Չայն հայրենեաց», Պօսթօն
«Չայն Փարիզի», Փարիզ
«Ճակատամարտ», Կ. Պոլիս
«Մասեաց աղանի», Փարիզ
«Մասիս», Պէյրութ
«Միութիւն», Գահիրէ
«Յառաջ», Փարիզ
«Յուսաբեր», Գահիրէ
«Նոր աշխարհ», Աթենք
«Նոր լուր», Իսթանպուլ,
«Նոր Մարմարա», Իսթանպուլ
«Նոր օր», Լոս Անճէլըս
«Նորք», Երեւան
«Պայքար», Երեւան
«Պայքար», Ուօթըրթաուն
«Պայքար, նոր տարտյ բացառիկ», Ուօթըրթաուն
«Պատմաբանասիրական հանդէս», Երեւան

«Պիոներ կանչ», Երևան
«Ջահակիր», Կահիրե
«Սաառնակ», Գահիրե
«Սիոն», Երուսաղեմ
«Սովետական արուեստ», Երևան
«Սովետական Հայաստան», Երևան
«Սուրհանդակ», Պուլենոս Այրեւ
«Վերածնունդ», Փարիզ
«Վերջին լուր», Կ. Պոլիս

«Вахан», Пловдив,
«Литературная Армения», Ереван
«Ноев ковчег», Москва
«Новое время», Ереван,
«Русская мысль», Париж

“Abidjan Journal,” Abidjan

“AGBU,” New York

“The Armenian Reporter” [The Armenian Reporter International]

New York,

“The Armenian Mirror-Spectator,” Boston

“The Armenian Weekly,” Boston

“Horizon,” Montreal

“Jet,” Chicago

“Los Angeles Times,” Los Angeles

“International Commerce” [USA]

“New York Times,” New York

“Time Magazine,” London

գ. Գրականօթիծն

1. Արրահամեան Աշոտ, Համառօտ ուրուագիծ հայ գաղթականութեան պատմութեան, հատոր Բ, Երևան, 1967:
2. Ալաջաջեան Ստեփան, Երկեր երեք գրքով, գիրք 1, Երևան, 1976:
3. Ալալօյանեան Արշակ, Պատմութիւն հայ գաղթականութեան հայերի ցրումը աշխարհով մէկ, հատոր 1, Գահիրե, 1941:
4. Աղաթօն Ե. Գ., Գաղափարի նշխարներ, Մարտէլ, 1934:

5. Աճառեան Հրաչեայ, Կեանքիս յուշերից, Երեւան, 1967:
6. Աճառեան Հրաչեայ, Հայ գաղթականութեան պատմութիւն, Երեւան, 2002:
7. Ասլանեան Մեայօռ Դաիթ, Սիջցամաքամասային կենցաղ մը. ֆրանսական Արեւելա-Հնդկական ընկերութեան տնօրէն Մարտիրոս Մարգարայ Աազշէնցի համաշխարհային մանրապատմութիւնը (Global Microhistory) (1666–1688), «Հանդես ամսօրեայ», Վիեննա, 2016, թիւ 1-12, Յունուար-Դեկտեմբեր:
8. Ատրունի Վաչէ, Մեր թաղի մարդիկ, Անթիլիաս, 2017:
9. Արզումանեան Զաւէն վարդապետ, Սուղանահայ գաղութը այսօր, «Էջմիածին», Էջմիածին, 1959, ք. Բ:
10. Արծիւներ Հայկ եւ Էմմա, Աշխարհով մէկ, Երեւան, 1964:
11. Աազեան Արծրուն, Վահան Թեքեան-Լեւոն Զաւէն Սիրմէլեան. սերտ բարեկամութիւն եւ անդարձ բաժանում, «ԵՊՀ հայագիտութեան հարցեր», Երեւան, ք. 1 (10), 2017:
12. Աւետիք Բաղդասարեան ընթերցող Տիգրանակերտցի, Վասն որ կամի ի Հելլէշին գրկիրն գալ, ասպէս է, «Բազմավէպ», Վենետիկ, 1897, ք. 10:
13. Արմէն Բաղալեան, Աֆրիկեան երկրների հայկական համայնքները եւ նրանց կապերը Խորհրդային Հայաստանի հետ 1945–1985 թթ., «Բանբեր Հայաստանի արխիւների», 2004, ք. 1:
14. Գասպարեան Ս., Սփիւռքահայ գաղթօջախներն այսօր. մշակութային կեանքի ուրուագիծ, Երեւան, 1962:
15. Գուրելեան Պօղոս, Անտառը մարդուն մէջ, Պէյրութ, 1978:
16. Եգիպտոսի, Սուտանի եւ Եթովպիոյ հայերը – Գիտաժողովի նիսեր (12-13 ապրիլ եւ 29-30 մայիս 2018)», հ. 1-2, Պէյրութ, 2022–2023:
17. Եկաւեան Տիգրան, Արեւելքի փոքրամասնութիւններ. պատմութեան կողմից մոռացուածները, Երեւան, 2021:
18. Թահնազեան Գուրգէն. Համբարձում Պօյաճեան (Մուրատ), «Փարիզահայ տարեցոյց», Փարիզ, 1918:
19. Թերլեմեզեան Փանոս, Կեանքիս յուշերը, Երեւան, 2022:
20. Թորանեան Թորոս, Ուղեորութիւն դէպի Թալլանտ ու Չինաստան, Հալէպ, 2004:
21. Իզմիրլեան Սարգիս, «Դատումներ մեր հարիւրամեայ յեղափոխութեան մասին (Անձնական յուշերուս ընդմէջէն), Պէյրութ, 1962:

22. Լեօ, Երկերի ժողովածու, հատոր 1, Երևան, 1966:
23. Կայիոսի Սալուստիոսի Պատմութիւն Կատիլիմեան դաւակցութեան եւ Եուզոլոթեան պատերազմին, թարգմ. հ. Աբրահամ վ. Ճարեան, Վենետիկ, 1856:
